203
4-30



12004

1729 844-ՀՀ

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ
# ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՐԱՐԵԱԼ
ՍՐԲՈՑՆ ՍԱՀԱԿԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
ԳԻՒՏԱՅ ԵՒ ՅՈՀԱՆՆՈՒ
ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

С.С.Р.А. Библиотека
7/XI 1922

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍԲՆ ՂԱԶԱՐՈՒ

1827

243

280
799-Sch
Z.79



203
4-30

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ՄԷՋ ԳԻՇԵՐԻ Ի ԴԻՄՍ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ

Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս . ամէն ։

ՀԱՅՐ մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո . եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր . որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց . և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն . այլ փրկեա զմեզ 'ի չարէ ։ Զի քո է արքայութիւն , և զօրութիւն , և փառք յաւիտեանս . ամէն ։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութ̃իս քո։

Տ̃ր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութ̃իս քո։

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի ս̃բ երրորդութ̃իւնն՝ հայր և որդի և հոգի ս̃բ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ՚ի վ̃ր իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութ̃ի սորա առ ա̃ծ իւր։

Այլ դու տ̃ր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ տ̃ր կարդացի․ և լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ՚ի քուն եղէ․ զարթեայ և տ̃ր ընդունօղ իմ է։

Ոչ երկեայց ես ՚ի բիւրուց զօրաց ն̃ց․ որք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։

Արի՛ տ̃ր և փրկեա՛ զիս ա̃ծ իմ․ զի

դու հարեր զամենեսեան՝ ոյք էին ընդ իս թշնամութք 'ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեցես:

Տեառնդ է փրկութի 'ի վր ժողովըրդեան քոյ օրհնութի քո:

Տր ած փրկութե իմոյ, 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քոյ:

Մտցեն աղօթք իմ առաջի քոյ տր. խոնարհեսցի ունկն քո 'ի խնդըրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ՝ որք իջանեն 'ի գուբ:

Եղէ ես որպ մարդ առանց օգնականի, և 'ի մեռեալս ազատ:

Որպէս վիրաւորս որք ննջեն 'ի գերեզմանի:

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա 'ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Եդին զիս 'ի գբի ներքնումն 'ի խաւարի, և 'ի ստուերս մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտութի քո. զամ զբօսանս քո ածեր 'ի վր իմ:

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ. և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ ակարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Միթէ մեռելո՞ց առնիցես զսքանչելիս քո, կ՟մ բժիշկք յարուցանիցեն և խոստովան առնիցեն առ քեզ։

Միթէ պատմեսցէ՞ ոք երբէք ՚ի գերեզմանի զողորմութ՟իս քո. կամ զճշմարտութ՟իս քո ՚ի կորստեան։

Միթէ ճանաչիցի՞ն ՚ի խաւարի սքանչելիք քո. կամ արդարութ՟ի քո յերկիր մոռացեալ։

Ես առ քեզ տ՟ր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր տ՟ր մերժես զանձն իմ. կ՟մ դարձուցանես զերեսս քո յինէն։

Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկութ՟է իմմէ. ՚ի բարձրութ՟է խոնարհեցայ և ափշեցայ։

Յիս հաստատեցաւ բարկութ՟ի քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինեւ ո՟պ ջուր · զօր ա՟մ
պաշարեցին զիս 'ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարեկամս
իմ, և զծանօթս իմ վ՟ն թշուառու-
թեան իմոյ:

Օրհնեա՛ անձն իմ զՏ՟ր, և ա՟մ
ոսկերք իմ զանուն ս՟բ նորա:

Օրհնեա՛ անձն իմ զՏ՟ր· և մի մո-
ռանար զա՟մ տուրս նորա:

Ո քաւէ զմեղս քո· բժշկէ զամե-
նայն հիւանդութի՟ս քո:

Ո փրկէ յապականութենէ ըզ-
կեանս քո· պսակէ զքեզ ողորմու-
թեամբ և գթութեամբ:

Ո լնու 'ի բարութ՟է զցանկու՟ն քո·
նորոգեսցի որպէս արծուոյ ման-
կութիւն քո:

Առնէ ողորմութի՟ս Տ՟ր· և իրաւու-
նըս ա՟մ զրկելոց:

Եցոյց տէր զճանապարհս իւր մով-
սեսի· և որդւոցն իսրայելի զկամս իւր:

Գթած ողորմած է տէր, երկայ-
նամիտ և բազումողորմ:

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ տէր·
և ո՛չ յաւիտեան պահէ ոխս:

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ

տ՟ր. և ո՛չ ըստ անօրէնութեան մե-
րում հատոյց մեզ:

Այլ ո՟պ բարձր են երկինք յեր-
կրէ՝ այնպէս զօրացոյց տ՟ր զողորմուն
իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց:

Որչափ հեռի են արևելք յարևմ-
տից. այնչափ հեռի արար 'ի մէնջ
զանօրէնութիս մեր:

Որպէս գթայ հայր 'ի վերայ որդ-
ւոց իւրոց. այնպէս գթասցի տէր
յերկիւղածս իւր:

Զի նա գիտաց զստեղծուածս մեր,
և յիշեաց թէ հող եմք:

Մարդոյ ո՟պ խոտոյ են աւուրք իւր,
ո՟պ ծաղիկ վայրի այնպէս ծաղկի:

Շնչէ 'ի նմա հողմ, և ոչ է, և ոչ
ևս երևի տեղի ն՟ր:

Բայց ողորմութի տ՟ն յաւիտեանս
յաւիտենից 'ի վ՟ր երկիւղածաց իւ-
րոց, և արդարութիւն ն՟ր յորդւոց
մինչև յորդիս:

Ոյք պահեն զուխտս ն՟ր. յիշեն
զպատուիրանս ն՟ր և առնեն զնա:

Տէր յերկինս պատրաստեաց զա-
թոռ իւր. արքայութի նորա ամե-
նեցուն տիրէ:

Օրհնեցէ՛ք զՏ՟ր ամ՟ հրեշտակք նր՟ հզօրք զօրու՟բ, որք առնէք զբան նր՟ 'ի լսել ձայնի պատգամաց նր՟ ։

Օրհնեցէք զՏ՟ր ամ՟ զօրութ՟ք նր՟․ պաշտօնեայք նր՟, և արարօղք կամաց նորա ։

Օրհնեցէ՛ք զՏ՟ր ամ՟ գործք նր՟․ ընդ ամ՟ տեղիս է տէրութ՟ն նր՟․ օրհնեա՛ անձն իմ զՏ՟ր ։

Տէր լո՛ւր աղօթից իմոց․ ո՛ւնկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութ՟բ քով ։

Լո՛ւր ինձ արդարութ՟բ քով․ և մի՛ մտանիր 'ի դատաստան ընդ ծառայի քում․ զի ոչ արդարանայ առաջի քո ամ՟ կենդանի ։

Հալածեաց թշնամին զանձն իմ․ խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս 'ի խաւարի ոպ՟ մեռեալ յաւիտենից ։

Ձանձրացաւ յիս հոգի իմ․ և սիրտ իմ խռովեցաւ յիս ։

Յիշեցի զաւուրսն զառաջինս․ խորհեցայ յամ՟ գործս քո․ յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ ։

Անձն իմ ո՟պ երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տ՟ր. զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցիմ այնոցիկ՝ որք իջանեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիւն քո. զի ես 'ի քեզ տ՟ր յուսացայ։

Ցո՛յց ինձ Ճանապարհ, յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ՟ր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես ա՟ծ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վ՟ս անուան քո տ՟ր կեցուսցես զիս. արդարութ՟բ քով հանցես 'ի նեղութ՟է զանձն իմ։

Ողորմութ՟բ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զա՟մ նեղիչս անձին իմոյ զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն

որդոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Երգ Տեառն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի:

Ցնծասցուք 'ի գիշերի զանուն քո տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորին:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ տէր 'ի գաւիթս քո 'ի մէջ նոր երուսաղէմի:

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ տէր:

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեսցեն զտէր:

Փ. Զարթիք փառք իմ, զարթիր, և ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա:

Զարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն սիոնի. ալէ:

Զարթի՛ք որդի՛ք լուսոյ 'ի յօրհ-նուն հօրն լուսոյ. ալէ։

Զարթի՛ք փրկեալք արեամբ, և տո՛ւք զփառս փրկողին. ալէ։

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէ։

Զարթի՛ք հարսունք հոգւով, սպա-սեալք գալոյ ն̃ը փեսային. ալէ։

Զարթի՛ք վառեալք լուսով ըստ իմաստուն ն̃ը կուսանացն. ալէ։

Զարթի՛ք պատրաստեցէ՛ք իւղ լապ-տերաց ջերմ արտասուս. ալէ։

Զարթի՛ք և մի՛ ննջէք, նման յի-մար կուսից նիրհէք. ալէ։

Զարթի՛ք երկրպագցուք, և ար-տասուօք զայս ասասցուք. ալէ։

Փ. Զարթի՛ր ընդէ՛ր ննջես տէր, մի՛ մերժեր զմեզ իսպառ։

Արի՛ տ̃ր օգնեա՛ մեզ. տացո՛ւք ա-նուանդ քում զփառս։

Այժմ և յաւէտ՝ հօր և որդւոյ, և ս̃բ հոգւոյն. ամէն։

Փ. Զարթուցեալքս 'ի զբաղմանէ գիշերային հանգստենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր տէր

մխիթարութիւն և 'ի սփոփանս եկեղեցւոյ։

Աւհիւ և դողութեամբ կացցուք 'ի յաղօթս։

Եկե՟ղ խոստովանեսցուք զյանցանս։

Եւ դտցուք 'ի քն՟է զքաւութիւն և զմեծ ողորմութի՟ն։

48. Անքննելի և համագոյ Երրորդութեդ համաձայնեալ ընդ զօրըս երկնից փառս մատուցանեմք։

Փառք քեզ։ Որ յանարուեստ յաթոռ բարձրացեալ հանգչիս. մե՟ ա՟ծ հզօր և սքանչելագործ։

Փառք քեզ։ Որ յանէից գոյացուցեր զա՟մ արարածս, մե՟ ա՟ծ անճառ հօր անեղ որդի։

Փառք քեզ։ Որ տեսչութեամբ խնամես զա՟մ արարածս. մե՟ ա՟ծ բղխումն անսպառ աղբեր։

Տէր, ժողովրդապետք եկեղեցւոյ 'ի քէն հայցեն ասելով. հովիւ բարի ողորմեա՛ բանաւոր հօտի։

Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

## Քարոզ։

Զարթուցեալքս ամենեքեան 'ի հանգստենէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն ած՟ 'ի մխիթարուի՟ և 'ի սփոփանս տկարութե՟ մերում. և եկեալքս միաբան հոգևոր երգով 'ի փառաբանուի՟ և 'ի պատիւ ամենասուրբ անուան տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟։ Ահիւ և դողութ՟ կացցուք յաղօթս առաջի նր՟։ Եւ գոհացարուք զնմանէ 'ի գիշերային ժամուս յայսմիկ, վս՟ խրատանաց և արդարութե՟ նորա։ Որ ընտրեաց ըզմեզ ողորմութ՟ն իւրով. և շնորհեաց մեզ բերել զնմանութիւն երկնային հրեշտակացն փառաբանիչս տն՟ այ՟ ամենեցուն և մեզ լինել։ Եւ մեք այսուհետև սրբելով զանձինս մեր 'ի խղճէ և 'ի չար գործոց, համբարձցուք զձեռս մեր 'ի սրբութի՟ առանց բարկութե՟ և երկմտութե՟։ Հաւատով խնդրեսցուք 'ի նմանէ զքաւութի՟ և զթողութ՟ յանցանաց մերոց, խոստովան լինելով զգաղտնիս սըրտից մերոց ծածկագիտին այ՟։ Ով՟

զի ընդունելով զպաղատանս մեր աղօթիւք և բարեխօսութ՟բ ամենայն սրբոց, շնորհեսցէ մեզ մարդասէրն ա՟ծ կեալ առաքինութ՟բ և անարատ վարուք ըստ կամաց ն՟ր յայսմ աշխարհիս: Եւ արժանաւոր լինելով յաւիտենական և երկնային խորանացն: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն ա՟ծ յ՟ս ք՟ս տէր մեր. կեցո՛ և ողորմեա՛: Կեցո՛ տ՟ր:

Զմնացուած գիշերիս խաղաղութ՟բ անցուցանել՝ հաւատով 'ի տ՟նէ խնդրեսցուք: Շնորհեա՛ տ՟ր:

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց 'ի տ՟նէ:

Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց 'ի տ՟նէ:

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց 'ի տ՟նէ:

Եւ ևս և վ՟ս միաբանութեան ճշմարիտ և ո՟ւղ հաւատոյս մերոյ զտ՟ր աղաչեսցուք: Տ՟ր ողորմեա՛:

Զանձինս մեր և զմիմեանս տ՟ն ա՟յ ամենակալին յանձն արասցուք: Քեզ տ՟ր յանձն եղիցուք:

Ողորմեա՛ց մեզ տէր ած մեր՝ ըստ մեծի ողորմութե՛ քում. ասասցուք ամենեքեան միաբանութբ։ Տր ողորմեա։

Եւ առն Տէր ողորմեա ըստ պատշաճի աւուրն։ Ի կիրակէս և 'ի տօնս տէրունականս երեք Տէր ողորմեա։ Իսկ 'ի տօնս սրբոց՝ ծ. Տէր ողորմեա։ Եւ յաւուրս պահոց՝ ճ. Տէր ողորմեա

—

Նորին Տն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ողբերգութիւն անձին զղջացելոյ, և բողոք իւրաքանչիւրոյ դիմ խոստովանաբար։

Աշխարհ ամենայն
Առ իս նայեցեալ
Ախտակից լերուք։
Բանամ ըզշըրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէ,
Տր ողորմեա. տր ողորմեա. տր ողոր։
Գող եղէ մեղաց,
Գըտօղ կորստեան,
Գուբ ինձ փորեցի։
Դաւեցի զանձն իմ,

Դաւաճանեցի,
Դարան գործեցի. տէր ողորմեա՛:
Երբեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար
Եւ ըստուեր մահու:
Զիա՛րդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց.
Զի բազում են յոյժ. տէր ողորմ:
Երկինք և երկիր,
Եկա՛յք ողբացէք
Եղկելի զանձն իմ,
Ընտրեցի ըղչարն,
Ընկալայ կամաւ,
Ըղձոյլս մեղաց. տէր ողոր:
Թաթաւիմ տղմով,
Թաւալիմ 'ի մեղս,
Թօթափել չկարեմ:
Ժանտ ախտիւ լցեալ
Ժահահոտ եղէ
Ժամանակս բազումս. տէր ողոր:
Ի բաց մեկնեցայ
Ի սուրբ խորհրդոց,
Ի բարեաց գործոց.
Լսաւ վարկաւ անձն իմ
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար. տէր ողորմեա:

1729
1005
ձ-0058
...ԳՐԱԴԱՐԱՆ ... библиотека
7 XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Խորհուրդըք չարին
Խաբեն ըզհոգիս,
Խորասոյզ առնեն։
Ծածկեն անդնդօք,
Ծիծաղին գլորմամբս,
Ծանակ զիս առնեն. տէր ողորմ։
Կամաւ կորացայ
Կարկամեալ անձամբս,
Կանգնիլ ոչ կարեմ։
Հուր մեղաց կիզող
Հրդեհեաց որ զիս
Հոգւոր բարիս. տէր ողոր։
Ձաղկեցայ մեղօք,
Ձաղեցին տեսօղք.
Ձանձրացաւ հոգիս։
Ղեղի դառնութեան
Ղօղեալ 'ի սիրտ իմ,
Ղամփար իմ չիջաւ. տէր ողոր։
Ճաշակմամբ մեղաց,
Ճաշեցի ըզմահ.
Ճոխս աղքատացայ։
Մեռեալ եմ հոգւովս,
Մոլորեալ մտօքս.
Միայն կամ մարմնովս. տ̃ր ողորմ։
Յորդայթ մահու
Յորսոցին անկայ,

Յաղթեցայ յախտից ։
 ՚Նետից թշնամւոյն
՚Նըշաւակ եղէ ,
՚Նոր միշտ խոցոտիմ․ տէր ողոր ։
 Շուրջ պատեալ զինև
Շունք բազումք եղեն ,
Շաղախին արեամբս ։
 Որս եղէ չարին ,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ զանձն իմ․ տէր ողորմ ։
 Չարաչար վըշտօք
Չարչարի անձն իմ․
Չունիմ դադարումն ։
 Պարտապան գըտայ
Պարտուց յանցանաց
Պարտեալս 'ի մեղաց . տէր ող ։
 Ջանամ զղջանալ ,
Ջեռանիմ դարձեալ ,
Ջեռնում հրով մեղաց ։
 Ռաբբի կոչեցայ ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուքս . տէր ողորմ ։
 Սիրով ցանկութեան ,
Սաստիկ բարկութեան
Սիրտ իմ խոցեալ է ։
 Վիրօք յանցանաց

Վըշտանայ հոգիս ,
Վարանեալ շըրջիմ ․ տէր ողորմ ։
Տիրեցին ինձ չարք ,
Տարագիր հանին
Տիրական գըրկացն ։
Րաբունւոյն բարւոյ
Րախճական ձայնին
Րոտինս ոչ լըւայ ․ տէր ողոր ։
Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմօք
Ցաւեցոյց զաչս իմ ։
Իւրաքանչիւրոց
Իւսմամբ խուռն ախտից
Իւծեալ է հոգիս ․ տէր ողոր ։
Փութացիր անձն իմ
Փախչիլ 'ի չարեաց ,
Փափաքել բարեաց ։
Քեզ միշտ մերձ ծանիր
Քուն մահու եկեալ ,
Քըննող դատաւոր ․ տ̄ր ողորմ ։
Ա̄ծածնին բարեխօսուբ̄ ․ յիշեա՛ տ̄ր
և ողորմեա ։

Նորին տեառն Ներսեսի հայոց կաթողիկոսի. երգ աղօթական ՚ի դէմս սրբոյ Երրորդութեան. և իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեն առանձնակի:

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար.
Առ իս լոյս ծագեա՛:
Բղխումն ՚ի հօրէ և յորդւոյ,
Բղխեա՛ ՚ի հոգւոյս
Բան քեզ ՚ի հաճոյս:
Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտօղ զիս արա՛:
Դուռն ողորմութեան
Դաւանողիս բա՛ց.
Դասեցո՛ վերնոցն:
Երրեակ միութիւն,
Եղելոց խնամօղ,
Եւ ինձ ողորմեա՛:
Զարթի՛ր տէր յօգնել.
Զարթո՛ ըզթմբրեալս,
Զուարթնոց նըմանիլ:
Էդ հայր անըսկիզբն.
Էակից որդի,
Է միշտ սուրբ հոգի.

Ընկա՛լ զիս գըթած ,
Ընկա՛լ ողորմած ․
Ընկա՛լ մարդասէր ։
Թագաւոր փառաց ,
Թողութեանց տըւօղ ,
Թո՛ղ ինձ ըզյանցանս ։
Ժողովօղ բարեաց ,
Ժողովեա՛ և զիս
Ժողովս անդրանկաց ։
Ի քէն տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն ։
Լե՛ր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս ,
Լուծանօղ կապելոյս ։
Խորհրդոց գիտօղ ,
Խաւարիս շնորհեա՛
Խորհուրդ լուսաւոր ։
Ծընունդ հօր ծոցոյ ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ լոյս փառաց ։
Կենարար փրկիչ,
Կեցո՛ ըզմեռեալս ,
Կանգնեա՛ ըզգլորեալս ։
Հաստեա՛ հաւատով,
Հաստատեա՛ յուսով,

Հիմնեցո՛ սիրով։
  Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա՛։
  Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո՛։
  Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցո՛յց
Ճեպել 'ի յերկինս։
  Միածինըդ հօր,
Մո՛յծ զիս յաւագաստ
Մաքուր հարսանեացդ։
  Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա՛ զիս Քրիստոս։
  Նորոգօղ հնութեանց,
Նորոգեա՛ և զիս,
Նորոգ զարդարեա՛։
  Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զքաւութիւն.
Շնորհեա՛ զթողութիւն,
  Ուրախացո՛ տէր
Ոգւոյս փրկութեամբ,
Որ վասն եմ 'ի սուգ։
  Չար մըշակողին

Զար սերմանց Նորին
Զորացո՛ զպըտուղն։
  Պարգևիչ բարեաց,
Պարգևեա՛ խմոց
Պատուեացս թողութիւն.
  Ջուր շնորհեա՛ աչացս,
Ջերմ հեղուլ զարտօսր,
Ջնջել ըզյանցանս։
  Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո՛,
Ռահ ցո՛յց ինձ լուսոյ։
  Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ձմլեա՛
Սիրտ իմ քարեղէն։
  Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո՛։
  Տենչանս տեսլեամբ
Տո՛ւր ինձ յագենալ
Տէր Յիսուս Քրիստոս։
  Րաբունդ երկնաւոր,
Րստեա՛ զաշակերտս
Րամից երկնայնոց։
  Ցօղ արեան քոյ տէր,
Ցօղեա՛ 'ի հոգիս,
Ցնծասցէ անձն իմ։

Խնծեալըս մեղօք
Խնծեալ աղաչեմ
Խնսել 'ի բարիս։
Փրկիչ բոլորից,
փութա՛ զիս փրկել
փորձութեանց մեղաց.
Քաւիչ յանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս
քեզ երգել ընդփառս։
Ածածնին բարեխօսութեամբն
յիշեա՛ տէր, և ողորմեա։

Զկնի ժամն աղօթք։

Զքեզ գոհանամք տէր ած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութբ։ Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութին առաւօր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ։ Տո՛ւր մեզ տէր աղաչեմք զքեզ զմնացուած գիշերիս խաղաղութբ անցուցանել. և զամ ժամանակս կենաց պանդխտութեան մերոյ երկիւղիւդ քո ամրացո՛ և պահեա՛։ Ող զի ընդգուշութբ և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհիս՝ ժա-

մանեսցուք յանքոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ, շնորհօք և մարդասիրութե՟ տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟. ընդ որում քեզ հօր՝ և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութի՟՝ և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութի՟ն ամենեցուն.
Ա՟յ երկրպագեսցուք:

Նայեաց տէր բարերար ողորմութե՟ քով՝ յերկրպագուս և 'ի փառաբանիչս անուանդ քում սրբոյ. տ՟ր զօրութե՟ց խաղաղացո՛ զանձինս մեր յա՟մ սատանայական խռովութե՟ց և յաշխարհական զբօսանաց: Զհրեշտակ խաղաղութե՟ քոյ առաքեա՛ առ մեզ, որ եկեալ պահեսցէ ըզմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի՝ յարթնութե՟ և 'ի հանգստեան մերում: Ո՟պ զի բարեպաշտութե՟ և արժանաւորապէս քեզ տն՟դ ծառայելով 'ի կեանս յայսոսիկ, ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութե՟ քոյ՝ զոր պատրաստե-

ցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց։ Եւ ը̄նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ։

Օրհնեալ տ̃ր մեր յ̃ս ք̃ս։ Ամէն։

---

Աստ ասէ սաղմոս ըստ ձայնին, և զկնի սաղմոսին ասէ ըստ ձայնին կանոնագլուխ։

—

Կանոնագլուխ հարցաւ։

ԱՁ

Ալէլուիա. Ալէլուիա։

ԴԱՏԵԱ տէր զայնոսիկ, որք դատեն զիս. ալէլուիա. մարտի՛ր ընդ այնոսիկ, որք մարտնչին ընդ իս. ալէլուիա։

Ա՛ռ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ. հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգե՛լ զնո̃, և ասա՛ դու ցանձն իմ՝ թէ փրկութի̄ քո ես եմ. ալէլու։

Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս

և ամաչեսցեն՝ ոյք խորհէին ինձ չար։

Եղիցին նոքա ոպ՟ փոշի՝ առաջի հողմոյ. և հրեշտակ տ՟ն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա 'ի խաւար՝ և 'ի գայթակղութի. և հրեշտակ տ՟ն հալածեսցէ զն՟ս։

'Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապականութե՟ իւրեանց. և 'ի նանիր նախատեցին զանձն իմ։

Փ. Տէր յերկինս է ողորմութի քո. ճշմարտութի քո մինչև յամպս. ալէլուիա. ալէլուիա.

Արդարութի քո ոպ՟ լերինք ած՟. իրաւունք քո ոպ՟ խորք բազումք. զմարդիկ և զանասուն կեցուցանես դու տէր։

Ոպ՟ զի բազում արարեր զողորմութիւն քո ած՟. այլ որդիք մարդկան 'ի հովանի թևոց քոց յուսասցին։

Արբեսցին նոքա 'ի պարարտութէ տան քոյ. և զուղխս փափկութեան քոյ տացես ըմպել նոցա։

'Ի քէն է տ՟ր աղբիւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Ծագեա՛ զողորմութիւն քո, ոյք ճանաչեն զքեզ . զարդարութիւն քո ոյք ուղիղ են սրտիւք ։

Մի՛ եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից . և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ ։

Անդ անկցին ամենեքին՝ ոյք գործեն զանօրէնութիւն . մերժեսցին՝ և այլ մի՛ կարասցեն հաստատիլ ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ, և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն . ալէլուիա . ալէլուիա ։

## ԱԿ

ԱՍԱՑ անզգամն 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ Ած . ալէլուիա . ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց . և ոչ ոք է որ առնէ զքաղցրուն . ալէլ ։

Ած յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան . տեսանել թէ իցէ ոք իմաստուն, որ խնդրիցէ զԱծ . ալէլուիա ։

Ամենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան ։

Ո՛չ ոք է որ առնէ զբարի· և չէ ոք մինչև 'ի մի։

Ո՟պ ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն։

Այք ունեն զժողովուրդ իմ ո՟պ կերակուր հացի· և առ ա՟ծ ոչ կարդացին· ալէլ։

Փ· Ձի ոչ գոյր նոցա փոխանակ· և ոչ երկեան յա՟յ· ալէ· ալէ։

Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նոցա· և նոքա պղծեցին զօրէնս նորա· ալէլ։

Բաժանեցան 'ի սրտմտութէ երեսաց նորա· և եհաս 'ի սիրտս նոցա։

Կակուղ էին բանք նո՟ց քան զձէթ· և ինքեանք ո՟պ սլաք։

Ընկեա՛ 'ի տէր զհոգս քո· և նա կերակրէ զքեզ· և ոչ տայ յաւիտեան զսասանութիւն արդարոյ։

Դու ա՟ծ իջուսցես զնո՟ 'ի գուբ ապականութե· արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց· այլ ես 'ի քեզ տէր յուսացայ· ալէլ։

Փառք հօր, և որդւոյ։

## ԲՁ

ԻՔԵԶ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. ալէլուիա. յարդարութեան քում փրկեա՛, և ապրեցո՛ զիս. ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և կեցո՛ զիս:

Լե՛ր իմ ա͞ծ ապաւէն՝ և տեղի ամուր կեցուցանել զիս. զի հաստատու͞ն իմ և ապաւէն իմ դու ես:

Աստուած իմ փրկեա՛ զիս 'ի ձեռաց մեղաւորի. 'ի ձեռաց անօրինի և անիրաւի:

Դու ես համբերութի͞ իմ տ͞ր. տ͞ր յոյս իմ 'ի մանկութե͞ իմմէ:

'Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. և առ 'ի քէն է օգնութի͞ իմ յա͞մ ժամ:

Փ. Երկիրպագցեն նմա ա͞մ թագաւորք երկրի. և ա͞մ ազգք ծառայեսցեն նմա. ալէլուիա. ալէլ:

Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն՝ որոյ ոչ է օգնական:

Անխայեսցէ նա յաղքատն և 'ի տնանկն. և զանձինս տնանկաց կեցուսցէ. 'ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նց՟։

Պատուական է անունն նորա առաջի նոցա. կեցցէ և տացի նմա յոսկւոյն արաբացւոց։

Յաղօթս կացցեն առ նա յա՟մ ժամ. և զօրհանապազ օրհնեսցեն զնա։

Եղիցի հաստատութ՟ի ընդ ա՟մ երկիր. և 'ի վերայ գլխոց լերանց։

Բարձրասցի քան զլիբանան պտուղ նորա. և ծաղկեսցի 'ի քաղաքի տ՟ն ոպ՟ խոտ երկրի։

Եղիցի անունն տ՟ն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարև է անուն նր՟։

'Ի նա օրհնեսցին ա՟մ ազգք երկրի. և ա՟մ ազինք երանեսցեն նմա։

Օրհնեալ տէր ա՟ծ իղ՟ի, որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անունն սբ՟ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ա՟մ երկիր. եղիցի. եղիցի։ Փառք հօր և. այլն։

## ԲԿ

ԶՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՍ քո տէր յաւիտեան օրհնեսցից. ալէլուիա. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւն քո բերանով իմով. ալէլուիա:

Ասացեր թէ աշխարհս ողորմութբ շինեսցի. յերկինս պատրաստեսցի ճշմարտութի քո:

Եդի ուխտ ընտրելոց իմոց. երդուայ դաւթի ծառայի իմոյ:

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո. և շինեցից յազգէ յազգ զաթոռ քո:

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց տէր. և ճշմարտութն քո յեկեղեցիս սրբոց:

Ո՛վ է յամպս որ հաւասարեսցի քեզ. կամ ով նմանիցի տն յորդիս աստուծոյ:

Փ. Դարձուցեր զօգնութն 'ի սրոյ նր. և ոչ ընկալար զնա 'ի պատերազմի. ալէլուիա. ալէլ:

Անարգեցեր զսրբութիւն նորա և զաթոռ նորա յերկիր կործանեցեր:

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նր̃. և հեղեր զնովաւ զամօթ:

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո իսպառ. բորբոքեսցի ոպ̃ հուր բարկութի̃ն քո:

Իսկ արդ յիշեա՛ և տե՛ս թէ ո՞վ է իմ հանդիստ. միթէ 'ի զո՞ւր ինչ ստեղծեր զա̃մ որդիս մարդկան:

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ, և ոչ տեսցէ զմահ. կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո տր̃ առաջինք. զոր երդուար դաւթի ճշմարտութբ̃ քով:

Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ. զոր ընկալայ 'ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք քո տէր. նախատեցին փոխանակ օծելոյ քոյ:

Օրհնեալ տէր ա̃ծ յաւիտեանս յաւիտենից. եղիցի. եղիցի: Փառք. ալէլ:

ԳՁ

ԽՈՍՏՈՎԱՆ եղերո՛ւք տեառն. զի քաղցր է. ալէլուիա. զի յաւիտեան է ողորմութին նր. ալէլ։

Ո՛ խօսեսցի զզօրութիս տն. լսելի արասցէ զամ օրհնութիս նր։

Երանի՛ որք պահեն զիրաւունս. և առնեն զարդարութին յամ ժամ։

Յիշեա՛ զմեզ տէր ընդ հաճոյս ժողովրդեան քո. և այց արա՛ մեզ 'ի փրկութեան քում։

Տեսցուք մեք զքաղցրութին ընտրելոց քոց. ուրախ եղիցուք մեք յուրախութին ազգի քո. և գովեսցուք մեք 'ի ժառանգութե քում։

Մեղաք մեք ընդ հարս մեր. անօրինեցաք և յանցեաք։

Փ. Մատնեաց զնս 'ի ձեռս հեթանոսաց. տիրեցին նոցա ատելիք իւրեանց և թշնամիք իւրեանց նեղեցին զնս. և խոնարհք եղեն 'ի ներքոյ ձեռաց նոցա. ալէլ. ալէլուիա։

Բազում անգամ փրկեաց զնս. և նոքա դառնացուցին զնա 'ի խոր֊

հուրդս իւրեանց. և կորացան յա֊
նօրէնութե̃ իւրեանց։
Հայեցաւ տէր ՚ի նեղութիւնս նոցա.
՚ի լսել ձայնի աղօթից նոցա։
Յիշեաց զուխտ իւր. և զղջացաւ
ըստ բազում ողորմութե̃ իւրում,
և ետ զնո̃ ՚ի գթութիւնս առաջի
ամենայն գերչաց նոցա։
Փրկեա՛ զմեզ տէր ա̃ծ մեր. և
ժողովեա՛ զմեզ ՚ի հեթանոսաց։
Խոստովան եղիցուք անուան քում
ս̃բյ, և պարծեսցուք յօրհնութիս քո։
Օրհնեալ տէր աստուած ի̃ղի
յաւիտեանս յաւիտենից։
Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն
եղիցի եղիցի։ Փառք հօր և. այլն.

ԳԿ

ԱՐԱՐԻ իրաւունս և արդա֊
րութիւն. այլուխ. մի՛ մատներ
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց. այլն։
Ընկա̃լ զծառայս քո ՚ի բարի. զի
մի՛ ամբարտաւանք զրուեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութեան
քում տ̃ր. և բանից արդարութե̃ քոյ։
Արա՛ ընդ ծառայի քում տէր

ըստ ողորմութեան քում. զար-
դարութիւնս քո ուսո՛ ինձ ։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա՛ զիս. և ծանեայց զվկայութիւնս քո ։

Ժամ է պաշտել զՏ՟ր. խափա-
նեցին զօրէնս քո ։

Փ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քոյ Տ՟ր, ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս. ալէլ. ալէ-
լուիա ։

Մտցեն աղօթք իմ առաջի քոյ տէր. և բանիւ քո փրկեա՛ զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-
թիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդա-
րութեամբ են ։

Եղիցի՛ ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Ցանկացայ փրկութեան քում տէր. և օրէնք քո խօսք իմ էին ։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

Մոլորեցայ ես ո՟պ զոչխար կորու-
սեալ, խնդրեա՛ զծառայս քո. զի

զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։
Փառք Հօր և. այլն։

## ԴՁ

ՕՐՀՆԵԱ անձն իմ զտ̄ր. օրհնե-
ցից զտ̄ր 'ի կեանս իմ. այլելուիա.
սաղմոս ասացից ա̄յ իմոյ մինչև եմ
ես. այլն։
Մի յուսայք յիշխանս, և մի յոր-
դիս մարդկան. զի ոչ գոյ փրկութ̄ի
'ի նոսա։
Ելցէ հոգի 'ի նոցանէ, և դարձ-
ցին անդրէն 'ի հող. և յայնմ ա-
ւուր կորիցեն ա̄մ խորհուրդք նոցա։
Երանի ազգի որոյ տէր ա̄ծ յա-
կոբայ օգնական է նմա. և յոյս նորա
'ի տէր ա̄ծ է։
Ո արար զերկինս և զերկիր. ըզ-
ծով, և զա̄մ որ է 'ի նոսա։
Ո պահէ զճշմարտութ̄ի յաւիտեան
և առնէ իրաւունս զրկելոց։
Փ. Գովեա́ երգեմ զտ̄ր. այլելուիա։
Եւ օրհնեա́ զա̄ծ քո սիօն. այլն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց.
և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։
Ո եդ զսահմանս քո 'ի խաղաղու-

թիւն. պարարտութ՟ ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր. վաղ-վաղ ընթանան պատգամք նորա:

Դնէ զձիւն ո՟պ զասր. և զմէգ ո՟պ փոշի ցանեաց:

Արկանէ զսառն ո՟պ պատառս. առ-աջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր և հալէ զն՟. շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր յակոբայ. զար-դարութիւն և զիրաւունս ի՟լի:

Ո՛չ այս՟ արար ա՟մ ազգաց տէր. և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:

Փառք հօր և. այլն:

ԴԿ

ՍԻՐԵՑԻՑ զքեզ տէր զօրութի՟ իմ. ալէլուիա. տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ, և փրկիչ իմ. ալէլուիա:

Ա՟ծ օգնական իմ. և ես յուսամ ՚ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկու-թեան իմոյ ընդունելի իմ է:

Օրհնելով կարդացից առ տէր. և 'ի թշնամեաց իմոց ապրեցայց։

Շուրջ եղեն զինև երկունք մահու, և ուղխք անօրէնութեան խռովեցուցին զիս։

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. և ժամանեցին ինձ որոգայթք մահու։

'Ի նեղութեան իմում ես առ տ̃ր կարդացի. և առ աստուած իմ աղաղակեցի։

Փ. Զգեցուցեր ինձ զզօրութն 'ի պատերազմի. զյարուցեալսն 'ի վերայ իմ, ներքոյ իմ արարեր, ալէլուիա. ալէլ։

Զթշնամիսն իմ հալածականս արարեր. և զատելիսն իմ սատակեցեր։

Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկէր զն̃ս. կարդացին առ տէր, և ոչ լուաւ նոցա։

Մանրեցից զն̃ս որպէս փոշի առաջի հողմոյ. և ոփ̃ կաւ գուեհաց կոխեցից զն̃ս։

Փրկեսցէ զիս տէր 'ի հակառակուէ ժողովրդոց. և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց։

Ժողովուրդ զոր ոչ գիտէի՝ ծառայեաց ինձ. և ՚ի լուր ականջաց լուաւ ինձ:

Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց մաշեցան. և կաղացան ՚ի շաւղաց իւրեանց:

Կենդանի է Տ՟ր. և օրհնե՟լ է Ա՟ծ. և բարձր եղիցի Ա՟ծ փրկու՟ե իմոյ:

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև:

Փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բարկացողաց յայնցանէ, որք յարուցեալ են ՚ի վերայ իմ. բարձր արարեր զիս. և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս:

Վ՟ա այսորիկ խոստովան եղէց քեզ ՚ի հեթանոսս. և անուան քում սաղմոս ասացից:

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա. առնել ողորմութի՟ն ընդ օծելոյ նորա ընդ Դաւթի. և ընդ զաւակի նորա յազգէ մինչև յազգ: Փառք հօր և. ալէլ:

Կանոնագլուխ Բուն Բարեկենդանին. Եւ Նոր Կիւրակէին. Օրհնեա՛ անձն իմ. 'Ի Ըձա աաէն. Եւ աաէն յամէն. Է՟. պան հէպ յայնի դէրգօ :

Փոխ :

ՕՐՀՆԵՑԻՑ զՔեզ գոհութե՟'ի կեանս իմ. սաղմոս սասցից Քեզ Քո՟ թագաւոր յաղթական նոր երգով օրհնութեամբ :

Սաղմոս .

Օրհնեա՛ անձն իմ զՏ՟ր. օրհնեցից զՏ՟ր 'ի կեանս իմ. և սաղմոս սասցից Ա՟յ իմոյ, մինչև եմ ես :

Մի՛ յուսայք յիշխանս՝ և մի՛ յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկու՟ն 'ի ն՟ս :

Ելցէ հոգի 'ի նոցանէ՝ և դարձցին անդրէն 'ի հող. և յայնմ աւուր կորիցեն ա՟մ խորհուրդք ն՟ց :

Երանի՛ ազգի՝ որոյ Տ՟ր Ա՟ծ յակոբայ օգնական է նմա. և յոյս ն՟ր 'ի տէր Ա՟ծ է :

Որ արար զերկինս և զերկիր. զծով, և զա՟մ որ է 'ի ն՟ս :

Որ պահէ զճշմարտութի՟ յաւիտեան. և առնէ իրաւունս զրկելոց :

Տայ հաց քաղցելոց· և արձակէ ըզկապեալս տ՟ր ։

Տ՟ր բանայ զաչս կուրաց· և կանգնէ զգլորեալս տ՟ր ։

Տ՟ր սիրէ զարդարս· տ՟ր պահէ ըզպանդուխտս· զորբս և զայրիս ընդունի տ՟ր· և զճանապարհս ամբարըշտաց կորուսանէ ։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան· ա՟ծ քո սիոն· յազգէ մինչև յազգ ։

Փոխ․

Քաղցրացին քեզ ք՟ս, գոհութիւնք երկիւղածաց անուան քո· զոր յուսացուցեր ողորմութ՟բ քո· ՚ի խորհուրդս կենաբեր գալըստեանդ քոյ ։

Սաղմոս․

Օրհնեցէք զտ՟ր· զի բարի է սաղմոս· ա՟յ մերոյ քաղցր եղիցի օրհնութիւն ։

Շինէ զեր՟մ տ՟ր· և զցրուեալսն իսրայէլի ժողովէ ։

Բժշկէ զբեկեալ սիրտս· և պատէ զա՟մ վէրս ն՟ց ։

Ո թուէ զբազմութ՟ի աստեղաց· և զամենեսեան զն՟ս յանուանէ կոչէ ։

*Մեծ է տէր մեր. և մեծ է զօրութիւն նորա. և իմաստութեան նորա ոչ գոյ բաւ։*

*Ընդունի զհեզս տ̃ր. և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր։*

*Օրհնեցէք զտէր խոստովանութեամբ. սաղմոս ասասցէք նմա օրհնութեամբ։*

*Ո զգեցոյց զերկինս ամպովք. և պատրաստ արար զանձրև իւր յերկիր։*

*Բուսոյց զխոտ 'ի լերինս. և զդալարի 'ի ծառայութիւն մարդկան։*

*Ո տայ անասնոց կերակուր. ձագուց ագռաւուց՝ որք կարդան առ նա։*

*Ո՛չ թէ ընդ զօրութիւն ձիոյ կամեցաւ տ̃ր. և ո՛չ ընդ իրանս առն սկայի հաճեցաւ։*

*Այլ հաճեցաւ տ̃ր ընդ երկիւղածս իւր, և ընդ այնոսիկ, որք յուսան յողորմութիւն ն̃ր։*

Փոխ.

*Զքեզ ք̃ս գովէ եկեղեցի փըրկեալ ք̃ո ն̃բ. ցնծալով, տեսանէ*

զքեզ զփրկօղդ եկեալ հայրական իշխանութ՟ ՚ի պատկեր զո՟րբս քո ։

Սաղմոս .

Գովեա՛ երուսաղէմ զտ՟ր . և օրհնեա՛ զա՟ծ քո սիօն ։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց . և օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ ։

Ո՛ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութիւն . պարարտութ՟ ցորենոյ լցոյց զքեզ ։

Առաքէ զբան իւր յերկիր . վաղվաղ ընթանան պատգամք ն՟ր ։

Դնէ զձիւն ո՟պ զասր . և զմէգ ո՟պ փոշի ցանեաց ։

Արկանէ զսառն ո՟պ պատառս . առաջի ցրտոյ ն՟ր ո՞ կարէ կեալ ։

Առաքէ զբան իւր՝ և հալէ զն՟ս . շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք ։

Պատմէ զբան իւր յակոբայ . զարդարութիւն և զիրաւունս ի՟ղի ։

Ո՛չ այսո՟պ արար ա՟մ ազգաց ո՟ր . և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա ։

Կանոնագլուխ մեծի ուրբաթուն:

Սաղմոս.

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր. ալէլուիա:

Ա՛յլ 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ. ալէլ:

Ցնծացայ ես 'ի բանս քո. որ͞պ այն որ գտանէ աւար բազում:

Զմեղս ատեցի և անարգեցի. և զօրէնս քո սիրեցի:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ. վ͞ս իրաւանց և արդարութեան քոյ:

Խաղաղութիւն բազում է այնոցիկ, ոյք սիրեն զօրէնս քո. և ո՛չ գոյ 'ի նո͞ց գայթակղութիւն:

Սպասեցի փրկութե͞ քում տէր. և զպատուիրանս քո սիրեցի:

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զն͞ս յոյժ:

Պահեցից զպատուիրանս և զվկայութիւնս քո. զի ա͞մ ճանապարհք իմ առաջի քոյ են:

Մերձեսցին խնդրուածք իմ ա֊

ռաջի քոյ Տր̅. ըստ բանի քում
իմաստուն արա՛ զիս ։
Մտցեն աղօթք իմ առաջի քոյ
Տր̅. եւ բանիւ քո փրկեա՛ զիս ։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-
թիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո ։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի
ամ պատուիրանք քո արդարութ̅ են ։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել
զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի ։
Ցանկացայ փրկութեան քում Տր̅.
եւ օրէնք քո խօսք իմ են ։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ ։
Մոլորեցայ ես որպ̅ զոչխար կորու-
սեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

Փառք Հօր եւ. այլն ։

Եւ դնեն զգրակալն, եւ զսբ̅ աւետարա-
նն 'ի վր̅, եւ զսաղմոսարանն, եւ ասեն
երկու քահանայք զսաղմոսն. Գ̅, Գ̅. Փոխ.
Ընդէր խռովեցան ։ Տր̅ զի բազում.
'ի կարդալ իմում ։ Եւ այլքն եղանակեն
յոյնիւ. կցտ. Իշխանք ժողովեցան ։
Երիցս անգամ ասա՛, եւ զվերջինն բարձր ։

Կանոնագրութիւն մեծի շաբաթուն։

*Դատեա՛ տէր զայնոսիկ*։ փէս ՚ի Թիւն. 27։

Բայց թէ կանոնագրութեան ընդ առաջմ-ոյն ասէ՝ յետին գուբղայն որ է այլոց մարգարէից՝ Նա ասէ։ Իսկ եթէ ոչ ասէ ընդ առաջմոյն, ոպ է առձորութե ոմանց. զինի կանոնագրութեան ասէ։ Եւ *նա խա-ղաղութէ*։ *Օրհնութիւն և փառք*։ Եւ ապա պաշտօն առնի ըստ յայնին. և զինի հանգստեան աւետարան ընթեր-ցեալլինի։ Իսկ եթէ հանդիսի օր լինի, կամ խաչի տօն լինի, *Այսօր անճառ*ասի. և խաչելութե աւետարան ընթեր-ցեալ լինի։ Զինի աւետարանին. *Նո-րոգօղ տիեզերաց*. ապա *Հոգւոց հանգուցելոց*։

Երգ զին Ներսէսի, ասացեալ վն աւե-տարանացն առաւօտ մեծի ուրբաթու։

*Այսօր անճառ լուսոյն ծագումն*։ Եւ այլն, գիւտ ՚ի շարականոցի։

Զինի այսօր անճառին՝ ասի սաղմոս, կդ. (*Նշանեցաւ.*) ձայն. (՚Ի *կար-*

*դալխմում*) և ապա ընթերցեալ լինի աւետարանն խաչելութե՟ :

Բայց յորժամ պաշտաման շարականն հանգստեան ասեն , զկնի շարականացն ասի սաղմոս ըստ յայնմին . և ընթերցեալ լինի աւետարան ըստ յայնմին . և զկնի աւետարանին ասի յ*Աճանեղէն* փոխ մի : Եւ ոմանք ըստ *Աճանեղին* կցորդեն զմի տուն ՚ի յ*Արարիչ և մարդասէրէն*. և կամ ՚ի *Ես ասացիէն* . կամք քո է . և ապա *Հոգւոց հանգուց* . *Ք՟ որդի*. և *Հայր մեր* :

---

Սաղմոսք ըստ յայնմին նախ քան զաւե-տարանն հանգստեան :

## ԱՁ

ՏԷՐ *մի՛ սրտմտութե՟ քով յանդի-մանիր զիս . և մի՛ բարկութե՟ քով խրատեր զիս :*

*Ողորմեա՛ց ինձ տր՟ . զի հիւանդ եմ ես . բժշկեա՛ զանձն իմ . զի խռովե-ցան ոսկերք իմ :*

*Անձն իմ յոյժ խռովեցաւ . և դու տր՟ մինչև յերբ :*

Դա՛րձ տէր, և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս տ̃ր ըստ ողորմութե̃ քում:

Զի ո՛չ ոք է, որ 'ի մահու յիշէ ըզքեզ. կամ 'ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում. լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ 'ի սրտմտութե̃ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ա̃մ թշնամեաց իմոց։

'Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տ̃ր ձայնի լալոյ իմոյ. լըւաւ տ̃ր աղօթից իմոց. և տ̃ր ըզխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ա̃մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ. փաղփաղակի և խռովեսցին։

## ԱԿ

Բարձր առնեմ զքեզ տ̃ր. զի ընկալար զիս. և ո՛չ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։

Տ̃ր ա̃ծ իմ կարդացի առ քեզ, և

բժշկեցեր զիս . Տր հանէր 'ի դժո_
խոց զանձն իմ . և փրկեցեր զիս
յայնցանէ որք իջանեն 'ի գուբ :

Սաղմոս ասացէք Տն սբք նր . խոս_
տովան եղերուք յիշատակի սրբու_
թեան նորա :

Սրտմտութիւն է 'ի բարկութե նր .
և կեանք են 'ի կամս նր :

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք .
առաւօտուց եղիցի ուրախութիւն :

Ես ասացի 'ի բարեկենդանութե
իմում, թէ ոչ սասանեցայց յաւի_
տեան :

Տր 'ի կամս քո ետուր գեղոյ իմոյ
զօրութիւն . դարձուցեր զերեսս քո
յինէն՝ և ես եղէ խռովեալ :

Առ քեզ տէր կարդացի . և առ
Ած իմ աղաղակեցի . զի՞նչ օգուտ
է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ
ես յապականութիւն :

Մի թէ հող խոստովան առնիցի
առ քեզ . կամ պատմեսցէ զճշմար_
տութիւնս քո :

Լուաւ ինձ տէր, և ողորմեցաւ . և
տէր եղև ինձ օգնական :

Դարձոյց զսուգ իմ յուրախութի .

եղերծ յինէն զքուրձ. և ինձ զգե֊ցոյց զուրախութիւն:

Ո՜վ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. և այլ մի՛ ևս զղջացայց, Տ̅ր Ա̅ծ իմ. յաւիտեան խոստովան եղէց քեզ:

ԲՁ

Աստուած յանուան քում կեցո՛ զիս. և ՚ի զօրութեան քում իրաւ֊ արա՛ ինձ:

Ա̅Ծ լո՛ւր աղօթից իմոց. ունկն դի՛ր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ՚ի վ̅ր իմ, և հզ֊ օրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ Ա̅Ծ առաջի իւրեանց:

Ահա՛ Ա̅Ծ օգնական իմ, և Տ̅ր ըն֊ դունօղ հոգւոյ իմոյ:

՚Ի դարձուցանել զչարն ՚ի թշնա֊ միան իմ, Ճշմարտութ̅բ քով սատա֊ կեա՛ զն̅ո:

Ես կամօք իմովք պատարագս մա֊ տուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում Տ̅ր, զի բարի է:

Յ̅մ նեղութ̆է իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ:

ԲԿ

Աստուած ողորմեա՛ց մեզ՝ և օրհնեա՛ զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ՚ի մեզ՝ և ողորմեա՛ց մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո. յազինս ա՟մ զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟ծ. խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟մ։

Ուրա՛խ եղիցին, և ցնծասցեն ազինք. զի դու դատես զժողովուրդս յուղղութեան. և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովա՛ն եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟ծ. գոհասցին զքէն ժողովուրդք ա՟մ։

Երկիր ետ զպտուղ իւր. և օրհնեաց զմեզ ա՟ծ, ա՟ծ մեր։

Ա՟ծ մեր օրհնեսցէ զմեզ. և ՚ի նմանէ երկիցեն ա՟մ ծագք երկրի։

ԳՁ

Հաճեցար տէր ընդ երկիր քո. և դարձուցեր զգերու՟ի յակոբայ։

Թողեր զանիրաւու՟ի ժողովրդեան քոյ. և ծածկեցեր զա՟մ մեղս ն՟ց։

Լռեցուցեր զա՟մ սրտմտութիւնս

քո· դարձար 'ի բարկութ͞է սրտմըտութեան քոյ։

Դա՛րձ առ մեզ ա͞ծ փրկիչ մեր· և դարձո՛ զսրտմտու͞ես քո 'ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տ͞ր· և մի՛ ձգեր զբարկութիւն քոյ յազգէ մինչև յազգ։

Ա͞ծ դու դարձեալ կեցուսցես ըզմեզ· և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ։

Ցո՛յց մեզ տ͞ր զողորմութիւնս քո· և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։

Լուայց զի՛նչ խօսի տ͞ր ա͞ծ մեր· խօսեսցի զխաղաղութիւն ժողովըրդեան իւրոյ առ ս͞բս իւր՝ և առ այնոսիկ, որք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն ն͞ր· բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին · արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ· արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տ͞ր տացէ զքաղցրութիւն · և եր֊

կիր մեր տացէ զպտուղ իւր. ար-դարութիւն առաջի ն͞ր գնասցէ. դիցէ 'ի ճանապարհի զգնացս իւր:

Գ. Կ

Տէր լո՛ւր աղօթից իմոց. և աղա-ղակ իմ առ քեզ եկեսցէ. մի՛ դար-ձուցաներ զերեսս քո յինէն:

Յաւուր նեղութեան իմոյ խոնար-հեցո՛ առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվա-ղակի լո՛ւր ինձ:

Սպառեցան ո͞պ ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ ո͞պ խռիւ չորացան:

Հարայ ես ո͞պ խոտ. և ցամաքե-ցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ, 'ի ձայնէ հեծութե͞ իմոյ:

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ. նմա-նեցայ ես հաւալասան անապատի:

Եղէ ես ո͞պ բու յաւերակի. տքնե-ցայ և եղէ ես ո͞պ ճնճղուկ միայն 'ի տանիս:

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ. և գովիչք իմ ինև երդնուին:

Զմոխիր ո͞պ զհաց կերի. և զըմ-պելին իմ արտասուօք խառնեցի:

Յերեսաց բարկութե̃ սրտմտութե̃ քո. զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս:

Աւուրք իմ ո̃պ հովանի անցին. և ես ո̃պ խոտ ցամաքեցայ:

Դու տէր յաւիտեան կաս. և յիշատակ քո յազգէ մինչև յազգ:

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ սիոնի. ժամանակ գթալոյ ն̃ր հասեալ է ժամ:

## ԴՁ

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տ̃ր, ըստ բանի քում իմաստուն արա զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր. և բանիւ քո փրկեա́ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա̃մ պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութե̃ քում տ̃ր. և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես ոպ̅ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

ԴԿ

Տէր լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով:

Լո՛ւր ինձ արդարութեա̅ քով. և մի՛ մտաներ 'ի դատաստան ը̅ ծառայի քում. զի ո՛չ արդարանայ առաջի քոյ ա̅մ կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս 'ի խաւարի ոպ̅ մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրս զառաջինս. խորհեցայ յա̅մ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ. և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ ոպ̅ երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ տ̅ր. զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցիմ այնոցիկ, որք իջանեն 'ի գուբ:

Լսելի արա՛ ինձ առաւօտու զողորմութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ:

Ցո՛յց ինձ Ճանապարհ՝ յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ̃ր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես ա̃ծ իմ:

Հոգի քո բարի, առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Վ̃ա անուան քո տ̃ր կեցուսցես զիս. արդարութ̃բ քով հանցես 'ի նեղութ̃է զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զա̃մ նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ:

Զկնի սաղմոսացս ընթերցեալ լինի աւետարան ըստ յայնին:

Աւետարան ըստ Մատթէոսի :
( Ժզ. 36: )

Դկ. Բկ.

ՅԱՅՆԺԱՄ Թողեալ յսի զժողովուրդսն, եկն 'ի տունն. մատեան առ նա աշակերտքն նր և ասեն. մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակին: Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնս. որ սերմանէ զսերմն բարի, է որդի մարդոյ. և ագարակն աշխարհս է: Սերմն բարի նոքա են, որք որդիքն արքայութե են. իսկ որոմն որդիք չարին են. և թշնամին որ վարեաց զայն, սատանայ է. և հունձքն կատարած աշխարհիս է. և հնձօղքն հրեշտակք են: Որպէս ժողովի որոմն և 'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս: Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր. և ժողովեսցեն յարքայութէ նր զամ գայթագղութի և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութի. և արկցեն զնս 'ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց:

Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ նման է արքայութեան երկնից գանձի ծածկելոյ յագարակի. զոր գտեալ մարդոյ թաքոյց. եւ ՚ի խընդուէ անտի երթայ վաճառէ զամ ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն: Դարձեալ նման է արքայութեան երկնից առն վաճառականի. որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս. եւ գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամ զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ: Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ՚ի ծով, եւ յամ ազգաց ժողովելոյ: Որ իբրեւ լցաւ, հանեալ ՚ի ցամաք՝ եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, եւ զխոտանն ՚ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ եւ մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց, եւ արկցեն զնս ՚ի հնոց հրոյն. անդ եղիցի լաց եւ կրճել ատամանց: Ասէ ցնս յս. իմացայք զայս ամ. ասեն ցնա, այո

ո̃ր ։ Եւ նա ասէ ցնո̃ · վո̃ այսորիկ
ա̃մ զպիր աշակերտեալ արքայու_
թե̃ երկնից՝ նման է առն տանու_
տեառն , որ հանէ 'ի գանձէ իւրմէ
զնոր և զհին ։

Աւետարան ըստ Մարկոսի ։ (Դ ։ 26 ։)

## ԲՁ · ԴՁ ·

Եւ ասէր · այսպէս է արքայութի̃ն
ա̃յ · ո̃պ զի այր մի արկանիցէ զսեր_
մանիս յերկիր , և ննջիցէ և յառնի_
ցէ զցայգ և զցերեկ · և սերմանիքն
բուսանիցին և աճիցեն ։ Եւ նա ո՛չ
գիտէ , Թէ երկիրն ինքնին բերէ
զպտուղ · նախ զխոտն՝ և ապա ընդ_
հասկն , ապա զցորեանն ատոք 'ի
հասկին ։ Եւ յորժամ տայցէ զպտ_
տուղն , վաղվաղակի առաքէ ման_
գաղ՝ զի հասեալ են հունձք ։ Եւ
ասէր , ո՛ւմ նմանեցուսցուք զար_
քայութի̃ն ա̃յ · կամ որո՛վ առակաւ
առակեսցուք զնա ։ Որպէս հատն
մանանխոյ՝ որ յորժամ սերմանի_
ցի յերկրի , փոքրագոյն է քան
զա̃մ սերմանիս , որք են յերկրի ·

և յորժամ սերմանիցի, բուսանի՝ և լինի մեծ քան զա̃մ բանջար. և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նր̃ թռչնոց երկնից բնակել: Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, ոպ̃ կարող լինէին լսել: Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նս̃. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զա̃մ:

Աւետարան ըստ Ղուկասու: (ԺԲ. 32:)

ԱԿ. ԳԿ.

ՄԻ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութի̄: Վաճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութի̄. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ո՛չ գող մերձենայ, և ո՛չ ցեց ապականէ: Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին: Եղիցին գօտիք ձեր սնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալք: Եւ դուք նմանօղք մարդկան, որք ակն ունիցին տն̃ իւրեանց,

թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն նմա: Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ տէրն գտցէ արթունս: Ամէն ասեմ ձեզ. զի գօտի ընդմէջ ածցէ. և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտեսցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ: Բայց զայն գիտասջի՛ք. եթէ գիտէր տանուտէրն, յորում ժամու գող գայ, հսկէր և չտայր թողուլ ական հատանել 'ի տան իւրում: Եւ դուք եղերուք պատրաստք. զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ: Ասէ պետրոս. տէր, առ մեզ ասացեր զառակդ զայդ, եթէ առ ամենեսեան: Եւ ասէ տէր. ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վ՟ր գերդաստանի իւրոյ՝ տալ 'ի ժամու զկերակուրս: Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս: Արդարև

ասեմ ձեզ. զի 'ի վերայ ա̃մ ընչից իւրոց կացուսցէ զնա ։ Ապա եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում. յամէ տէր իմ 'ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայս. ուտել և ըմպել և արբենալ։ Եկեսցէ տ̃ր ծառային այնորիկ յաւուր՝ յորում ակն ո՛չ ունիցի, և 'ի ժամու՝ յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նր̃ ընդ անհաւատս դիցէ։ Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տն̃ իւրոյ, և ո՛չ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում։ Եւ որ ո՛չն գիտիցէ, և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ։Ամենայնի որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ ։

Աւետարան ըստ Յովհաննու, (Ե. 19։)

ԱՁ · ԳՁ ·

Պատասխանի ետ յս̃, և ասէ ցն̃ս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. ո՛չ կարէ

որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ ո՛չ տեսանիցէ զհայրն, զի առնէ: Զի զոր նայն առնէ, ըզ-նոյն և որդին նմին նման գործէ. զի հայր սիրէ զորդի, և զա՟մ ինչ ցուցա-նէ նմ՟ զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգոր-ծըս, ընդ որս դուք զարմանայք: Զի ո՟պ հայր յարուցանէ զմեռեալս, և կենդանի առնէ, նոյնպէս և որդի՝ զորս կամի կենդանի առնէ: Եւ ո՛չ եթէ հայր դատէ զոք, այլ զա՟մ դատաստան ետ որդւոյ իւրոյ. զի ամենեքեան պատուեսցեն զոր-դի, որպէս պատուեն զհայր: Որ ո՛չ պատուէ զորդի, ո՛չ պատուէ զհայր զառաքիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտե-նականս, և 'ի դատաստան ոչ մտա-նէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ, և արդէն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն ա՟յ. և որք լուիցենն կեց-

ցեն ։ Զի ոպ̃ հայր ունի կեանս յան-
ձին իւրում. նոյնպէս ետ և որդւոյ
ունել կեանս յանձին իւրում։ Եւ
իշխանութիւն ետ նմա դատաստան առ-
նել. և զի որդի մարդոյ է, ընդ այն
զի՞ զարմանայք ։ Զի եկեսցէ ժա-
մանակ՝ յորում ամենեքեան որք
՚ի գերեզմանս կայցեն՝ լուիցեն ձայ-
նի նորա. և եկեսցեն արտաքս ։ Որոց
բարիս գործեալ իցէ ՚ի յարութիւն
կենաց. և որոց զչար արարեալ, ՚ի
յարութիւն դատաստանաց ։ Ո՛չ կա-
րեմ ես առնել յանձնէ և ոչինչ.
այլ որպէս լսեմ դատեմ. և դա-
տաստանն իմ արդար է ։ Զի ո՛չ
խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այ-
նորիկ՝ որ առաքեացն զիս ։

Նորին Տ̃ն Ներսէսի Երգ՝ ասացեալ վա-
սն ՚ի ք̃ս ննջեցելոց ։

Ած անեղ անժամանակ՝. Եւ այլն ։
Գիտ ՚ի շարականոցի.

### Մաղթանք ։

Հոգւոցն հանգուցելոց քո̃ տ̃ր ա-
րա հանգիստ և ողորմութիւն. և մեզ

մեղաւորացս շնորհեա՛ զթողութի յանցանաց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտ՟ր աղ։
Վ՟ն հանգուցեալ հոգւոցն աղա-չեսցուք զփրկիչն մեր ք՟ս. զի զն՟ս ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութե՟ իւրոյ։ Ամենակալ տէր ա՟ծ մեր կեցո՛ և ող։
Տ՟ր ողորմեա՛. Երիցս։

Աղօթք։

Ք՟ս որդի ա՟յ անոխակալ և բարե-գութ՝ գթա՛ քո արարչական ս՟ի-րովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծա-ռայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութե՟ քո. արա՛ արժանի ողորմութե՟, քաւութե՟, և թողութե՟ մեղաց։ Պատուորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յա-ջակողման դասուն։ Զի դու ես տ՟ր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց, և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ։

Եւ ապա ասի օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն. կամ 'ի յայնէն. և զկնի մաղ-թանքն, և փառքն և աղօթքն:

Մաղթանք Տէրունական տօնից:

*Փառք հրաշափառ ծննդեան քո Տէր. զօրհնեալ և զփառաւորեալ զհրաշալի և զյաղթօղ զծնունդ քո օրհնեմք և փառաւորեմք:*

*Մարդասէր Տէր վն սրբուհւոյ ա-նարատ մօր քո և կուսի. և վն խաչի քո պատուականի՝ ընկա՛լ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:*

Այսպէս ասա՛ և յամ տօնս տէրունա-կանս ըստ պատշաճի աւուրն, թէ Յայ-տնութեան, թէ Գալստեան, թէ Տնօրէ-նութեան, թէ Խաչելութեան, թէ Թաղման, թէ Յարութեան, թէ Համբարձման, թէ Գալստեան հոգւոյն սրբոյ, թէ Պայծա-ռակերպութեան, և թէ 'ի տօնս Խաչի և Եկեղեցւոյ:

Մաղթանք 'ի տօնս սրբոց:

*Բարեխօսութեամբ սրբուհւոյ ածած-*

նին, և յովհաննու մկրտչին. սրբոյն ստեփաննոսի նախավկային. և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին: Ցիշատակաւ և աղօթիւք սրբոց այս աւուր, որոց այսօր է յիշատակ: Եւ վասն խաչի քոյ պատուականի տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

---

Մաղթանք պահոց:

Երանեալին:

Դկ. Քն̃ է իմ տծ̃, և փառաւոր առնեմ զսա. տծ̃ հօր իմոյ, և բարձր արարից զսա: Մարդասէր տէր: վն̃ սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վն̃ խաչի քոյ պատուականի՝ ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Երկինք պատմենին:

ԱՁ. Տո՛ւք փառս այ̃. տո՛ւք օրհնութի մարդասիրին՝ Թագաւորին յաւիտենից. որ փրկէ զծառայս իւր, և կեցուցանէ: Մարդասէր:

Մի նախանձիրեն:

ԱԿ. Դու ես տէր մեր. դու ես քն̃ փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր: Մարդասէր:

Ուրբաթին :

ԲՁ. Բարձրացաւ եղջիւր իմ յա̃ծ փրկչին իմ. հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր. ո̃րամբ եւ հաւատով: Մարդասէր:

Իբրնին :

ԲԿ. Խաղաղութեաց տուող քո̃, զխաղաղութիւն եւ զողորմութիւն քո պարգեւեա մեզ: Մարդասէր:

Տէր ապաւէնին :

ԳՁ. Յոյս կենդանութե̃՝ յոյս եւ ապաւէն փրկութե̃ ո̃ր յո̃, փրկեա եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Մարդասէր:

Խոստովանին :

ԳԿ. Եկեսցեն աղօթք մեր 'ի տաճար սբ̃ քո, խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս մեր: Մարդա.

'Ի նեղութեանին :

ԴՁ. Լո՛ւր մեզ ո̃ր լո՛ւր մեզ ա̃ծային ողորմութբ̃, եւ գթութբ̃ քով խնայեա յարարածս քո: Մարդասէր:

Քարոզ. Երանեալ և Իբրև չանանայն:

Դկ. Բկ.

Վս՟ ՚ի վերուստ խաղաղութե՟ և փրկութե՟ անձանց մերոց. զՏր՟ աղա-չեսցուք:

Վս՟ լսելի լինելոյ առ՟ ած՟ ձայնի ա-ղաչանաց մերոց. զՏր՟ աղ:

Վս՟ քաւիչ և ներող լինելոյ ած՟ ՚ի վր՟ մեղաց մերոց. զՏր՟ աղ:

Վս՟ թողլոյ մեզ զամ՟ յանցանս մեր զկամայ և զակամայ. զՏր՟ աղ:

Վս՟ զի մի՛ ընդ խոտանս դատանի-ցիմք յաւուրն պատասխանատուու-թեան, զՏր՟:

Վս՟ հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի քս՟ ննջեցին. զՏր՟:

Եւս և վս՟ միաբանութե՟ ճշմարիտ և սբ՟ հաւատոյս մերոյ. զՏր՟:

Զանձինս մեր և զմիմեանս առ՟ ած՟ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեաց մեզ տր՟ ած՟ մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասա-ցուք ամենեքեան միաբանուք՟: Տր՟ ողորմեա. տր՟ ողորմեա. տր՟ ողորմ:

Աղօթ․:

Տէր տունջեան և գոյացուցիչ գիշերոյ, որ արարեր զտիւ 'ի զբօսանս բարեգործութե̃ 'ի փրկու̃ն անձանց մերոց. և զգիշեր 'ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութե̃ս մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութի̃ ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր. և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք 'ի նոյն պաշտօն քո կանխել միշտ: Եւ նովին կանոնիւս անդադար փառաւորել զհայր և զորդի և զս̃բ հոգին. Այժմ և միշտ:

Խաղաղութի̃ ամենեցուն:

Զքեզ՝ որ յա̃մի գթած և մարդասէր տ̃րդ ես, աղաչեմք հանապազ. զի զօրացուսցես զմեզ օր ը̃ օրէ կալ 'ի կարգի կրօնաւորութե մերում: Թեթևացո՛ տ̃ր զքաղցր լուծ քո՝ զոր եդեր 'ի վ̃ր մեր. զի կարասցուք կալ 'ի պատուիրանի

քում, և զհաճոյսն առնել առաջի քո յա՟մ ժամ 'ի տուէ և 'ի գիշերի: Հրեշտակային երգակցութե՟ զքեզ օրհնել, զքեզ գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել ամենազօր տ՟րուե՟դ, այժմ և միշտ:

Մաղթանք:

Սաղմոսիւք և օրհնութե՟ և երգօք հոգևորօք անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զս՟բ հոգին, այժմ:
Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս. ամէն:
Հայր մեր որ յերկինս:

---

Քարոզ Երկինք պատմեն, և Տէր
ապաւէն չանանայն:

ԱՁ. ԳՁ

Վ՟ս 'ի գիշերի և 'ի տունջեան և յա՟մ ժամու խօսիլ մեզ զբան տ՟ն. զտ՟ր աղաչեսցուք:
Վ՟ս չանկանելոյ մեզ 'ի փորձութի՟, որում ոչ կարեմք հանդուրժել. զտ՟ր:
Վ՟ս անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին ք՟ի. զտ՟ր:

Վ՟ն առաջնորդելոյ մեզ 'ի նաւա-
հանգիստն կենաց անվախճանից.
զ՟տր ։

Վ՟ն արժանի լինելոյ մեզ վերին
կոչմանն, և երկնից արքայութե՟ զ՟տր։

Վ՟ն հոգւոցն։ Եւ ևս և վասն միա-

Զանձինս մեր։ Ողորմեաց։

Աղօթք ։

'Ի գիշերի և 'ի տուընջեան և յ՟ամ
ժամու զքեզ աղաչեմք, և 'ի քեն
խնդրեմք մարդասէր տ՟ր։ Լուր մեզ
ա՟ծ փրկիչ մեր. խոնարհեսցի ունկն
քո 'ի խնդրուածս մեր. զի մի՛ ու-
նայն լիցին վաստակք ծառայից քոց։
Այլ համարեա՛ զաշխատութիւնս մեր
'ի գործ արդարութե՟ և 'ի պտուղ
ա՟ծպաշտութե՟ ։ Ընկա՛լ տ՟ր զաղօթս
և զերկրպագութիւնս մեր. և հաստ՛ մեզ
զողորմութի՟ն քո առատապէս։ Ծած-
կեա՛ զմեզ ընդ հովանեաւ ամե-
նազօր աջոյ քոյ։ Զօրացո՛ զմեզ
տ՟ր՝ զօրութ՟բ ս՟բ հոգւոյդ։ Պահեա
զմեզ ո՟պ բիբ ական. և տո՛ւր ա-
մեզ նշան բարի 'ի գովեստ և 'ի
փառաբանութիւն անուանդ քում

տէ՟ր ։ Զի ՚ի քո փառս կատարի ած՟ արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն ՚ի բարձունս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ ։

Խաղաղութի՟ ամենեցուն ։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի և յաւիտենական. Նայեաց և այց արա բանաւոր հօտի քոյ, զոր ժողովեցեր առ քեզ գթութե՟ քով ։ Զի քոյ առաջի կամք ո՟ր, և առ ՚ի քէն ողորմուե՟ցդ և գթուե՟ցդ ակն ունիմք ։ Զամենեսեան օրհնեա՛. զամենեսեան խնամանացո՛. զամենեսեան լուսաւորեա՛. և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւն ։ Վ՟ զի դու ես տէր կենաց, և ած՟ ողորմուե՟ց. և քեզ վայելէ փառք, իշխանութի՟ և պատիւ, այժմ և միշտ ։

Մաղթանք ։

՚Ի գիշերի և ՚ի տունջեան, և յա՟մ ժամու անդադար փառաւորեմքըզհայր և զորդի և զսբ՟ հոգին. այժմ ։

Քարոզ Մի՛ նախանձիր և խոստովան կանոնաց :

ԱԿ · ԳԿ

Վն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճա-
նապարհս խաղաղութե. զՏր աղաչ:
Վն ցրելոյ 'ի մէնջ զամ խորհուրդս
չարին. զՏր աղաչ:
Վասն պարգևելոյ մեզ առողջ խոր-
հուրդս և առաքինի վարս. զՏր:
Վն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյն իւրոյ. զՏր:
Վն խորտակելոյ զհակառակորդն
վաղվաղակի ը ոտիւք մերովք. զՏր:

Վասն հոգւոցն: Ընկալ և վն միա:
Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Տր երկնի և երկրի՝ արարիչ ամ
արարածոց՝ երևելեաց և աներևու-
թից: Առ քեզ կարդամք յամ
ժամ. զի ընդ ամ տեղիս է տրուն
քո. և արքայութի քո ամենեցուն
տիրէ: Շնորհեա մեզ երկիւղիւ 'ի
պաշտօն քո կանխել համապազ.

սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ, և 'ի բովանդակ մտաց, և յա՟մ զօրութե՟ մերմէ պահել զպատուիրանս քո. համբառնալ առ քեզ զձեռս մեր 'ի սրբութի՟ առանց բարկութե՟ և երկմտութեան, և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութիւն, և զառաքինասէր գործոցն յաջողութիւն։ Վ՟ զի դու ես տէր կենաց և ա՟ծ ողորմութե՟ց. և քեզ վայելէ փառք, իշխանութի՟ և պատիւ. այժմ։

Խաղաղութի՟ ամենեցուն։

Քում ամենազօր և յաղթօղ տէրութե՟դ կրկնի ա՟մ ծունր յերկրըպագութի. և փառաւորի յամենեցուն Թագաւորութի՟ քո։ Նայեա՛ յերկրպագու՟ս մեր. և ուսո՛ մեզ առնել զարդարութի՟ ճշմարտութե՟։ Վ՟ զի դու ես ա՟ծ խաղաղութեան՝ որ բարձեր զթշնամութի՟ 'ի միջոյ, և արարեր խաղաղութի՟ յերկինս և յերկրի։ Հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս քոյին բարեացդ։ Որում և զմեզ մեծի շնորհացդ արժանաւորս ա֊

րասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո. ա՟ծ մեր և տէր և փրկիչ յ՟ս ք՟ս: Որ ես օրհնեալ ընդ հօր, և ը՟ սրբոյ հոգւոյն, այժմ:

Մաղթանք:

Յերգս օրհնութե՟ և 'ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք ըզհայր և զորդի և զս՟բ հոգին, այժմ:

---

Քարոզ Ողորմեա և 'ի Նեղութե՟ կանոնաց:

## ԴՁ · ԲՁ

Վ՟ դասանելոյ մեզ զշնորհս և զողորմութի 'ի բարերար ա՟նէ մերմէ. զո՟ր:

Վ՟ փրկելոյ զմեզ 'ի զրպարտուէ՟ մարդկան, և յորոգայթից սատանայի. զո՟ր:

Վ՟ ա՟մ անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց. զո՟ր:

Վ՟ որք 'ի լերինս՝ յայրս՝ և 'ի փապարս բնակեալ են ս՟բ հարքն մեր. զո՟ր:

Վ՟ որք սաղմոսիւք և օրհնութե՟ կատարեն զա՟մ ժամանակս կենաց իւրեանց. զո՟ր:

վ՟ն հոգւոյն ։ Եւևս և վասն միա-
ջանձինս ։ Ողորմեաց ։

### Աղօթք ։

Գոհանամք զքէն տ՟ր ա՟ծ մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութե՟ քոյ ։ Զարթօ զմիտս մեր արդարութ՟ առ քեզ տէր ա՟ծ մեր. զի տեսցեն աչք մեր զփրկութ՟ի քո ։ Եկեսցէ և բնակեսցի առ մեզ ա՟ծութիւն քո. և ողորմութ՟ի քո հովանի և պահապան լիցի 'ի վ՟ր պաշտօնէից քոց ։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա 'ի տուէ և 'ի գիշերի, և յա՟մ ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց. և գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զս՟բ հոգիդ. այժմ և ։

### Խաղաղութ՟ի ամենեցուն ։

Կենդանարար զօրութ՟ի և աղբիւր անմահութե՟ դու ես ք՟ս ա՟ծ փրկիչ մեր. որ շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառնել, և խոստովան լինել առ քեզ վ՟ն իրաւանց և արդարութե՟ քոյ ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ՟ր

ած մեր. արա՛ զմեզ արժանիս պատրաստս 'ի ժամ առաւօտուն ընդ սբս քո: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ը̄ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ:

Մաղթանք:

Գոհութի̄ և ճշմարիտ խոստովանութի̄ անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսբ հոգին. այժմ:

### Ալէլուք Գիշերայինք տէրունական տօնից կարգաւ:

### Ալէլուիա ճրագալուցի ծննդեան:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա: ԱՌԱՔԵԱՑ զբան իւր, և բժշկեաց զնոսա յապականութենէ իւրեանց: Խոստովան եղիցին տն ողորմութեանց նորա, և սքանչելեաց նորա որդւոց մարդկան:

Փ. Ալէլուիա, ալէլուիա, ալէլ: Իջցէ որպ̄ զանձրև 'ի վր̄ գեղման, որպ̄ ցօղ զի ցօղէ յերկիր: Ծագեսցի յաւուրս նր̄ արդարութի.

բազում խաղաղութ̄ն մինչև կատա-րեսցի լուսին:

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Ալէլուիա. ալէլու. ալէլ:

Ալէլու— ծննդեան փն յոխ:

ԱՁ

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի:

'Ի վայրի դալարւոջ անդ բնակե-ցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Փ. Ալէլուիա. ալէլուիա. ալէլու:

Իջցէ ո̄պ զանձրև 'ի վ̄ր գեղման, ո̄պ ցօղ զի ցօղէ յերկիր:

Ծագեսցի յաւուրս Ն̄ր արդարու-թիւն, բազում խաղաղութ̄ն մինչև կատարեսցի լուսին:

Փառք և երկրպագութ̄ն, այժմ և:

Զկնի տ̄մ փէրոխնական փօխի՝ որ ած, ընթե. ըԳաւքն ասմ:

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ
քս̃, ալէլուիա. մարդկան ազգ սաղ-
մոսեն քեզ. ալէլուիա ։

ԱԿ

Լո՛ւր դուստր և տե՛ս. խոնարհեցո՛
զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո,
և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ
թագաւոր գեղոյ քոյ ։

Սա ինքն է տէր քո՝ երկրպագ-
ցես սմա. և դուստր Ծուրայ երկր-
պագցէ սմա. և պատարագօք զե-
րեսս սորա պաշտեսցեն մեծամեծք
՚ի ժողովրդոց ։

Փ. Նա կարդասցէ առ իս, հայր
իմ ես դու, ա̃ծ ընդունօղ փրկու-
թեան իմոյ ։

Ես անդրանիկ արարից զնա. և
բարձր քան զա̃մ թագաւորս երկրի։

Փառք և երկրպագութի̃ն, այժմ
և միշտ և յաւիտ ։ ալէլուիա ։

ԲՁ

Իջցէ ո̃պ զանձրև ՚ի վր̃ գեղման,
ո̃պ ցօղ զի ցօղէ յերկիր ։

Ծագեսցի յաւուրսն̃ արդարուն̃.
բազում խաղաղութի̃ մինչև կատա-
րեսցի լուսին ։

Փ. Եցոյց Տ՟ր զփրկութ՟ն իւր առաջի ազգաց, յայտնեաց զարդարութիւն իւր:

Յիշեաց ողորմութ՟ե իւրով զյակոբ. Ճշմարտութ՟ե իւրով զտունն իսրայէլի. և տեսին ամ՟ ծագք երկրի զփրկութ՟ն ա՟յ մերոյ:

Փառք և եր. այժմ և միշտ. ա՟լէ:

ԲԿ

Նա կարդասցէ առ իս՝ Հայր իմ ես դու, ա՟ծ ը՟ւնօղ փրկութ՟ե իմոյ:

Ես անդրանիկ արարից զնա. և բարձր քան զա՟մ թագաւորս երկրի:

Փ. Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութ՟ե. ՚ի վայելչութի սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Երդուաւ Տ՟ր. և ո՛չ եւս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի, և տէր ընդ աջմէ քումմէ:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԳՁ

Եցոյց Տ՟ր զփրկութ՟ն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութ՟ն իւր:

Յիշեաց ողորմութ՟ե իւրով զյակոբ.

Ճշմարտութե՟ իւրով զտունն Իէլի. և տեսին ա՟մ ծագք երկրի զփրկու՟ն Ա՟յ մերոյ:

Փ․ Յիշեա՛ տէր զդաւիթ, և զա՟մ հեզութի նորա:

Որպ՟ երդուաւ տ՟ն, և ուխտս եդ Ա՟յ յակոբայ:

Փառք և․ այժմ և․ ալէլուիա:

ԳԿ

Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութե. 'ի վայելչութի սրբոց քոց յարգանդէ յա֊ ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Երդուաւ տէր․ և ո՛չ ևս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի․ և տէր ընդ աջմէ քումմէ:

Փ․ Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու․ և ես այսօր ծնայ զքեզ:

Խնդրեա՛ յինէն, և տաց քեզ զհե֊ թանոսս 'ի ժառանգութիւն․ և իշխանութիւն քեզ ընդ ա՟մ ծագս երկրի:

Փառք և․ այժմ և․ ալէլուիա:

ԴՁ

Յիշեա՛ տ՟ր զդաւիթ, և զա՟մ հե֊ զութի նորա:

Ո՟պ երդուաւ տ՟ն, և ուխտս եդ ա՟յ յակոբայ։

Փ. Տ՟ր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։

՚Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԴԿ

Տէր ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծնայ զքեզ։

Խնդրեա՛ յինէն և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութ՟ի և իշխանութ՟ի քեզ ընդ ա՟մ ծագս երկրի։

Փ. Լո՛ւր դուստր և տե՛ս, խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, և զտուն հօր քոյ, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ։

Սա ինքն է տ՟ր քո, երկիրպագցես նմա. և դուստր ծուրայ երկիրպագցէ նմա. և պատարագօք զերեսս նորա պաշտեսցեն մեծամեծք ՚ի ժողովրդոց։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

Ալէլուիա ղազարու յարութեն ։

## ԱՁ

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա։

Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս ։

Տէր ա̃ծ իմ կարդացի առ քեզ, և բժշկեցեր զիս . տ̃ր հաներ 'ի դժոխոց զանձն իմ . փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն 'ի գուբ ։

Փ . Եհան զիս 'ի գբոյ տառապանաց . 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Հաստատեաց 'ի վ̃ր վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ։

Փառք . այժմ . Դասք հրեշտակ ։

Ալէլուիա ծաղկազարդին ողոգոմեան ։

## ԱԿ

Տէր ա̃ծ մեր երևեցաւ մեզ . արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ ։

Ա̃ծ իմ ես դու . խոստովան եղէց քեզ . ա̃ծ իմ ես դու . և բարձր արարից զքեզ ։

Փ . Լերինք ցնծասցեն առաջի տ̃ն՝

զի գայ․ և գայ նա 'ի դատել զեր-
կիր ։

Դատէ զաշխարհս արդարութ͞բ․
և զժողովուրդս իւր ուղղութ͞բ ։

Փառք և․ այժմ և միշտ․ ալէլու ։

Ալէլուք աւուրց աւագ շաբաթուն ։

## Երկուշաբաթի․ ԲԶ

Զինս ասաց և եղեն, հրամայեաց
և հաստատեցան ։

Կացոյց զնս յաւիտեան, սահման
եդ՝ որք ոչ անցանեն ։

'Ի սկզբանէ տր զհիմունս երկրի
հաստատեցեր․ և գործք ձեռաց
քոց երկինք են ։

Նոքա կորնչին․ և դու կաս և մնաս
յաւիտեան ։

Փառք և․ այժմ և միշտ․ ալէլ․

## Երեքշաբաթի․ ԲԿ

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ
'ի հանդերձս յոսկեհուռս զարդա-
րեալ և պաճուճեալ ։

Լուր դուստր և տես․ խոնարհեցո
զունկն քո․ մոռա զժողովուրդ քո,

և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ:

Փ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նր. և զընկերս նր տարցին նմա:

Ածցին ցնծութբ և ուրախութբ. և տարցին 'ի տաճար թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

## Չորեքշաբաթի:

Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութի:

Այլ դու տէր ողորմեա ինձ. և կանգնեա զիս. և ես հատուցից նց:

Փ. Խորհեցան և խօսեցան զչարութի. և զապիրատութի 'ի բարձունս խորհեցան:

Եդին յերկինս զբերանս իւրեանց, և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

## Հինգշաբաթի:

Լուացից սրբութբ զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո տէր:

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց:

Փ. Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

Ուրբաթու:

Զարթեաւ տէրն քո 'ի նետս կապարճից քոց. արբեցուցեր ըղգետս. ցրուեցեր զերկիր. և դողացուցեր 'ի սաստկութենէ անձրևի, որ անցանէ ընդ սա:

Անդունդք աղաղակեցին մեծապէս. լոյս փայլման արեգականն արգելաւ, և ծագումն լուսնին դադարեցաւ:

Փ. Մատնեցայ և ո՛չ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ:

Աղաղակեցի առ տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

### Ղափաթու:

Եդին զիս 'ի գբի ներքնում. 'ի խաւարի և 'ի ստուերս մահու:

Յիս հաստատեցաւ սրտմտուն քո զամ զբօսանս քո ածեր 'ի վր իմ:

Փ. Եղէ ես ոպ մարդ առանց օգնականի. և 'ի մեռեալս ազատ:

Ոպ վիրաւորս՝ որք ննջեն 'ի գերեզմանի:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

---

### Ալէլուիա Յարութեան ձէ:

### ԱՁ

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ողորմութբ տն լի եղև երկիր. և բանիւ տն երկինք հաստատեցան:

Եւ հոգւով բերանոյ նր ամ զօրութիւնք նոցա:

Փ. Յարեաւ ած, և ցրուեցան ամ թշնամիք նր:

Փախեան ատելիք նր յերեսաց նր:

Փառք և. այժմ և: Դարձք հրեշ:

### ԱԿ

Ծափս հարէք ամ հեթանոսք. ա.

ղաղակեցէք առ ա՟ծ 'ի ձայն ցնծութ՟ե :

Տէր բարձրեալ և ահաւորկու, Թագաւոր մեծ 'ի վ՟ր ա՟մ երկրի :

Փ • Հաճեցար տ՟ր ընդ երկիր քո • և դարձուցեր զգերութ՟ի յակոբայ: Թողեր զանիրաւութ՟ի ժողովրդեան քոյ • և ծածկեցեր զա՟մ մեղս նոցա•

Փառք և • այժմ և • ալէլուիա :

ԲՁ

Յարեաւ ա՟ծ • և ցրուեցան ա՟մ թշնամիք նորա :

Փախեան ատելիք ն՟ր յերեսաց ն՟ր:

Փ • Տէր թագաւորեաց, վայելչութ՟ի զգեցաւ : Զգեցաւ տէր զօրութ՟ի ընդ մէջ իւր ածաւ :

Փառք և • այժմ և • ալէլուիա :

ԲԿ

Հաճեցար տ՟ր ընդ երկիր քո • և դարձուցեր զգերութ՟ի յակոբայ :

Թողեր զանիրաւութ՟ի ժողովրդեան քո • և ծածկեցեր զա՟մ մեղս ն՟ց :

Փ • Օրհնեցէք մանկունք զտ՟ր • և օրհնեցէք զանունն տ՟ն :

Եղիցի անուն տ՟ն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան :

Փառք և • այժմ և • ալէլուիա :

ԳԶ

Տէր Թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ։ Զգեցաւ տր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ։

Փ. Գովեա՛ եղէմ զտր. և օրհնեա՛ զած քո սիոն։

Զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԳԿ

Օրհնեցէք մանկունք զտր. և օրհնեցէք զանունն տն։

Եղիցի անուն տն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Փ.՝ Կենդանի է տր, և օրհնեալ է ած. և բարձր եղիցի ած փրկութեան իմոյ։

Ած է, որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԴԶ

Գովեա՛ եղէմ զտէր. և օրհնեա՛ զած քո սիոն։

Զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։

Փ. Ողորմութ տն լի եղև երկիր.
և բանիւ տն երկինք հաստատեցան:

Եւ հոգւով բերանոյ նր նմ զօ-
րութիւնք նոցա:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԴԿ

Կենդանի է տր, և օրհնեալ է ած.
և բարձր եղիցի ած փրկութե իմոյ:

Ած է, որ խնդրէ զվրէժ իմ. և
հնազանդ առնէ զժողովուրդս ընդ
ինև:

Փ. Ծափս հարէք ամ հեթանոսք.
աղաղակեցէք առ ած 'ի ձայն ցնծու-
թեան:

Տէր բարձրեալ և ահարկու, թա-
գաւոր մեծ 'ի վր ամ երկրի:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուա Համբարձմանն տեառն:

ԱՁ

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Համբարձէք իշխանք զդրունս ձեր
'ի վեր, համբարձցին դրունք յաւի-
տենից, և մտցէ թագաւոր փառաց:

Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տր̃ հզօր զօրութբ̃ իւրով. Տր̃ կարօղ 'ի պատերազմի :

Փ. Կառք այ̃ բիւրապատիկք. հազարք ուղղինչք, և Տր̃ 'ի նմ̃. 'ի սինէ սրբութե̃ իւրմէ :

Ել 'ի բարձունս և գերեաց զգերութիւն. էառ աւար, բաշխեաց պարգևս, և ետ որդւոց մարդկան :

Փառք և. այժմ և. Դասք հրեշ :

ԱԿ

Համբարձաւ ա̃ծ օրհնութբ̃. և տէր մեր ձայնիւ փողոյ :

Սաղմոս ասացէք այ̃ մերում. սաղմոս ասացէք Թագաւորին մերում, սաղմոս ասացէք :

Փ. Որ հովուեսդ Իղ̃ի, նայեաց որ առաջնորդես ոպ̃ խաշին յովսեփու :

Որ նստիս 'ի քրովբէս, յայտնեաց առաջի եփրեմի, բենիամենի և մանասէի :

Փառք և. այժմ և. ալէլուիա :

ԲՁ

Կառք այ̃ բիւրապատիկք, հազարք ուղղինչք. և Տր̃ 'ի նմ̃, 'ի սինէ սրբութե̃ իւրմէ :

Եւ 'ի բարձունս և գերեաց զգե-
րութիւն • էառ աւար • բաշխեաց
պարգևս, և ետ որդւոց մարդկան :

Փ • Ո դնէ յամպս զգնացս իւր •
և շրջի նա 'ի վ̅ր̅ թևոց հողմոց :

Խոստովանութի̅ և մեծ վայելչութի̅
զգեցար • արկար զլոյս ո̅պ̅ զօթոց •
ձգեցեր զերկինս ո̅պ̅ խորան • և ար-
կեր 'ի վ̅ր̅ ջուրց զվերնայարկս ն̅ր̅ :

Փառք և • այժմ և • ալէլուիա :

ԲԿ

Որ հովուեսդ իղ̅ի, նայեա՛ց • որ ա-
ռաջնորդես ո̅պ̅ խաշին յովսեփու:

Որ նստիդ 'ի քրովբէս, յայտ-
նեա՛ց առաջի եփրեմի, բենիամինի
և մանասէի:

Փ • Մեծ եղև մինչև յերկինս ո-
ղորմութի̅ քո • և մինչև յամպս ճըշ-
մարտութի̅ քո :

Բարձրեալ ես դու յերկինս ա̅ծ̅ •
և յա̅մ̅ երկրի են փառք քո :

Փառք և • այժմ և • ալէլուիա :

ԳՁ

Ո դնէ յամպս զգնացս իւր • և
շրջի նա 'ի վ̅ր̅ թևոց հողմոց:

Խոստովանութի̅ և մեծ վայելչութի̅

զգեցար. արկար զլոյս ոպ̄ զօթոց, ձգեցեր զերկինս ոպ̄ խորան. և արկեր 'ի վր̄ ջուրց զվերնայարկս նր̄:

Փ. Տէր, խոնարհեցո՛ զերկինս և էջ. մերձեա՛ 'ի լերինս, և ծխեսցին:

Փայլեա՛ զփայլատակունս քո, և խռովեա՛ զնս̄. առաքեա՛ զնետս քո, և ցրուեա՛ զնս̄:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԳԿ

Մեծ եղև մինչև յերկինս ողորմութի̄ քո. և մինչև յամպս ճշմարտութիւն քո:

Բարձրեալ ես դու յերկինս ա̄ծ. և յա̄մ երկրի են փառք քո:

Փ. Խոնարհեցոյց զերկինս և էջ, և մէգ 'ի ներքոյ ոտից նր̄:

Եւ 'ի քրովբէս և թռեաւ. սլացաւ նա 'ի թևս հողմոց:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԴՁ

Յերեսաց նր̄ ելցեն հարուածք. և զհետ շաւղաց նորա երթիցեն մեծամեծք 'ի թռչնոց:

Լերինք հալեսցին, և անտառք վատնեսցին. ճանապարհք՝ որք 'ի

սկզբանէն էին, կուրացեալն․ և 'ի
նմանէ դողացի ամ երկիր։

Փ․ Համբարձէք իշխանք զդրունս
ձեր 'ի վեր․ համբարձցին դրունք
յաւիտենից, և մտցէ Թգր փառաց։

Ո՛վ է սա Թագաւոր փառաց․ տր
հզօր զօրութբ իւրով, տէր հզօր 'ի
պատերազմի։

Փառք և․ այժմ․ ալէլուիա։

ԴԿ

Խոնարհեցոյց զերկինս և էջ․ և
մէգ 'ի ներքոյ ոտից նր։

Եղ 'ի քրովբէս և Թռեաւ․ սլա-
ցաւ նա 'ի Թևս հողմոց։

Փ․ Համբարձաւ ած օրհնութբ․
և տր մեր ձայնիւ փողոյ։

Սաղմոս ասացէք այ մերում․ սաղ-
մոս ասացէք Թագաւորին մերում․
սաղմոս ասացէք։

Փառք և․ այժմ և․ ալէլուիա։

Ալէլուիա հոգւոյն սրբոյ
գալստեանն ։

## ԱՁ

Ալէլուիա • ալէլուիա • ալէլու ։

Ցանկալի է նա քան զոսկի , քան զականս պատուականս բազմս , քաղցր է նա քան զմեղու խորիսխ ։

Քանզի ծառայ քո պահեսցէ զայս • 'ի պահելն նմա հատուցումն բազում ։

Փ • Թեւք աղաւնւոյ արծաթապատ • և թիկնամէջ նորա 'ի գոյն ոսկւոյ ։

'Ի գումարել երկնաւորին զթագաւորս 'ի վերայ նորա , ձիւնասցին 'ի սաղմոն ։

Փառք և • այժմ և • Դասք հրեշ ։

## ԱԿ

Սիրտ ո̃ւր հաստատեա́ յիս ա̃ծ • և հոգի ուղիղ նորոգեա́ 'ի փորի իմում ։

Մի ընկենուր զիս յերեսաց քոց • և զհոգի քո ս̃բ մի հաներ յինէն ։

Փ. Գտի զշաւիղ ծառայ իմ. և իւղով սրբով իմով օծի զնա։
Ձեռն իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօրացուսցէ զնա։
Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԲԶ

Թէք աղաւնւոյ արծաթապատ. և թիկնամէջ նր̃ ՚ի գոյն ոսկւոյ։
՚Ի դուամարել երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նորա, ձիւնասցին ՚ի սաղմոն։
Փ. Առաքես զհոգի քո և ստանաս զնս̃, և նորոգես զերեսս երկրի։
Եղիցին փառք տն̃ յաւիտեան. և տր̃ ուրախ եղիցի յարարածս իւր։
Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԲԿ

Գտի զշաւիղ ծառայ իմ. և իւղով սրբով իմով օծի զնա։
Ձեռն իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօրացուսցէ զնա։
Փ. Յայտնունի բանից քոց լուսաւոր է. և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի, և առի զհոգի. ՚ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԳՁ

Առաքես զհոգի քո, և ստանաս զնոսա. և նորոգես զերեսս երկրի:

Եղիցին փառք տ̃ն յաւիտեան. և տէր ուրախ եղիցի յարարածս իւր:

Փ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:

Վ̃ անուան քոյ տէր կեցուսցես զիս. արդարութբ̃ քով հանցես 'ի նեղութ̃է զանձն իմ:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԳԿ

Յայտնութի̃ բանից քոց լուսաւոր է, և իմաստուն առնէ զտղայս:

Զբերան իմ բացի, և առի զհոգի. 'ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ:

Փ. Ի սաստէ քումմէ տ̃ր և 'ի շնչել հոգւոյ բարկութ̃ քոյ:

Առաքեաց 'ի բարձանց, և ընկալաւ զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազմաց:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԴՁ

Ո̃պ իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի

մօրուսն ահարոնի, և 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեստու նր̄:

Ո͞պ ցօղ զի ցօղն 'ի հերմոնէ 'ի վե-րայ լերին սիոնի:

Փ. 'Ի վայրի դալարուոջ անդ բնա-կեցոյց զիս. և առ ջուրս հանգըս-տեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս. և ա-ռաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութե̄ վս̄ անուան իւրոյ:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

ԴԿ

'Ի սաստէ քումմէ տէր, և 'ի շնչել հողւոյ բարկութե̄ քո:

Առաքեաց 'ի բարձանց, և ընկա-լաւ զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազ-մաց:

Փ. Սիրտ ս̄բ հաստատեա՛ յիս ա̄ծ. և հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց և զհոգի քո ս̄բ մի՛ հաներ յինէն:

Փառք և. այժմ և. ալէլուիա:

Փ. Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:
Ո͞պ փրկեսցին սիրելիք քո. կեցո՛ աջով քո, և լո՛ւր մեզ:
Փառք և. այժմ և. Դասք հրեշ:

ԱԿ

Նետք քո սրեալ են հզօր. ժողովուրդք 'ի ներքոյ քոյ անկցին. 'ի սիրտս թշնամեաց թագաւորի:
Աթոռ քո ա͞ծ յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութ͞ե գաւազան արքայութ͞ե քո:
Փ. Տո՛ւր զօրութ͞ի ծառայի քոյ. կեցո՛ զորդի աղախնոյ քոյ. և արա՛ առ իս նշան բարութ͞ե:
Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն. զի դու տ͞ր օգնեցեր ինձ, և և մխիթարեցեր զիս:
Փառք և. այժմ և միշտ. ալէլ:

ԲՁ

Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան:
Ո͞պ փրկեսցին սիրելիք քո, կեցո՛ աջովքո, և լո՛ւր մեզ:

փ. Դու պատրաստեցեր զուղղու̃ն և զիրաւունս. և զարդարուին յակոբայ դու արարեր։

Բարձր արարէք զտ̃ր ա̃ծ մեր, երկրպագէք պատուանդանի ոտից նորա զի ս̃բ է։

Փառք և. այժմ՝ և միշտ. ալէլ։

ԲԿ

Տուր զօրու̃ն ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու տ̃ր օգնեցեր ինձ. և մխիթարեցեր զիս։

փ. Ասաց տ̃ր ցտ̃ր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ. մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Գաւազան զօրութե̃ առաքեսցէ քեզ տէր 'ի սիոնէ. և տիրեսցես դու 'ի մէջ թշնամեաց քոց։

Փառք և. այժմ՝ և միշտ։ ալէլ։

ԳՁ

Դու պատրաստեցեր զուղղու̃ն. զիրաւունս և զարդարութի̃ն յակոբայ դու արարեր։

Բարձր արարէք զտ̃ր ա̃ծ մեր. եր-

կիրպագէք պատուանդանի ոտից
նորա. զի ս̃բ է։

Փ. Յայտնեսցեն երկինք զվայ-
ելչութի̃ փառաց նր̃. և օրհնութե̃
նորա լցան ափեզերք։

Ճառագայթք ո̃ղ ՚ի լուսոյ հա-
տան ՚ի նմանէ. և եղջիւրք ՚ի ձեռին
նորա պատան. և անդ հաստատեցաւ
զօրութի̃ փառաց նր̃։

Փառք և. այժմ և միշտ. ալէլ։

Գ.Կ

Ասաց տր̃ ցտր̃ իմ, նիստ ը̃ աջմէ
իմմէ. մինչև եդից զթշնամիս քո
պատուանդան ոտից քոց։

Գաւազան զօրութե̃ առաքեսցէ
քեզ տէր ՚ի սիոնէ. և տիրեսցես
դու ՚ի մէջ թշնամեաց քոց։

Փ. Նշանեցաւ առ մեզ լոյս երե-
սաց քոց. և ետուր ուրախութի̃ սըր-
տից մերոց։

՚Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ
իւրեանց լցուցեր զն̃ս։

Փառք և. այժմ և միշտ. ալէլ։

Դ.Ձ

Յայտնեսցեն երկինք զվայելչութի

փառաց նորա. եւ օրհնութե՟ նորա լցան տիեզերք։

Ճառագայթք ոպ՟ 'ի լուսոյ հա-տան 'ի նմանէ. եւ եղջիւրք 'ի ձեռին նորա գտան. եւ անդ հաստատեցաւ զօրութ՟ն փառաց նորա։

Փ. Ցուպ քո եւ գաւազան նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան. ակն յանդիման նեղչաց իմոց։

Փառք եւ. այժմ եւ միշտ. ալէլ։

ԴԿ

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ ետուր ուրախութ՟ն սրտից մերոց։

'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւրեանց լցուցեր զն՟ս։

Փ. Նետք քո սրեալ են հզօր. ժողովուրդք 'ի ներքոյ քոյ անկցին. 'ի սիրտս թշնամեաց թագաւորի։

Աթոռ քո ա՟ծ յաւիտեանս յաւի-տենից. գաւազան ուղղութ՟ե, գա-ւազան արքայութ՟ե քոյ։

Փառք եւ. այժմ եւ միշտ. ալէլու։

Աւուր Եկեղեցւոյ։

## ԱՁ

Ալէլուիա. ալէլուիա. ալէլու։

Լսել լինձ զձայն օրհնութե՟ քոյ. և պատմել զա՟մ սքանչելիս քո։

Տ՟ր սիրեցի զվայելչութի՟ տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց։

Փ. Երանի զոր ընտրեցեր և ընկալար. և բնակեսցեն ՚ի գաւիթս քո։

Լցցուք մեք ՚ի բարութե՟ տան քոյ. ո՟ր է տաճար քո սքանչելի արդարութե՟։

Փառք և. այժմ և. Դասք հրեշ։

## ԱԿ

Մեծ է Տ՟ր, և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաքի Ա՟յ մերոյ ՚ի լերան սրբ՟ոյ։

Հաստատարմատ ցնծութե՟ ցնծացէ ա՟մ երկիր. լերինք սիոնի՝ կողմանք հիւսիսոյ. քաղաք թագաւորի մեծի։

Փ. Հիմունք նորա ՚ի լերան սրբ՟ոյ. սիրէ տէր զդրունս սիոնի՝ առաւել քան զա՟մ յարկսն յակոբայ։

Փառաւորեալն խօսեցաւ վ՟ս քոյ. ահաւադիկ քաղաքդ Ա՟յ։

Փառք և. այժմ և. ալէլուիա։

ԲԶ

Երանի զոր ընտրեցեր և ընկալար և բնակեսցին 'ի գաւիթս քո ։

Լցցուք մեք 'ի բարութէ տան քոյ . որ է տաճար քո սքանչելի արդարութք ։

Փ. Դու տէր յաւիտեան կաս . և յիշատակ քո յազգէ մինչև յազգ ։

Դու յարուցեալ գթասցիս 'ի վր սիոնի . ժամանակ գթալոյ նր հասեալ է ժամ ։

Փառք և. այժմ և. ալէլուիա ։

ԲԿ

Հիմունք նր 'ի լերանն որ նորա . սիրէ տէր զդրունս սիոնի առաւել քան զամ յարկսն յակոբայ ։

Փառաւորեալն խօսեցաւ վն քոյ . ահաւադիկ քաղաքդ այ ։

Փ. Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծասցուք, և ուրախ եղիցուք 'ի սմա ։

'Ի տնէ եղև այս . և է սքանչելի առաջի աչաց մերոց ։

Փառք և. այժմ և միշտ. ալէլ ։

Գ.Ձ

Դու տէր յաւիտեան կաս. և յի-շատակ քո յազգէ մինչև յազգ:

Դու յարուցեալ գթասցիս 'ի Սի-ոնի, ժամանակ գթալոյ ն՟ր հա-սեալ է ժամ:

Փ. Խոստովան եղէց քեզ տ՟ր բո-լորով սրտիւ իմով. առաջի հրեշ-տակաց սաղմոս ասացից քեզ:

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիրպագից 'ի տաճար ս՟բ քո. և խոստովան եղէց անուան քում, վ՟ս ողորմութ՟ե և ճշմարտութ՟ե քո:

Փառք և. այժմ և միշտ. ալէլ:

Գ.Կ

Այսօր է, զոր արար տ՟ր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք 'ի սմա:

'Ի տ՟նէ եղև այս. և է սքանչելի առաջի աչաց մերոց:

Փ. Տէր ո՛վ կացցէ 'ի խորանի քում, կամ ո՛վ բնակեսցէ 'ի լեա-ռըն ս՟բ քո:

Որ գնայ անբիծ. գործէ զարդա-րութ՟ի, և խօսի զճշմարտութ՟ի 'ի սրտի իւրում:

Փառք և․ այժմ և միշտ․ ամէն։

ԴՁ

Ուրախ եղէ ես, որք ասէին ցիս,
՚ի տուն տն երթիցուք մեք։
Հաստատեալ կային ոտք մեր առ դրունս
քո Երուսաղէմ։
Փ․ Լսել ինձ զձայն օրհնութե քոյ․
և պատմել զամ սքանչելիս քո։
Տր սիրեցի զվայելչութի տան քոյ․ և
զտեղի յարկի փառաց քոց։
Փառք և․ այժմ և միշտ․ ամէն։

ԴԿ

Տր ով կացցէ ՚ի խորանի քում,
կամ ով բնակեսցէ ՚ի լեառն սբ քո։
Որ գնայ անբիծ․ գործէ զարդա-
րութի․ խօսի զճշմարտութի ՚ի սրտի
իւրում։
Փ․ Մեծ է տր և օրհնեալ է յոյժ․
՚ի քաղաքի այ մերոյ, ՚ի լեառն սբ նր։
Հաստարմատ ցնծութբ ցնծացէ
ամ երկիր․ լերինք սիոնի կողմանք
հիւսիսոյ․ քաղաք թագաւորին մե-
ծի։
Փառք և․ այժմ և միշտ․ ամէն։

Թագաւորք մարտիրոսաց :

## ԱՁ

Թագաւոր յաւիտեան :

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՄԲ սրբոյն այս անուն, և այլ սրբոց մարտիրոսացն, աղա չեմք զքեզ, Թողութի շնորհեա յանցանաց մերոց բարերար քս :

ՍՂ. Մերձ է տէր առ այնոսիկ՝ որք մաշեալ են սրտիւք. և զխոնարհս հոգւով կեցուցանէ : Բազում նեղութիւք են արդարոց. յամէ փրկէ զնս տր. և պահէ զամ ոսկերս նց. և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ. Թողուլ շնորհեա յանցս :

Փ. Որ յաղթօղ զօրութբ 'ի հանդէս ճգնաւորական, անարատ պահեցեր զխոստովանօղ վկայս քո քս ած. տուր մեզ օգնութի 'ի նեղութե մերում, բարեխօսութբ սրբոց մարտիրոսաց. և կեցո :

## ԱԿ

Զողորմութի քո տր արա 'ի մեզ. և բարեխօսութբ սրբոյն այս անուն, և

այլ սրբց մարտիրոսաց մի՛ կորուսա-
ներ զմեզ երրորդութի՟ն տր ողորմեա՛
մեզ։

ՍՂ․ Փրկութի՟ն արդարոց 'ի տնէ է․
վերակացու է նց 'ի ժամանակս նե-
ղութեան։ Օգնեսցէ նց տր, և փըր-
կեսցէ զնս, ապրեցուսցէ 'ի մեղա-
ւորաց, և կեցուսցէ զնս, զի յուսա-
ցան 'ի նա․ և բարեխօս։

Փ․ Որք զտանջանս և զմահ վասն
քո յանձն առին, և հեղին զարիւնս
իւրեանց վն անուանդ քում տր․
բարեխօսութբ սոցա մի՛ կորուսա-
ներ զմեզ։

ԲՁ

Բարեխօսութբ սրբյն այս անուն, և
այլ սրբոց մարտիրոսաց․ պարգևեա՛
մեզ տր առնուլ մասն և բաժին
ընդ հրաւիրեալսն 'ի կոչումն ար-
քայութե՟ն երկնից։

ՍՂ․ Սքանչելի է ած 'ի մէջ սրբոց
իւրոց ած իսրայէլի։ Նա տացէ զօ-
րութի՟ն հաստատութե՟ն ժողովրդեան
իւրոյ, օրհնեալ է ած․ առնուլ
մասն և։

Փ․ Մարտիրոսք երանեալք և փա-

ռաւորեալք · որք բազում տանջանացն համբերեցիք · դուք զլոյսն կենաց զգեցեալ ունիք · և առ քս̃ վն̃ մեր բարեխօսեցէք ։

ԲԿ

Դու ես քս̃ աղբիւր կենաց, բղխումն ողորմութե̃ · շնորհեցեր սըրբոյն այս անուն, և այլ սրբոց մարտիրոսաց յաղթօղ զնահատակումն · հալածել զխաւարն և լուսաւորել զանձինս մեր ։

ՍՂ · Ած̃ փառաւորեալ է՛ի խորհուրդս սբ̃ց իւրոց · մեծ և ահաւոր 'ի վր̃ այնոցիկ՝ որք շուրջ են զնովաւ ։ Տր̃ ած̃ զօրութե̃ց, ո՛վ նմանի քեզ · հզօր ես դու տր̃, և ճշմարտութի̃ քո շուրջ է զքև · շնորհեցեր սր̃բյն այս անուն · յաղթօղ զնահատակութի̃ հալածել զխաւարն և լուսաւո ։

Փ · Որ շնորհօք սբ̃ հոգւոյն յաղթեցիք թշնամւոյն երանեալ սբ̃ վըկայք քս̃ի · վասն ձեր տօնողացս հայցեցէք յա̃յ զթողութի̃ մեղաց ։

Փ · Որ պսակդ էք պարծանաց ա̃մ առաքինեաց · նախաշաւիղ և առաջնորդ կենացն յաւիտենից, ո՛վ սբ̃

վկայք · առ պաստկիչն ս̃բց և վ̃ մեր բարեխօսեցէք · շնորհելով ողորմութի̃ յանապատ աղբերէն կենացն յաւիտենից :

ԳՁ · ԳԿ

Զձգնութի̃ սրբոյն այս անուն, և այլ ս̃բց մարտիրոսաց բարեխօս ունիմք առ քեզ ք̃ս, և աղաչեմք սոքօք, շնորհեա՛ զթողութի̃ յանցանաց մերոց, և 'ի կեանսդ յաւիտենից նորոգեա՛ և կեցո՛ :

ՍՂ · Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտիւք եղև ուրախութիւն: Ուրախ եղերուք արդարք 'ի տէր · և խոստովան եղերուք յիշատակի սրբութե̃ նր̃ · և աղաչեմք :

ԳԿ · Պատուական է առաջի տ̃ն մահ ս̃բց իւրոց · ո՛ տ̃ր, ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քոյ: Հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութե̃, և զանուն տ̃ն կարդացից · և աղաչեմք սոքօք շնորհեա՛ զթողութիւն :

Փ · Հանդիսացեալք 'ի մարտս պատերազմի յաղթօղ գտայք ս̃բ վկայք · քանզի ձանապարհ հորդե-

ցեք մեզ յերկնային քաղաքն յԷմ, ընդ անմարմնոցն դասս փառաւորելով զՏէր զերրորդութիւնն։

ԴՁ

Որք ՚ի խորանս սրբութե եմք ժողովեալ օրհնել զքեզ քս․ աղաչանօք սբյն Աստուածածնին, և այլ սրբոց մարտիրոսաց զպաղատանս մեր մի անտես առներ, որ միայնդ ես բազումողորմ Թագաւոր փառաց քս։

ՍՂ․ Մերձ է տէր առ ամենեսեան, որք կարդան առ նա․ առ ամենեսեան՝ որք կարդան առ նա ճշմարտութբ։ Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր․ աղօթից նոցա լսէ, և կեցուցանէ զնս․ աղաչանօք սբյն, Աստուածածնին, և այլ նբց մարտիրոսաց։

Առաքելոց և մարգարէից այս է։

ՍՂ․ Ո՛չ են բանք և ո՛չ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամ երկիր ել բարբառ նց․ և մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա․ աղաչանօք սրբոյն։

Փ․ Նահատակք և վկայք քն տր․

ընդհանուր տիեզերաց քարոզք փըր-
կութ՟ե. որք զանձինս ձեր մատուցիք
պատարագ, և զընծումն տ՟յ հօր 'ի
հոտ անուշից. ժողովելոցս 'ի կա-
տարել զյիշատակ անուան ձերոյ,
բարեխօսեցէք առ տ՟ր վասն քաւութ՟ե
մեղաց մերոց:

ԴԿ

Զերեքսրբեան տէրութ՟իդ քո միա-
բան աղաչեմք, լո՛ւր տ՟ր. աղաչանօք
սրբոյն, այս անուն, և այլ ս՟րբց մար-
տիրոսաց խնայեա՛ 'ի մեզ, և կեցո՛:
ՍՂ. Ուրախ լիցին ամենեքեան՝
որք յուսացեալ են 'ի քեզ. յաւի-
տեան ցնծասցեն, և բնակեսցիս
դու 'ի ն՟ս: Պարծեսցին 'ի քեզ սի-
րելիք անուան քոյ, զի օրհնեսցես
դու զարդարն տ՟ր, ո՟րպ զինու հա-
ճութ՟ք քով պսակեցեր զն՟ս. աղա-
չանօք ս՟բյն, այս անուն, և այլ ս՟րբց:
Փ. Տօնէ այսօր եկեղեցի ս՟բ զյիշա-
տակս ձեր ս՟բ վկայք, որք զօրութ՟ք
ս՟բ հոգւոյն վանեցիք զպատերազմ
չարին, և 'ի կամարս լուսեղէնս թա-
գաւորեալք օրհնել ս՟բ զերրոր-
դութիւն:

## ՍԲ̃ՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ։

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ճգնութե̃ն սբ̃յն ստեփաննոսի նախավկային ։ Քանզի գոչէ եկեղեցի քո քս̃ զյաղթանակ մարտ հեղման արեան սորա 'ի վր̃ մեծի անուան քոյ տէր ։

Բազում համարձակութե̃ է որ̃ առաջի ք̃ոյ 'ի ձեռն հեղմանն սբ̃ արեանն իւրոյ․ քանզի յօժարութբ̃ մատնեաց զանձն իւր չարաչար և դառն տանջանաց վասն մեծի անուանն տն̃ ։ Քանզի արհամարհելով անարգեաց զանցաւոր զկեանս աշխարհիս, և փոփաքեաց յաւիտենական կենացն․ և միշտ և հանապազ ուրախանայ ընդ տն̃ իւրոյ յանապառ ուրախութե̃ն ։ Քանզի գոչէ եկեղեցի քո քս̃ զյաղթանակ մարտ հեղման արեան սորա 'ի վր̃ մեծի անուան քոյ տէր ։

Փառք հօրն էականի, որդւոյն միածնի, և ազատիչ սբ̃ հոգւոյն վայելէ ։

Փառք պատիւ և իշխանութի̃․ այժմ

և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Եւ յորժամ շարժին երկինք և երկիր 'ի յահէ փառաց բանին տ̃ն ա̃յ ։ Յայնժամ Նստուցանէ ընդ աջմէ իւրմէ զսիրելիս անուան իւրոյ 'ի լուսեղէն խորանին՝ զուգաւորելով ։

Այսօր դասք հրեշտակաց 'ի յերկինս ուրա ։

## Թագաւորք ապաշխարութե̃ ։

---

### Երկուշաբթի ։

Թագաւոր յաւիտեան ։

ԼՈ՛ՒՐ մեզ տ̃ր փրկիչ մեր․ և կեցո՛ զմեզ, որ յա̃մի կարօղդ ես ։

ՍՂ․ Լո՛ւր մեզ Աստուած փրկիչ մեր՝ յոյս ա̃մ ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի ։ Ո պատրաստէ զլերինս զօրութ̃ իւրով․ և զգեցեալ է զզօրութի․ և կեցո՛ զմեզ, որ յա̃մի կարօղդ ես ։

Փ․ Լո՛ւր աղաչանաց մերոց տ̃ր մարդասէր, և գթա՛ 'ի մեզ ։

Թ․ Մի՛ զիս անտես առներ, այլ օգնեա՛ ինձ մարդասէր ։

ՍՂ. Մե՛ ընկենուր զիս Տ՟ր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն:

Այլ տո՛ւր ինձ ցնծութի՟ փրկութե՟, և հոգւով պետութե՟ քով հաստատեա՛ զիս. այլ օգնեա՛:

Փ. Մե՛ անտես առներ զիս Տ՟ր Ա՟ծ փրկիչ իմ. այլ շնորհեա՛ ինձ թողուլ՟ բազմագութ մարդասէր, և կեցո՛:

Թ. Երկինք և երկիր գոհանան զքէն Տ՟ր. արարածք Ա՟մ քեզ երկրպագանեն. և հրեշտակք 'ի բարձունս աղաղակեն և ասեն. ողորմեա՛ դու ստեղծեր, մի՛ կորուսաներ:

ՍՂ. Երկինք երկնից, Ջուրք որ 'ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն Տ՟ն:

Զի նա ասաց, և եղեն. հրամայեաց և հաստատեցան. և հրեշտակք 'ի բարձ:

Փ. Երկինք և երկիր հանապազ զքեզ գովեն. թագաւոր փառաց, սերովբէք և քերովբէք 'ի խոնարհ ունելով զդէմս իւրեանց. և միաձայն բարբառով՟ աղաղակեն և ասեն. Ս՟բ՝ Ս՟բ՝ Ս՟բ Տ՟ր զօրութե՟ց:

## Երեքշաբաթի:

Երկայնամիտ ես տէր առ ամենե-
սեան. և գթա՛ տ՟ր 'ի վ՟ր մեր ո՟ղ և
յաւազակին փրկիչ, և կեցո՛:

ՍՂ. Երկայնամիտ բազումողորմ
և ճշմարիտ՝ նայեա՛ց առ իս և ողոր-
մեա՛ց ինձ: Տո՛ւր զօրութ՟ի ծառայի քո,
կեցո՛ զորդի աղախնոյ քոյ. և արա՛ առ
իս նշան բարութ՟ե. և գթա՛ տէր 'ի
վ՟ր մեր ո՟ղ և յաւազա:

Փ. Տէր որ գթացար յաւազակն
խաչակից լինել քեզ. և մաքրեցեր
զաղտեղութ՟ի յանցանաց ն՟ր յաղ-
բերէ կողի քոյ. գթա՛ և յիս 'ի մե-
ղաւորս, որ ծարաւիս եմ առ քեզ.
և փափաքիմ 'ի գաւիթս քո ո՟ղ
զմի 'ի յեղջերուաց 'ի յաղբերս
ջուրց:

Թ. Մարտեաւ ընդ իս թշնամին,
հանապազ զիս կամի կորուսանել.
այլ դու տ՟ր իմ ա՛յց արա մոլորեալ
ոչխարիս, և կեցո՛:

ՍՂ. Մարտեան ը՟ իս 'ի տարա-
պարտուց. և փոխանակ սիրոյ իմոյ
մատնէին զիս. այլ ես յաղօթս

կայի: Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելու̃ն փոխանակ սիրոյ իմոյ. այլ դու տէր իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո՛:

Փ. Որ հովիւդ ես հօտից բանաւոր կենդանեաց. տո՛ւր ինձ յոյս կենաց ապաշխարութե̃, և դարձո՛ զմոլորեալս 'ի հօտ քո քո̃, և կեցո՛:

Թ. Մեղայ և աղաչեմ զքեզ. թողութի̇ շնորհեա՛ մեղաց իմոց. քաւիչ իմ լե՛ր քո գթութե̃դ, որ միայնդ ես փրկիչ, և կեցո՛:

ՍՂ. Մեղայ տ̃ր մեղայ. և զանօրէնութի̃ս իմ ես ինձէն գիտեմ: Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, թո՛ղ ինձ. տ̃ր թող ինձ և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութե̃ իմոյ. քաւիչ իմ լե՛ր քո գթութե̃դ, որ միայնդ:

Փ. Մեղայ քեզ տ̃ր. մեղայ քեզ տէր. մեղայ, և քան զաւազ ծովու բազումեն յանցանք իմ. պատրանք աշխարհիս խաբեցին զիս. և եղէ անպտուղ 'ի կենաց յուսոյդ. այլ դու անոխակալ և անյիշաչար փրկիչ, խնայեա՛ 'ի մեղուցեալ ծառայս, և կեցո՛:

## Չորեքշաբաթի։

Տէր իմ բաղում են անօրէնութիւնք անձին իմոյ. ոչ յիշեցի զահեղ զդատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութիւն տր, և ողորմեա։

ՍՂ. Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. և ոպ բեռն ծանր ծանրացան 'ի վր իմ։ Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութե իմոյ. ոչ յիշեցի զահեղ զդատաստանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութի տէր. և ողորմ։

Փ. Պաղատանս մատուցանեմք քեզ հայր երկնաւոր, մի անտես առներ զաղաչանս մեր. այլ անցո զցասումն քո 'ի մէնջ. և յիշեա զի պատկեր եմք բարերարութեդ։

Թ. Տր իմ գթութիւնք քո բաղում են յոյժ. առ խարա՛ զբարերարութիս քո, ոպ և մաքսաւորին. և ինձ ողորմեա։

ՍՂ. Գթութիք քո բաղում են տէր. և ըստ իրաւանց քոց կեցո զիս։

Բազում են. որք հալածեն և նեղեն զիս. 'ի վկայութեն͞ց քոց ես ո՛չ խոտորեցայ. տւ իս արա՛մ զբարեբարութիս քո, ո՟վ և մաք:

Փ. Անոխակալ և անյիշաչար տէր, որ գթալով 'ի մեղաւորս շնորհեցեր ապաշխարութի. արդ գթա՛ և յիս ո͞ր 'ի մեղուցեալ և յանօրինեալ քո ծառայս. և փոխարկեա՛ զգործօղս չարեաց 'ի զղջումն ապաշխարութե, և կեցո՛:

Թ. 'Ի տաճարի քում սրբում փառաւորելով զքեզ. դու ունիս իշխանութի, ողորմեա՛ մեզ:

ՍԴ. Այլ ես ը͞ բազում ողորմութե քում մտից 'ի տուն քո, և երկիրպագից 'ի տաճար ս͞ը քո երկիւղիւ քո: Տ͞ր առաջնորդեա՛ ինձ յարդարութե քում վ͞ն թշնամեաց իմոց. և ուղիղ արա՛ առաջի իմ զճանապարհս քո. դու ունիս իշխանութի:

Փ. 'Ի տաճարի քում սրբութե հանապազ զքեզ դովեմք թագաւոր փառաց. որ ունիս իշխանութի կենաց և փրկութե. ողորմեա՛ մեզ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ ։

Ապաշխարութե՟ արտասուս աւազան լինի, և լուանայ զբազմութե՟ մեղաց. սովաւ շնորհեա՛ յառաջ քան զվախճան զքաւութի՟ և զմեծ քո զողորմութի՟ ։

ՍՂ. Ծարաւի է անձն իմ առ քեզ ա՟ծ հզօր և կենդանի. երբ եկից երևեցայց երեսացդ ա՟յ ։ Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ, թէ ո՞ւր է ա՟ծ քո. սովաւ շնորհեա՛ յառաջ քան զվախճան ։

Փ. Յորժամ գաս փառօք հօր յահագին աւուրն ՚ի դատել զերկիր. և դողան սարսափմամբ երկրածինքս ա՟մ ՚ի յահէ քումմէ. ՚ի նըստիլ քոյ յատենի դատաւոր ահեղ, և յակնարկել քո յարարածս, յիշեա՛ և զիս զբազմամեղս. որ ընկըղմեալս եմ յանցանօք բանսարկուին խաբմամբ. և հայցեմ զաւազակին, տէր և զիս յիշեա՛. որ միայնդ ես փրկիչ ։

Թ. Զի՛ս որ 'ի նաւի աշխարհի ա-
լէկոծեն մեղք իմ. նաւահանգիստ
ապաշխարութ͞ե շնորհեա՛ ինձ բա-
զումողորմ. և կեցո՛:

ՍՂ. Կեցո՛ զիս ա͞ծ, զի հասին
ջուրք յանձն իմ. ընկղայ ես 'ի խորս
անդնդոց, ուր ո՛չ գոյ ինձ հան-
գիստ. նաւահանգիստ ապաշխա-
րութ͞ե շնորհեա՛ ինձ բա:

Փ. Նաւապետ բարեգութ առ
քեզ ապաւինիմ. տո՛ւր ինձ ձեռն
օգ͞ն երբեմն պետրոսի 'ի վ͞ր ալեացն.
որ ծփիմս ալէկոծեալ յանցանօք
մեղաց. և կեցո՛:

Թ. Դու ես ք͞ս աղբիւր կենաց,
բղխումն ողորմու͞ե. շնորհեա՛ փըր-
կիչ անձանց մերոց զթողութ͞ի մե-
ղաց մերոց:

ՍՂ. 'Ի քէն է տ͞ր աղբիւր կենաց.
և լուսով երեսաց քոց տեսանեմք
զլոյս: Ձգեա՛ զողորմութ͞իս քո,
որք ճանաչեն զքեզ. զարդարութ͞իս
քո, որք ուղիղ են սրտիւք. շնոր-
հեա՛ փրկիչ անձանց մե:

Փ. Որ աղբիւրդ ես ծարաւեաց և
հանգիստ աշխատելոց. ճանապարհ

մոլորելոց. և հովիւ հոգևոր բանաւոր հօտի. փափաքողացս առ քեզ քո̃ լեր նաւահանգիստ. և արբո՛ մեզ ծարաւեացս զբաժակ քո քաղցրութե̃ յանսպառ աղբերէդ:

Ողորմեա:

’Ի տաճարի սրբութե̃ քում լո՛ւր տէր ձայնի իմում. և աղաչանք իմ ժամանեսցեն ’ի յականջս քո տէր:

ՍՂ. Լուաւ ինձ ’ի տաճարէ սբ̃յ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առաջի նր̃ մտցէ յականջս նր̃. և աղաչանք իմ ժաման:

Փ. ԱՂՑ. Որ լուսատու ես անեզերաց քո̃ ա̃ծ, լուսաւորեա՛ զիմ զխաւարային խորհուրդս, և կեցո՛:

Փ. ՆՆՋ. Օրհնեալ ես տէր, և փառաւորեալ է քո անբաւ մարդասիրութի̃դ. զաղաչանս մեր քեզ մատուցանեմք, որ թագաւորդ ես յաւիտենից. զննջեցեալսն մեր արժանի արա՛ ա̃ր ընդունիլ ’ի կեանսդ յաւիտենից:

Թ. Արտասուս ինձ շնորհեա՛ ’ի յապաշխարութե̃ տէր. զի լուացից

զմեղս անձին իմոյ որպէս պոռնիկն աղաչեմ, և կեցո՛:

ՍՂ. Վաստակեցայ ես 'ի հեծութ՟ե իմում. լուացի զա՟մ գիշեր ըզմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի. զի լուացից զմեղս:

Փ. Որ աղբիւր ես անապական ք՟ ա՟ծ, զվիրաւորեալ անձն իմ 'ի մեղաց՝ բժշկեա՛ տէր ըղխմամբ արտասուաց, և կեցո՛:

Թ. Զմոլորեալ ծառայս խնդրեա՛ տէր. և մի՛ դատապարտեր զիս 'ի յաւուրն այցելութ՟ե քոյ մարդասէր:

ՍՂ. Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես ո՟պ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ. և մի՛ դատապարտեր զիս 'ի յաւուրն այցելութ՟ե քոյ մարդա:

Փ. Որ մոլորեցայ 'ի հօտէ քումմէ հովիւ բարի. խնդրեա՛ զիս զմոլորեալս. և արժանաւորեա՛ խառնիլ 'ի հօտ քո ք՟. և կեցո՛:



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ
## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
## ԱՌԱՒՕՏՈՒ ԺԱՄՈՒ

Որ կատարի 'ի դէմս որդւոյն ա͞յ․ որ
[illegible] ։

ԼՑԱՔ առաւօտու ողորմութե͞ քով․ ցնծացաք և ուրախ եղաք զա͞մ աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ․ և ամացն, յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ց տէր 'ի ծառայս քո․ և 'ի գործս ձեռաց քոց․ և առաջնորդեա՛ որդւոց նոցա․ եղիցի լոյս տ͞ն ա͞յ 'ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա 'ի մեզ տ͞ր․ և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ։

Փառք հօր, և որդ։

Եւ ես խաղաղութե͞ զտ͞ր աղաչեսցուք․ ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛։

Օրհնութ՟ին, և փառք հօր, և որդ-ւոյ, և հոգւոյն ս՟բյ. այժմ և։

Օրհնութ՟ն Երից Մանկանցն Դանիէլի։

ՕՐՀՆԵԱԼ ես տ՟ր ա՟ծ հարցն մե-րոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ա՟մ ը՟ն մեզ. արդար ես դու տէր. և ա՟մ գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են. և ա՟մ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութե՟ ածեր 'ի վ՟ր մեր ը՟ն ա՟մի. և զոր ինչ ածեր 'ի վ՟ր մեր, և քաղաքի ս՟բյ հարցն մե-րոց երուսաղէմի։

Արդարութ՟բ և յիրաւի ածեր զայս ա՟մ 'ի վ՟ր մեր վ՟ս մեղաց մերոց։

Անօրինեցաք և յանցեաք ապըս-տամբ լինել 'ի քէն. մեղաք յա՟մի. և պատուիրանաց քոց մեք ո՛չ ան-սացաք։

Ո՛չ պահեցաք և ո՛չ արարաք որ՟պ պատուիրեցեր դու մեզ. զի զբարիս գտցուք մեք 'ի քէն։

Արդ զա՟մ զոր արարեր, և զոր ինչ

ածեր 'ի վ̃ր մեր, արդար դատաստանաւ տարաբեր :

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց՝ և ապստամբողաց :

'Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զա̃մ երկիր մատնեցեր զմեզ :

Եւ արդ ո՛չ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր. զի յամօթ և նախատինք եղաք ծառայից քոց, և պաշտօնէից :

Այլ մի մատներ զմեզ իսպառ վ̃ն անուան քոյ. մի ցրեր զուխտս քո. և մի 'ի բացեայ առներ զողորմութի̃ս քո 'ի մէնջ :

Վ̃ն աբրահամու սիրելւոյ քոյ. իսահակայ ծառայի քոյ. և իսրայէլի սր̃յ քոյ :

Խոստացար նց̃ և ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր ոպ̃ զաստեղս երկնից բազմութ̃բ. և ոպ̃ զաւազ առ եզր ծովու :

Եւ արդ՝ որ̃ նուաղեցաք մեք քան զա̃մ ազգս. և եմք տառապեալք յա̃մ երկրի այսօր վ̃ն մեղաց մերոց :

Ո՛չ գոյ 'ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ· ո՛չ ողջակէզք պատարագաց· և ո՛չ խունկք օրհնաց, և ո՛չ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քոյ, և զողորմութի̃ն գտանել 'ի քէն:

Այլ անձամբք խոնարհեալք, և հոգւովք տառապանաց՝ ընդունելի լիցուք մեք ոպ̃ զողջակէզս խոյոց և զուարակաց, և ոպ̃ բիւրաւորս գառանց պարարտաց:

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քոյ, զի կատարեալ գտցուք զկնի քոյ· և չեք ամօթ յուսացելոցս 'ի քեզ:

Եւ արդ գամք զհետ քոյ ա̃մ սրտիւք մերովք· երկնչիմք 'ի քէն, և խնդրեմք զերեսս քո տ̃ր, մի՛ յամօթ առներ զմեզ:

Այլ արա́ աւ մեզ ը̃ս հեզութե̃ քում և ը̃ս բազում ողորմութե̃ քում, փրկեա́ զմեզ ը̃ս սքանչելեաց քոց տէր· և փառաւորեսցի անուն քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան, որք չարչարեն զծառայս քո· ամաչե-

ցեալ լիցին բռնութիք նց, և ամ զօրութիք նց խորտակեսցին:

Եւ ծանիցեն, զի դու ես տէր ած միայն՝ որ փառաւորեալդ ես 'ի վր ամ տիեզերաց:

Օրհնեալ ես դու տէր ած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց քոց. գովեալ և առ:

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութե քոյ. գովլ:

Օրհնեալ ես 'ի վր աթոռոյ արքայութե քոյ. գովլ:

Օրհնել ես որ նստիս 'ի քրովբէս, և հայիս յանդունդս. գովլ:

Օրհնեալ ես 'ի վր հաստատութե երկնից. գովլ:

Օրհնեցէք ամ գործք տն զտէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զտր. օրհնեցէք:

Օրհնեցէք հրեշտակք տն և ջուրք՝ որ 'ի վերոյ երկնից զտր. օրհն:

Օրհնեցէք զօրութիք տն՝ արեգակն և լուսին զտր. օրհն:

Օրհնեցէ՛ք աստեղք երկնից՝ անձրևք և ցօղք զտէր. օրհն։

Օրհնեցէ՛ք ա՟մ հողմք՝ հուր և ջեր զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաբեր զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք սառն և սարզ, եղեամն և ձիւն զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք տիւք և գիշերք, լոյս և խաւար զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք ամպք և փայլատակունք և երկիր զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք լերինք, բլուրք, և ա՟մ բոյսք երկրի զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք աղբիւրք, ծովք՝ և գետք զտէր. օրհն։

Օրհնեցէ՛ք կէտք և ա՟մ կայտառք, որք 'ի ջուրս, և թռչունք երկնից զտէր. օրհ։

Օրհնեցէ՛ք գազանք և անասունք, և որդիք մարդկան զտէր. օրհ։

Օրհնեսցէ՛ իէ՟լ զտ՟ր. օրհնեսցէ, և բարձր արասցէ զնա յաւիտեան։

Օրհնեցէ՛ք քահանայք զտ՟ր. օրհ։

Օրհնեցէ՛ք ծառայք տ՟ն զտ՟ր. օրհ։

Օրհնեցէ՛ք անձինք և շունչք ար-

դարոց զտէր • օրհ ։

Օրհնեցէք սրբք և խոնարհք սրտիւք զտէր • օրհ ։

Օրհնեցէք Անանիա, Ազարիա՝ և Միսայէլ զտէր • օրհ ։

Փառք Հօր ։ Այժմ և միշտ ։

Օրհնեցէք զարարիչն արարածոց, զտէրն տերանց, զԹագաւորն Թագաւորաց, զածն աստուծոց ։ Օրհնեցէք՝ գովեցէք՝ բարեբանեցէք • զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութն նորա ։

Եւ ապա ասեն շարական ըստ պատշաճին ։

Քարոզ ընդ հարցին ։

Եկեալքս ամենեքեան 'ի սբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին այ, ըզտէրն մեր և զփրկիչն յս քս ։ Որ էջ փառօք հօր 'ի մէջ հնոցին • և փրկեաց զերիս մանկունսն 'ի քաղդէացւոց անտի ։ Լուսաւոր և սբ պահեսցէ զմիտս մեր • զի մի երբէք խաբեսցուք մեք 'ի մեղաց, և 'ի ցանկութէ աշխարհի ։ Այլ արժանի ե-

լիցուք պահել զպատուիրանս ն՜ր․ առնուլ զպսակն լուսոյ և կենաց'ի յանձինս մեր։

Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՜ծ յ՜ս ք՜ս տ՜ր մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Տէր ողորմեա՛։ Երիցս։

Մաղթանք 'ի Կիւրակէի, և յայլ փ՜րու-նական տօնս։

Հզօր՝ յաղթօղ՝ սքանչելագործ, որ մեծի յարութե՜ն ք՜նի ա՜յ մերոյ վայելէ փառք իշխանու՜ն և պատիւ այժմ և միշտ և յաւիտ։

Մաղթանք ճարփերուսաց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողոր-մութե՜ քոյ 'ի մեղուցեալ անձինս մեր․ շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մերոց․ և փրկեա՛ զմեզ 'ի յաւիտե-նական հրոյն։ Արա՛ արժանի ընդ-երիս ս՜բ մանկունսն, և է՜ երանելի ս՜բ վկայսն՝ օրհնել զքեզ և գովել․ և քեզ գոհու՜ն և փառս մատուցա-նել հօր, և որդւոյ, և հոգւոյն ս՜բյ

այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից։

### Մաղթանք պահոց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողորմութե͞ քոյ 'ի մեղուցեալ անձինս մեր. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ զմեզ 'ի յաւիտենական հրոյն։ Արա՛ արժանի ընդ երիս ս͞բ մանկունսն, և ը͞ երանելի ս͞բ վկայսն օրհնել զքեզ՝ գովել և ասել. ա͞ծ քաւեա՛ զիս զմեղաւորս. ա͞ծ քաւեա՛ զիս զմեղաւորս, ա͞ծ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց, և կեցո՛։

---

### Երգ Մարիամու ա͞ծածնին։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ անձն իմ զՏ͞ր. և ցնծասցէ հոգի իմ ա͞վ փրկչաւ իմով։

Այց արար 'ի վ͞ր խոնարհութե͞ աղախնոյ իւրոյ. այսուհետև երանիցեն ինձ ա͞մ ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և ս͞բ է անուն նորա։

Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զզօրութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս՚ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ելից բարութեամբ. և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարս մեր. Աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան:

## Օրհնութիւն Զաքարիայի՝ հօրն Յովհաննու Մկրտչի:

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի՝ որ յայց ել, և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ:

Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանով սրբոցն. որք յաւիտենից մարգարէքն էին:

Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց. և ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց:

Առնել ողորմութիւն առ հարսն մեր. և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ:

Զերգումն՝ զոր երգուաւ աբրահամու հօր մերոյ. տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ. մարգարէ բարձրելոյն կոչեսցիս. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա։

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ 'ի թողութիւն ամենայն մեղաց մերոց։

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ, որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց՝ լուսաւոր առնել զխաւար մեր։

Ծագել լոյս 'ի վերայ այսոցիկ՝ որք նստէաք 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան։

## Աղօթք ծերունւոյն Սիմէոնի։

Արդ՝ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո. զոր

պատրաստեցեր առաջի ամ ժողո-
վրդոց։

Լոյս ՚ի յայտնութի հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում իէլի։

Փառք Հօր և որդ։

Եւ ապա ասէ Մեծացուսցէն, ըստ պատշաճի։

Քարոզ ընդ Մեծացուսցէին։

Սբ զածածինն՝ և զամ սբս բարե-խօս արասցուք առ հայր յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթա-ցեալ կեցուսցէ զարարածս իւր, ա-մենակալ տէր։

Աղօթք մարտիրոսաց և պահոց։

Ընկա՛լ տէր զաղաչանս մեր բարե-խօսութբ սբ ածածնին անարատ ծնո-ղի միածնի որդւոյ քո. և աղաչանօք ամ սբց քոց. և որոց այսօր է յիշա-տակ։ Լո՛ւր մեզ տէր, և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։

Արժանաւորեա՛ գոհութբ փառա-ւորել զքեզ ը որդւոյ և ը սբ հոգ-ւոյդ այժմ և միշտ և։

### Քարոզ Հինէ Մեծապաշտօնէին Նորա Նեխջ աւուրջ:

Եւ ևս խաղաղութեան զտէր:
Վասն որ տեղւոյս շինութեան, և բարեկարգութեան. զտէր աղաչեսցուք:
Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ի դրունս սոյն եկեղեցւոյ. զտէր աղ:
Վասն ընդունելոյ զպաղատանս մեր ի մեծի ողորմութեան խնդրում, զտէր:
Եւևս և վս միա: Զանձինս: Ողոր:

### Աղօթք:

Դու ես Թագաւոր յաւիտեանս յաւիտենից քս ած մեր: Եւ քեզ ընդ հօր, և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք, իշխանութի և պատիւ այժմ և միշտ, և յաւիտ:

### Երգ Խաղաբերդի առաքարանին:

Եղիցի անուն տն օրհնեալ՝ ի յայսմ հետէ մինչև 'ի յաւիտեան:
Օրհնեցէք մանկունք զտր. և օրհնեցէք զանուն տն: Եղիցի անուն տն օրհնեալ յայսմ հետէ մինչև 'ի յաւիտեան: Յարևելից մինչ 'ի մուտս ա-

Լեւու օրհնեալ է անուն տն. 'ի յայսմ հետէ մինչեւ 'ի յաւիտեան ։

Փառք եւ երկրպագութի հօր եւ որդ-ւոյ, եւ սբյ հոգւոյն. եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն. 'ի յայսմ հետէ մինչեւ 'ի յաւիտեան։

Արի՛ տէր օգնեա՛ մեզ, եւ փրկեա՛ զմեզ վասն անուան քո ։

Արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ իսպառ վն անուան քո ։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան՝ ած քո սի՛ոն յազգէ յազգ ։

Օրհնեա՛ անձն իմ զտր. օրհնեցից զտէր կենդանութե իմոյ ։

ՍՐ. Օրթի ։

ՔՀ. Խաղաղութի ամենեցուն ։

ԴՊ. Եւ ընդ հոգւոյդ քում ։

ՍՐ. Երկիրպագուք լուարուք ։

ՔՀ. Սբյ աւետարանիս որ ըստ մատթէոսի ։

ԴՊ. Փառք քեզ տէր ած մեր ։

ՍՐ. Պռօսխումէ ։

ԴՊ. Ասէ ած ։

## Աւետարան ըստ Մատթէոսի։

### ԴԿ. ԲԿ.

Ի յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի՝ և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։ Եւ ահա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ տ՟ն իջեալ յերկնից՝ մատուցեալ 'ի բաց թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի. և նստէր 'ի վ՟ր ն՟ր։ Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն. և հանդերձ ն՟ր սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահէ անտի ն՟ր խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալ։ Պատասխանի ետ հրեշտակն՝ և ասէ ցկանայսն. մի երկնչիք դուք, գիտեմ, զի զյ՟ս զխաչեալն խնդրէք. չէ աստ. քանզի յարեաւ ո՟պ ասացն. եկայք և տեսէք զտեղին՝ ուր կայր։ Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա, թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ 'ի գալիլեա. անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Եւ ելեալ վաղ-

վաղվաղակի 'ի գերեզմանէ անտի ահիւ
և խնդութ՟բ բազմաւ, ընթանային
պատմել աշակերտացն: Եւ ահա
պատահեցաւ ն՟ց յ՟ս և ասէ, ողջ էք:
Եւ նոքա մատուցեալ կալան զոտս
ն՟ր, և երկիրպագին նմա: Յայնժամ
ասէ ցն՟ս յ՟ս, մի երկնչիք՝ երթայք
ասացէք եղբարցն իմոց, զի երթի֊
ցեն 'ի գալիլեա՝ և անդ տեսցեն
զիս: Իբրև նոքա գնացին, ահա ո֊
մանք 'ի զօրականացն եկին 'ի քա֊
ղաքն, և պատմեցին քահանայապե֊
տիցն զա՟մ, որ ինչ եղեն: Եւ նոքա
ժողովեալ հանդերձ ծերովքն՝ խոր֊
հուրդ առեալ, արծաթ յոյժ ետուն
զօրականացն, և ասեն. ասասջիք,
եթէ աշակերտքն նորա եկեալ գի֊
շերի գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն
էաք: Եւ եթէ լուր լիցի այդ առ
դատաւորն, մեք հաճեսցուք զնա.
և զձեզ անհոգս արասցուք: Եւ ն՟ց
առեալ զարծաթն, արարին ո՟պ ու֊
սանն: Եւ ել համբաւս այս 'ի հրէից
մինչև ցայսօր:

Իսկ մետասան աշակերտքն գնա֊
ցին 'ի գալիլեա, 'ի լեառն՝ ուր

ժամադիր եղև նոցա յս՟: Իբրև տե-
սին զնա՝ երկիրպագին նմա. և ո-
մանք երկուացան: Եւ մատուցեալ
յս՟ խօսեցաւ ը՟ նս՟ և ասէ. տուաւ
ինձ ամ՟ իշխանութիւն, յերկինս և
յերկրի: Որպ՟ առաքեաց զիս հայր,
և ես առաքեմ զձեզ: Գնացէք այ-
սուհետև, աշակերտեցէք զամ՟ հե-
թանոսս. մկրտեցէք զնոսա յանուն
հօր և որդւոյ և հոգւոյն սբ՟յ: Ու-
սուցէք նոցա պահել զամ՟ զոր ինչ
պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ
ես ը՟ ձեզ եմ զամ՟ աւուրս մինչև
'ի կատարած աշխարհի:

## Աւետարան ըստ Մարկոսի:

### ԲՁ. ԴՁ.

Եւ իբրև երեկոյ եղև՝ քանզի ուր-
բաթ էր՝ որ 'ի շաբաթն մտանէր,
եկեալ Յովսէփ, որ յԱրիմաթեայն
էր, այր պարկեշտ՝ նախարար. որ և
ինքն իսկ ակն ունէր արքայութեն՟
այ՟: Համարձակեցաւ եմուտ առ
պիղատոս, և խնդրեաց զմարմինն
յս՟ի. և պիղատոս զարմացաւ, թէ

այնչափ վաղ մեռաւ: Եւ կոչեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա, և ասէ՝ թէ արդարև այնչափ վաղ մեռաւ: Եւ իբրև ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի՝ շընորհեաց զմարմինն յովսէփայ: Եւ յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա պատեաց կտաւովն. և եդ 'ի գերեզմանի, որ էր փորեալ 'ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի 'ի դուռն գերեզմանին: Իսկ մարիամ մագդաղենացի, և մարիամ յակոբայ և յովսեայ տեսին զտեղին՝ ուր եդաւ: Եւ իբրև էանց շաբաթն, մարիամ մագդաղենացի, և մարիամ յակոբայ և սողոմէ՝ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա:

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արևագալն, և ասեն ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տեսին, զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն,

տեսին զերիտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան։ Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք՝ զյս՞ խնդրէք, զնազովրեցի զխաչելեալն, յարեաւ. չէ՛ աստ. ահաւադիկ տեղին, ուր եդին զնա։ Այլ երթա՛յք ասացէ՛ք ցաշակերտսն նորա, և ցպետրոս. թէ ահա՛ յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի գալիլեայ՝ անդ տեսանիցէք զնա, որպէս ասացն ձեզ։ Եւ իբրև լուան՝ ելին և փախեան 'ի գերեզմանէն. քանզի զահի հարեալ էին. և ո՛չ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։

## Աւետարան ըստ Ղուկասու։

### ԱԿ. ԳԿ.

Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր նախարար, այր բարեգործ և արդար։ Սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, յարիմաթեայ քաղաքէ հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն այ՞։ Սա մատուցեալ առ պիղատոս՝

խնդրեաց զմարմինն յսի։ Եւ իջուցեալ զնա պատեաց պատատառակալաւ. և եդ ՚ի կռածոյ գերեզմանին, ուր չէր բնաւ զոք եդեալ։ Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր. և երթայլին զհետ նորա կանայք՝ որք եկեալ էին ընդ նմա ՚ի գալիլեէ. տեսին զգերեզմանն, և ոպ եդաւ մարմինն նր։ Դարձան և պատրաստեցին խունկս և իւղս. և ՚ի շաբաթուն հանգարտեցին վս պատուիրանին։

Բայց ՚ի միաշաբաթուն վաղքաջ ընդ առաւօտն եկին ՚ի գերեզմանն, բերին զխունկսն, զոր պատրաստեցին. և այլ կանայք ընդ նոսա։ Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ՚ի գերեզմանէ անտի. և մտեալ ՚ի ներքս, ոչ գտին զմարմին տն յսի։ Եւ եղև ընդ հիանալն նոցա վս այնորիկ, և ահա արք երկու հասին առ նս ՚ի հանդերձս լուսաւորս։ Եւ իբրև զահի հարան՝ և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ը մեռեալս. չէ՛ աստ, այլ յարեաւ։

Յիշեցէ՛ք ո̃պ խօսեցաւ ը̃ ձեզ՝ մինչ էրն 'ի Գալիլեա. և ասէր, թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղաւորաց, և 'ի խաչ ելանել, և յերրորդ աւուր յառնել: Եւ յիշեցին զբանս նորա, և դարձան պատմեցին զայս ա̃մ մետասանիցն, և այլոցն ամենեցուն: Եւ էին մարիամ մագդաղենացի, և յովհաննայ, և մարիամ յակոբայ, և այլք ընդ ն̃մ, որք պատմէցին զայս առաքելոցն: Եւ երևեցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանք նոցա, և չհաւատային նոցա: Բայց պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն. և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ, զի կային. և գնաց ընդ միտս զարմացեալ՝ թէ զինչ եղև:

Աւետարան ըստ Յովհաննու:

ԱԶ. ԳԶ.

Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս յովսէփ, որ յարիմաթեայ էր աշակերտ յի̃ի 'ի ծածուկ վասն ա-

հին հրէից, զի բարձցէ զմարմինն յ՟ի: Եւ հրամայեաց պիղատոս, եկն և եբարձ զնա: Եկն և Նիկոդիմոս՝ որ եկեալն էր առ յ՟ս 'ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէս, իբրև լտերս հարիւր: Առին զմարմինն յ՟ի. և պատեցին կտաւովք և խնկօք հանդերձ, որպ՟ օրէն էր հրէից պատել: Եւ էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ, և 'ի պարտիզի անդ գերեզման նոր. յորում ո՛չ ոք երբէք էր եդեալ: Անդ վ՟ս ուրբաթուն հրէից, զի մօտ էր գերեզմանն՝ եդին զյ՟ս:

Եւ 'ի միաշաբաթոջն մարիամ մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն 'ի գերեզման անդր՝ և տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրաց գերեզմանին: Ապա ընթանայ և գայ առ սիմոն պետրոս, և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն յ՟ս, և ասէ ցնոսա. բարձին զտէր 'ի գերեզմանէ անտի. և ո՛չ գիտեմ, ուր եդին զնա: Ել պետրոս՝ և միւս աշակերտն, և գային 'ի գերեզմանն. ընթանային երկո-

քեանն 'ի միասին. և միւս աշա֊
կերտն յառաջեաց՝ ընթացաւ վա֊
ղագոյն քան զպետրոս՝ և եկն նախ
'ի գերեզմանն ։ Եւ խոնարհեալ
տեսանէ, զի կային անդ կտաւքն.
բայց 'ի ներքս ոչ եմուտ ։ Եկն և
սիմոն պետրոս՝ որ գայրն զկնի նր̅.
և եմուտ 'ի գերեզմանն, և տեսանէ
զկտաւսն, զի կային անդ. և վար֊
շամակն՝ որ էր 'ի գլուխ նորա, ոչ
ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն
ծալեալ 'ի մի կողմն ։ Յայնժամ ե֊
մուտ և միւս աշակերտն, որ եկեալն
էր յառաջագոյն 'ի գերեզմանն. ե֊
տես և հաւատաց. զի չև ևս գիտէին
զգիրսն, թէ պարտ է նմա 'ի մեռե֊
լոց յառնել ։ Չոգան դարձեալ առ
միմեանս աշակերտքն ։ Բայց մա֊
րիամ կայր արտաքոյ գերեզմանին
և լայր ։ Եւ մինչդեռ լայր, խոնար֊
հեցաւ 'ի գերեզմանն, և տեսանէ
երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի
նստէին մի 'ի սնարից և մի յանո֊
տից, ուր կայր մարմինն յի̅ի ։ Եւ
նոքա ասեն ցնա՝ կին դու զի՞ լաս ։
Ասէ ցնոսա. զի բարձին զտէրն իմ

*'ի գերեզմանէ աստի. և ոչ գիտեմ ուր եդին զնա: Զայս իբրև ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, և տեսանէ զՅս՟, զի կայր. և ոչ գիտէր թէ Յս՟ իցէ: Ասէ ցնա Յս՟, կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. տէր՝ եթէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ ուր եդեր զնա, զի ես առից զնա: Ասէ ցնա Յս՟. Մարիամ. և նա դարձաւ՝ և ասէ ցնա եբրայեցերէն՝ ռաբունի, որ թարգմանի վարդապետ: Ասէ ցնա Յս՟. մի՛ մերձենար յիս. զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարս իմ, և ասա՛ ցնս՟: Ելանեմ ես առ Հայրն իմ, և առ Հայր ձեր. և Ածն՟ իմ, և Ած՟ ձեր: Գայ Մարիամ Մագդաղենացի, և պատմէ աշակերտացն. եթէ ետես նա զՏր՟, և զայս ինչ ասաց ցնա:*

ԵՐԳ ՎԵՐՋԻՆ ԻՒՂԱԲԵՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ:

Փառք յարուե՟ քոյ Տր՟. ոչ դադարեցայց քն՟ օրհնել զքեզ զամ՟ ա֊

ւուրս կենդանութեան իմոյ։

Փառք յարութեան քո տ՟ր. ո՛չ դա-
դարեցայց յա՟ գովել զքեզ զա՟մ ա-
ւուրս կենդանութեան իմոյ։

Ես ո՛չ դադարեցայց փրկիչ փա-
ռաւորել զքեզ զա՟մ աւուրս կեն-
դանութեան իմոյ։

Երգ աղուհացի կիրակէիցն. Երիցս
կրկնեա, և զկէսինն ճաշին ասա։

Զա՟մ աւուրս կենաց իմոց ես ո՛չ
դադարեցայց օրհնել զքեզ քս՟ փր-
կիչդ աշխարհի։

Զա՟մ աւուրս։

՚Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր
՚ի սրբութի՟, և օրհնեցէ՛ք զտէր։

Աստ օրհնեցէ՛ք ա՟մ ծառայք տ՟ն
զտ՟ր ՚ի սրբութի՟. և օրհնեցէ՛ք զտ՟ր։

Գալստեան ողորմեան։

Դասք լուսեղէն զուարթնոցն
սպասէին մեծի գալստեանն տ՟ն։

Եւ երգէին երգ նոր՝ օրհնեալ է
քո տ՟ր գալուստդ։

Զատկի ։

Լուսապայծառ հրեշտակին նստելով 'ի կենդանատու գերեզմանին ։ Եւ աւետէր կանանցն՝ յարեաւ աստուած ։

Համբարձման ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր։ Եւ գայ մտանէ փառօք 'ի փառս ։

Հոգւոյ Գալստեան ։

Իջեալ հոգին յառաքեալսն, և հրազինեաց զընտրեալսն անկէզ 'ի սուրբ վերնատունն։ Եւ հանդերձ նորօք յազգս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ ։

Վարդավառի ։

Ցնծայ Թաբօր հերմոնիւ. և առաքեալքն 'ի հայրական ձայնէն թմբրեալք ։ Եւ կենդանեաց և մեռելոց տէր ծանուցին զքեզ մովսէս և հեղիաս ։

Խաչի ։

Այսօր եկեալ կամաւ տէրն 'ի խաչ, և տարածեաց զբազուկս իւր 'ի նմա ։

Ծննդեան ։

Հոյլք հոգեղէնք ընդ հովուան քարոզէին 'ի յանբանից մսուր ըղ_ բանն բազմէլ։ Եւ մոգքն աստեղըն գուշակեալ մատուցին զընծայսն խորհրդոյ ։

Տեառն ընդառաջին ։

Քառասնօրեայ տղայ և տ̃րն օրինադիր՝ անօրինաբար եկն 'ի տաճարն ։ Եւ սիմէոն գգուէր գրկօքն ․ և յօրինաց կապից լուծումն հայցէր 'ի կեանս աւետարանի ։

Քարոզ զկնի Իւղաբերից աւետարանին, և երգոյն ։

Զուարճացեալքս մեծաւ ուրա_ խութ̃ աւետեօք յարութ̃ե տ̃ն մե_ րոյ և փրկչին յ̃ի. քրիստոսի։ Որ եղև պտուղ և անդրանիկ ամ̃ննջեցե_ լոց։ Խորտակեաց զդրունս դժո_ խոց․ և ելոյծ զբռնութ̃ի մահու։ Եւ ետ յոյս հաստատութ̃ե՝ վերստին նորոգման կենդանութ̃ե ամ̃ մարդ_ կան ։ Խնդրեսցուք հաւատով 'ի փրկչէն մերմէ յ̃սէ ք̃սէ , զի զմեզ

արժանի արասցէ յարութեան իւրոյ . կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց ։ Վասն զի զայս խոստացաւ՝ զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՟ծ յիսուս ք՟ս տ՟ր մեր, կեցո՛ և ողոր։

Աղօթք։

Ամենակեցոյց Ճշմարիտ՝ ո՟ր մեծի յարութեան ք՟ի ա՟յ մերոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և։

Եւ այլ ձայն։

ՈՂՈՐՄԵԱ՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ . և ՚ի մեղաց իմոց ս՟ր բեա՛ զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յա՟մ ժամ։

Քեզ միայն մեղայ տէր . և զչար առաջի քո արարի ։

Ո՟պ արդար եղիցիս ՚ի բանս քո, և

յաղթեսցես 'ի դատելն քո:

Անօրէնութեա՟ յղացայ. և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու տ՟ր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութե՟ քո յայտնեցեր ինձ:

Ցօղեա՛ յիս մշտկաւ և ս՟բ եղէց. լուա՛, և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա՛ ինձ տ՟ր զցնծութիւն և զուրախութի՟. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց. և զա՟մ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն:

Զսիրտ ս՟բ հաստատեա՛ յիս ա՟ծ, և զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում:

Մի ընկենուր զիս տ՟ր յերեսաց քոց. և զհոգի քո ս՟բ մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութի՟ փրկութե՟. և հոգւով պետութե՟ քո հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ՝ ա՟ծ փրկ-

կուռ իմոյ. ցնծասցէ լեզու իմ յար-
դարութեան քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։

Թէ կամեցեալ էիր՝ պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ող- ջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ. ըղ- սիրտ մ̃բ և զհոգի խոնարհ՝ ա̃ծ ոչ արհամարհէ։

Բարի արա տ̃ր կամօք քովք սիոնի, և շինեսցին պարիսպքն եէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատա- րագս արդարութե. ուխտից պա- տարագս հանցեն 'ի սեղան քո զը- ւարակս։

Փառք հօր. Այժմ և։

Եւ ապա ասէ ողորմեայն ըստ պաշտաճի։

Քարոզ չինի ողորմեայի։

Երկրպագեմք քեզ տէր ա̃ծ մեր անցեալքս ընդ երկարութիւն գիշե- րիս և կանխեալքս 'ի տեղւոջ խոս-

տովանութե̅, մատուցանեմք զա-
ռաւօտու զաղօթս մեր : Զքեզ տր̅
օրհնեմք և փառաւորեմք, և զքեն
տր̅ գոհանամք. որ արժանի արա-
րեր զգիշերս խաղաղութբ̅ անցու-
ցանել, և հասանել 'ի ժամ առա-
ւօտուս : Արժանաւորեա́ զմեզ տր̅
անձառ խոստմանց քոց, զոր խոս-
տացար սիրելեաց քոց՝ Ճշմարիտդ
ած̅ յս̅ քս̅ տէր մեր, կեցո́ և ողոր։
Ողորմեաց մեզ տէր ած̅ մեր ըստ
մեծի ողորմութե̅ քում. ասասցուք
ամենեքեան միաբանութբ̅ : Տէր ողոր-
մեա́. տէր ողորմ:

Մաղթանք յարութե̅ :

Ողորմած՝ գթած՝ Ճշմարիտ՝ տր̅
մեծի յարութեան քս̅ի ած̅յ մերոյ
վայելէ փառք իշխանութի̅ և պատիւ։

Մաղթանք պահոց :

Ողորմութբ̅ և գթութբ̅ քով լո́ւր
մեզ տէր և ողորմեա́. ներեա́ քա-
ւեա́ և թող զմեղս մեր : Արժանա-
ւորեա́ գոհութբ̅ փառաւորել զհայր
և զորդի և զս̅բ զհոգին. այժմ և
միշտ :

Մաղթանք մարտիրոսաց ։

*Բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոց մարտիրոսացն՝ որոց այսօր է յիշատակ, և ա՟մ սրբոց քոց՝ լուր մեզ տ՟ր և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թող զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՀայր և։*

---

*Ալէլուիա. ալէլուիա։*

ՕՐՀՆԵՑԷ՛Ք *զՏ՟ր յերկինս. օրհնեցէ՛ք զնա ՚ի բարձունս։*

*Օրհնեցէ՛ք զնա ա՟մ հրեշտակք նր՟. օրհնեցէ՛ք զնա ա՟մ զօրութիւնք նորա։*

*Օրհնեցէ՛ք զնա արեգակն և լուսին. օրհնեցէ՛ք զնա ա՟մ աստեղք և լոյս։*

*Օրհնեցէ՛ք զնա երկինք երկնից. և ջուրք՝ որ ՚ի վերոյ քան զերկինս օրհնեցէ՛ք զանուն տ՟ն։*

*Զի նա ասաց և եղեն. հրամայեաց, և հաստատեցան։*

*Կացոյց զն՟ս յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ո՛չ անցանեն.*

*Օրհնեցէ՛ք զտ՟ր յերկրէ վիշապք, և ա՟մ խորք։*

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկ՝ որք առնէք զբան նր։

Լերինք և ամ բարձունք, ծառք պտղաբերք և ամ մայրք։

Գազանք և ամ անասունք՝ սողունք և ամ թռչունք թեւաւորք։

Թագաւորք երկրի, և զօրք իւրեանց. իշխանք՝ և ամ դատաւորք երկրի։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք օրհնեցէք զանուն տն։

Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութի նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ տր զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութի նմա յամ սրբոց նորա յորդւոցն իէլի. ժողովրդն՝ որ մերձ է առ տէր։

Օրհնեցէք զտր յօրհնութի նոր. օրհնութի նմա յեկեղեցիս սրբոց։

Ուրախասցի իէլ յարարիչ իւր. որդիք սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց։

Օրհնեսցեն զանուն նր օրհնուբ, սաղմոսիւք և օրհնութբ սաղմոս ասասցեն նմա։

Հաճի տէր ընդ ժողովուրդս իւր սք̄ · և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան ։

Պարծեսցին սրբքն փառօք · և ցնծասցեն ՚ի հանգիստս իւրեանց · և բարձր արասցեն զա̃ծ բերանօք իւրեանց ։

Սուր երկսայրի ետ ՚ի ձեռս նոցա, առնուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց, յանդիմանութի̄ն ա̃մ ժողովրդոց ։

Կապել զթագաւորս նց̄ կապանօք, և զզօրավարս նոցա ձեռնակապօք երկաթեօք ։

Առնել նց̄ դատաստան ըստ գրոց · և փառք այս են ա̃մ սրբոց նորա ։

Օրհնեցէք զա̃ծ ՚ի սրբութե̄ նորա · օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան զօրութե̄ նր̄ ։

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նր̄ · օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութե̄ նորա ։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութե̄ · օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութբ̄ ։

Օրհնեցէք զնա ցնծութբ̄ · գովեցէք

զնա ուրախութ՟բ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր․ գովեցէք զնա 'ի բարբառ լսելիս։ Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութե՟ ա՟մ հոգիք օրհնեցէք զՏ՟ր։

Եւ ապա ասէ փէր երկնիցն բաց պաշտաճի։

---

Զկնի փէր երկնիցէն ասէ օրհնութ՟ն առաւօտու՝ ասացեալ յանմարմնոց, այլ 'ի Կոստանդնուպօլսոյ ս՟բյ ժողովոյն 'ի ՃԾ հայրապետաց։

ՓԱՌՔ 'ի բարձունս ա՟յ, և յերկիր խաղաղութ՟ն, 'ի մարդիկ հաճու՟ն։ Եւ օրհնութ՟ն քեզ 'ի բարձունս․ օրհնեալ ես Տ՟ր ա՟ծ մեր․ օրհնեմք զքեզ, և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տ՟ր զքեզ․ և երկիր պագանեմք քեզ․ փառաւորեմք զքեզ․ գոհանամք Տ՟ր զքէն վ՟ն մեծի փառաց քոց։ Տ՟ր Թագաւոր ն՟բգ երկնային՝ ա՟ծ և հայր ամենակալ։ Տէր և որդի հօր միածին յ՟ս ք՟ս և ս՟բ որդի․ Տ՟ր ա՟ծ գառն ա՟յ և որդի հօր, որ առեր զմեղս 'ի կուսէն․ ողորմե-

ցար, բարձեր զմեղս աշխարհի ։ Եւ արդ ընկա՛լ զաղաչանս մեր․ ս՟բդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեա՛ց մեզ ։ Զի դու միայն ս՟բ․ դու միայն բարձրեալ ես, դու միայն տ՟ր մեր յ՟ս ք՟ս ։ Տ՟ր և հոգիդ ս՟բ․ որ 'ի փառս ա՟ծ ընդ հօր․ Ամէն ։

Եւ յա՟մ ժամ օրհնեմք զքեզ․ տէր և գովեմք զանուն ս՟բ քոյ յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Արժանի արա տ՟ր զօրս զայս խաղաղութ՟ք, և առանց մեղաց պահեա՛ զմեզ ։ Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն ս՟բ քո յաւիտեանս ամէն։ Օրհնեալ տ՟ր, ուսո՛ ինձ զարդարութ՟իս քո․ Երէշ․ էրէնէ՛ ։ Տ՟ր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես աղաչեմ տ՟ր ողորմեա՛ ինձ․ և բժշկեա՛ զանձն իմ․ ես մեղայ քեզ։ Ցո՛յց մեզ տ՟ր զողորմութ՟իս քո․ և զփրկութիս քո տո՛ւր մեզ։ Տ՟ր ողորմութիւն քո յաւիտեան․ զգործս ձեռաց քոց մ՛ի անտես առներ։ Տ՟ր իմ զքեզ ապաւէն ինձ արարի․ ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու

ես ած իմ: Ի քեն է ակն աղբեւր կենդանութե, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա զողորմութիս քո, որք ճանաչեն զքեզ Տր:

ՄՂ. Փառք պատիւ, և երկրպագութի 'ի բարձունս Հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ:

Առաւօտու երգք կարգաւ. ընդ ձայնք 'ի Բարձանցն:

—

Առաւօտու երգ աղուհացից՝ և այլոց աւուրց պահոց:

Երկուշաբթի:

Լոյս տուր Տր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից 'ի մահ:

Մի ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց:

Երեքշաբթի:

Ի քեն է Տր աղբեւր կենաց. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ծագեա զողորմութիս քո՝ որք ճանաչեն զքեզ. զարդարութիս քո՝ որք ուղիղ են սրտիւք:

### Չորեքշաբթի ։

Ես ասացի, տէր ողորմեա՛ ինձ. և բժշկեա՛ զանձն իմ. ես մեղայ քեզ։

Երանի որ խորհի զաղքատն և ըզտնանկն, յաւուր չարի փրկէ զնա տ̃ր։

### Հինգշաբթի ։

Ես առ քեզ տ̃ր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր տ̃ր մերժես զանձն իմ. կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

### Ուրբաթ ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. խոնարհեցո ունկն քո 'ի խնդրուածս իմ։

Տէր ա̃ծ փրկութ̃ե իմոյ. 'ի տուէ կարդացի, և գիշերի առաջի քո։

### Առաւօտու երգ շաբաթու ։

Տէր հաներ 'ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ՝ ոյք իջանեն 'ի գուբ։

Բարձր առնեմ զքեզ տ̃ր, զի ընկալար զիս, և ո՛չ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս։

Առաւօտու երգ Մեծի Ծաղկազարդի ։

Այսօր մտանէ Թագաւորն մեր քն ՚ի յԵրուսաղէմ նոր քաղաք գաւթի ։
Ընդառաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք. և զմանկունքն փառաւո֊րէին ։

Առաւօտու երգք աւագ շաբաթուն ։

Երկուշաբթի ։

Ի սկզբանէ տէր զերկիր հաստա֊տեցեր. և գործք ձեռաց քոց եր֊կինք են ։
Նոքա կորնչին, և դու կաս և մնաս յաւիտեան ։

Երեքշաբթի ։

Տարցին Թագաւորի կուսանք ըզ֊հետ նր. և զընկերս նր տարցին նմ ։
Ածցեն ցնծութբ և ուրախութբ. և տարցին ՚ի տաճար Թագաւորի ։

Չորեքշաբթի ։

Խորհեցան և խօսեցան զչարութի. և զապիրատութիւն ՚ի բարձունս խորհեցան ։
Եդին յերկինս զբերանս իւրեանց. և զլեզուս իւրեանց ածէին զեր֊կրաւ ։

Հինգշաբաթի :

Որսացան զանձն արդարոյ. և զա-րիւն ամբիծ պարտաւոր առնէին :

Եղև տ͞ր ապաւէն իմ. ա͞ծ օգնա-կան յուսոյ իմոյ :

Ուրբաթ :

Մատնեցայ, և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութ͞է :

Աղաղակեցի առ տ͞ր զօրհանա-պազ. և համբարձի առ քեզ զձեռս իմ :

Շաբաթ :

Եդին զիս 'ի գբի ներքնում. 'ի խաւարի և 'ի ստուերս մահու :

Ցիս հաստատեցաւ սրտմտութ͞ի քո. զա͞մ զբօսանս քո ածեր 'ի վ͞ր իմ:

Առաւօտու երգ յարութ͞ե :

ԱՁ · ԱԿ

Զյարու͞ի զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարու͞ի:

Յարեաւ ա͞ծ, ցրուեցան թշնամիք նորա :

ԲՁ · ԲԿ

Զյարութ͞ի զփրկչին օրհնեա :

Զյարուցեալն զք͞ս օրհնեսցուք ,

և զյարու՟ն ն՟ր փառաւորեցուք ։

ԳՁ. ԳԿ

Զյարու՟ն զփրկչին օրհնեա ։
Որ ելն 'ի բարձունս, և գերեաց
զգերութի՟. էառ աւար, բաշխեաց
պարգևս՝ և ետ որդւոց մարդկան ։

ԴՁ. ԴԿ

Զյարութի՟ զփրկչին օրհնեա ։
Որ համբերեաց խաչի. և եդաւ 'ի
նորափոր վիմի. և ա՟ծային յարու-
թե՟ն զմահացեալսն վերաբերեաց 'ի
կեանս ։

ԵՐԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆՆ ՏԵ՟Ն ։

Զյարու՟ն զփրկչին օրհնեսցուք ։
Համբարձաւ ա՟ծ օրհնութե՟. և տ՟ր
մեր ձայնիւ փողոյ ։

ԳԱԼՍՏԵԱՆ ՀՈԳՒՈՅՆ ՍԲ՟Յ ։

Զգալուստ հոգւոյն օրհնեսցուք.
զհոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգա-
լուստ ։
Յեկեղեցիս բարեբանեցէք զա՟ծ,
և զտ՟ր յաղբերացն իէ՟լի ։

ԵԿԵՂԵՑՒՈՅ ։

Տան քում վայելէ սրբութի՟ տ՟ր
ընդ երկայն աւուրս ։
Տէր թագաւորեաց. վայելչութի՟

Զգեցաւ. զգեցաւ տէր զօրու՟ն ը՛նդ մէջ իւր ածաւ ։

Տապանակին ։

Արի՛ տ՟ր 'ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութե՟ քոյ ։

Յիշեա՛ տ՟ր զդաւիթ, և զա՟մ հեզութի՟ն նորա ։

Վարդավառին ։

Քո են երկի՛նք, և քո է երկիր. զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր ։

Զհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբօր և Հերմոն յանուն քո ցնծասցեն ։

Խաչին ։

Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան ։

Ո՟պ փրկեսցան սիրելիք քո. կեցո՛ աջովքո՟վ և լո՛ւր մեզ ։

Ծննդեան, և ա՟ծածնի ։

Իջցէ ո՟պ զանձրև 'ի վ՟ր գեղման. ո՟պ ցօղ՝ զի ցօղէ յերկիր ։

Ա՟ծ զիրաւունս քո արքայի տո՛ւր. և զարդարութի՟ս քո որդւոյ թ՟գւորի ։

Յայտնութե՟ ։

Արեգակն արդարութեան այսօր

յայտնեցար ազգի մարդկան, մարդ-
եղեւ սրբեցեր զՋուրս՝ վերածնեալ
զմեզ մկրտութ̃ն սրբոյ հոգւոյն:
'Ի վայելչութ̃ն փառաց սրբու̃ե քոյ՝
'ի յարգանդէ յառաջ քան զա-
րուսեակ ծնայ զքեզ. մարդ եղ:

Հրեշտակաց:

Օրհնեցէ՛ք զՏ̃ր յերկինս. օրհնե-
ցէք զնա 'ի բարձունս:
Օրհնեցէ՛ք զնա ամ̃ հրեշտակք նր̃.
օրհնեցէ՛ք զնա ամ̃ զօրութ̃ք նր̃:

Առաքելոց:

Ո՛չ են բանք, և ո՛չ են խօսք. որոց
ո՛չ լսին ձայնք նց̃:
Ընդ ամ̃ երկիր ել բարբառ նոցա.
մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք
նոցա:

Մարգարէից:

Յեկեղեցիս բարեբանեցէ՛ք զա̃ծ:
Եւ զՏ̃ր յաղբերաց ի̃էլի:

Հայրապետաց:

Քահանայք քո զգեցցին զարդա-
րութ̃ն, և ս̃ք քո ցնծալով ցնծաս-
ցեն:
Յիշեա՛ Տ̃ր զդաւիթ, և զամ̃ հե-
զութ̃ն նր̃:

Մարգարէութեանց:

Պարծեսցին ս̃բքն փառօք. և ցըն-ծասցեն 'ի հանգիստս իւրեանց:

Օրհնեսցէք զՏ̃ր յօրհնութիւն նոր. օրհնութի̃ն նմա յեկեղեցիս սրբոց:

ԱՂ. Առաքեա̃ Տ̃ր զլոյս քո և զճըշ-մարտութիւն քո. ցո̃յց մեզ Տ̃ր զո-ղորմութի̃ն. և քո ծառայիցս լե՛ր օգնա-կան բարեխօսութ̃ սրբոց մարտիրո-սացն, որոց այսօր է յիշատակ:

Զի սուրբք առաջնորդեալ եկցուք 'ի լեառն սբ̃ և 'ի յարկս քո. մտից առաջի սեղանոյ Ա̃յ առ Ա̃ծ, որ ու-րախ առնէ զմանկութի̃ն իմ. ցո̃յց մեզ Տ̃ր զողորմ:

Քարոզ նախատօնից, նաւակատեաց, և յինանց:

ԱՍԱՑՈՒՔ ամենեքեան միա-բանութ̃. Տ̃ր ողորմեա̃. Տ̃ր ողորմեա̃:

Վ̃ս խաղաղութե̃ ամ̃ աշխարհի, և հաստատութե̃ սրբոյ եկեղեցւոյ, զՏ̃ր աղաչեսցուք:

Վ̃ս ամ̃ ս̃բ և ուղղափառ եպիսկո-պոսաց զՏ̃ր աղաչ:

Վ̃ս սրբազան պապին մերոյ Տ̃ն այ

անուն . կենաց և փրկութե՟ն հոգւոյ նորին, զՏէր աղա:

Վասն հայրապետին մերոյ տ՟ն --- անուն . կենաց և փրկութե՟ն հոգւոյ նորին, զ՟Տր աղա:

Վ՟ս վարդապետաց, ք՟հնյից սար-կաւագաց դպրաց, և ա՟մ ուխտի մանկանց եկեղեցւոյ, զ՟Տր աղա:

Վասն բարեպաշտ թագաւորաց՝ և ա՟ծասէր իշխանաց՝ զօրավարաց՝ և զօրաց նոցին, զ՟Տր աղա:

Վ՟ս զի տ՟րն ամենակալ հնազանդե-ցուսցէ առաջի ն՟ց զա՟մ պատերազ-մունս թշնամեաց, զՏէր աղա:

Յաղագս հարց և եղբարց մերոց՝ որք 'ի գերուե՟ն են, և 'ի չար ծա-ռայութե՟ն, զ՟Տր աղա:

Յաղագս ճանապարհորդաց և նա-ւորդաց՝ խաղաղութբ՟ հասանել 'ի նաւահանգիստն բարուե՟ն, զ՟Տր աղ:

Յաղագս հիւանդաց, և ա՟մ վշտա-ցելոց փութապէս առողջութեան, զ՟Տր աղա:

Յաղագս բարեխառնութե՟ն օդոց՝ անձրևաց քաղցրուե՟ն՝ և պտղոց ա-ռատութե՟ն, զ՟Տր աղա:

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից 'ի ս՟բ եկեղեցի ք՟ո, զ՟տր աղա:

Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալ են 'ի ձեռս անօրինաց վ՟ս անուանն ք՟ո, զ՟տր աղա:

Յաղագս հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի ք՟ս ննջեցին, զ՟տր աղա:

Յաղագս փրկելոյ զմեզ ա՟ծ ք՟ո յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, զ՟տր աղա:

Ս՟բ զմարիամ զա՟ծածինն զփառաւորեալ և օրհնեալ միշտ ս՟բ կոյսն. ս՟բ զյովհաննէս մկրտիչն. ս՟բ զստեփաննոս նախավկայն. ս՟բ զառաքեալսն. և զմարգարէսն. զարի և զյաղթօղ ս՟բ զվկայսն. և զս՟բ խոստովանօղն ք՟ո զհայրապետն մեր զս՟բն գրիգորիոս լուսաւորիչն հայաստանեայց աշխարհի:

Յիշեսջիք և զա՟մ ս՟բս, և նոքօք զ՟տր աղա:

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութե՟ անցուցանել հաւատով 'ի տ՟նէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութե՟ պահապան:

Զքաւութն և զթողութն յանցանաց։
Զսրբոյ խաչին մեծ և կարօղ զօրու։
Եւ ևս և մ̃։ Զանձինս։ Ողոր։

*Քարոզ 'ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն ասացեալ վասն սրբոց Հռիփսիմեանցն. և լէ̃ կուսանաց, այլ վասն առաքելոց և մարգարէից։*

ԱՍՏՈՒԱԾ մեծ հզօր և փառաւորեալ. լուսաւորիչ մեր՝ և'ի մեզ հանգուցեալ՝ զճգնութն սրբոց առաքելոցն բարեխօս ունիմք առ քեզ՝ աղաչեմք։ Լուր տէր և ողորմեա։

Որ անդադար օրհնաբանես 'ի դասուց հոգեղինաց երկնաւոր զուարթնոցն, արժանաւորեա զմեզ ուղիղ փառաւորութբ̃ ընդ ս̃ս քո երկրպագել մեծի և ահաւոր տէրութեդ քո, աղաչեմք։

Օրհնեմք զքեզ միաբան սիրով 'ի յիշատակս վկայից քոց, որք հետեւօղք եղեն լուսազարդ ճանապարհաց քոց տ̃ր, որ վ̃ մեր յանձն առեր զչարչարանս խաչի և մահու. աղաչեմք։

Կատարիչք հաճոյից կամաց ա̃ծու

թեդ քոյ՝ զանձինս խուրեանց պա-
տարագեցին 'ի վկայութն ճշմարիտ
սիրոյ քոյ, և բուրեցին հոտ անուշից
տրութեդ քոյ . աղա :

Սրբեցին զանձինս խուրեանց տա-
ճար անուանդ քում սրբոյ՝ մաք-
րեալք զմիտս և զխորհուրդս խու-
րեանց երկիւղիւդ քով սրբով, և
դասակիցք եղեն հոգեղինաց երկ-
նաւոր զուարթնոց . աղա :

Բարեխօսութբ սրբուհւոյ ածած-
նին . Եւ այլն :

Քարոզ հայրապետաց և վրդպետաց:

ԱՌԱՋՆՈՐԴՔ եղեն մեզ ուղիղ
գնացիւք 'ի շաւիղս արքայութե եր-
կնից . մեծապայծառ ջահիւ հաւա-
տով և սիրովն խուրեանց՝ ծագեցին
զլոյս ածգիտութե 'ի սիրտս մեր, աղա:

Պահպանութբ խորհրդոց բանից և
գործոց մերոց՝ սրբութբ փառաւո-
րեալ զամենամբ զերրորդութին զհայր
և զորդի և զհոգին յաւիտեանս
ամէն . աղա :

Աղաչանօք սրբոց: Գրած է վերև .
Երեք փոխնն նոյ վերեփ սորա այս:

Քարոզ մարտիրոսաց և ճգնաւորաց:

ԶՃԳՆՈՒԹԻՒՆ *սրբոց մարտի-րոսացն բարեխօս ունիմք առ բա-րերար որդին Աստուծոյ. զի շնոր-հեսցէ աշխարհի զանշարժ զխաղա-ղութի, և պահեսցէ հաստատուն զեկեղեցի, հաստատեալ՝ի վր հի-ման առաքելոց և մարգարէից. աղ:*

*Զճգնունի նըց մարտիրոսաց բա-րեխօս ունիմք առ բարերար որդին այ. զի խաղաղասցին խռովութիւնք, դադարեսցեն յարձակմունք թշնա-մեաց. տնկեսցի սէր և արդարուն 'ի յերկրի. աղա:*

*Աղաչանօք սրբոց մարտիրոսացն տր, որք ճգնեցան վասն անուանդ քում սրբոյ. նայեաց յերկրպա-գութի ժողովելոցս. և շնորհեա մե-ղաց թողութի, և հմն մասն և բա-ժին ընդ նըս տմ. աղա:*

*Աղաչանօք սրբոց արեամբ նահա-տակեալ վկայիցն տր, որք զանձինս իւրեանց տաճար մաքրեցին հոգ-ւոյդ քում սրբոյ. պարգևեա երկ-րի մերում զքաղցրախառն օդ և*

զզուարճալի զբօսն․ տու 'ի լցումն լինել մեր հարկաւոր պիտոյից մե-րոց․ աղա։

Բարեխօսութբ սրբուհւոյ ածած-նին, և յովհաննու կարապետին, սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոց առաքելոց, մարգարէից, և մարտիրոսաց, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին․ բարեխօսութբ և աղօթիւք սբցն այս աւուրն, որոց այսօր է յիշատակ․ և ամ սրբոց քոց տր՛ որք միացան 'ի սէր ածուեդ քոյ․ յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց, և ո՛ղց արա 'ի քում գալստեանդ․ աղ։

Եւ ևս առաւել զյորդորումն սի-րոյ, և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք։

Զանձինս մեր և զմիմեանս ան տյ ամենակալին։

Ողորմեա՛ց մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմութ քում․ ասասցուք ամենեքեան միաբա։



Քարոզ ծննդեանն քի, և աւետեաց,
և փոխման սբ ածածնին. և տն
ընդառաջին :

ՄԱՅՐ սբ անճառելի լուսոյն, որ զԱծն ամ յաւիտեանց յորովայնի քում կրեցեր. և ցնծութի աշխարհի ծնար զբանն Ած. աղաչեմք : Մայր սբ բարեխօսեա :

Աղաչեմ վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Ած. որ խոնարհեցաւ 'ի հայրական ծոցոյ, էառ մարմին ըստ մարդկային բնութեան՝ առնել խաղաղուն յերկինս, և յերկրի. աղաչեմք :

Աղաչեմ: Ներել մեզ, անտես առնել զյանցանս մեր. և տալ օգնականութի ընդդիմակաց լինել հակառակամարտից 'ի պատերազմի. աղաչեմք :

Աղաչեմ: Զի լռեսցեն պատերազմունք. դադարեսցեն յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարուն 'ի յերկրի. աղաչեմք :

Աղաչեմ: Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց.

զառատ պտղաբերութ՟ն բուսոց և տնկոց՝ առ ՚ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց . աղաչեմք ։

Աղաչեմ ։ Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր ք՟ս , չինեալ ՚ի վ՟ր հիման առաքելոց և մարգարէից . պահել անարատ մինչև յօր երևելոյ գալըստեան իւրոյ . աղաչեմք ։

Աղաչեմ վ՟ն մեր սրբուհի զմիածին քո զորդին , և վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունիլ յարքայութ՟ին երկնից , և տալ մասն և բաժին ընդ ք՟ս ա՟ծ . աղաչեմք ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛ ։

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք ։

Տուր մեզ տէր ա՟ծ մեր ։

Զանձինս մեր և զմիմեանս տ՟ն ա՟յ ։

Քեզ տ՟րդ յանձն եղիցուք ։

Ողորմեա՛ց մեզ տէր ա՟ծ մեր ը՟ս մե ։

Տէր ողորմեա՛ . տ՟ր ողորմեա՛ . մայր ն՟ք բարեխօսեա՛ առ տէր վ՟ն մեր ։

Քարոզ պահոց :

Փառաւորեսցուք զամենակալն ա՟ծ զհայր տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի՝ գոհանալով զնմանէ, որ պահեաց զմեզ խաղաղութ՟ բ ՚ի գիշերիս յայսմիկ. և առաջնորդեաց մեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս, ՚ի մահուանէ ՚ի կեանս, յապականու՟է յանապականու՟ն, յանգիտութ՟է ՚ի գիտութ՟ի ճշմարտու՟ե իւրոյ : Աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի նմանէ, զի զերկարութ՟ի տուրնջեանս խաղաղութ՟բ, և ա՟մ մտադիւր զուարթութ՟բ արասցէ անցուցանել ՚ի մէնջ : Եւ պարապեալ պահեսցէ զժողովուրդս իւր ա՟ծային զօրութ՟բն, որ ՚ի վերայ ա՟մի բարերարութ՟բն իւրով իշխանութ՟ի ունի : Ամենակալ տէր ա՟ծ մեր, կեցո՛ և ողորմեա՛ :

Զառաւօտս լուսոյ, և զառաջակայ օրս խաղաղութ՟բ անցուցանել հաւատով ՚ի տ՟նէ խնդրեսցուք :
Զհրեշտակ խաղաղ : Զքաւութիւն :
Զսրբոյ խաչին : Եւ ևս և վ՟ն միաբա :
Զանձինս մեր : Ողորմեա՛ց մեզ :

## Աղօթք :

Գոհանամք զքէն տէր ած մեր, որ երևելի լուսով քո զուարճացուցեր զամ արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս ՚ի քեզ: Զօրացո՛ և զմեզ տէր ՚ի պահպանութի պատուիրանաց քոց՝ ՚ի տունջեանս յայսմիկ և յամ ժամանակի: Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք. և հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն սրբս քո: Շնորհօք և մարդասիրութբ տն̃ մերոյ՝ և փրկչին յսի քսի. որում վայելէ փառք, իշխանութի, և պատիւ. այժմ և միշտ, և:

## Խաղաղութի ամենեցուն :

Խաղաղութի մեր և կեանք՝ որ ՚ի հօրէ առաքեցար՝ միածին որդի այ տէր մեր և փրկիչ յս քս: Տո՛ւր մեզ զխաղաղութի քո, զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոցն, փչմամբ քո ՚ի նոսա զկենդանացուցիչ և զա-

մենազօր հոգւովդ քո ս՟բ. որպէս զի և մեք խաղաղացեալք յամենայն աշխարհական սահեցմանց՝ լիցուք տաճար և բնակարան ա՟ծային շնորհացդ։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ս՟բ հոգւոյդ ք՟ս ա՟ծ մեր. այժմ և միշտ։

Եւ ապա ասէ Ս՟է Ա՟ծ։

Ս՟բ ա՟ծ. ս՟բ և հզօր. ս՟բ և անմահ ողորմեա՛ց մեզ։ Երիցս կրկնեա՛։

Մաղթանք։

Փրկեա՛ զմեզ 'ի փորձութենէ և յա՟մ վտանգից մերոց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե՟ն զտէր աղա։

Վ՟ն լսելի լինելոյ տ՟ն ա՟յ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութե՟բ ս՟բ ա՟ծածնին. և իջանելոյ 'ի վ՟ր մեր ողորմութե՟ն և գթութե՟ն տ՟ն ա՟յ. ամենակալ տէր ա՟ծ մեր՝ կեցո՛ և ող։

Քհ. Օրհնութ՟ի և փառք հօր և որդւոյ, և հոգւոյն ս՟բյ. այժմ և։

Խաղաղութ՟ի ամենեցուն։

Եւ ասի սաղմոս յայնժամ յաւուր կիրա- կէի յառաջընթաց աւետարանին:

ԿԳ. Եղիցի անուն տն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան: ՍՂ. Օրհնեցէք մանկունք զտէր: Գիր 'ի վայր 'ի Թիւն. 194:

Յաւուրս կիրակէից ապ ընթերցեալ լինի աւետարան Բժշկութե: Եւ 'ի փոխ փերթուածական սաղմոսք և Գիրք և աւե- տարանք ըստ ցուցակին:

---

Աւետարան ըստ Մատթէոսի:
ԴԿ. ԲԿ.

Եւ ելեալ անտի յսն, գնաց 'ի կողմանս տիւրոսի և սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմա- նաց անտի նոցա ելեալ աղաղակէր և ասէր: Ողորմեա՛ց ինձ տէր որդի դաւթի. դուստր իմ չարաչար այ- սահարի. և նա ոչ ետ նմա պատաս- խանի: Եւ մատուցեալ աշակերտքն նորա աղաչէին զնա և ասէին. ար- ձակեա՛ զնա. զի աղաղակէ զհետ

մեր։ Նա պատասխանի ետ և ասէ. ո՛չ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. տէր օգնեա ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ, ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ, այո՛ տէր. քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տն̃ իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա յս̃ և ասէ. ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս։ Եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։

### Աւետարան ըստ Մարկոսի։
### ԴԶ. ԲԶ.

Եւ եկեալ միւսանգամ 'ի սահմանացն տիւրոսի և սիդոնի՝ և եկն 'ի ծովեզրն գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի դեկապօլիս։ Եւ բերեն առաջի նորա խուլ մի և համր. և աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, եդ կ զմատունս

խուր ընդ ականջս նորա. և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս. յոգւոց էհան, և ասէ ցնա. Եփփաթայ՝ որ է բացի՛ր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա. և լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա ևս առաւել քարոզէին։ Եւ ևս քան զևս զարմանային և ասէին, զա̃մ ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համերց խօսիլ։

Աւետարան ըստ Ղուկասու։
ԱԿ · ԳԿ

Եւ եղև 'ի վաղիւն՝ մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղև նմա ժողովուրդ բազում։ Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ՝ աղաչեմ զքեզ՝ հայեաց յորդի իմ, զի միածին է ինձ։ Եւ ահա այս հարկանի 'ի նմա. և յանկարծ գոչէ և զարկուցանէ, և թաւալեցու-

ցանէ զնա, և փրփրեցուցանէ. և հազիւ մեկնի 'ի նմանէ խորտակէ զնա: Եւ աղաչեցի զաշակերտսն քո. զի հանցեն զնա, և ոչ կարացին: Պատասխանի ետ Յս և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անսայցեմ ձեզ. մատո՛ այսր զորդին քո: Եւ մինչդեռ մատչէր՝ զարկոյց զնա դևն, և շարժլեաց: Սաստեաց Յս այսոյն պղծոյ. և բժկեաց զմանուկն. և ետ զնա ցհայր իւր: Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծամեծացն այ:

### Աւետարան ըստ Յովհաննու:
### ԱՁ · ԳՁ

Եկն դարձեալ Յս 'ի կանա գալիլեացւոց, ուր արար զջուրն գինի: Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդին հիւանդ կայր 'ի կափառնայում: Նա իբրև լուաւ, եթէ Յս եկեալ է 'ի հրէաստանէ 'ի գալիլեա, եկն առ նա, և աղաչէր, զի իջցէ, և բժշկեացէ զորդի նորա. քանզի մերձ էր 'ի մեռանիլ: Ասէ

ցնա յն՟ . եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։ Ասէ ցնա թագաւորազն, տէր՝ էջ մինչև մեռեալ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա յն՟ . երթ՝ որդին քո կենդանի է ։ Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց ցնա յն՟, և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր՝ ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն, և ասեն. թէ մանուկն նորա կենդանի է ։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա, երէկ յեօթներորդ ժամուն եթող զնա ջերմն։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա յն՟. թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն, և ամ՟ տուն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշան արար յն՟ եկեալ ՚ի հրէաստանէ ՚ի գալիլեա ։

Երգ Է՟ առաջնոյ աւուր Միաշաբաթին,
և 'ի խորհուրդ արարչութե,
և յարութեն քի :

Նորաստեղծեալ բանն յանէից
Ի սկզբանէ զերկինս երկնից •
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեացըն զուարթնոց •
Եւ ըզգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից •
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւն անճառելի :
Երեքպրբեան մի տէրութիւն
Միով բնութբ̃ ա̃ծութիւն •
Լոյսն որ անեղ արարչական՝
Ասաց լինել լոյս եղական •
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին • Որով։
Բարբառնորէն բացատրեսցուք
Զծածկեալխորհուրդըն ծանիցուք •
Զի լոյսն անտես իմանալի
Մաքուր հոգւոց տեսանելի,
Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութե̃ն ո̃ր ճառագայթ •
Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն յարուցելոյն :

Մերըդ սիրով խոնարհեցար
Ի փրկութ̃ի մեր մարմնացար·
Նովին մարմնովըն խաչեցար
Ի գերեզման մահու եդար·
Այսօր յարեար ճ̃ծաբար
Ի հրեշտակաց քարոզեցար· Եկ։
Երևեցար խընկաբերիցն
Յողջոյն կենաց ուրախալից·
Եւ 'ի լերինըն գալիլեա
Առաքելոց մետասանից·
Արժանացո́ զմեզ ընդ նոսին՝
Զքեզ տեսանել յօրըն վերջին· Եկ։
Սիոնի որդիք զարթի՛ք
Հարսին լուսոյ տո́ւք աւետի՛ք·
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութե̃·
Գայ պըսակէ ըզքեզ փառօք՝
Եւ ը̃ առաջ պըծ̃նեալ զարդուք·
Երգեա́ երգ նոր յարուցելոյն,
Նընջեցելոց կենաց պտըղոյն ։

Քարոզ կիւրակէից, և այլոց տէրու-
նական տօնից ։

Խնդրեսցուք հաւատով միաբա-
նութե̃ 'ի տ̃նէ, զի զողորմութի̃ զշը-
նորհս իւր առասցէ 'ի վերայ մեր,

տէրն ամենակալ կեցուսցէ և ողոր-
մեսցի ։

Կեցո՛ տէր ։ Գ․ տէր ողորմեա՛ ։

### Աղօթք ։

Քում ամենազօր և հրաշալի յա-
րութեանդ քս̃ այ̃ մեր՝ երկիրպագա-
նեն զօրք հրեշտակաց․ զի դու միայն
ունիս զանմահութիւն բնակեալդ 'ի
լոյս անմատոյց ։ Եւ մեք հողեղէն
արարածքս խոնարհեալ երկիւղիւ
երկիրպագանեմք․ զքե̃զ և զհրաշալի
և զյաղթօղ զյարութիւնդ քո օրհնեմք
և փառաւորեմք ։ Եւ ընդ երկնային
զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և
զփառս՝ ընդ հօր և ընդ սրբոյ հոգ-
ւոյդ․ այժմ և ։
Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃․ ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես՝ ո̃բ ։

Քարոզ յորժամ 'ի Բաժակն Երանեն ։

ՍՐԿ․ Եւ ևս խաղաղութե̃ զտէր
աղաչեսց ։
ԴՊ․ Տէր ողորմեա՛ ։
ՍՐԿ․ Վասն 'ի վերուստ խաղա-

ղութե՟ և փրկութե՟ անձանց մերոց՝ զտէր աղաչես :

Դպ· Տէր ողորմեա՛ :

ՍՐԿ· Ողորմեա՛ց մեզ տ՟ր ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութե՟ քում· ա-սասցուք ամենեքեան միաբանու՟ք:

Դպ· Տէր ողորմ· տէր ողորմ· տ՟ր ողորմ:

ՔՀ· Օրհնութի և փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ· այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն :

Դպ· Ալէլուիա· ալէլ· ալէլ:

ՔՀ· Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևե-լեան կողմն աշխարհիս, և հայրա-պետութի հայոց· այս նշանաւ ն՟ք խաչիւս, և ն՟ք աւետարանաւս, և աւուրս շնորհիւ անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և:

---

Եւ դարձուցանեն զերեսս յարեւմուտս:

Ամէն· ալէլ· ալէլ·

Օրհնեսցի և պահպանեսցի և նա-խախնամեալ պահեսցի արևմտեան

կողմն աշխարհիս, և Թագաւորութ՟ն
քրիստոնէից, այս նշանաւ ս՟բ։

Եւ ուղղելով դառնան ՚ի հարաւ։

Ամէն. ալէլուիա. ալէլ։

Օրհնեսցի և պահպանեսցի և նա֊
խախնամեալ պահեսցի հարաւային
կողմն աշխարհիս, երկիրս՝ անդաս֊
տանս, և պտղաբերութիւն տարւոյս,
այս նշանաւ ս՟բ խա։

Եւ դառնան դէպ ՚ի հիւսիս։

Ամէն. ալէլուիա. ալէլ։

Օրհնեսցի և պահպանեսցի և նա֊
խախնամեալ պահեսցի հիւսիսային
կողմն աշխարհիս. քաղաքս և գիւղս,
վանքս՝ անապատս, և բնակեալ ժո֊
ղովուրդս ՚ի սմա, այս նշանաւ։

Եւ դառնան ՚ի բեմ. և ասեն
դարձեալ։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ։

Քարոզ Ութօրէի և խաչի։

Ս՟բ խաչիւս աղաչեսցուք զտ՟ր. զի
սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և

կեցուսցէ շնորհիւ ողորմութե՟ իւրոյ։
Ամենակալ տէր ա՟ծ մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթք։

Պահպանեա՛ զմեզ ք՟ս ա՟ծ մեր ը՟ հովանեաւ ս՟բ և պատուական խաչիւդ քով՚ի խաղաղութե՟. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութե՟ փառաւորել զքեզ ը՟ հօր և ը՟ սրբոյ հոգւոյդ. այժմ և։
Օրհնեալ տէր մեր յ՟ ք՟ս. Ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՝ ս՟բ։

---

Իսկ յայլ աւուրս յետ Ս՟բ ա՟ծնին, և [illegible], ասի սաղմոս ՚ի Բ՟ն։

ՕՐՀՆԵՑԷՔ մանկունք զտ՟ր. և օրհնեցէք զանուն տ՟ն։
Եղիցի անուն տ՟ն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան։
Յարևելից մինչև ՚ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն տ՟ն։
Բարձր է ՚ի վ՟ր ա՟մ ազգաց տ՟ր. և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է ո՟վ ո՟ր ա՟ծ մեր 'ի բարձունս բնակեալ, և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս ը՟ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն 'ի տան ուրախամիտ՝ որպէս մայր որդւովք բերկրեալ։

Փառք Հօր և որդւոյ։

Եւ ասի շարական ըստ պատշաճի։

Քարոզ ըստ ժամանակին։

Վ՟ս խաղաղութե՟ ա՟մ աշխարհի, և հաստատութե՟ սրբոյ եկեղեցւոյ զտ՟ր աղաչեսցուք։ Ասասցուք ամենեքեան միաբանութ՟բ։ Տ՟ր ողորմեա։

Երէցն։

Աղօթք։

Մե՟ ես որ ա՟ծ մեր հզօր և փառաւորեալ. որ նախ 'ի կառս քերովբէականս. և լոյս ծագես յալա-

րածս քո: Լուսաւորեա՛ զմեզ տէր ՚ի ժամս առաւօտուս, ո՛չ զի ՚ի ծագել լուսոյ տունջեանս, ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութե քո: Հեռացո՛ ՚ի մէնջ տէր զխաբէութի սատանայի. և զբռնութի նորա խորտակեա՛ աղօթիւք և բարեխօսութե՛ ամ սրբոց: Արա՛ և զերկիւղ պտղաբեր ՚ի սնունդս ծառայից քոց: Յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենայնիւ երրորդութիւնդ, այժմ:

Յաւուրս աղուհացից ասա առի. Տէր ամենակալ. և յետ նորա, Բանից իմոց. և յայլ աւուրս պահոց միայն Բանից իմոց. զորս Գտանես ՚ի ստորև ՚ի Երեսն 208: Իսկ ՚ի տօնս սրբոց սաղմոս այս:

ՍԻՐԵՑԻ՛ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա:

Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս:

Զնեղուն և զանձկուն գտի. և զա-

անուն տ֟ն կարդացի։

Ո՛ տէր՝ փրկեա՛ զանձն իմ. ողոր-
մած ա֟ծ մեր ողորմի, և պահէ զտը-
ղայս տէր։

Ես խոնարհ եղէ, և տէր կեցոյց
զիս. դարձ անձն իմ 'ի հանգիստ
քո, զի տէր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ.
զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ
'ի գայթագղութ֟է. հաճոյ եղէց ա-
ռաջի տ֟ն յերկրին կենդանեաց։

Հաւատացի՝ զոր և խօսեցայ, և ես
խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ
ա֟մ մարդ սուտ է։

Զի՞նչ տաց տրիտուր տ֟ն ընդ ա֟մի,
զոր և ետ ինձ։

Զբաժակ փրկութ֟ե ընկալայց, և
զանուն տ֟ն կարդացից։

Զաղօթս իմ տ֟ն տաց առաջի ա֟մ
ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի տ֟ն մահ
սրբոց իւրոց. ո՛ տէր՝ ես ծառայ
քո եմ. ծառայ, և որդի աղախ-
նոյ քոյ։

Հատեր զկապանս իմ, քեզ մա-

տուցես պատարագս օրհնութե՟. և զանուն տ՟ն կարդացից ։

Զաղօթս իմ տ՟ն տաց առաջի ա՟մ ժողովրդեան նորա՝ 'ի դաւիթս տան տ՟ն, և 'ի մէջ քո Երուսաղէմ։

Օրհնեցէք զտ՟ր ա՟մ ազինք. գովեցէք զնա ա՟մ ժողովուրդք ։

Զօրացի ողորմութի՟ ն՟ր 'ի վ՟ր մեր. և ճշմարտութի՟ տ՟ն մնասցէ յաւիտեան ։

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս. և 'ի զօրութե՟ քում իրա՛ւ արա ինձ։

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկնդիր բանից բերանոյ իմոյ ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց ։

Ահա՛ ա՟ծ օգնական իմ. և տէր ընդունող հոգւոյ իմոյ ։

'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմարտութե՟ քով սատակեա՛ զնոսա ։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է ։

Յա͞մ նեղու͞է իմմէ փրկեցեր զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Տո՛ւր զօրութի͞ ծառայի քո. կեցո՛ զորդի աղախնոյ քոյ. և արա՛ առ իս նշան բարութե͞:

Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն. զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս:

Փառք հօր և որդւոյ:

Մաղթանք 'ի փոխ ա͞ծ որդւոյ:

Ք͞ս ա͞ծ մեր վասն խաչի քո պատուականի զխաղաղութի քո տո՛ւր մեզ տէր:

Վ͞ս սրբուհւոյ ա͞ծածնին, և յովհաննու կարապետին, և ս͞բյն ստեփաննոսի նախավկային զխաղաղութի քո տո՛ւր մեզ տէր:

Վ͞ս սրբոց քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց, և երկնային զօրացն զխաղաղութի քո տո՛ւր մեզ տ͞ր:

Վ͞ս ս͞բյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, բարեխօսութ͞բ և աղօթիւք ս͞բցն (այս անուն,) որոց այսօր է յի-

շատակ, զխաղաղութիւն և զմեծ զո-
ղորմութիւն քո պարգևեա մեզ մար-
դասէր տէր:

Քարոզ առաքելոց, և ա͞մ սրբոց:

Ս͞բ ճգնաւորօքն աղաչեսցուք զտ͞ր, որք զչարսն պարտեցին, նեղութեցն համբերեցին: Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութ͞բ մեզ ողորմեսցի: Ամենակալ տէր ա͞ծ մեր, կեցո՛ և ողորմ:

Աղօթք 'ի տօնի առաքելոց, և մարգարէից, և հայրապետաց, և վարդապետաց:

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի զվկայսն քո (այս անուն) ք͞ս ա͞ծ մեր. և հաղորդս արարեր զն͞ս կամաւոր չարչարանաց քոց: Արդ՝ բարեխօս առ քեզ ունիմք, որք աստ՝ և ընդ ա͞մ տիեզերս ս͞րբք իցեն: Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսութ͞բ խաղաղացուսցես զկենցաղավարութիւս մեր, փրկելով զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն:

Շնորհեա՛ մեզ տէր ըստ օրինակի նոցա կեալ, և զվախճանն մեր կընքեա՛ ուղղափառ խոստովանութ՟ ՚ի լոյս կենացն յաւիտենից: Զի և մեք արժանի եղիցուք միանել յերկնային խորանսն լուսոյ, և ժառանգել զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրց քոց զարքայութ՟իդ: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցո՛ւք զքեզ ընդ հօր և ը՟ սրբոյ հոգւոյդ. այժմ և:

## ՚Ի սարկաւագ վարդապետէն ասասցեալ:

Յիշեա՛ տ՟ր զպաշտօնեայս քո. զծընօղսն մեր. զվարդապետս. զեղբարս. զընկերս. զկերակրիչս. զուխտաւորս. զճանապարհորդս. զհանգուցիչս. զվաստակաւորս. զխոստովանօղս. զապաշխարօղս. զգերիս. զհիւանդս. զննջեալս. զիշխանս. զչարարարս. զբարերարս. զթշնամիս. զատելիս. և որք պատուիրեցին մեզ հաւատով:

Յիշեա՛ տէր և ողորմեա՛:

Բարերար և բազումողորմ ած՟, քո անմոռաց գիտութ՟դ և անբաւ մար-

դասխրութդ՝ յիշեամ զամ հաւատա-ցեալս ՚ի քեզ, և ողորմեամ ամենե-ցուն։ Օգնեամ, և փրկեամ յիւրա-քանչիւր վտանգից և ՚ի փորձուեց։ Արժանաւորեամ գոհութբ փառա-ւորել զՀայր և զՈրդի և զՍբ Հոգի. այժմ։

Աղօթք մարտիրոսաց, ճգնաւորաց, և կուսանաց ։

Պսակիչ սբց քո, որ պսակես զնս քո, և առնես զկամս երկիւղածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութբ յարարածս քո։ Լուր մեզ յերկնից ՚ի սրբութէ քումմէ բարեխօսութբ սբ ածածնին, և աղաչանօք ամ սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ։ Լուր մեզ տէր և ողորմեամ, ներեամ քաւեամ և թող զմեղս մեր։ Արժա-նաւորեամ գոհութեամբ փառաւո-րել զքեզ ընդ հօր և ընդ սբ հոգ-ւոյդ այժմ։

Յիշեամ տէր, և այլն ։

Բարերար և բազումողորմ ած ։

Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես՝ սբ ։

Աղօթք Մանասէի Թագաւորին ։

Տէր ամենակալ ա̄ծ աբրահամու՝ իսահակայ՝ յակոբայ՝ և զաւակին նոցա արդարոց. ամենակալ տ̄ր Թող զմեղս իմ ։

Որ արարեր զերկինս և զերկիր՝ և զա̄մ զարդ նոցա. ամենա ։

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորս. կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով. ամենա ։

Որ ա̄մ ինչ սարսի՝ և դողայ յերեսաց ահի զօրութե̄ քո. ամենա ։

Անբաւ է մեծվայելչութե̄ փառաց սրբութե̄ քո, և սաստիկ է բարկութե̄ սպառնալեաց քոց 'ի վ̄ր մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութե̄ք աւետեաց քոց. ամենա ։

Դու տէր բարձրեալ՝ գթած, երկայնամիտ, բազումողորմ. և զղջաս 'ի վ̄ր չարեաց մարդկան. ամե ։

Դու ա̄ծ՝ ո՛չ եդեր ապաշխարութե̄ վ̄ն արդարոցն աբրահամու՝ իսահակայ՝ և յակոբայ, որք ո՛չ մեղան քեզ. ամենա ։

Այլ եղեր ապաշխարունի տ̃ր իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու. և բազմացան անօ-րէնունք իմ. ամենա:

Չեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձրութիւն երկնից 'ի բազմութենէ անօրէնութե̃ իմոյ. ամենա:

Կորացեալ եմ ես 'ի բռնութէ կա-պանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամենա:

Բարկացուցի զսրտմտունի, և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումն. ամենա:

Եւ արդ՝ տէր խոնարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութէ քումմէ. ամենա:

Մեղայ տ̃ր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, թող ինձ տ̃ր, թող ինձ. և մի կորուսա-ներ զիս ը̃ն անօրէնութե̃ իմոյ. ամենա:

Մի յաւիտեան բարկանար ինձ տ̃ր, և մի յիշեր զչարիսն իմ, և մի պար-տաւորեր զիս ընդ իջեալս 'ի ներքոյ երկրի չարեօք. ամենա:

Զի դու ած՝ ած ապաշխարողաց ես, և յիս ցո՛յց զբարերարութիւն քո, զի անարժան եմ. ամենա:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամ աւուրս կենաց իմոց. ամենա:

Զքեզ տր օրհնեն ամ զաւրթունք երկնից. և քո են փառք յաւիտեանս. ամէն:

Փառք հօր և որդւոյ:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր՝ թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումողորմ տր, ողորմեա՛ց ինձ:

Այ, քաւեա՛ զիս զմեղաւորս:

Արարիչ իմ և յոյս ած, գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս, և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ամէնօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս ածածին մարիամ, բարեխօսեա՛ առ տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք այ, բարեխօսեցէք առ հայր յերկինս վասն մեր մեղաւորացս:

Քս որդի այ անոխակալ՝ ընկա՛լ զաղաչանս մեր. զի 'ի քեզ են ա-

պաւլինեալ անձինք մեր։

Յաղթօղ զօրութ̃ սբ̃ և կենդանարար, և պատուական խաչիւ քով տր̃ պահպանեա զմեզ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութեան քո. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ մարդասիրութ̃ քո յիշեա զմեզ տր̃, յիշեա զմեզ. յորժամ գաս արքայութ̃ քով, և ողորմեաց մեզ։

Քարոզ։

Եկեալքս 'ի խոստովանութիւն ապաշխարութեան հաւատով զայս միածնի որդւոյն այ̃ դիցուք 'ի սիրտս մեր, խնդրելով 'ի նմանէ զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց։ Վ̃ զի նա ինքն է նախախնամօղն ա̃ծ յաւիտենական, որ եկն կամաւ հօր 'ի փրկել զարարածս. և ասաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, շնորհելով հանգիստ աշխատելոց, ընդունելով ըզծանրաբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւուե։

Արդ՝ եկայք ամենեքեան խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւք անկցուք և լացցուք առաջի տն արարչին մերոյ, զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութն իւրով: Ամենակալ տր ած մեր, կեցո́ և ողորմեա́:

Աղօթք:

Տէր ած փրկութե մերոյ՝ որ ողորմած ես և գթած, երկայնամիտ՝ բազումողորմ, և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. որ ո́չ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա 'ի չար ճանապարհէն և ըղկեալն: Դու տէր առատ մարդասիրութեդ քով մխիթարեա́ զծառայքս քո. և տո́ւր սոցա տեղի ապաշխարութե, հաշտեա́ մարդասիրութբ քո. և արա́ զսոսա անդամս եկեղեցւոյ քում սբյ: Որպ զի առողջացեալք հոգւովն խոստովանութբ և ապաշխարութբ մինչեւ յեկեղեցի քո մբ: Եւ ըն ժողովըրդեան քում քեզ հանցեն զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և հոգ֊

ւոյդ սբյ· այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից· ամէն:

---

## Սաղմոս Ե:

ԲԱՆԻՑ իմոց ունկն դիր տր· և՚ի միտ առ զաղաղակ իմ:

Նայեա՛ց ՚ի ձայն աղօթից իմոց, Թագաւոր իմ և ած իմ:

Եւ զքեզ աղաչեմ տէր՝ ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում· ըն առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել առ քեզ:

Ո՛չ թէ դու ած, կամիս զանօրէնութի· և ո՛չ բնակեն առ քեզ չարք· և անօրէնք մի՛ բնակեսցեն առաջի աչաց քոց:

Ատեցեր զայնոսիկ, ոյք գործեն զանօրէնութի· կորուսանես զամենեսեան, ոյք խօսին զսուտ:

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնես դու տէր· այլ ես ըն բազում ողորմութե քում մտից ՚ի տուն քո, և երկիրպագից ՚ի տաճար սբ քո երկիւղիւ քո:

Տէր առաջնորդեա՛ ինձ յարդա-

րութեն քում վասն թշնամեաց իմոց. և ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո։

Զի ոչ գոյ 'ի բերանս նոցա ճշմարտութիւն. և սիրտք նոցա նանրեալք են։

Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա. և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն։

Դատեա զնոսա ա՟ծ, զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամպարշտութե՟ նոցա մերժեա զն՟ս. զի դառնացուցին զքեզ։

Ուրախ լիցին ամենեքեան՝ ոյք յուսացեալք են 'ի քեզ. յաւիտեան ցնծասցեն. և բնակեսցիս դու 'ի ն՟ս։

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քոյ. զի օրհնեսցես դու զարդարն. տէր՝ որպէս զինու հաճութե՟ քո պսակեցեր զմեզ։

Լցաք առաւօտու ողորմութե՟ քով. ցնծացաք և ուրախ եղաք զա՟մ աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ. և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։

Հայեա՛ց տէր 'ի ծառայս քո, և 'ի գործս ձեռաց քոց. և առաջնորդեա՛ որդւոց նոցա. եղիցի լոյս տ՟ն ա՟յ 'ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա 'ի մեզ տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:

'Ի խորոց կարդացի առ քեզ տէր տէր՝ լո՛ւր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո 'ի լսել ձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիս քննես տ՟ր. տէր ո՛ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութ՟ի:

Վասն անուան քո համբերի տ՟ր. համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ 'ի տէր:

'Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ 'ի տէր:

'Ի տ՟նէ է ողորմութ՟ի բազում, և 'ի նմանէ է փրկութ՟ի. և նա փրկեաց զԻսրայէլ յա՟մ նեղութ՟եց նորա:

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիս քո. զի ես 'ի քեզ տ՟ր յուսացայ:

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տ͞ր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ա͞ծ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քոյ տէր կեցուսցես զիս. արդարութ͞բ քով հանցես 'ի նեղութ͞է զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զա͞մ նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Ա͞ծ յանուան քում կեցո՛ զիս. և 'ի զօրութ͞ե քում իրաւ արա ինձ։

Ա͞ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ ա͞ծ առաջի իւրեանց։

Ահա՛ ա͞ծ օգնական իմ. և տէր ը͞նդունօղ հոգւոյ իմոյ։

'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Փառք հօր և:

## Երգ Տն Ներսեսի Վան երկրորդ աւուրն արարչութեան. և Վան երկնային զօրացն:

### Երկուշաբթի:

Արարչական բանիւն հրաման՝
Ի յերկրորդումն աւուր սկզբան
Ըզջուրսն 'ի ջուրցըն բաժանեաց,
Հաստատութեամբ պարունակեաց.
Որով զաշխարհս հողեղինաց
Անջրպետեաց 'ի հրեղինաց.
Ընդ նոսին որդիք լուսոյ՝
Տո՛ւք օրհնութիւն երրեակ լուսոյն:
Բազմաչեայ հոյլք քրովբէից՝

Երեքսրբեանըդ սրովբէից,
Աթոռք անեղ ծնութեըն
Համագոյ երրորդութե.
Բարեխօս լերուք առ տէր
Վասըն մանկանց եկեղեցւոյ. Ընդ։
Գերագոյն իշխանութիք
Եւ անփոփոխ միշտ տէրութիք,
Անյաղթելի ոք զօրութիք՝
Ի յարարչին փառաւորութի,
Աղաչեցէք զտէրն ողորմած՝
Անտես չառնել զգործըս ձեռաց. Ը։
Դասք անմարմնոցըդ պետութեց
Հրեշտակապետըք բարձրութեց.
Հոգիք հրեղէնք և սպասաւորըք
Հրեշտակաց զինուորութիք.
Մաղթեցէք զտէրըն տերանց
Վասըն մարդկան երկրաւորաց. Ըն։
Երկնաւորաց դասուց վերնոց՝
Օրհնաբանից քոց զուարթնոց
Քաղցրասցի առ քեզ գըթած՝
Որ վասն մեր ձայն մաղթանաց,
Զորս և տացես մեզ պահապան
Ցայսըմհետէ մինչ'ի վախճան. Ընդ։
Զօրութեց և տէրութեց՝
Իշխանութեց և պետութեց,
Եւ ամենայն անուանելոց՝

Որք 'ի յերկինս պաղատանօք,
Ընկա՛լ քո̃ ուրախութ̃ը
Զմեզ յոր մահու և յարութե՛ն,
Ընդ նոսին օրհնել հոգւով
Ըզքեզ ընդ հօր փառաւորելով:

ԵՐԳ ՎԱՍՆ ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՎԱՍՆ ԵՐՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ. ԵՒ 'Ի
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՐՓԷՆ:

ԵՐԷՔՇԱԲԱԹԻ:

Էական բանն որ ընդ հօր
Արարչակից և համագօր.
Յերրորդ աւուր զջուրսըն զատոյց՝
Ըզբոյսս և զտունկըս բղխեցոյց.
Իսկ 'ի յերրորդ դարուն դարձեալ
Զջուրցըն հեղեղ ցամաքեցոյց.
Զնոյ տապանաւն իւր ապրեցոյց՝
Ըզկենդանեաց սեռս աճեցոյց.
Տո՛ւք օրհնութիւն անճառ լուսոյն
Հօր և որդւոյ և ս̃բ հոգւոյն:
Ընդ ծառոց երկրի զգալեաց
Տընկեաց և զտունկս իմանալեաց.
Զհեղեղ մեղացըն ցածուցեալ՝
Զդասս արդարոց բազմացուցեալ.
Յորոց և մեծն 'ի ծնունդս կանանց՝
Միջնորդ շնորհաց և օրինաց. Տուք:

Թագաւորին երկնից զինուոր՝
Արքայութեան աւետաւոր.
Խնդրեմ գընել ելս 'ի սրտէ
Առ 'ի հովտէս տրտմականէ ,
Յուխտեալ տեղին տէրունական՝
Ի խոստացեալն որդւոց մարդկան. Տ:
Ժառանգին հօր սպասաւոր՝
Եւ յարգանդէ երկրըպագօղ.
Կարապետ և մըկըրտիչ՝
Այնմ որ մեղաց մերոց քաւիչ.
Լեր բարեխօս առ նոյն գըթած՝
Ջնջել ըզգիր մեր յանցանաց. Տո՛ւք:
Ի հօրէ լոյս ծագեցար
Մեռեալ բնութեան կենդանարար.
Առաքեցեր յառաջընթաց
Մե՜ զյովհաննէս քարոզ կենաց.
Սորին հայցմամբն ամենակալ՝
Ըզպաղատանըս մեր ընկա՛լ. Տո՛ւք:
Լուսաշաւիղ յերկինս ելին
Հողանիւթեայ ո՜ք հրեշտակին ,
Արժանացո՛ զմեզ նորին
Նեղ և անձուկ ճանապարհին.
Զի հետեւօղք գոլով նորին
Հօր քոյ վերին օթեվանին ,
Եւ երգեսցուք ընդ երջանկացն
Որդւոց լուսոյ քեզ երգս փառաց:

Երգ ձայն ութերորդ աւուր արարչութեան.
և ձայն ութերորդի դարձուն. և ձայն
աւետեաց ծածանեն :

## Չորեքշաբաթի :

Խաւարն անգոյ և սկզբնածին
Հալածեցաւ յօրն առաջին.
Լոյսն այն պայծառ յոր չորրորդին
Արեգական նիւթ հաւաքեալ.
Լուսինն 'ի տիպ լուսոյ ստեղծեալ՝
Եւ աստեղաց պարս յօրինեալ.
Որով օրհնի ստեղծօղն էից
Ի բանաւոր պաշտօնէից:
Ծածկեալ խորհուրդըն ծանուցաւ
Չորրորդ դարուն խաւհակաւ.
Ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն
Եւ զաւետիսըն կուսական.
Թէ լոյսն որ ոչ բովանդակի՝
Ի քէն մարմնով պարունակի.
Յոր օրհնեցայք աղգք երկրածին՝
Տո՛ւք օրհնութի պտղոյ կուսին :
Կուսին նախնոյ մօրն եւայի՝
Յորմէ ադամըն հին պարտի,
Բարձան անէծքըն տըրտմական
Քո որ ծնընդեամբ կոյս մարիամ.
Աղաչեմ զքո միածին՝

Թողուլ զմեղս որդւոց նոցին․ Յոր։
Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս՝
Յոր համբառնամք առ քեզ զհոգիս․
Յօր լըսելոյ քոյ զաւետիս՝
Խընդրեմ լինել մեզ լըսելիս
Ձայն աւետեաց քոյ միածնին՝
Եթէ եկա՛յք օրհնեալք հօր իմ․ Յոր։
Զայնիւ առ քեզ տէր պաղատիմք՝
Եւ առաջի քոյ անկանիմք ․
Աղաչանօք ածածնին՝
Շիջո՛ 'ի մէնջ ըզբոց հնոցին ․
Տո՛ւր արտասուօք զմեղս ջնջել՝
Եւ վերստին զմեզ նորոգել ․ Յոր։
Ղեկավար ճարտարապետ՝
Անցեր ընդ ծով կենցաղս անհետ ․
Վերաբերեա՛ ընդ պետրոսի
Զմեզ 'ի յալեաց մեղաց ծովէս ․
Պաղատանօք գերագունի
Անապական քում ծընողի ․
Յոր օրհնեցայք ազգք երկրա։

Երգ էս հինգերորդի աւուր արարչու-
թեան․ և էս հինգերորդ դարուն․
և 'ի սմ աստուածային ծնի։

Հինգշաբաթի ։
Ճառագայթեալ բանն 'ի հօրէ՝

Յօր հինգերորդըն հրամայէ .
Բղխեալ 'ի ջրոց սեաւ կայտառաց
Եւ Թևաւորս օդականաց .
Իսկ 'ի դարուն հինգ մըկըրտին
Յամայն և 'ի ծովն խորայէլ հին .
Տացո՛ւք հրաշից ներգործողին
Պատիւ և փառս անեղ բանին :

Մաքրապէս օրինակի
Առաքելոցըն ք͞ի ,
Որք 'ի ծովէն տիբերական
Ի յերկնայինսըն կոչեցան .
Անցին ընդ ծով աշխարհական՝
Եւ 'ի հոգին մըկըրտեցան . Տաց :

Յուրախութեան անզրաւական
Ի հարսանիսն անապական
Զձեզ առաքեաց հայրըն փառաց՝
Հրաւիրատուք տրտմականաց .
Մե͞ հարսանեացն այն հայցեցէ՛ք՝
Ընդ ձեզ լինել մեզ պարակից. Տաց:

Նորոգօղք տիեզերաց
Ի նախահօրըն յանցանաց .
Նորափետուր զարդարեցիք
Զեկեղեցիս հեթանոսաց .
Պաղատեցէ՛ք առ նոյն գըթած՝
Զմեզ նորոգել 'ի հնոյ մեղաց. Տաց:

Շինօղ էիցըս համայնից

Արարածոց 'ի յանդոյից.
Նոյն շինեցեր զեկեղեցի՝
Վէմդ 'ի վերայ վիմին բանի.
Ընդ եդեալ հիմունս 'ի նոր սիոն
Ըզմեզ յօդեա՛ շինմամբ 'ի նոյն. Տաց։
Ուրախացաւ գնացիք գետոց
Քաղաք 'ի քեն շինեալ յ՟ն.
Ցորմէ վտակք շնորհաց հոսին՝
Զոգիս մարդկան ոռոգանեն.
Արբո՛ և մեզ 'ի ջրոյն կենաց
Հայցմամբ հոգւոյն մատրուակաց.
Զի բանաւոր երկիրս քո
Պտղաբերցի 'ի փառըս քո։

ԵՐԳ ՎԱ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԱՒՈՒՐ ԱՐԱՐՉՈՒԹԵ̄Ն.
ԵՒ ՎԱ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՆ. ԵՒ 'Ի
ԽԱՉԵԼՈՒԹԵ̄Ն Ք̄Ի։

ՈՒՐԲԱԹ։

Զհանդուրժեալ բնութ̄ բարւոյն
Ունել միայն զանձառ բարին,
Այլ ստեղծել զմարդ յիւր պատկե-
րին
Ի վեցերորդ առաւօտին.
Եւ 'ի յերրորդ ժամ զկողածինն
Ի յօգնութի̄ ետ հողածնին.
Զորս 'ի դրախտին եդ վայելել՝

Բայց 'ի պըտղոյն մահու արգել:
Պապանձեալ առ դատողին՝
Յետ յանցանաց ադամին հին.
Զկինըն պատճառ եղել խաբման՝
Եւ կինըն զօձըն դաւաճան.
Որով երկիրս այս անիծաւ՝
Փուշ և տատասկ 'ի սմա բուսաւ.
Վըճիռ մահու մարդոյն տուաւ
Դառնալ 'ի հող՝ ուստի ստեղծաւ:

Ջընջել փութայր հայրըն փառաց
Ըզգիր պարտեաց մեր յանցանաց.
Որով զգեցաւ որդին գըթած
Ի վեց դարուն մարմին մեղաց.
Հօր հաճութ̃բ 'ի մահ խաչին
Եկըն կամաւ 'ի յուրբաթին.
Գառըն զենաւ 'ի հին զատկին
Փոխան դառանցն օրինակին:

Ճահիւ լուսոյ պատուիրանին
Արդարութ̃ե ճանապարհին,
Բարձրանալով քոյ 'ի խաչին
Բարձրացուցեր զմեզ 'ի յերկին.
Քո անպատում խոնարհութ̃բդ՝
Եւ կամաւոր խաչելութ̃բդ
Հաշտեա́ց ը̃ մեզ տէր գըթութ̃բ
Եւ թո́ղ ըզմեղս ողորմութ̃բ:

Սոսկալիդ սերովբէից

Եւ ահաւորըդ քրովբէից ,
Խոնարհեցար ՚ի չարչարանս
Չարչարելի բնութ̃բ մարդկան .
Ի խաչին զմեզս ըսպաներ
Եւ զգաստակնիք մահու լուծեր . Հա։
 Վեհագոյն բնութ̃ենց էից
Եւ արարիչըդ բոլորից ,
Յորժամ ծագես զխաչիդ նըշան
Ի գալըստեան քոյ միւսանգամ .
Զերկըրպագուս այժմ հաւատով
Լուսաւորեա՛ նորին լուսով .
Զի համաձայն խաչազգեցին
Ըզքեզ օրհնեմք յաւիտենից :

Երգ Վ̃ Եօթներորդի աւուր արարչու-
թ̃են . և Վ̃ եօթներորդի դարուն . և ՚ի
խորհուրդ հանգստեանն ա̃յ :

Շարակ :

Տ̃րն յետ ստեղծմանն արարածոց
Հանգեաւ յեօթն օրն ՚ի գործոց .
Այն որ հանգիստ աշխատելոց
Եւ կամքըն գործ է եղելոց .
Ուստի և մեզ յոյս հաստատուն
Եւ հանգըստեամբըն շաբաթուն .
Թէ սաստ գործել զգործս ա̃յ՝
Անդ է հանգչիլ ընդ ա̃յ :

Րաբունաբար վարդապետովք
Յօրինակէ տեառըն խրատովք,
Որ 'ի յերկրորդ արարչութ̃ե
Յետ կատարման տնօրէնութ̃ե,
Յեօթներորդ օր հանգըստեան
Իջեալ մարմնովն 'ի գերեզման
Զկապեալ հոգիսըն վերածեաց՝
Զանանց հանգիստըն պարգեւեաց:
Յօղն որ 'ի քոյդ կողէ ցօղեալ՝
Բըժըշկեացէ ըզհանգուցեալըն.
Իջցէ 'ի հող մահու նոցին
Եւ բուսուցէ յօրըն վերջին.
Կենդանարար ձայնիւըդ քո
Կոչեա՛ զնոսա 'ի կեանըս քո,
Եւ դասեցո՛ ընդ արդարոցն
Երգել քեզ փառս ը̃ զուարթնոցն:
Լուծեալ զընութ̃իս կենաց ունօղ
Դարձոյց յանցանքն 'ի մահու հող.
Իսկ անմահիդ մեռելութ̃ի
Շնորհեաց դարձեալ զանմահութ̃ի.
Զորս են ը̃ քեզ թաղե̃լ մահուամբ
Աւազանին մըկրտութ̃բ,
Յարո՛ ընդ քեզ քոյին փառօք
Արեգական նըման լուսով:
Փայլին արդարքն յարքայութ̃ե
Եւ ձըգնաւորքն 'ի հանգըստեան.

Մարտիրոսքըն պըսակին
Եւ կուսանաց լապտերք վառին.
Դասեցո՛ տէր ընդ նոսին
Որք զքեզ ած̄ խոստովանին.
Արդարութե̄ մի՛ զատեսցին՝
Այլ գըթութե̄ քո քաւեսցին:
Քոյ անպատում խոնարհութե̄դ՝
Որ թաղեցար մեռելութե̄.
Եւ յարուցեր յորդւոց մարդկան՝
Որք հաւատով ՚ի քեզ անկան.
Յարո՛ և զմեզ արդարութե̄,
Եւ զննջեցեալսն ողորմութե̄.
Զի կենդանեացըս բերանով
Տացին քեզ փառք ը̄ հօր հոգւով:

## Մաղթանք պահոց յետ Արար-չականին:

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն՝ տր̄ յս̄, յորժամ երևիս փառօք հօր ը̄ ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի՛ ամաչեսցուք յուսացեալքս ՚ի քեզ, այլ զօրութե̄ քով մեծաւ բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ որպ̄ զորդիս լուսոյ և որդիս տուընջեան:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ, զի պահպանեսցէ զժողովուրդս իւր ընդ հովանեաւ ս̃բ և պատուական խաչին իւրով 'ի խաղաղութեան: Ամենակալ տէր ա̃ծ մեր, կեցո́ և ողորմեա́:

Աղօթք պահոց:

Օգնեա́ մեզ տէր, օգնեա́ մեզ ա̃ծ փրկիչ մեր վասն մեծի փառաց ա-նուան քո. տէր փրկեա́ զմեզ, և քաւեա́ զմեղս մեր վասն անուան քոյ սրբոյ: Պարսպեալ պահեա́ զառ 'ի քեզ զապաւինեալ և զյու-սացեալ ժողովուրդս քո ընդ հո-վանեաւ ս̃բ և պատուական խաչիդ քով 'ի խաղաղութե̃: Փրկեա́ յե-րևելի և յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա́ գոհութ̃ փառաւո-րել զքեզ ը̃ հօր և ընդ սրբոյ հոգ:
Յիշեա́ տէր զպաշտօնեայս քո:
Բարերար և բազումողորմ ա̃ծ. քո:
Օրհնեալ տ̃ր մեր յ̃ս ք̃ս. Ամէն:
Հայր մեր որ յերկինս ես՝ ն̃ք:



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

## ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս հոգւոյն ս՟յ,
այլև 'ի դէմս յարութե՟ն փ՟ի,
և երևման աշակերտացն :

ԵՂԻՑԻ անուն տ՟ն օրհնեալ յաւիտեան. զի յառաջքան զարև է անուն նորա :

'Ի նա օրհնեսցին ա՟մ ազգք երկրի. և ա՟մ ազինք երանեսցեն նմա :

Օրհնեալ տէր ա՟ծ ի՟էլի՝ որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն ս՟բ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ա՟մ երկիր. եղիցի եղիցի :

Փառք հօր և որդւոյ և հոգւ :

Եւ ևս խաղաղութե՟ զտէր աղաչեսս :

Օրհնութի՟ և փառք հօր և որդւոյ :

## Երգ արեւագալին։

Յարեւելից մինչ 'ի մուտս, 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ ամ͞ ազգք և ազինք յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք արդարոց՝ փառաբանիչք ամենասուրբ երրորդութեան, յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութե՛ ք͞ո գովեցէք ընդ հօր և հոգւոյն, որ ծագեաց զլոյս գիտութե՛ն իւրոյ 'ի մեզ։

## Յորդորակ։

Յարեւելից յարեւմուտս մանկունք սիոնի՝ օրհնեցէք միշտ անդադար զծագօղն լուսոյ։

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք՝ բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ։

## Քարոզ։

Յարեւելից մինչեւ 'ի մուտս արեւու ընդ ամ͞ տեղիս քրիստոնէութե՛, ուր և կարդան զանուն ա͞ն սրբութ͞ք՝ տէր

աղօթիւք նոցա և բարեխօսութե՟ մեզ ողորմեսցի ։ Ուխտիւք զա՟ծ աղաչեսցուք, զի նա փրկեսցէ զմեզ 'ի մեղաց և 'ի ցանկութե՟ աշխարհի ։ Ընկալցի զուխտս և զխնդրուածս սրտից մերոց. և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ ա՟մ սր՟ս իւր ։

Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ող ։

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ օրս՝ խաղաղութե՟ անցուցանել հաւատով 'ի տ՟նէ խնդրեսցուք ։

Զհրեշտակ ։ Զքաւութի ։ Զսր՟յ ։
Նուես և վ՟ն մխա ։ Զանձինս ։ Ող ։

## Աղօթք ։

Յարևելից մինչև 'ի մուտս արևու օրհնեալ ես տէր. վասն զի թագաւոր քաղցր ես. և անուն քո ահեղ է ընդ ա՟մ տիեզերս ։ Քաղցրասցին սաղմոսերգութիւք մեր առաջի քո. ելցեն իրաւունք յարդարութենէ քումմէ 'ի տկարութիս մեր, և փառաւորեսցի ամենա՟բ անուն քո ։ Եւ մեք արժանի եղիցուք կալ 'ի պատուիրանի քում, և քեզ երգել

զօրհնութի̃ւն եւ զփառս հօր եւ որդւոյ եւ հոգւոյդ ս̃բյ. այժմ եւ։

Խաղաղութի̃ ամենեցուն։

Ա̃Ծ մշտնջենաւոր՝ ա̃ծ յաւիտենական, որ 'ի ստորին աշխարհս լոյս ծագեցար, եւ լուսաւորեցեր զմեզ 'ի խաւարային մեղաց մերոց. որ վասն մեր 'ի չափաւորութի̃ եկեր անչափդ ա̃ծ. եւ հեղեալ ծաւալեցեր զշնորհս հոգւոյդ ս̃բյ յարարածս քո։ Այժմ եւ յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես ամենամեծդ ա̃ծ, ը̃ հօր եւ ամենա̃սբ հոգւոյդ. այժմ եւ։

Սաղմոս. ղ̃թ։

ԱՂԱՂԱԿԵՑԷՔ առ տէր ամենայն երկիր. ծառայեցէ́ք տ̃ն ուրախութ̃բ։

Մտէ́ք առաջի նորա ցնծութ̃բ. ծանիրո́ւք՝ զի նա է տէր ա̃ծ մեր։

Նա արար զմեզ, եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի նորա։

Մտէ́ք ընդ դրունս ն̃ր խոստովանութ̃բ, եւ օրհնութ̃բ 'ի յարկս նորա։

Խոստովան եղերուք տ՟ն, և օրհնեցէք զանուն նորա :

Քաղցր է տ՟ր, յաւիտեան է ողորմութ՟ի նորա . յազգէ մինչև յազգ է ճշմարտութ՟ի նորա :

Փառք հօր և որդւոյ և :

## ԵՐԳ։

Ծդնաւորք տ՟յ և ժառանգորդք երկնից արքայութ՟ե , որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցն բարութ՟իս . բարեխօսեցէք առ տ՟ր վ՟ս մանկանց եկեղեցւոյ :

Նահատակք պանծալիք և սիրեցեալք 'ի յերկնաւոր հօրէն . որք մկրտեցայք ը՟ ք՟սի արեամբ ձերով 'ի մահ խաչին . բարեխօս :

Մարտիրոսք ցանկալիք և օթեվանք հոգւոյն ճշմարտութ՟ե . որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութ՟եց . բարեխօս :

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցն պետութ՟եց . որք երանութ՟ե մասին հասիք քան զա՟մ որդիս մարդկան . բարեխօս :

Կամաւոր պատարագք՝ մանկունք

տիօք, և կատարեալք իմաստութ՟բ· որք փոխանակ կաթին արբեք զգինին զմայլեցուցիչ· բարեխօս։

Յորդորակ։

Ճգնաւորք Ճշմարիտք վկայք Ք՟ն՝ բարեխօսեցէք առ տէր վ՟ն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սիրովք Ք՟ն՝ որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Ք՟ն։

Մարտիրոսք ցանկալիք՝ մարդկան ըղձալիք, հայցեցէք 'ի Տ՟ր հոգւոյն տալ մեզ զբարիս։

Գովելիք վերնոց դասուց պարծանք աշխարհի՝ խնդրեցէք զխաղաղութ՟ն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր Տ՟ր պատարագք՝ հասակաւ մանկունք, հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակից։

Մաղթանք։

Աղաչեմք ողորմեա՛ց տ՟ր բարերար աղաչեմք ողորմեա՛ց· վասն աղօթից սր՟ց Ճգնաւորացն աղաչեմք ողորմեաց։

Քարոզ։

Սրբ՟ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏր՟, որք զչարին պարտեցին, նեղուե՟ցն համբերեցին։ Լուսեղէն և երկ-նային անթառամ պսակացն արժա-նի եղեն։ Աղօթիւք նոցա և բարե-խօսութբ՟ մեզ ողորմեսցի։ Ամենա-կալ տէր ած՟ մեր։

Աղօթք։

Սրբ՟ ես տր՟, և՛ի սրբս հանգուցեալ. և մեք սբ՟ վկայիւքս աղաչեմք զքեզ, բարեխօսութբ՟ սբ՟ ածածնին՝ և ա-ղաչանօք ամ՟ սրբ՟ց քոց մի մերժեր զմեզ յողորմութէ քումմէ, այլ կեցո՛ զմեզ աղօթիւք սոցին. զի դու ես բազումողորմ ած՟. և քեզ վայե-լէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և։

Յիշեա՛ տր՟ զպաշտօնեայս քո. 201։

Բարերար և բազումողորմ ած՟ ։

---

Սաղմ. կէ.

ԱՍՏՈՒԱԾ ա՜ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ. քանիպատիկ ևս՝ և մարմին իմ։

Որպէս երկիր անապատ և անջուր՝ ուր ոչ գոյ 'ի նմա ճանապարհ։

Այսպէս 'ի սրբս երևեցայց քեզ տեսանել ինձ զզօրութիւնս քո և զփառս քո։

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ. և շրթունք իմ գովեսցեն զքեզ։

Այսպէս օրհնեցից զքեզ 'ի կեանս իմ, և յանուն քո համբարձից ըղձեռս իմ։

Որպէս 'ի ճարպոյ պարարտութէ լցցի անձն իմ. շրթամբք ցնծութե օրհնեսցէ զքեզ բերան իմ։

Զի թէ յիշէի զքեզ յանկողնի իմում, ընդ առաւօտս կանխեալ խօսէի ընդ քեզ։

Զի եղեր իմ օգնական, 'ի հովանի թևոց քոց ցնծացայց։

Եկն զկնի քո անձն իմ. և զիս ըն-

կալաւ աջ քո. իսկ նոքա 'ի նանիր խնդրեցին զանձն իմ։

Մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկ֊րի. մատնեսցին 'ի ձեռս սրոյ, և բաժինք աղուեսուց եղիցին։

Թագաւոր յուսացաւ 'ի տէր. գո֊վեսցին ամենեքեան, որք երդնուն նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝ որք խօսին զանօրէնութ̅ի։

Լո՛ւր ա̅ծ աղօթից իմոց յաղաչել ինձ առ քեզ. յերկիւղէ թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ։

Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չա֊րաց. 'ի բազմութ̅է որք գործեն զա֊նօրէնութ̅ի։

Որք սրեցին որպէս սուսեր զլե֊զուս իւրեանց, լարեցին զաղեղունս իւրեանց յիրս դառնութ̅ե։

Ձգել 'ի գաղտնիս այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք. յանկարծակի ձգեսցեն 'ի նոսա, և մի՛ երկիցեն։

Որք զօրացուցին յանձինս իւ֊րեանց զբանս չարութ̅ե. խորհեցան թաքուցանել ինձ զորոգայթ. և ա֊սացին՝ ոչ տեսանէ զայս տէր։

Քննեցին զանօրէնութ̅ի. պարտա֊

սեցան 'ի քննել զքննութիւն։

Մատիցէ այր 'ի խորութիւն սրտի իւրոյ, և բարձր եղիցի Աստուած։

Նետք տղայոց եղեն վէրք նոցա, տկարացան 'ի նոսա լեզուք նոցա, և խռովեցան ամենեքեան՝ որք հայէին ընդ նոսա։

Երկեաւ ամենայն մարդ. և պատմեցին զգործս Աստուծոյ, և զարարածս նորա 'ի միտ առին։

Ուրախ եղիցի արդար 'ի Տէր. և յուսասցի 'ի նա. նովաւ գովեսցին ամենեքեան, որք ուղիղ են սրտիւք։

## ԵՐԳ։

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս բնակեալդ 'ի լոյս անմատոյց՝ Հայր երկնաւոր՝ 'ի դասուց լուսեղինացն օրհնեալ, 'ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ 'ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լոյս 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար՝ անճառ ծնունդ հօր որդի, յառաջ քան զարև անուն քո գովեալ ընդ հօր. 'ի ծագել լուս։

Լոյս 'ի հօրէ և յորդւոյ բղխումն աղբիւր բարութե՟ հոգւդ ս՟բ ա՟յ մանկունք եկեղեցւոյ ը՟ հրեշտակս զքեզ բարեբանեն. 'ի ծագել լուսոյ առաւօտու։

Լոյս երրեակ և մի անբաժանելի ս՟բ երրորդութի՟. զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. 'ի ծագել։

Յորդորակ։

Անեղանելիդ ա՟ծ հայր ամենակալ, ընկա՛լ զաղաչանս մեր քոց պաշտօնէից։

'Ի հօրէ ծագումն անճառ արեգակն արդար, ծագեա՛ 'ի յանձինս մեր զլոյսդ ողորմութե՟։

'Ի հօրէ և յորդւոյ բղխեալ հոգի աղբիւր բարութե՟, լուսով քո լցո՛ զմեզ յայսմ առաւօտուս։

Երեք անձինք և մի բնութի՟ մի ա՟ծութի՟. զքեզ խոստովանիմք յաւէտ ս՟բ երրորդութի՟։

Մաղթանք։

Լուսովդ քո ք՟ս ամենեքեան լու-

սաւորեցաք, և 'ի սբ խաչ քո փըր-կչի հաւատացեալքս ապաւինե-ցաք։ Լո՛ւր մեզ Ած փրկիչ մեր, տո՛ւր մեզ զխաղաղութիւն քո. և արա՛ առ մեզ զողորմութիւն քոյ մար-դասէր տէր։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութ͞ե զտէր աղա։

Փառաւորեսցուք զամենակալն Ած՝ որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր. ծագեսցէ և այժմ զառատ ողորմութի իւր 'ի վ͞ր փա-ռաբանչաց անուան իւրոյ։ Ամէ։

Աղօթք։

Զառաւօտու զաղօթս, և զբանա-ւոր պաշտօնս ընկա՛լ ամենակալ ա-մենամեծդ Ած 'ի քո անապական և յերկնային խորանդ։ Ծագեա՛ առ մեզ զարդարութ͞ե և զիմաստութ͞ե զլոյս քո. արա՛ զմեզ որդիս լուսոյ և որդիս տունջեան, որ͞պ զի 'ի գալ աւուրն՝ երկիւղածութ͞բ վարեսցուք զկեանս մեր, և առանց գայթակ-ղութ͞ե կատարեսցուք։ Զի դու ես

օգնական և փրկիչ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն:

## Սաղմոս իբ:

ՏԷՐ հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի:

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ 'ի շաւիղս արդարութե̃ վասն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ. զի դու Տէր ընդ իս ես:

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն քո Տէր զհետ իմ եկեսցէ զա̃մ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան տ̃ն ընդ երկայն աւուրս:

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գը֊նացից, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց տր̃. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ած̃ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քոյ տէր կեցուս֊ցես զիս. արդարութ̃ քով հանցես 'ի նեղութ̃է զանձն իմ։

Ողորմութ̃ քով սատակեսցես ըզ֊թշնամիս իմ, և կորուսցես զա̃մ նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

Ած̃ մեր ապաւէն և զօրութի, օգ֊նական 'ի վերայ նեղութ̃եց՝ որք գտին զմեզ յոյժ։

Վասն այսորիկ ո՛չ երկիցուք մեք 'ի խռովիլ երկրի՝ 'ի փոփոխիլ լերանց 'ի սիրտս ծովու։

Գոչեցին և խռովեցան ջուրք նց̃, խռովեցան լերինք 'ի զօրութ̃է նորա։

Գնացք գետոց ուրախ առնեն ըզ֊քաղաքն ա̃յ. և ո̃ք արար զարկս

իւր բարձրեալն ։

Ա̃յ ՚ի մէջ նց̃, և նոքա մի՛ սասա-
նեսցին․ օգնեսցէ նց̃ ա̃յ ՚ի վաղոր-
դենէ մինչև ՚ի վաղորդեան ։

Խռովեցան հեթանոսք և խոնար-
հեցան թագաւորութիւնք․ ետ զձայն
իւր բարձրեալն, և խռովեցաւ եր-
կիր ։

Տէր զօրութեանց ընդ մեզ՝ ընդունող
է մեր ա̃յ յակոբայ ։

Եկա՛յք և տեսէ՛ք զգործս ա̃յ, որ
արար զնշանս և զարուեստս ՚ի վե-
րայ երկրի ։

Եհար զպատերազմ ՚ի ծագաց
մինչև ՚ի ծագս երկրի․ զաղեղունս
փշրեաց․ զզէնս խորտակեաց, և
զասպարս այրեաց հրով ։

Կանխեցէ՛ք և ծանիրո՛ւք, զի ես
եմ ա̃յ․ բարձր եղէց ՚ի հեթանոսս,
և բարձրացայց ՚ի վերայ երկրի ։

Տր̃ զօրութեանց ընդ մեզ՝ ընդունող
է· մեր ա̃յ յակոբայ ։

Ա̃յ յօգնել ինձ նայեաց, և տէր
յընկերել ինձ փութա՛ ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք
խնդրէին զանձն իմ․ դարձցին յետս

և ամաչեսցեն, որք խորհէին ինձ չար։

Դարձցին առժամայն ամաչեցեա̃լք՝ որք ասէին ինձ վաշ վաշ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ տ̃ր։

Ասասցեն յա̃մ ժամ, մեծ է ա̃ծ. որք սիրեն զփրկութ̃իս քո։

Ես աղքատ և տնանկ եմ. ա̃ծ օգնեա́ ինձ. օգնական և փրկիչ իմ ես դու. տէր իմ մի́ յամենար։

Տո́ւր զօրութի̃ն ծառայի քո. կեցո́ զորդի աղախնոյ քո. և արա́ առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն. զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։

Փառք հօր և որդւոյ։

## ԵՐԳ։

Ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք քո̃, առաջնորդեա́ հոգւոյ մերոյ յերկրէ ելանել յերկինս։

Դուռն կենաց մտից յո̃, մոյծ և զմեզ առ հայր քո և հոգի՝ երգել միշտ զփառս։

Յորդորակ:

Ճանապարհ բարի քս̄ և Ճշմար֊տութի̃ւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ 'ի յերկինս:

Դուռն կենաց մտից յս̄ ա̃ծ Ճշմա֊րիտ մի̃յծ և զմեզ առ հայրդ քո հոգւովդ սրբով:

Մաղթանք:

Տէր ուղղեա՛ զգնացս մեր 'ի Ճա֊նապարհս խաղաղութե̃. տ̃ր ուղ֊ղեա՛ և առաջնորդեա՛ հոգւոց մերոց և ա̃մ հաւատացելոց՝ գնալ յար֊դարութե̃ Ճանապարհն և 'ի կեանսդ յաւիտենից:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ՝ զի յաջողեալ ուղղեսցէ զՃանապարհս ծառայից իւրոց 'ի բարի և 'ի խա֊ղաղութի̃: Ամենակալ տ̃ր ա̃ծ մեր:

Աղօթք:

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութե̃ քս̄ ա̃ծ մեր, առաջնոր֊դեա՛ մեզ գնալ 'ի Ճանապարհս քո արդարութե̃, և խաղաղութե̃ ժամա֊նել 'ի նաւահանգիստ կենաց և փրկութե̃՝ շնորհօք ողորմութե̃ քոյ:

Զի դու ես օգնական և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութ̃ի և պատիւ. այժմ և միշտ և։

Աղօթք տասներորդ պահոյ, յորժամ փոխն
ու լինի։

Օրհնեալ ես Տ̃ր Ա̃ծ փրկիչ մեր՝ որ յա̃մ ժամ ը̃ մեզ ես, և ոչ երբէք թողուս ՚ի ձեռանէ քումմէ զայսոսիկ՝ որք հաւատով և ճշմարտու̃թ կարդան առ քեզ։ Աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն Տ̃ր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութ̃եդ պահելով ՚ի խաղաղութե̃. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութ̃բ և խնդութ̃բ հասանել յիւրաքանչիւր ՚ի բնակութիւս ՚ի ք̃ս յ̃ս ՚ի տէր մեր։ Որում վայելէ փառք իշխանութ̃ի և պատիւ. այժմ։

Օրհնեալ Տ̃ր մեր յ̃ս ք̃ս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես՝ ս̃բ եղիցի անուն։



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ԵՐ-ՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս իջման Հոգւոյն սբյ, Եւ 'ի խորհուրդ նախամօրն ճաշակման և ապաշխարութեն փոխի ։

---

ՕՐՀՆԵԱԼ Հոգիդ սուրբ ած ճշմարիտ ամէն ։

Սաղմոս. Ծ ։

ՈՂՈՐՄԵԱ ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և 'ի մեղաց իմոց սրբեա զիս ։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ տր. և չար առաջի քո արարի ։

Ո̃պ արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթեսցես 'ի դատել̃ն քո:

Անօրէնութ̃ք յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու ո̃ր զճշմարտութի̃ն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութ̃ք քո յայտնեցեր ինձ:

Ցօղեա́ յիս մշտկաւ, և ս̃բ եղէց. լուա́, և քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա́ ինձ ո̃ր զցնծութի̃ն և զուրախութի̃ն. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո́ զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա́ յինէն:

Զսիրտ ս̃բ հաստատեա́ յիս ա̃ծ, և զհոգի ուղիղ նորոգեա́ 'ի փորի իմում:

Մի́ ընկենուր զիս տէր յերեսաց քոց և զհոգի քո ս̃բ մի́ հաներ յինէն:

Տո́ւր ինձ ցնծութի̃ն փրկութե̃. և հոգւով պետութե̃ քո հաստատեա́ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա́ զիս յարենէ ա̃ծ՝ ա̃ծ փրր-

կուէ խմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութե̃ն քում։

Տր̃ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցե̃լ էիր՝ պատարագս մատուցանէաք. բայց դու ը̃ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա̃յ հոգի խոնարհ. ըզսիրտ ո̃ք և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ արհամարհէ։

Բարի արա տ̃ր կամօք քովք սիոնի, և շինեսցին պարիսպքն եղ̃մի։

Յայնժամ հաճեսցիս ը̃ պատարագս արդարութե̃. ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։

Փառք հօր. այժմ և։

### ԵՐԳ ԵՐՐՈՐԴ ԾԱՆՈՒ ԱՒՈՒՐՆ ԳԻՇԵՐԻ ՈՂՈՐՄԵԱՅԻՆ։

Օրհնեմք ըզքեզ հայր անըսկիզբն
Ելից էակ 'ի յանգոյից,
Բարձեր ձեռօք նիւթ 'ի հողոյ
Եւ ստեղծեր զմարդ 'ի պատկեր քո.
Գըլուխն ոտից խոնարհեցաւ
Զի զպատուիրան քո մոռացաւ.

Դարձեալ ասեմք ըստ անառակին
Թէ հայր մեղայ քեզ 'ի յերկինս ։
Երկնաւորաց անքննելի
Եղեր մարդկան տեսանելի,
Զգեցար պատկեր հողեղինի
Պատկերըդ հօր անփոխելի.
Եղեր յերրորդ ժամ 'ի խաչին
Վասն ադամայ նախաստեղծին.
Ընդ աւազակին քում խաչակցին
Արժանացո՛ ըզմեզ դրախտին ։
Թագաւոր Թագաւորաց
Առատաբուղխ հոգի շնորհաց.
Ժողովելոցն 'ի վերնատան
Առաքելոցն երկոտասան
Ի հրոյ լեզուս երևեցար,
Յոգիս նոցա վերանըստար.
Լո՛ւր յանուն քո ժողովելոցս ,
Է՛ջ և առ մեզ յերրորդ ժամուս ։

Մաղթանք ։

Յա՟մ ժամ աղաչանք իմ այս են՝ 'ի մեղաց իմոց ո՟ք արա՛ զէս տ՟ր . և յօտարէն պահեա՛ զծառայս քո մարդասէր տէր ։

Եւ ևս խաղաղութ՟ զո՟ր աղաչեսցուք . ընկա՛լ կեցո՛ և ողորմեա՛ ։

Օրհնութի և փառք Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ:

## Քարոզ Մեծ պահոցն 'ի Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ:

Միաբան ամենեքեան գոհացարուք զմարդասիրէն ն՟յ և զփրկչէն մերմէ յ՟նէ ք՟նէ: Որ ազատեաց զազգս մարդկան 'ի դատապարտութենէ անիծիցն. և եբարձ զմեղս աշխարհի 'ի ժամուս յայսմիկ խաչիւն իւրով, և շնորհեաց առատապէս զպարգևս Հոգւոյն Սրբոյ երանելի առաքելոցն: Խնդրեսցուք հաւատով, զի զմեզ զամենեսեան արասցէ հաղորդս մեծամեծաց և ն՟մային բարեացն այնոցիկ, աղօթիւք և բարեխօսութ՟բ ն՟մ սրբոց՝ որք աստ և ընդ ն՟մ տիեզերս: Ո՟վ զի անարատ վարուք, և Ճշմարիտ առաքինութ՟բ կացեալք ը՟ն կամաց ն՟ր յայսմ աշխարհիս, մասն և վիճակ ժառանգութե ընկալցուք ը՟ն ն՟մ ն՟ըս ն՟ր՝ զբնակութե յաւիտենականն և երկնային խորանացն: Զոր խոստացաւ սիրելեաց

խաչոց Ճշմարիտն ա՟ծ յ՟ն ք՟ն. տ՟ր մեր կեցո՛ և ողորմեա՛:

Զժամս և զառաջակայ օրս խաղաղութ անցուցանել հաւատով 'ի տնէ խնդրեսցուք: Զհրեշտակ:

Զքաւութի: Զսրբոյ: Նւխս և վ՟ն: Զանձինս: Ողոր:

Աղօթք:

Որ 'ի քրովբէական և յանպատում հանգուցեալ ես յաթոռ. և այցելու ես միշտ արարածոց քոց: Որ և 'ի ժամուս յայսմիկ հեղեր յերանելի առաքելսն շնորհս հոգւոյդ ք՟ոյ: Դու տ՟ր յառաջակայ ժամուս, և յաւէտ մինչև 'ի կենցաղոյս աւարտումն տպաւորեա՛ միացո՛ զմեզ ը՟ ա՟մ բարեգործութե՟ յորդորմունս. և խոստացելոց բարեացդ հաղորդս լինել զմեզ արժանի արա՝ տ՟ր մեր և փրկիչ յ՟ն ք՟ն: Որ ես օրհնեալ ը՟ հօր և ը՟ սրբոյ հոգւոյդ. այժմ:

Խաղաղութի ամենեցուն:

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս ընդ ա՟ծ էակից հօր և արարչակից ը՟ հոգւոյդ. որ և զնախաստեղծին

պատուիրանազանցութ պտղոյն ճաշակման՝ նշանաւ ամենայաղթ խաչիւ քո 'ի ժամուս յայսմիկ ենթագրեալ՝ 'ի կենդանութի փոխեցեր, և զանօրէնութիս մեր 'ի նմա բևեռեալ՝ կեանս անապական և նորոգումն կենաց յուսացելոց 'ի քեզ խոստացար:

Որոց մանաւորիլ և զմեզ արժանի՛ արա տր մեր և փրկիչ յս քս. որ ես օրհնեալ ընդ հօր և:

Սաղմոս:

Տր ած օրհնեալ. օրհնեալ է տր զօրհանապազ:

Ած մեր՝ ած կենարար. և նա փրկեսցէ զմեզ:

Տէր ած օրհնեալ. օրհնեալ է տէր զօրհանապազ. առաջնորդեսցէ մեզ ած փրկիչ մեր:

Քարոզ:

Խնդրեսցուք հաւատով 'ի տնէ այ ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց. ոյք ը ծով և ընդ ցամաք գնասցեն. ող զի առաջնորդեսցէ

նոցա, խաղաղութ՟բ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տեղիս տ՟ր ա՟ծ մեր։ Վ՟ զի նա ինքն է առաջնորդ կենաց և յոյս փըր-կութե՟ն, որ յաղթող ծառայից իւ-րոց խաղաղութ՟բ հասանիլ 'ի նաւա-հանգիստն կենաց և փրկութե՟ն։ Ամե-նակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛։

Աղօթք։

Առաջնորդեա՛ մեզ տ՟ր ա՟ծ մեր, և ուսո՛ մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութ՟բ պահեա՛ 'ի խաղա-ղութեան զկեանս մեր, և զգնացս 'ի հաճոյս քո. ժամանեցո՛ զհո-գևոր և զմարմնաւոր ընթացս ծա-ռայից քոց անարատ ճանապար-հաւդ յաւիտենական 'ի կեանսդ։ Շնորհօք միածնի քոյ տ՟ն մերոյ և փրկչին յ՟սի ք՟սի, որ եղև մեզ ա-ռաջնորդ կենաց և յոյս փրկութե՟ն։ Ընդ որում օրհնեալ ես հայր ա-մենակալ հանդերձ կենդանարար և ազատիչ ս՟բ հոգւովդ. այժմ և։

Յիշեա՛ տ՟ր զպաշտօնեայս քո. 201։

Բարերար և բազումողորմ ա՟ծ։

Սաղմոս . ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս . եւ ինձ ինչ ոչ պակասեսցի ։

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս . եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։

Դարձոյց զանձն իմ առ իս , եւ առաջնորդեաց ինձ 'ի Ճանապարհս արդարութե՟ վ՟ն անուան իւրոյ ։

Թէպէտ եւ գնացից ես 'ի մէջ ստուերացմահու , ոչ երկեայց 'ի չարէ . զի դու տ՟ր ընդ իս ես ։

Ցուպ քո եւ գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս ։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան , ակն յանդիման նեղչաց իմոց ։

Օծեր իւղով զգլուխ իմ . բաժակ քո ո՟պ անապակ արբեցոյց զիս ։

Ողորմու՟ի քո տ՟ր զհետ իմ եկեսցէ զա՟մ աւուրս կենաց իմոց , բնակել ինձ 'ի տան տ՟ն ընդ երկայն աւուրս ։

Ցոյց ինձ Ճ՟նպհ՝ յոր գնացից . զի առ քեզ տ՟ր համբարձի զանձն իմ ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տ՟ր զի զքեզ ապաւէն ինձ արարի ։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի
դու ես ած՟ իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ:

Վ՟ն անուան քոյ տէր կեցուսցես
զիս. արդարութ՟բ քով հանցես 'ի
նեղութ՟է զանձն իմ:

Ողորմութ՟բ քով սատակեսցես ըզ-
թշնամիս իմ, և կորուսցես զա՟մնե-
ղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո
եմ:

Փառք հօր և որդւոյ:

Ք՟րոզ:

Եւ ևս խաղաղութ՟ե զտէր աղա:

Գոհաբանելով աղաչեսցուք ըզ-
բարերար հոգին ած՟ և խնդրեսցուք
զողորմութ՟ի 'ի նմանէ. զի անցուսցէ
'ի մէնջ զցասումն պատուհասի յան-
ցանաց մերոց բարերարութ՟բն իւ-
րով: Ամենակալ տ՟ր ած՟ մեր կեցո՛
և ողորմեա՛:

Աղօթք:

Խաղաղութ՟բ քով հոգիդ տ՟ր ած՟
Ճշմարիտ՝ որ 'ի վեր է քան զա՟մ

միտս և զխորհուրդս, մխիթարեա՛ զանձինս ծառայից քոց՝ ը̃ունելով զաղաչանս մեր. անցո՛ 'ի մէնջ զսաստումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութ̃ քով: Ներեա՛ և լո՛ւր մեզ, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր. արժանաւորեա՛ գոհութ̃ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ որդւոյ միածնի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃. ամէն:
Հայր մեր որ յերկինս ես՝ ն̃ը:

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ՎԵՑԵՐՈՐԴԻ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի ՚ի դէմս Հօր այ, այլ և ՚ի դէմս չարչարանաց և խաչելութեան Որդւոյն այ։

---

ՕՐՀՆԵԱԼ Հայր սուրբ ած ճշմարիտ։

Սաղմոս. Ծ։

ՈՂՈՐՄԵԱ ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում. 243։

Երգ վեցերորդի ժամուն։

Խաւարեցաւ լուսն արևուն
Ի վեցերորդ ժամ ուրբաթուն.
Ցանոյց թէ լուսն արարչական
Նըսեմացոյց զլոյսն եղական.
Կախեալ ըզքեզ մերկ ՚ի խաչին
Քօղով ստուերաւըն ծածկէին.
Հերքեա՛ ՚ի մէնջ ըզծանրութիւն

Շրջօղ դիւլին միջօրէի ։
Զանձրուեն մարտ այսուն չարի
Որ յայսմ ժամու պատերազմի ,
Ղօղեալ յոգւոց մեր հերքեսցի
Քոյ նշանաւ սրբոյ խաչի .
Ճշմարտութեն քոյ Ճառագայթ
Զառ 'ի յերկնից անկեալ զփայլակն
Մերժեալ 'ի մէնջ հալածեսցէ՝
Եւ զմեզ լուսով քով վառեսցէ ։
Յայս միջօրեայ տուընջեան ժամուս
Վայելչական աչաց մարմնոյս
Նետիւք գաղտնեաց մի խոցեսցուք
Ի խաւարէն որ 'ի ծածուկ .
Շուրջանակի բանակեսցին
Ըզմեօք բանակըք հրեշտակաց .
Որք պարակից մեզ լինելով,
Ըզքեզ ընդ հօր փառաւորելով ։

Մաղթանք ։

Յորում ժամու աղաչանք իմ այս են,
'ի մեղաց իմոց ։
Եւ ես խաղաղութեան զտէր աղաչէ ։
Օրհնութի և փառք հօր և որդ ։

Քարոզ մեծ պահոց ։

Արթուն մտօք և անզբօս խորհրդ-

դով կացցուք միաբան յաղօթս ա-
ռաջի տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի։
Հաւատով խնդրեսցուք 'ի Նմանէ
զհրեշտակ խաղաղութ՟ պահապան
անձանց մերոց, որ եկեալ բնա-
կեսցէ շուրջ զմեօք և աներկիւղ
պահեսցէ զմեզ յա՟մ հրեղէն նե-
տից սատանայի, որ թռչի 'ի տուէ,
յիրաց խաւարային գնացից՝ 'ի գայ-
թագղութ՟ դիւին 'ի հասարակ ա-
ւուր։ Յորմէ զգուշութ՟ պահելով
աղօթիւք և բարեխօսութ՟ ա՟մ սրբոց,
շնորհեսցէ մեզ մարդասէրն ա՟ծ
կեալ առաքինութ՟ 'ի փրկութին ան-
ձանց մերոց՝ 'ի պատիւ և 'ի փառս կեն-
դանացուցիչ անուան իւրոյ։ Յոյս
հաղորդութ՟ ընկալցուք 'ի յայտնութ՟
միածնի որդւոյն ա՟յ, կերպարանա-
կից առնել զմարմին խոնարհութ՟
մերոյ ըստ նմանութ՟ մարմնոյ փա-
ռաց իւրոց։ Վ՟ զի զայս խոստա-
ցաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՟ծ
յ՟ս ք՟ս տ՟ր մեր կեցո՛ և ողոր։
Զժամն և զառաջակայ օրս խաղա։
Զհրեշտակ։ Զքաւութ։ Զսրբոյ։
Եւ ևս և վ՟ միա։ Զանձինս։ Ողոր։

Ամէն։

Ջնջեցո՛ մեզ տէր ա̃ծ մեր զէն արդարութե̃՝ զօրաւոր և յաղթօղ լինել ընդ դէմ սատանայական պատերազմաց. և զա̃մ հրեղէն նետս նորա շիջուցանելով՝ անկասկած լիցուք յերաց խաւարային գնացից՝ 'ի դայթագղութե̃ դիւին 'ի հասարակ աւուր։ Եւ զգաստացե̃լք վայելչական տունջեամբս՝ առաքինութբ̃ կացցուք 'ի փրկու̃ի անձանց մերոց՝ 'ի պատիւ և 'ի փառս ա̃յ երրորդութե̃. այժմ։

Խաղաղութե̃ ամենեցուն։

Երկնաւոր խաղաղութբ̃դ քով պարսպեալ պահեա՛ զանձինս մեր տ̃ր զօրութեանց։ Վ̃ զի դու ես ա̃ծ խաղաղութեան, և բաց 'ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք. և զանուն քո ամենազօր կարդամք յօգնականութի̃ անձանց մերոց։ Նայեա՛ց յերկրպագութիւս մեր. և ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութեան։ Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զհայր զորդի։

ՍՂ. Տ՟ր մի՛ յիշեր զմեղս մեր զա-ռաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ո-ղորմութի՟ն քո տէր. զի աղքատացաք յոյժ:

Օգնեա՛ մեզ ա՟ծ փրկիչ մեր վ՟ն մեծի փառաց անուան քո:

Տէր փրկեա՛ զմեզ և քաւեա՛ ըզ-մեղս մեր վ՟ն անուան քո:

### Քարոզ:

Վ՟ն հիւանդաց և ա՟մ վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր ք՟ս. զի ողորմեսցի ը՟ս մեծի ողորմութե՟ն իւ-րում, և բժշկեսցէ զախտս և զհի-ւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծա-ռայից իւրոց. և կատարեալ առող-ջութե՟բ հաստատեսցէ զամենեսեան 'ի մշտնջենաւոր և յանախտ կեանս:

Որ առաքեցաւ 'ի հօրէ 'ի բժշկու՟ն ազգի մարդկան՝ միածին որդին ա՟յ տէր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս, կեցո՛ և ողորմեա՛:

### Աղօթք:

Փարատեա՛ զցաւս և բժշկեա՛ զհի-ւանդութիւնս 'ի ժողովրդենէ քում-

մէ տ̅ր ա̅ծ մեր, և շնորհեա՛ ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչիւ քով, որով բարձեր զտկարութի ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութե մերոյ: Դու ես կեանք մեր և փրկութի, բարերար և բազումողորմ ա̅ծ, որ միայն կարօղդ ես թողուլ զմեղս և մերժել զախտս և զհիւանդութիս 'ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգևիչդ բարեաց, պարգևեա՛ զառատ ողորմութի քո 'ի վ̅ր արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից, յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենանուն երրորդութիդ. այժմ և:

Յիշեա՛ տ̅ր զպաշտօնեայս քո, 201:

Բարերար և բազումողորմ ա̅ծ:

Սաղմոս. Խ̅:

ԵՐԱՆԻ որ խորհի զաղքատն և զտընանկն. յաւուր չարի փրկէ զնա տ̅ր:

Տ̅ր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ զնա 'ի վ̅ր երկրի. և ո՛չ մատնէ զնա 'ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. և զա՟մ անկողինս նր՟ դարձուցանէ 'ի հիւանդութ՟է նր՟:

Ես ասացի տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Որ բնակեալ է յօգնութ՟ի բարձրելոյն՝ ընդ հովանեաւ ա՟յ յերկնից հանգիցէ:

Ասասցէ տ՟ն ընդունելի իմ ես դու, ապաւէն իմ ա՟ծ՝ և ես յուսամ 'ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանից խռովութ՟է:

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց նր՟ յուսասցիս:

Ո՟պ զէն շուրջ եղիցի զքեզ ճշմարտութ՟ի նորա:

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ո՛չ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:

Յիրէ՝ որ շրջի 'ի խաւարի, 'ի դայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր:

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ը՟ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու տ՟ր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի մերձեսցին 'ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վ՟ն քո 'ի պահել զքեզ յամ՟ ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո:

Ի վ՟ր իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ՝ և փրկեցից զնա. հովանի եղէց նմա. զի ծանեաւ զանուն իմ:

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց 'ի նեղութ՟:

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից. և ցուցից նմա զփրկութ՟ի իմ:

Փառք հօր և որդւոյ:

Քարոզ:

Եւ ես խաղաղութ՟ զտ՟ր աղաչ:

Խնդրեսցուք հաւատով 'ի հօրէ վ̃ն քաւութիւն մեղաց և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ 'ի փորձոց և 'ի նեղութեանց. խնամելոյ 'ի վ̃ր մեր ողորմուե̃ և գթուե̃ տ̃ն ա̃յ ամենակալին. կեցո՛ և ողորմեա:

### Աղօթք:

Հա՛յր գթութեց, և ա̃ծ ա̃մ մխիթարութեց՝ որ մխիթարես զմեզ յա̃մ նեղութեան մերում. լո՛ւր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր. անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութ̃ քումէ: Ներեա՛ և լո՛ւր մեզ, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր, արժանաւորեա՛ գոհութ̃ փառաւորել զքեզ ընդ որդւոյ, և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ:

Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս. Ամէն: Հայր մեր որ յերկինս ես:

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս Որդւոյն ա͞ծային մահուան, և բանաւոր հոգւոյն աւանդմանն :

---

Օրհնեալ Որդիդ սուրբ ա͞ծ ճշմարիտ . Ամէն :

Սաղմոս . Ծ :

Ողորմեա՛ ինձ ա͞ծ ը͞ստ մեծի ողորմութեան քում . ը͞ստ բազում գթութեան քում քաւեա զանօր . 243 :

Երգ իններորդի ժամուն :

Չարչարակցեալ քեզ տիւ լուսոյ՝
Երիւք ժամուք խաւարելոյ ,
Պայծառացեալ յիններորդին
Ի տիպ լըրման մահու ստուերին ,

Զահրդ լուսոյ մեծապայծառ
Աւանդեցեր զհոգիդ առ հայր.
Ուահիւ կցորդ քեզ 'ի յերկինս
Զմեզ ուղղեա հոգւով քոյին:
Սանդարամետըք սարսեցին
Զկապեալ հոգիսն արձակեցին.
Վէմք 'ի վիմէդ պատառեցան,
Ի տապանաց մեռեալք յարեան.
Տարերք երկրի տատանէին
Եւ աշխարհի սիւնք դողային.
Բամեալքս առ քեզ պաղատեսցուք
Զի ընդ արդարսն դասեսցուք:
Ցուցեր յայնժամ ըզքանչելիս
Եւ այժըմ մեզ ողորմեսցիս.
Խիւծեալ բնութիս քև ողջացաւ
Շնորհեա և մեզ լինել անցաւ.
Փոխան մահու քոյ կենարար
Կեցո ըզմեզ տէր բարերար.
Քեզ պաղատիմք ըստ աւազակին
Յիշեա ըզմեզ յօրն ահագին:

Մաղթանք:

Ցա̃մ ժամու աղաչանք իմ այս են 'ի մեղաց իմոց:
Եւ ես խաղաղութե̃ զքո̃ր աղաչեմ:
Օրհնութի̃ և փառք հօր և որդ:

Քառորդ մեծ պահոյն

Մե՛ծ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս առաջի տն մերոյ և փրկչին յին քին՝ յիշելով զմեծամեծս նր զանչափ շնորհսն, զհամբերութիւն կենսատու խաչին, և զհեղումն պատուեցուցիչ արեան նորա և զսոցին նմանս, որ յայսմ ժամու վս մեր մեղաւորացս կրեաց նա: Եւ մեք զայս ժմ զմտաւ ածելով՝ սրբեսցուք 'ի մեղաց զխորհուրդս՝ զբանս և զգործս մեր. կատարեսցուք զսրբութիւն անձանց մերոյ ահիւն Աստուծոյ: Մի՛ յապաղեսցուք խոստովան լինել նմա ըզմեղս մեր, և խնդրել զթողութիւն մեղաց մերոց. զի մի՛ կորիցուք անապաշխար՝ զյաւիտենական կորուստն: Այլ մինչ դեռ ժամանակս 'ի ձեռս է, գործեսցուք ըզբարիս 'ի կեանս յայսմիկ՝ օրինակ վարուց մերոց ունելով զժմ սբս և զյաղթօղ նահատակսն, որք միանգամ 'ի սկզբանէ հաճոյ եղեն տն և փրկչին բոլորեցունց:

Որոց աղօթիւք և բարեխօսութ՟ք շնորհեսցէ մեզ մարդասէրն ա՟ծ ըղ-ձաճոյսն իւր և զօգուտն մեր խոր-հիլ միշտ և առնել, և անպատում պարգևացն հաղորդս գտանիլ։

Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն ա՟ծ յ՟ս ք՟ս. տ՟ր մեր կե-ցո՛ և ողորմեա՛։

Զժամն և զառաջակայ օրս խաղաղ։
Զհրեշտակ։ Զքաւու՟ն։ Զորբոյ։
Եւս և վ՟ն միա։ Զանձինս։ Ող։

### Աղօթք։

Տէր զօրութե՟ց, որ կամաւոր մահ-ուամբ քով 'ի ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ 'ի մեռելութ՟է մեղաց մերոց. և բևեռեցեր զկնիք դատապարտութե՟ մերոյ 'ի խաչին, և շնորհեցեր ազատութիւն ազգի մարդկան 'ի ծառայութ՟է ապակա-նութե՟ յազատութ՟ի փառաց հեղ-մամբ արեամբդ քով սրբով։ Ըն-կա՛լ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք կալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինել

յաւիտենական և երկնային ուրա-
խութեանցն ընդ ա՟մ ս՟բս քո։ Եւ
գոհանալով փառաւորել զքեզ
ը՟ Հօր և ս՟բ Հոգւոյդ. այժմ և։

Խաղաղութ՟ի ամենեցուն։

Բազումողորմ տ՟ծ և հաստիչ
խաղաղութե՟, հաստատեա՛ զանձինս
մեր քոյով խաղաղութ՟բդ, որով ու-
նիս յիւրաքանչիւր կարգի զա՟մ ա-
րարածս՝ քո ուղիղ հրամանաւդ
մատակարարելով. վ՟ս զի այդ իսկ է
կամք ՝քո՝ խաղաղական և հոգևոր
սիրովկալ մեզ առ միմեանս, և սպա-
սել արթուն մտօք յայտնութե՟ միա-
ծնիդ տ՟յ և փրկչիդ մերոյ յ՟ի ք՟ի։
Որում արժանաւորք եղիցուք հան-
դիպիլ ամպովք ը՟ առաջ ն՟ո յօդս.
զուարթերես կացցուք յաջմէ քում-
մէ ը՟ ս՟բս և ընդ սիրելիս անուանդ
քում ս՟բյ. և ժառանգեսցուք ըզ-
պատրաստեալն 'ի սկզբանէ աշխար-
հի սրբոց քոց զարքայութ՟իդ։ Եւ
ընդ նոսին գոհանալով փառաւո-
րեսցուք զքեզ ընդ Հօր և ամենաս՟բ

Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտ.

Սաղմոս:

Տ՟ր մի՛ մատներ զմեզ իսպառ վ՟ն անուանդ քում ս՟բյ. մի՛ ցրեր զուխտս քո, և մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ:

Վ՟ն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քո, և ի՟էլի ս՟բյ քո:

Տէր մի՛ մատներ զմեզ իսպառ վ՟ն անուանդ քում ս՟բյ. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութիւնս քո ՚ի մէնջ:

Երգ:

Նահապետին աբրահամու
Հայցմամբ ընկա՛լ տէր զաղաչանս:
Եւ ծառային քում սահակայ
Խնդրուածովքն ՚ի մեզ դարձա՛:
Բենատեսին իսրայէլի,
Սիրով սրբոյն ՚ի մեզ խնայեա՛:
Երեքսրբեան երիւք սոցին
Սրբեա՛ զհոգի զմիտս և զմարմին:

Քարոզ:

Աղաչեսցուք զկենդանատու փրկիչն

մեր ք՟ս, որ կամաւոր խաչելութ՟ն իւրով զարարածս փրկեաց. և հեղ-մամբ արեան իւրոյ զթողութ՟ն շնոր-հեաց յուսացելոց իւրոց. ամենա-կալ տ՟ր ա՟ծ:

Աղօթք:

Անկեալ առաջի քո բարերար և բազումողորմ ա՟ծ՝ և աղաչեմք ա՟մ սրտիւք մերովք, և խնդրեմք զգը-թութիւն 'ի քէն. ո՟պ խոստացար ծառայից քոց և ասացեր. զամե-նայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի հօրէ՝ տացի ձեզ: Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա՛ 'ի բարի զխըն-դրուածս մեր. զի 'ի քեզ եմք ա-պաւինեալ, և քո առատ ողորմու-թե՟դ մխիթարեա՛ զմեզ 'ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո՛ յանձառ երկնից արքայութ՟եդ 'ի փառաբանութ՟ն և 'ի պատիւ ամե-նա՟սբ երրորդութ՟ե. այժմ:

Յիշեա՛ տ՟ր զպաշտօնեայս քո: 201:

Բարերար և բազումողորմ ա՟ծ:

Սաղմոս . ՃԺԴ :

ՍԻՐԵՑԻ զի լուիցէ տ՟ր զձայն աղօթից իմոց . զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս , և ես յաւուրս իմ կարդացի առ նա :

Շրջեցան զինև երկունք մահու . և վիշտք դժոխոց գտին զիս :

Զնեղութիւն և զանձկութիւն գտի . և զանուն տ՟ն կարդացի :

Ո՜ տ՟ր՝ փրկեա՛ զանձն իմ . ողորմած ա՟ծ մեր ողորմի և պահէ զտղայս տէր :

Ես խոնարհ եղէ , և տէր կեցոյց զիս . դարձ անձն իմ 'ի հանգիստ քո , զի տ՟ր օգնեաց քեզ :

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ . զաչս իմ յարտասուաց . և զոտս իմ 'ի գայթագղու՟է . հաճոյ եղէց առաջի տ՟ն յերկրին կենդանեաց :

Հաւատացի՝ զոր և խօսեցայ , և ես խոնարհ եղէ յոյժ :

Ես ասացի 'ի զարմանալ իմում , թէ ա՟մ մարդ սուտ է :

Զի՞նչ տաց տրիտուր տ՟ն ընդ ա՟մի . զոր և ետ ինձ :

Զբաժակ փրկութե՟ ընկալայց, և զանուն տ՟ն կարդացից։

Զաղօթս իմ տ՟ն տաց առաջի ա՟մ ժողովրդեան ն՟ր։

Պատուական է առաջի տ՟ն մահ ս՟րբց իւրոց. ո՛ տ՟ր՝ ես ծառայ քո եմ. ծառայ՝ և որդի աղախնոյ քոյ։

Հատեր զկապանս իմ. քեզ մա֊ տուցից պատարագս օրհնութե՟. և զանուն տ՟ն կարդացից։

Զաղօթս իմ տ՟ն տաց առաջի ա՟մ ժողովրդեան ն՟ր՝ ՚ի գաւիթս տան տ՟ն, և ՚ի մէջ քոյ եէ՟մ։

Օրհնեցէ՟ք զտ՟ր ա՟մ ազինք. գովե֊ ցէ՟ք զնա ա՟մ ժողովուրդք։

Զօրացաւ ողորմութի՟ ն՟ր ՚ի վ՟ր մեր և ճշմարտութիւն տ՟ն մնացէ յաւիտեան։

---

Շարականք հանգստեան ըստ ձայնին։

## ԱՁ

Որ ստեղծմամբ ը՟ պատկերի քոյ տ՟ր պատուեցեր զմեզ, ընկա՛լ և այժմ զննջեցեալսն ՚ի քեզ ուղիղ հաւատով ը՟ մեծի քում ողորմութե՟։

Որ շնորհօք ս՟բ հոգւոյն լուսաւորեցեր, յիշատակի իւրեանց զհոգիս ն՟ց ընկալ մարդասէր · ը՟ս մեծի: Որք հաղորդեցան մարմնոյ և արեան քոյ տ՟ր՝ հանգո՛ զհոգիս ն՟ց ընդ ս՟բս քո ք՟ս ա՟ծ · քանզի գինք սուրբ արեան քոյ են : Միայն օրհնեալդ 'ի կանայս մայր և միշտ կոյս, և խնամալի լոյս՝ ծնօղ արարչին մերոյ, անդադար բարեբանեսցուք :

ԱԿ

Արարիչ ա՟ծ և ստեղծիչ ազգի մարդկան, մի՛ անտես առներ զննջեցեալսն մեր · այլ հանգո՛ զհոգիս նոցա ընդ ս՟բս քո : Որդիդ միածին յարութեան տիեզերաց · մի՛ անտես առներ : Հոգիդ ճշմարիտ՝ մխիթարիչ սգաւորաց, մի՛ անտես առներ: Հոգւոյն զքև հովանացեալ միայն սրբուհի՝ ծնար զբանն ա՟ծ զանձառելւոյ հօր ծնունդ · և յայտնեցաւ միուն երրորդութե՟ն :

ԲԶ

Որ կոչեցեր առ քեզ տ՟ր զտիեզերս ա՟մ, ընկալ զմեր զննջեցեալսն

'ի դուռ նահապետին աբրահամու. ողորմած տ͞ր փրկիչ և բարերար։ Որ թողութ̃եց ես տուող ա͞ծ՝ թող զմեղս մեր ննջեցելոցն, կարող յա͞մե և հզօր, ողորմած տ͞ր։ Որ լուսատու ես անեղերաց ք͞ս ա͞ծ՝ լուսաւորեա՛ և զմեր զննջեցեալսն լուսով երա-նաւէտ զուարթնոց. ողոր։ Յոյս մեր և ապաւէն մայր ա͞ն և կոյս ե͞ս, որ հուր ա͞ծութ̃են ոչ բոցակիզեաց զքո ե͞ս զորովայն. բարեխօսեա՛ առ-տ͞ր վասն մերոյ փրկութեան։

ԲԿ

Որ որդիդ ես և բանդ ա͞ծ՝ հաւա-սարակից ընդ հօր յէութ̃ե, առ քեզ կարդամք մարդասէր՝ հանգո՛ զհոգիս ննջեցելոց մեր ընդ ս͞բս քո։ Որ իջեր յերկնից վ͞ս մեր, զառաջինն առեր զյանցանսն ադամայ, մերով բնութ̃ե բարձեր 'ի վ͞ր խաչին անարատ ձե-ռօք. հան։ Որ լուծեր զիշխանութ̃ե մահու կամաւորական մահուամբ քո. ք͞ս բանաւորաց զաղաչանս ա-ռաջի քոյ հեղեալ մաղթեմք. հան։ Տիրուհի անարատ մայր ա͞ն և կոյս

մարխամբ, քրովբէական աթոռ ընդ քեզ տեսաք 'ի յերկրի. բարեխօսեա առ ո̃ր վ̃ն մերոյ փրկութե̃ն :

ԳՁ

Հայր բարեգութ՝ որ գթացար 'ի յազգս որդւոց մարդկան, առաքեցեր զմիածինդ 'ի փրկութի̃ն. յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո՛ ընդ ս̃րս քո : Որդիդ միածին, որ յարեար 'ի մեռելոց, 'ի միւսանգամ գալստեանն քո յարու̃ն մեզ խոստացար. յիշեա՛ : Հոգիդ Ճշմարիտ մխիթարիչ սգաւորաց, աղաչանօք ս̃բ ա̃ծածնին և ա̃մ քոց ս̃ց. յիշեա՛ : 'Ի բարեխօսութե̃ն փութացի՛ր մեզ ս̃բ ա̃ծածին առ 'ի փրկել զժողովուրդս 'ի մեղաց և յապականութենէ :

ԳԿ

Յանսկզբնական ծոցոյ հօր խոնարհեալ բանդ մարմնացար 'ի կուսէն վ̃ն փրկուե̃ն մերոյ. աղաչեմք զքեզ. զննջեցեալսն մեր 'ի քեզ ուղիղ հաւատով, յիշեա՛ ո̃ր յոր-

ժամ՛ դաս Թագաւորութե՟դ քո։ Անոխակալ քաղցրութե՟ որդի ա՟յ՝ համբեցար բառնալ զմեղս աշխարհի քո խաչելութե՟ն. աղաչ։ Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկունս մահու. և արժանի արարեր Թողութե՟ յանցանաց քաւիչ քո արեամբ. աղաչ։ Որ փոխանակ մեղաւորաց զմեռանիլ յանձն առեր. իջանելով 'ի դժոխս փրկեցեր 'ի մեղաստէր բանտէն զգերեալսն. աղ։ Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրութի՟դ. որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութի՟ պարգևեցեր աշխարհի. աղաչ։ Մաքուր և անբիծ կոյս յետ ծննդեան՝ որ մարմնով ծնար զարձակօղն 'ի կապից մահու. բարեխօս լեր վ՟ն անձանց մերոց փրկել 'ի սպառնալեաց գեհենոյն։

ԴԶ

Յորժամ հ՟րկանել փող գալըստեան քո Տ՟ր, յայնժամ զարհուրեալ դողան արարածք 'ի յահէ քումմէ. աղաչեմք զքեզ փրկիչ՝ հանգո՛ և զմեր ննջեցեալսն ընդ

սէ̃ս քս․ որ միայնդ ես բազումողորմ։ Յահաբեկ լուսոյ ծագմանն քոյ տ̃ր ցնծան գասք առաքինեացն 'ի վերայ լուսեղէն ամպոյն․ աղաչ։ Անո- խակալ բազմագութ ողորմած տ̃ր, մի̃ անտես առներ զմեղուցեալքս յահագին աւուրն, որ մի։ Որ իջեր 'ի յերկնից․ և մարմնացար 'ի ս̃բ կուսէն, անճառելի քոյին ծնըն- դեամբ և զիս մի̃ անտես առներ, այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քով։

ԴԿ

Որ թագաւորդ ես յաւիտենից քս̃ ա̃ծ՝ ընկալ զծառայս քո 'ի բարի և շնորհեա 'ի յաջակողման քում դասիլ։ Որ ունիս իշխանութի մահու և կենաց՝ հանգո զհոգիս քոց ծա- ռայից․ և շնորհ։ Յորժամ կարգի աթոռ տէրութե̃դ․ քո, և հաստատի ատեան դատաստանի, յայնժամ խնայեա 'ի ծառայս քո․ և շնորհ։ Ամենօրհնեալ ա̃ծամայր մարիամ, քերովբէական աթոռ արարչին մե- րոյ անօրէնութե̃, զոր երանեն ա-

մենայն աղինք համապաղ։

### Մաղթանք։

Հոգւոցն հանգուցելոց Քս՟ Ած՟՝ տուր հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս շնորհեա́ զթողութիւն յանցանաց։

### Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զՏր՟ աղաչ։
Վս՟ հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քս՟, զի զնս՟ ը՟ արդարոցն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ տէր Ած՟ մեր կեցո́ և ող։
Տր՟ ողորմեա́. գ՟։

### Աղօթք։

Քս՟ որդի Այ՟ անոխակալ և բարեգութ՝ գթա́ քո արարչական սիրովդ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա́ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա́ արժանի ողորմութեան՝ քաւութեան և թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացո́ ընդ սրբս՟ քո յաջա-

կողմեան դատուն: Զի դու ես տ̃ր և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և միշտ:

Օրհնեալ տ̃ր մեր յ̃ս ք̃ս. ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Մաղթանք:

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն ա̃ծ. մեր մեղաց և յանցանացն թողութի շնորհեսցէ. 'ի չարեաց փրկեսցէ. 'ի մեղաց պահեսցէ. և նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Եւ աստէն սկսանի պատարագն:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՅ

Վասն մարմնաւոր կերակրոց և ըմպելեաց։

---

Պատրաստեն զսեղանն հացիւ, և զարդարեն կերակրօք. և կանգնին իւրաքանչիւրոք 'ի տեղիս իւրեանց. և գայ իշխանաւորն, կամ քահանայն, և ասէ սաղմոս։

ԿՅ

*Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, և դու տաս կերակուր ն՟ց 'ի ժամու։*

Դպիրն։

ԲԱՐՁՐ *առնեմ զքեզ ա՟ծ իմ և Թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։*

*Զօրհանապազ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։*

Մեծ է Տէր, և օրհնեալ է յոյժ. և մեծութեան նորա ոչ գոյ չափ:

Ազգ և ազգ գովեսցեն զգործս քո և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծ վայելչութիւն փառաց սրբութեան քոյ խօսեսցին. և զսքանչելիս քո պատմեսցեն:

Զզօրութիւն ահի քո ասասցեն. և զմեծութիւնս քո պատմեսցեն:

Զյիշատակ բազում քաղցրութեան քոյ բղխեսցեն. և արդարութեամբ քով ցնծասցեն:

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ:

Քաղցր է Տէր առ ամենեսեան. և գթութիւն նորա ՚ի վերայ ամ՟ արարածոց իւրոց:

Խոստովան եղիցին առ քեզ Տէր ամ՟ գործք քո. և ս՟բք քո օրհնեսցեն զքեզ:

Զփառս արքայութեան քոյ ասասցեն, և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Ցանուցանել որդւոց մարդկան զզօրութիւնս քո. և զփառս մեծվայելչութեան արքայութեան քոյ:

Արքայութիւն քո արքայութիւն ամ՟ յա-

ւխտենից. և տէրութիւն քո յազգէ
մինչև յազգ։

Հաւատարիմ է տէր յա՟մ բանս
իւր և արդար է յա՟մ գործս իւր։

Հաստատէ տէր զա՟մ գայթակ-
ղեալս. և կանգնէ զա՟մ գլորեալս։

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան.
և դու տաս կերակուր նոցա 'ի
ժամու։

Բանաս զձեռն քո, և լցուցանես
զամենեսեան քաղցրութ՟ կամ՟ք քո։

Արդար է տէր յա՟մ ճանապարհս
իւր. և ս՟բ է յա՟մ գործս իւր։

Մերձ է տ՟ր առ ամենեսեան՝ որք
կարդան առ նա, առ ամենեսեան
որք կարդան առ նա ճշմարտութ՟։

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր. աղօթից նոցա լսէ և կեցու-
ցանէ զնոսա։

Պահէ տէր զամենեսեան՝ որք սի-
րեն զնա. և զա՟մ մեղաւորս սա-
տակէ տէր։

Զօրհնութիւն տ՟ն խօսեսցի բերան
իմ. օրհնեսցէ ա՟մ մարմին զանուն
ս՟բ նորա յաւիտեան և յաւիտեանս
յաւիտենից։

Փառք հօր և որդւոյ։

Քահանայն ։

Ողորմած գթած է տր̃. երակուր տայ երկիւղածաց իւրոց ։

Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութեան զտր̃ աղա ։

Աղաչեսցուք զամենակալն ած̃, զի պարգևեսցէ մեզ կերակուր ուրախութեան, և լցուսցէ զսիրտս մեր 'ի լիուէ̃ արարածոց իւրոց. ամենակալ տէր ։

Քահանայն ։

Օրհնեա́ քն̃ ած̃ մեր հոգևոր օրհնութը̃ զկերակուրս և զըմպելիս ծառայից քոց. և շնորհեա́ յառողջութի̃ հոգւոյ և մարմնոյ ։ Որպէս զի կրօնաւորական պարկեշտութը̃ վայելելով 'ի մարմնաւոր պիտոյիցս անանց բարեացդ և երկնից արքայութեդ հաղորդս լիցուք ընդ ամ̃ սր̃ս քո ։ Եւ գոհութը̃ փառաւորեսցուք զքեզ ը̃ հօր և ամենասբ̃ հոգւոյդ. այժմ և ։

Հայր մեր որ յերկինս ։

Եւ օրհնօղ սեղանոյն կալով կանգուն՝ և առեալ զհացն բեկանէ ընդ պատուաւորացն, որք առընթեր կան . կամ զհետ այնորիկ, որ պատարագօղն է ճաշոյն . և նոքա առ ամենեսեան . և ասէ, *Ճաշակեցէք խաղաղութբ* . և նստին 'ի ճաշն :

Իսկ եթէ վանական իցեն, կամ անապատաւորք, նստցի մինն յեղբարց 'ի բարձրագոյն տեղւոջ, և առեալ ընթերցցու զգիրս ա͞ծային . և ամենեքեան ունկն դիցեն ընթերցմանն անմռունչ ճաշակմամբ : Եւ եթէ ոք խնդրեսցէ զլուծումն ինչ պարականոնաց, լուծցեն՝ որք կարօղքն իցեն . և դարձեալ ճաշեսցեն լռելեայն, և ոչ աղաղակաւ :

---

Եւ յետ յառնելոյ 'ի սեղանոյն դարձեալ կացցեն 'ի տեղիս իւրեանց :

Եւ ասասցէ քահանայն :

*Տէր յո լցաք 'ի բարութենց քոց :*

Դպիրն ։

Տացո՛ւք գոհութիւն տն այ մերոյ ։

Աւճք տն 'ի վերայ երկխուղածաց իւրոց, և որք յուսան յողորմութիւն նորա ։

Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա ․ և կերակրել զնոսա 'ի սովու ։

Անձինք մեր համբերեսցեն տն ․ զի օգնական և պաշտպան մեր է ։

'Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր ․ և յանուն սբ նորա յուսասցուք ։

Եղիցի ողորմութիւն քո տէր 'ի վերայ մեր ․ որպէս յուսացաք 'ի քեզ ։

Փառք հօր և որդւոյ ։

Քահանայն ։

Կերակրիչ և ուրախարար տէր, փառք քեզ ․ լցուցանօղ քս գոհանամք զքէն ։

Սարկաւագն ։

Եւ ևս խաղաղութե զտէր աղա ։

Գոհացարո՛ւք 'ի վերայ լիութեց պարգևաց տն այ մերոյ ։ Որ կերակրէ զմեզ օրըստօրէ առատապէս քաղցրութբ կամօք իւրովք ։ Զի հո-

գևոր բարուեն և երկնից արքայութեն հաղորդս արասցէ զծառայս իւր ըստ ակնկալութե յուսոյն մերոյ ։ Ամենակալ տէր ած մեր կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք ։

Օրհնեալ ես տէր ած մեր, որ կերակրես զմեզ 'ի մանկութէ և տաս կերակուր ամ մսեղեաց • լցո՛ ուրախութք և բերկրութք զսիրտս մեր ։ Որպէս զի զամ բաւականութի ունիցիմք առաւելեալք 'ի գործս բարութե 'ի քս յս 'ի տէր մեր ։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ ։

Խաղաղութի ամենեցուն ։

Փառք քեզ տէր՝ փառք քեզ Թագաւոր փառաց, որ ետուր մեզ կերակուր ուրախութե • և լցուցեր ըզսիրտս մեր 'ի լիութէ ամենաբաւական ողորմութե քո • լցո՛ և զմեզ հոգւովդ քով սրբով • որպէս զի գտցուք առաջի քո հաճոյք, և մի ամաչեցեալք • զի դու տաս և հա-

տուցանես իւրաքանչիւր ը՟ գործս իւր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս. ամէն:
Հայր մեր որ յերկինս:

Զկերօղքս ա՟ծ օրհնեսցէ. սպասաւորացն և երախտաւորացն վարձըս բարեաց պարգևեսցէ. և օրհնեսցէ զամենեսեան ք՟ս ա՟ծ որ զմեզ կերակրեաց և լիացոյց, նմա փառք յաւիտեանս. Ամէն:



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ԵՐԵ-ԿՈՅԻ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս Որդւոյն այ․ որ էջ 'ի խաչէն և պատեալ պատանա-նաւ, եդաւ 'ի գերեզմանի :

---

Ես առ քեզ կարդացի․ և տէր լուար ինձ յերեկոյս, 'ի վաղորդայն և 'ի հասարակ աւուր :

Ապաւէնի այ իմոյ, և ակն ունէի կենարարին․ որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ :

Փառք հօր և որդւոյ :

Եւ եւս խաղաղութ զտէր աղաչ :

Օրհնութն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ :

Խաղաղութն ամենեցուն :

---

### Սաղմոս ՁԵ :

ԽՈՆԱՐՀԵՑՈ տէր զունկն քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես :

Պահեա՛ զանձն իմ սբ̄ տր̄ . փրկեա՛ զծառայս քո ա̄ծ իմ, որ 'ի քեզ յուսացայ :

Ողորմեա՛ ինձ տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ . ուրա՛խ արա զանձն ծառայի քոյ . զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ :

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես . բազումողորմ առ ամենեսեան, որք կարդան առ քեզ :

Ունկն դի՛ր տէր աղօթից իմոց . և նայեաց 'ի ձայն խնդրուածոց իմոց :

Յաւուր նեղութե̄ իմոյ կարդացի առ քեզ . և լուար ինձ :

Ո՛չ ոք է նման քեզ յա̄ծս տէր . և ոչ ոք է որպէս զգործս քո :

Զա̄մ ազգս՝ զոր արարեր, եկեսցեն և երկիրպագցեն առաջի քոյ տէր . և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան :

Մեծ ես դու տր̄, և առնես սքան.

չելիս, և դու միայն ես ա̃ծ ։

Առաջնորդեա՛ ինձ 'ի ճանապարհի քում, և գնացից 'ի ճշմարտութե̃ քում․ և ուրախ եղիցի սիրտ իմ երկնչել յանուանէ քումմէ ։

Խոստովան եղէց առ քեզ տ̃ր ա̃ծ իմ․ բոլորով սրտիւ իմով փառաւոր արարից զանուն քո յաւիտեան ։

Մեծ եղև 'ի վերայ իմ ողորմու̃ի քո․ և փրկեցեր զանձն իմ 'ի դժոխոց ներքնոց ։

Ա̃ծ անօրէնք յարեան 'ի վերայ իմ․ և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ․ և ոչ համարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց ։

Այլ դու տէր ա̃ծ իմ, գթած ես և ողորմած․ երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ․ նայեա՛ց առ իս և ողորմեա՛ ինձ ։

Տո՛ւր զօրութի̃ն ծառայի քոյ, կեցո՛ զորդի աղախնոյ քոյ․ և արա՛ առ իս նշան բարութե̃ ։

Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն․ զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս ։

Փառք Հօր և ։

### Մաղթանք:

Փառք քեզ Ած՝ փառք քեզ յա-ղագս ամի. տէր՝ փառք քեզ:
Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեմ:
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ:

### Խաղաղութիւն ամենեցուն:

### Սաղմոս. ՃԼԹ:

ԱՊՐԵՑՈ զիս տր 'ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս:
Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտս իւրեանց. զօր ամ պատրաստեցան 'ի պատերազմ:
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի. և Թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա:
Պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի մարդոյ չարէ փրկեա զիս:
Խորհեցան խափանել զգնացս իմ. Թաքուցին ամբարտաւանք զորո-գայթ ինձ:
Լարս ձգեցին որոգայթ ոտից ի-մոց. շուրջ զշաւղք իմովք եդին

ինձ զգայթակղութի̃ն ։

Ասացի տր̃ ա̃ծ իմ ես դու . ունկն դիր տէր ձայնի աղօթից իմոց ։

Տէր տէր զօրութի̃ն փրկութե̃ն իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի ։

Մի՛ մատներ զիս տէր 'ի ցանկու̃ն մեղաւորաց . ոյք խորհեցան վասն իմ ընդ վայր հարկանել զիս ։

Զի մի՛ երբէք բարձրասցին . և խորհուրդք նց̃ մի՛ կատարեսցին . վախճան կատարածի նոցա վաստակ շըրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա ։

Արկցես 'ի վերայ նոցա զկայծակունս հրոյ , և կործանեսցես զնոսա . 'ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ ։

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի 'ի վերայ երկրի . զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն 'ի կորուստ ։

Ծանեայ՝ զի առնես տէր զդատաստանս աղքատի , և զիրաւունս տնանկի ։

Արդարք գոհասցեն զանուանէ քումմէ . և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց ։

Տէր կարդացի առ քեզ, և լո՛ւր ինձ. նայեա՛ց 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի:

Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութե̄:

'Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս՝ որք գործեն զանօրէնութի̃. և ոչ եղէց կցորդ ընտրելեաց նոցա:

Խրատեսցէ զիս արդարն ողորմութ̃բ, և յանդիմանն արասցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ. այլ աղօթք իմ 'ի կամս նորա:

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա. լուիցեն բանից իմոց՝ և քաղցրասցին:

Որպէս թանձրութիւն հողոյ զի ափուեալ է 'ի վերայ երկրի, ցրուեսցին ոսկերք նոցա մերձ 'ի դժոխս:

Առ քեզ Տէր Տէր են աչք իմ.

'ի քեզ յուսացայ, մի՛ հաներ զհոգի յինէն։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թաքուցաւ ինձ, 'ի գայթակղուէ̄ գործողին զանօրէնութի̄։

Անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես մինչև անցից։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի. ձայնիւ իմով զտէր աղաչեցի։

Սփռեցից առաջի տ̄ն զաղօթս իմ. և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից։

'Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ՝ դու տէր ծանեար զշաւիղս իմ. 'ի ճանապարհ՝ յոր և գնայի, թաքուցաւ ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ց տէր յաղօթս իմ. զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի

հալածչաց իմոց , զի հզօրք եղեն քան զիս :

Տէր՝ հա՛ն 'ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ :

Եւ քեզ սպասեն արդարք , մինչև հատուսցես ինձ :

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս͞բյ . այժմ և միշտ :

Երգ Ներ[illegible] :

Ալէլուիա . ալէլուիա :

Լոյս զուարթ ս͞բ փառաց անմա֊հի հօր երկնաւորի սրբոյ կենարա֊րի յ͞ս ք͞ս :

Եկեալքս 'ի մտանել արեգական, տեսաք զլոյս երեկոյին : Օրհնեմք զհայր և զորդի և զս͞բ հոգին ա͞յ . և ամենեքեան ասեմք ամէն : Արժա֊նաւորեա՛ զմեզ յա͞մ ժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ա֊մենասրբ երրորդութեդ : Որ տաս զկենդանութի . վ͞ս որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ :

Մաղթանք :

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես

'ի բարձունս, և օրհնեալ են փառք մեծութե՟ քոյ. որ հաստատեցեր զլուսաւորս 'ի բարձունս. 'ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ա՟մ տիեզերս: Արարեր զարեգակն լուսատու տունջեան, զլուսինն և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զլոյս ճրագի. դու ես լոյս գովելի. ո՟ր և առաջին լոյսն. 'ի քէն փախնու խաւարն. և զլոյս քո կենդանի տէր ծագեա՛ 'ի սիրտս մեր: Եւ մեք միաբան ասասցուք. օրհնեալ է անուն ո՟ր փառաց քոց. և քեզ երգեմք զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ ս՟բ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ:

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր ա՟ծ մեր. որ շնորհեցեր մեզ զտիւս խաղաղութե՟ անցուցանել, և հասանել 'ի ժամ երեկոյիս: Արժանաւորեա՛ զմեզ տէր ո՟ր սրտիւ, հրեշ-

տաղային երգով գոհաբանութիւն մատուցանել տն այ ամենակալին կեցո՛ և ողորմեա՛։

Ողորմեա՛ց մեզ տէր ա՛ծ մեր ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութբ. տէր ողորմ. գ։

Մաղթանք։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի, և զՍուրբ Հոգիդ. այժմ և միշտ։

Մեղեդիք ծննդեանն քի, և աւետեաց, և վերափոխմանն, և այլոց տօնից ածածնին։

Ա

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. և ես այսօր ծնայ զքեզ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս։

Բ

Մեծացուցէ անձն իմ զտէր. և

ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Զի հայեցաւ 'ի խոնարհութի̃ն աղախնոյ իւրոյ. աhա յայսմհետէ երանեսցեն ինձ ա̃մ ազգ։

Գ

Իջցէ ո̃ղ ցանձրև 'ի վերայ գեղմանն. որպէս ցօղ՝ զի ցօղէ յերկիր։

Ա̃ծ զիրաւունս քո արքայի տուր. և զարդարութի̃ս քո որդւոյ թագաւորի։

Մեղեդի յարուէ̃։

ԱԶ

Տէր կարող և հզօր. տէր կարող 'ի պատերազմի։

Տ̃ն է երկիր լրիւ իւրով. աշխարհ և ա̃մ բնակիչք նորա։

ԱԿ

Աթոռ քո ա̃ծ, յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութե̃՝ գաւազան արքայութե̃ քո։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի, և ասեմ զգործս իմ թագաւորի։

ԲԶ

Տէր թագաւորեաց. ցնծասցէ եր-

*կիր. ուրախ եղիցին կղզիք բազումք ։*

*Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց . ետես և սասանեցաւ երկիր ։*

ԲԿ

*Երգեցէք տ̃ն երգ նոր ա̃մ երկիր. ծառայեցէք տ̃ն ուրախութ̃բ ։*

*Մտէք առաջի նորա ցնծութ̃բ. ծառայեցէք՝ զի նա է տէր ա̃ծ մեր ։*

ԳՁ

*Եկա՛յք և տեսէք զգործս ա̃յ . որ արար զնշանս և զարուեստս 'ի վերայ երկրի ։*

*Ա̃ծ մեր ապաւէն և զօրութի . օգնական 'ի վերայ նեղութ̃ց, որք գըտին զմեզ յոյժ ։*

ԳԿ

*Ա̃ծ մեր յերկինս և յերկրի . զա̃մ զոր ինչ կամեցաւ՝ և արար ։*

*Յելանելն ի̃ղի յեգիպտոսէ՝ տանն յակովբայ 'ի ժողովրդենէ այլազգեաց ։*

ԴՁ

*Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն , աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ , զոր զօրացուցեր զնա 'ի քեզ ։*

Որ հովուեսդ իսրայէլի, նայեաց. որ առաջնորդես որպէս խաշին յովսէփու ։

ԴԿ

Ա͞Ծ աստուածոց տ͞ր խօսեցաւ. կոչեաց զերկիր ։

Ցելիցն արեգական մինչ 'ի մուտս. 'ի սիոնէ վայելչութ͞ի գեղեցկութ͞ե նորա ։

ՄԵՍԵԴԻՔ ԳԱԼՍՏԵԱՆ ։

Օրհնեալ որ գաս յանուն տ͞ն. օրհնեալ՝ որ գալոց ես ։

Տէր ա͞ծ մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութ͞ե կանխաւ՝ մինչև յանկիւնս սեղանոյ ։

'Ի ՁԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ։

Լուացից սրբութ͞բ զձեռս իմ. և շուրջ եկեց զսեղանով քո տէր ։

Տէր՝ սիրեցի զվայելչութ͞ի տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց ։

'Ի ՁԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ ։

Ետուն 'ի կերակուր ինձ լեղի. և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։

Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ 'ի հատուցումն և 'ի գայթակղութի̃ :

'Ի փոխն ձայնի խաղին :

Ետուր երկիւղածաց քոց նշան . զի ապրեսցին յերեսաց աղեղան :

Որպէս փրկեսցին սիրելիք քո . կեցո՛ աջով քով՝ և լո՛ւր մեզ :

Եկեղեցւոյ :

Ահա օրհնեցէք ա̃մ ծառայք տ̃ն զտէր :

Ո՛ կայք 'ի տան տ̃ն և 'ի գաւիթս ա̃յ մերոյ :

Կիրակամտի :

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց :

Զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս . և ես յաւուրս իմ կարդացի առ նա :

Մեսեդի ճարփերոսաց :

ԱՁ

Եղիցի ողորմութի̃ քո տէր 'ի վերայ մեր , որպէս յուսացաք 'ի քեզ:

Ցնծացէք արդարք 'ի տ̃ր . ուղղոց վայելէ օրհնութի̃ :

ԱԿ

Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ-
վայր հարկանէ զս̃բս իւր:

Փրկութի̃ արդարոց 'ի տ̃նէ է· վե-
րակացու է նոցա 'ի ժամանակս նե-
ղութե̃:

ԲՁ

Սքանչելի է ա̃ծ 'ի վ̃ր ս̃բց իւրոց
ա̃ծ իսրայէլի:

Տէր ա̃ծ օրհնեալ՝ օրհնեալ է տէր
զօրհանապազ:

ԲԿ

Օգնութի̃ ինձ 'ի տ̃նէ եկեսցէ, որ
արար զերկինս և զերկիր:

Համբարձի զաչս իմ 'ի լերինս,
ուստի եկեսցէ ինձ օգնութի̃:

Գ·Ձ

Ա̃ծ փառաւորեալ է 'ի խոր-
հուրդս սրբոց իւրոց· մեծ և ահա-
ւոր 'ի վերայ այնոցիկ, որք շուրջ են
զնովաւ:

Խոստովան եղիցին երկինք սքան-
չելեաց քոց տէր· և ճշմարտութի̃
քո յեկեղեցիս սրբոց:

Գ·Կ

Սիրեցից զքեզ տէր զօրութի̃ իմ·

տր̃ հաստատիչ իմ, ապաւէն իմ և
փրկիչ իմ։
Ած̃ օգնական իմ. և ես յուսամ
'ի նա. ապաւէն իմ, եղջիւր փըր-
կութեան իմոյ ընդունելի իմ է։

ԴՁ

Մերձ է տէր առ ամենեսեան՝
որք կարդան առ նա. առ ամենե-
սեան ոյք կարդան առ նա ճշմար-
տութբ̃։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր. աղօթից նոցա լսէ, և կեցու-
ցանէ զնոսա։

ԴԿ

Արդարքն ոպ̃ զարմաւենիս ծաղ-
կեսցին. որպէս զմայրսն լիբանանու
բազումք եղիցին։
Տնկեալք եղիցին 'ի տան տն̃. և 'ի
գաւիթս ած̃ մերոյ ծաղկեսցին։

Մեռելոյ ապաշխարութե։

ԱՁ

Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում
առ նա։
'Ի կարդալ իմում լուաւ ինձ ած̃
ըստ արդարութեն իմոյ։

ԱԿ

Մի՛ ասասցէ թշնամին իմ, թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց:

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն. մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին՛ի վ՟ր իմ. նայեա՛ց, և լո՛ւր ինձ տէր ա՟ծ իմ:

ԲՁ

Բերան արդարոյ պատմէ զիմաստութի՟ն. և լեզու նորա խօսեսցի զիրաւունս:

Մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ ընդ այնոսիկ՝ ո՟յք գործեն զանօրէնութի՟ն:

ԲԿ

Քաղցրու՟ն արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում:

Քաղցր ես դու տէր. և քաղցրու՟թ քով խրատեա՛ զիս:

ԳՁ

Նայեա՛ց և լուր ինձ տ՟ր ա՟ծ իմ:

Մինչև յե՞րբ տ՟ր մոռանաս զիս իսպառ. մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Գ․Կ

Գթութիւնք քո բազում են տր̄. և ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս:

Տե՛ս զխոնարհութիւն իմ, և փրկեա՛ զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Դ․Ձ

Ա՟ծ յօգնել ինձ նայեա՛ց. և տէր յընկերել ինձ փութա՛:

Ամաչեսցեն, և յամօթ լիցին, որք խնդրէին զանձն իմ:

Դ․Կ

Լո՛ւր ա՟ծ աղօթից իմոց՝ յաղաչել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ:

Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց. 'ի բազմուէ̄, որք գործեն զանօրէնութիւն:

Կարգ ուղիղ եղիցեայ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ:
Որպէս խունկ առաջի քոյ տէր:
Համբարձումն ձեռաց իմոց:
Պատարագ երեկոյի:

Յապաւոյ առաջնորդմանն:

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր: Համբար-

ձումն ձեռաց իմոց պատարագ ե-րեկոյի ։

Տէր աղաղակեցի առ քեզ լո՛ւր ինձ ։

Նայեա՛ց 'ի ձայն խնդրուածաց ի-մոց յաղաղակել իմում առ քեզ ։

'Ի Մեծի Հինգշաբաթու ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ · որպէս խունկ առաջի քո տէր ։

Զերեկոյի աղօթս մեր ընկա՛լ տր̃ · և զտարածումն ձեռա՛ց մերոց ։

'Ի Մեծի Ուրբաթու ։

Ուղիղ եղիցին աղաչանք մեր · ոպ̃ խունկ առաջի քո տէր · համբար ձումն ձեռաց մերոց · պատարագ երեկոյի ։

Քարոզ Կիւրակամտից, և ա̃յլ աւուրց տէրունեաց ։

Ասասցուք ամենեքեան միաբա-նութ̃ · տէր ողորմեա ։

Վս̃ խաղ · եւն ։ Գի՛տ 'ի Թիւն 172 ։

Քարոզ 'ի փոքր տ̃էց, և պահոց ։

Եւ եւս խաղաղութ̃ զտ̃ր աղա ։

Աղաչեսցուք զամենակալն ած̃

զհայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի զթագաւորն խաղաղութ՟ն յաղագս խաղաղութ՟ն և վասն միայնոյ՝ ս՟բ՝ կաթողիկէ՝ և առաքելական եկեղեցւոյ. զի զբազում ամս խաղաղութ՟բ տացէ մեզ տ՟ր ա՟ծ մեր. և զթագաւորս խաղաղարարս առաքեսցէ առ մեզ վասն մեծի՝ ս՟բ՝ և ահաւոր անուան իւրոյ. զպետս գաւառաց, զզօրավարս, զզօրագլուխս, զժողովուրդս, զմուտս և զելս մեր խաղաղութ՟բ պահեսցէ. և զամենայն պատերազմունս թշնամեոյն խորտակեսցէ 'ի մէնջ. տէրն ամենակալն կեցուսցէ և ողորմեսցի:

Զերեկս մերձեալ, և զառաջիկայ գիշերս խաղաղութ՟բ անցուցանել հաւատով 'ի տ՟նէ խնդրեսցուք:

Զհրեշտակ խաղաղութ՟ն պահա:

Զքաւութ՟ի և զթողութ՟ի յանցանաց:

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօր:

Եւ ևս և փառս: Զանձինս: Ողր:

Աղօթ՟ք:

Լո՛ւր ձայնից մերոց տէր ա՟ծ մեր. ընկա՛լ զաղաչանս մեր, զհամբար-

ձուխն ձեռաց մերոց և զբանս աղօթից՝ սրբելով զերեկոյի պատարագս մեր 'ի հոտ անուշից՝ 'ի հաճոյս քեզ պատրաստել։ Յաւել 'ի մեզ տէր ամենակալ զհաւատ, զյոյս, զսէր և զամ գործս առաքինութե. որպէս զի ըստ կամաց քոց բարեսիրաց միշտ կրօնաւորեալք բարեպաշտութբ 'ի տուէ և 'ի գիշերի. և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութե և վասն հոգւոր կենացդ աղաչել զքեզ տէր. և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութի. և գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսբ հոգիդ. այժմ։

Խաղաղութի ամենեցուն ։

Քեզ երկրպագանելով տէր ած մեր՝ գոհանամք զքէն յաղագս խաղաղութբ անցուցանելոյ 'ի մէնջ զերկարուն տունջեանս ։ Տուր մեզ տէր աղաչեմք զքեզ զերեկս և զառաջակայ գիշերս առանց մեղաց և առանց գայթակղութե անցուցանել, հաստատուն կալ և մնալ 'ի

հաւատով 'ի յոյս, 'ի սէր, և 'ի պատուիրանապահութիւն քոյ: Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի, եկեղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, և անձանց մերոց զփրկութիւն: Որպէս զի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր, և զմեծվայելչական փառաբանութիւն միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեդ քո՟ ա՟ծ մեր. այժմ և միշտ:

Եւ ապա ասէ ՟քհ ա՟ծ:

Ս՟բ ա՟ծ. ս՟բ և հզօր. ս՟բ և անմահ ողորմեա՛ց մեզ: Երիցս կրկնեա՛:

Մաղթանք:

Փրկեա՛ զմեզ 'ի փորձութենէ, և յա՟մ վտանգից մերոց:

Քարոզ:

Եւ ես խաղաղութե՟ զտէր աղա:

Վասն լսելի լինելոյ ա՟ն ա՟յ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութե՟բ ս՟բ ա՟ծածնին. և իջանելոյ 'ի վերայ մեր ողորմութե՟ և գթութե՟ ա՟ն ա՟յ. ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ող:

Օրհնութի և փառք Հօր և որդւոյ, և Հոգւոյն սբյ. այժմ և միշտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

ՀԱՄԲԱՐՁԻ զաչս իմ ՚ի լերինս՝ ուստի եկեսցէ ինձ օգնութի:

Օգնութի ինձ ՚ի Տնէ եկեսցէ. որ արար զերկինս և զերկիր:

Մի՛ տար ՚ի սասանութի զոտն քո. և մի՛ ննջեսցէ պահապան քո:

Ո՛չ ննջէ, և ո՛չ ՚ի քուն երթայ պահապանն Իէլի:

Տէր պահեսցէ զքեզ. և տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով:

Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ. և մի՛ լուսինն ՚ի գիշերի:

Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ. պահեսցէ տէր զանձն քո:

Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայսմհետէ մինչև յաւիտեան:

Փառք Հօր և որդւոյ:

Ասի համբարձին շարական ըստ պատշաճի:

Կերպարանափոխի ձայն առա՛ : ԱՁ :

Մ͞ծ ես տ͞ր զօրութեց՝ որ բնակեալդ ես 'ի յերկինս, և բարեբանիս 'ի ս͞բց քոց։

Երկնային զօրութիւնք՝ սերովբէք և քերովբէք անդադար օրհնեն ս͞բ զանունդ քո :

Քահանայք ընդ նոսին՝ պաշտօնեայք և ժողովուրդք երկրպագեսցուք տէրութ͞եդ քոյ :

Լոյսդ՝ որ յառաջքան զյաւիտեանս 'ի հօրէ առաքեցար . և լուսով իմանալեաւ լցեր զարարածս . օրհնեալ ես թագաւոր յաւիտենից։

Որ զլոյսն 'ի սկզբանէ հաստատեցեր վերստին . և զխաւարն անգիտութ͞ե յարութ͞եդ քո հալածեցեր . օրհնեալ ես :

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն երգեսցուք ցնծութ͞ 'ի յարութ͞ե երեկոյիս . օրհնեալ ես :

Երկնաքաղաքացին յովհաննէս մեծ 'ի ծնունդս կանանց՝ քարոզէր յանապատի ազգ արարող բարբառով

զծագումն լուսոյ արեգականն արդարութեան :

Ճշմարիտ մարգարէ, և ձեռնադրօղ որդւոյն Աստուծոյ, յառաջընթաց կարապետ, և պատմօղ Աստուածային օրինացն. հորդէր Ճանապարհ թագաւորին յաւիտենից :

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ 'ի պարգևի մասին խնդրէր զգլուխ մարգարէին, շիջուցանել զարուսեակն, և զանաղօտ լապտերն :

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգևեա երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ՝ զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից :

Զհաւատացեալ ժողովուրդս մեր երրորդութեան, և զապաւինեալս 'ի խորան փառաց քոց պահեա անխռով 'ի խաղաղութեան :

### Քարոզ :

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք : Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ : Տէր ողորմեա : Գ :

## Աղօթք :

Հայր գթած՝ բարեխնամօղ՝ արարիչ ա՟մ արարածոց, ընկալ զպաղատանս ծառայից քոց ՚ի ժամ երեկոյիս որ առատ ես առ ամենեսեան՝ պարգեւօք բարերարութե քո : Ողորմեա՛ տ՟ր ա՟մ աշխարհի, և եկեղեցւոյ քում ս՟բյ, հիւանդաց, վշտացելոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարողաց և հոգւոցն հանգուցելոց : Զի դու տէր ամենակալ գիտես զպէտս մեր և զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. և քեզ է որդւոյ և ամենասուրբ հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս :

Յաւուրս աղուհացից ասա զայս. Տէր ամենակալն. և զայլ քարոզն և աղօթքն. տե՛ս ՚ի թիւն 203. և յետ նորա՝ Որ բնակեալն : Իսկ յայլ աւուրս պահոց, և ՚ի տօնս սրբոց՝ ասա միայն Որ բնակեալն : Եւ ՚ի կիրակամուտս՝ Աստ օրհնեցէքն :

### Արձակման ժամ:

Որ բնակեալ է յօգնութիւն բարձրելոյն՝ ընդ հովանեաւ այ յերկնից հանգիցէ:

Ասասցէ տն ընդունելի իմ ես դու, ապաւէն իմ ած՝ և ես յուսամ 'ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանիցն խռովութե̃:

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց նր յուսասցիս:

Ոպ զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութի̃ նորա:

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ո՛չ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:

Ցիրէ՝ որ շրջի 'ի խաւարի. 'ի դայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր:

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու տէր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն . ոչ հասցեն առ քեզ չարք , և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո :

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո 'ի պահել զքեզ յա՟մ ճանապարհս քո :

'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ , զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո :

'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու . և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ՝ և փրկեցից զնա . հովանի եղէց նմա . զի ծանեաւ զանուն իմ :

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա . և առ նմա եղէց 'ի նեղու՟ե :

Փրկեցից՝ և փառաւոր արարից զնա . երկայնաւուրբք լցուցից . և ցուցից նմա զփրկութի՟ իմ :

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս :

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ՟ն իւրոյ . և ո՟պ աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ :

Այնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ մեր, մինչև ողորմեսցիս 'ի վե-րայ մեր :

Ողորմեա՛ց մեզ տէր՝ ողորմեա՛ց մեզ, զի բազում լցաք արհամար-հանօք :

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից:

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս. և 'ի զօրութ՟ե քում իրաւ արա ինձ :

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւ-րեանց :

Ահա՛ ա՟ծ օգնական իմ. և տէր ըն-դունօղ հոգւոյ իմոյ :

'Ի դարձուցանել զչարն 'ի թշնա-միս իմ, ճշմարտութ՟բ քով սատա-կեա՛ զնոսա :

Ես կամօք իմովք պատարագս մա-տուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է :

Ցամենայն նեղութ՟է իմմէ փրկե-

ցեր զիս. և 'ի Թշնամիս իմ ետես ակն իմ:

Փառք Հօր և Որդւոյ :

Մաղթանք :

Զբարձրեալն զքո՛ առասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք. և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս մեր:

Քարոզ:

Եւ մեք միաբան զողորմութի՟ն 'ի տ՟նէ խնդրելով՝ ասասցուք ամենեքեան միաբանութ՟բ:

Տէր ողորմեա՛. գ՟:

Աղօթք :

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից քաւիչ մեղաց՝ և կատարիչ խնդրուածոց ք՟ո՟ ա՟ծ մեր. ընկա՛լ զաղաղատանս մեր 'ի ժամ երեկոյիս բարեխօսութ՟բ ս՟բ ա՟ծածնին, և աղաչանօք ա՟մ ս՟րց քոց: Լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր, արժանաւորեա՛ գոհութ՟բ փառաւորել զքեզ ընդ

հօր, և ընդ ս՟բյ հոգւոյդ · այժմ և :
Յիշեա՛ տէր զպաշտօնէայս քո :
Բարերար և բազումողորմ ա՟ծ · քո :
Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս : Ամէն :
Հայր մեր որ յերկինս ես՝ ս՟բ :

---

Փոխ ներաչամպեց :

Աստ օրհնեցէք ա՟մ ծառայք տ՟ն զտ՟ր · ո՛ կայք ՝ի տան տ՟ն, և ՝ի գաւիթս ա՟յ մերոյ :

՝Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր ՝ի սրբութի՟, և օրհնեցէ՛ք զտէր :

Օրհնեսցէ զքեզ տ՟ր ՝ի սիոնէ, որ արար զերկինս և զերկիր :

Խոստովան եղէց քեզ տ՟ր բոլորով սրտիւ իմով · առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ :

Զի լուար զբանս բերանոյ իմոյ · երկիրպագից ՝ի տաճար ս՟բ քո, և խոստովան եղէց անուան քում վասն ողորմութե՟, և ճշմարտութե՟ քոյ :

Մեծ արարեր յամենայնի զանուն ս՟բ քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ · և

բազում արասցես զօրութիւնս յան-
ձին իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ա՟մ
թագաւորք երկրի. զի լուան զբանս
բերանոյ քո, և օրհնեսցեն զճանա-
պարհս քո։

Մեծ են փառք տ՟ն, բարձր է տ՟ր.
զխոնարհս տեսանէ, և զբարձունս
'ի հեռաստանէ ճանաչէ։

Թէպէտ և գնացից ես 'ի մէջ նե-
ղութե՟ց, կեցուսցես զիս 'ի բարկութէ՟
թշնամւոյն։

Ձգեցեր զձեռն քո, և փրկեաց
զիս աջ քո, և տէր հատուսցէ
ընդ իմ։

Տէր ողորմութի՟ն քո յաւիտեան,
զգործս ձեռաց քոց մի՛ անտես
առներ։

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս. և
'ի զօրութե՟ քում իրաւ արա ինձ։

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր
բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ, և
հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ
համարեցան զքեզ ա՟ծ առաջի ի-
րեանց։

Ահա՛ ա՟ծ օգնական իմ. և տէր ընդունօղ հոգւոյ իմոյ :
'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմարտութ՟բ քով սատակեա՛ զնոսա :
Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է :
Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ :
Փառք հօր և որդւոյ :

Քարոզ :

Խնդրեսցուք հաւատով միաբանութ՟բ 'ի տ՟նէ, զի զողորմութ՟ն զշնորհս իւր արասցէ 'ի վ՟ր մեր, տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի :
Կեցո՛ տէր. գ՟, տէր ողորմեա՛ :

Աղօթք :

Թագաւոր խաղաղութ՟ե՝ օգնական և փրկիչ անձանց մերոց՝ ք՟ս ա՟ծ մեր, պարսպեալ պահեա՛ զժողովուրդս քո ընդ հովանեաւ ս՟բ և պատուական խաչիւդ քոյ 'ի խաղաղութ՟ե :

Փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ը̅ հօր և ընդ ս̅բ հոգւոյդ. այժմ և։

Քարոզ խաչի։

Ս̅բ խաչիւս աղաչեսցուք զտ̅ր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր ա̅ծ մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթք։

Պահպանեա՛ զմեզ ք̅ս ա̅ծ մեր ը̅ հովանեաւ ս̅բ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և։

Քարոզ եկեղեցւոյ։

Ս̅բ եկեղեցեաւս աղաչեսցուք զտ̅ր զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ։

Աղօթք ։

Առ դրան սուրբ եկեղեցւոյս, և առաջի աստուածընկալ, և պայծառացեալ սուրբ նշանացս՝ խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ, զհրաշալին և զյաղթօղ զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս ։

Աղօթք ։

՚Ի մէջ տաճարիս, և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ, ըզհրաշալին և զյաղթօղ զյարութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ, և յաւիտեանս ։

## ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս հոգւոյն ա՟յ. այլև 'ի դէմս բանին ա՟յ, որ եդաւ 'ի գերեզմանի. և էջ 'ի դժոխս և խաղաղու՟թի արար հոգւոյն:

Օրհնեցից զտէր յա՟մ ժամ, յա՟մ ժամ օրհնութի՟ն նորա 'ի բերան իմ:

'ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք, և ուրախ եղիցին:

Մե՛ծ արարէք զտ՟ր ընդ իս. և բարձր արասցուք զանուն նորա 'ի միասին:

Խնդրեցի 'ի տ՟նէ, և լուաւ ինձ. և յա՟մ նեղութ՟է իմմէ փրկեաց զիս:

Մատի՛ք առ տէր և առէ՛ք զլոյս. և երեսք ձեր մի՛ ամաչեսցեն:

Այս աղքատ կարդաց առ տ՟ր, և տէր լուաւ սմա. յա՟մ նեղութ՟է սորա փրկեաց զսա:

Բանակք հրեշտակաց տ̃ն շուրջ-
են զերկիւղածովք իւրովք, և պա-
հեն զնոսա ։

Փառք հօր և որդւոյ և հոգ ։
Եւ ևս խաղաղութ̃ն զտէր աղա ։
Օրհնութի և փառք հօր և որդւոյ։

Երգ ապաշխարանաց ։

'Ի նեղութ̃ե իմում ես առ տ̃ր կար-
դացի, և լուաւ ինձ. տէր փրկեաց
զանձն իմ 'ի շրթանց նենգաւորաց
և 'ի լեզուէ չարէ ։

Զկանոնն բովանդակ ասա։ Բայց ոմանք
աղերս չասեն. զի Երգ ապաշխարանաց է։

Սաղմոս ձէ ։

Տէր ած̃ փրկութ̃ե իմոյ, 'ի տուէ
կարդացի, և 'ի գիշերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քոյ
տէր. խոնարհեցո ունկն քո 'ի
խնդրուածս իմ ։

Փառք հօր և որդւոյ և հոգ ։
Եւ ևս խաղաղութ̃ն զտէր աղա ։
Օրհնութի և փառք հօր և որդ ։

Խաղաղութ̃ն ամենեցուն ։

## Սաղմոս Դ։

'Ի ԿԱՐԴԱԼ իմում լուաւ ինձ Ած․ ըստ արդարութե՟ 'ի նեղութե՟ ինձ անդորր արարեր․ ողորմեա՛ ինձ, և լո՛ւր աղօթից իմոց։

Որդի՛ք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք․ ընդէ՞ր սիրէք զնանրութի՟, և խնդրէք զստութի՟։

Ծանիցո՛ւք՝ զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում․ և տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք, և մի՛ մեղանչէք․ զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարո՛ւք։

Մատուցէ՛ք պատարագս արդարութե՟․ և յուսացարո՛ւք 'ի տէր։

Բազումք ասեն, թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութի՟ տն․ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց․ և ետուր ուրախութի՟ սրտից մերոց։

'Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութե՟ յայսմ և 'ի սոյն ննջեսցուք, և զարթիցուք․ զի դու տէր միայն առանձին յուսով քով բնա-

կեցուցեր զմեզ։

Տէր մի՛ սրտմտութ՟ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութ՟ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ ինձ տ՟ր, զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ. և դու տէր մինչև յե՞րբ։

Դա՛րձ տէր, և փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում։

Զի ոչ ոք է, որ ՚ի մահու յիշէ զքեզ. կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութե՟ իմում. լուացի զա՟մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ՚ի սրտմտութ՟ ակն իմ. և մաշեցայ ես ՚ի վերայ ա՟մ թշնամեաց իմոց։

՚Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութի՟։

Լուաւ տ՟ր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր զխն՟-

դրուածս իմ ընկալաւ ։

Ամաչեսցեն, և խռովեսցին յոյժ ա̃մ թշնամիք իմ. դարձցին յետս, և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի, և խռովեսցին ։

Մինչև յե՛րբ տէր մոռանաս զիս իսպառ. մինչև յե՛րբ դարձուցանես զերեսս քո յինէն ։

Մինչև յե՛րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ. և ցաւք սրտի իմոյ զաւուրս ։

Մինչև ցե՛րբ բարձրանայ թշնամին ՚ի վերայ իմ. Նայեա՛ և լո՛ւր ինձ տ̃ր ա̃ծ իմ ։

Լո՛յս տուր տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ ։

Մի՛ ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա. կ̃նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց ։

Ես յողորմութի̃ս քո տէր յուսացայ. և ցնծացաւ սիրտ իմ ՚ի փրկութե̃ քում. օրհնեցից զտ̃ր զբարերարդ իմ ։

Պահեա՛ զիս ա̃ծ իմ. զի ես ՚ի քեզ յուսացայ. ասացի տ̃ն՝ տէր իմ ես դու. և բարիք իմ ինձ ՚ի քէն են ։

Սրբոց քոց՝ որք են յերկրի քում, սքանչելի արարեր զա̃մ կամս իմ 'ի նոսա :

Յաճախեցին հիւանդութի̃ք նոցա. յետ այսորիկ ապա վաղվաղեցին :

Ո՛չ ժողովեցայց 'ի ժողովս նոցա արեանց, և ո՛չ յիշեցից զանուանս նոցա 'ի շրթունս իմ :

Տէր բաժին ժառանգութե̃ իմոյ և բաժակի իմոյ դու ես՝ որ այսրէն դարձուցանես զժառանգութի̃ իմ յիս :

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս. և ժառանգու̃ի իմ հաճոյ եղև ինձ :

Օրհնեցից զտէր՝ որ իմաստուն արար զիս. մինչ 'ի գիշերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ :

Յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ յա̃մ ժամ. զի է ը̃ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց :

Վա̃կ ուրախ եղև սիրտ իմ. և ցնծացաւ լեզու իմ. ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով :

Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ոչ տացես սր̃յ քում տե-

սանել զապականութիւն:

Ցուցեր ինձ զճանապարհս կե-նաց. լցուցեր զիս ուրախութ՟ երե-սաց քոց ՚ի քաղցրութ՟ վայելչութ՟ աջոյ քո մինչ իսպառ:

Լո՛ւր Տէր արդարութե՟. և նայեա՛ ՚ի խնդրուածս իմ. ո՛ւնկն դիր աղօ-թից իմոց, զի ոչ շրթամբք նենգա-ւորօք:

Յերեսաց քոց իրաւունք ինձ ել-ցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն:

Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր ՚ի գիշերի. փորձեցեր զիս՝ և ո՛չ գը-տաւ յիս անիրաւութիւն:

Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շըր-թանց քոց ես պահեցից զճանա-պարհս խիստս:

Հաստատեա՛ զշաւիղս իմ ՚ի ճա-նապարհի քում, զի մի՛ գայթակ-ղեսցին գնացք իմ:

Ես առ քեզ Տէր կարդացի. զի լուար ինձ Ա՟ծ. խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և լո՛ւր բանից իմոց:

Սքանչելի արարեր զողորմութիւնս քո. ո՛ փրկես զայնոսիկ, ոյք յու-

սացեալ են 'ի քեզ՝ յայնցանէ, ոյք հակառակ կան աջոյ քո ։

Պահեա՛ զիս որպէս բիբ ական. ը̅ հովանեաւ թեւոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց, ոյք տառապեցուցին զիս ։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին. և 'ի ճարպս իւրեանց արգելին. և բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութի̃ ։

Մերժեցին զիս, և այժմ դարձեալ պատեցան զինև. ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր ։

Համարեցան ինձ որպէս առիւծ. զի պատրաստի յորս. և որպէս կորիւն առիւծու, զի նստի դարանեալ ։

Արի՛ տէր, ժամանեա՛ նոցա. և խափանեա՛ զնոսա. փրկեա՛ զանձն իմ յամբարշտաց, 'ի սրոյ և 'ի ձեռաց թշնամւոյն ։

Տէր՝ կորո՛ զնոսա յերկրէ. բաժանեա՛ և խափանեա՛ զնս̃ 'ի կեանս իւրեանց ։

Գաղտնեօք քովք լցան որովայնք նոցա. յագեցան կերակրովք, և թո-

զեն զմնացուածս տղայոց իւրեանց:

Ես արդարութ̃բ երևեցայց երե-
սաց քոց. և յագեցայց յերևել փա-
ռաց քոց:

Դատ արա ինձ տ̃ր. և իրաւ արա
ինձ 'ի դատաստանի իմում:

Յազգէ, որ ո՛չ է սբ̃, 'ի մարդոյ
մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:

Դու ա̃ծ, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր
մոռացար զիս. ընդէ՞ր տրտում գը-
նամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ:

Առաքեա՛ տ̃ր զլոյս քո, և զճշմար-
տութի̃ քո. զի առաջնորդեսցեն
ինձ. և հանցեն զիս 'ի լեառն սբ̃,
և 'ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ ա̃յ առ ա̃ծ,
որ ուրախ առնէ զմանկութի̃ իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութ̃բ՝
ա̃ծ ա̃ծ իմ:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն
իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յու-
սա՛ առ ա̃ծ, խոստովանեա՛ նմա,
փրկիչ երեսաց իմոց ա̃ծ է:

Ա̃ծ յօգնել ինձ նայեա՛ց, և տէր
յընկերել ինձ փութա՛:

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք

խնդրէին զանձն իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն, որք խորհէին ինձ
չար։

Դարձցին առժամայն ամաչեցեալք՝
որք ասէին ինձ վա՛շ վա՛շ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ
ամենեքեան, որք խնդրեն զքեզ
տէր։

Ասասցեն յա͞մ ժամ, մեծ է ա͞ծ.
որք սիրեն զփրկութիւն քո։

Ես աղքատ և տնանկ եմ. ա͞ծ օգ-
նեա՛ ինձ. օգնական և փրկիչ իմ ես
դու. տէր իմ մի՛ յամենար։

Տո՛ւր զօրու͞ի ծառայի քոյ. կեցո՛
զորդի աղախնոյ քոյ. և արա՛ առ իս
նշան բարութե͞։

Տեսցեն ատելիք իմ և ամաչես-
ցեն. զի դու տէր օգնեցեր ինձ, և
մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ։

ՆՐԳ։

Շնորհեա՛ մեզ տէր, 'ի գիշերի
զերկնային զխաղաղու͞ի քո. և պա-
հեա՛ զմեզ 'ի պատրանաց թշնամ-
ւոյն ամենայաղթ զօրութ͞բ ն͞ր խա-

չի քո ։ Տէր ա՟ծ փրկութե՟ իմոյ 'ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի քո ։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր ․ խոնարհեցո ունկն քո 'ի խնդրուածս իմ։ Ընկեցէ առ մեզ տէր պահապան 'ի քէն , որ պա-հեսցէ զմեզ յամ ժամ։ Առաքեա՛ 'ի մեզ տէր զզօրութ՟ի սրբոյ խաչին՝ որ պահեսցէ զմեզ յամ ժամ։ Ար-ժանի՟ արա տէր զերեկս զայս խա-ղաղութե՟ և առանց փորձուե՟ ան-ցո՛ զմեզ ։ Արժանաւորեա՛ տէր ըզ-գիշերս զայս խաղաղուե՟, և առանց մեղաց պահելով զմեզ ։ Ընդ մեզ տէր ա՟ծ՝ գիտասջի՛ք հեթանոսք, և պարտեցարո՛ւք զի ա՟ծ ընդ մեզ է ։ Եւ լուարո՛ւք զայս 'ի ծագաց մին-չև 'ի ծագս երկրի ․ զի ։ Եւ հզօրա-ցեալքդ պարտեցարո՛ւք ․ զի ։ Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ 'ի պարտութ՟ի մատնես-ջի՛ք ․ զի։ Եւ զխորհուրդն զոր խոր-հի՛ք՝ խափանէ տէր ․ զի ։ Եւ զբանն զոր խօսի՛ք՝ մի՟ մնասցէ առ ձեզ ․ զի։ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցուք, և ո՛չ խռովեսցուք ․ զի։

Եւ զոհէր ած մեր փառաւոր արաս-
ցուք, և նա եղիցի մեզ յերկիւղ·
զի: Եւ յուսացեալ եղիցուք մեք
'ի նա, և նա եղիցի մեզ 'ի սրբուն·
զի: Եւ յուսացեալ եղիցուք մեք
'ի նա՝ և նա եղիցի մեզ 'ի փրկուն·
զի: Եւ ահաւասիկ ես և ման-
կունք իմ, զոր ետ ինձ ած · զի: Եւ
ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի
ետես զլոյս մեծ · զի: Եւ որ բնա-
կեալդ էք 'ի խաւարի և 'ի ստուերս
մահու, լոյս ծագեսցի առ ձեզ·
զի: Եւ քանզի մանուկ ծնաւ, որ-
դի և տուաւ մեզ· զի: Եւ որոյ իշ-
խանութն իւր 'ի վերայ ուսոց իւ-
րոց· զի: Եւ որ կոչի անուն նորա
մեծի խորհրդոյ հրեշտակ· զի: Եւ
սքանչելի խորհրդակից· զի: Եւ ած
հզօր իշխան· զի ած: Եւ իշխան
խաղաղութե հայր հանդերձելոյ յա-
ւիտենին· տէր ած ընդ մեզ է: Եւ
փառք հօր և որդւոյ և հոգւոյն
սբյ, այժմ և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից· Ամէն:

### Մաղթանք:

'Ի մերձենալ երեկոյիս համբառնամք զձեռս մեր 'ի սրբութիւն · զոր ինչ մեղաք այսօր խորհրդով բանիւ, կամ գործով, 'ի յանկողինս մեր զղջանալով, խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտիդ Աստուծոյ · յուսալով յողորմութիւն քո: Եւ մեք միաբան գոչեսցուք · յիշեա՛ զմեզ տէր՝ յորժամ գաս արքայութեամբ քով · և ողորմեա՛ մեզ:

### Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա:

Գոհացարուք զՏեառնէ, որ իւրով ողորմութեամբն առաջնորդեաց մեզ 'ի գործս տուընջեան · և շնորհեաց մեզ միաբան գալ հասանել 'ի հանգիստ գիշերիս: Եւ մեք յամենայն ժամ աղաչեսցուք զմարդասէրն Աստուած լինել պահապան անձանց մերոց · և նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ · և առաջնորդեալ հասուսցէ յիւր բարութեան հանգիստն, զոր խոստա-

ցաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՟ծ յ՟ն ք՟ն. տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմ։

Զհանդիստ գիշերիս խաղաղութ՟բ անցուցանել հաւատով։

Զհրեշտակ խաղա։ Զքաւուի։

Զսրբոյ խաչին։ Եւ ես և վ՟ն միա։

Զանձինս մեր։ Ողորմեա՛ց մեզ։

Աղօթք։

Տէր բարերար, որ մեծաւ գթութ՟բ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութ՟բ աշխատելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք, հանգիստ նոցա խոստանալով։ Շնորհեա՛ և մեզ տ՟ր անխռով խաղաղութ՟բ զգիշերս անցուցանել. և 'ի ծանրութէ մեղաց զաշխատեալքս ապահովեա՛ ողորմութ՟բ քով. և արժանաւորեա՛ մշտընջենաւոր հանգստեանն ը՟ ա՟մ ն՟րս քո։ Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ամենա՟ս՟ր հոգւոյդ. այժմ և։

Խաղաղութիւն ամենեց։

Պարգեւատու բարեաց, եւ աղբիւր խաղաղութեան տ̃ր ա̃ծ մեր՝ յա̃մ սատանայական խռովութեանց խաղաղացո՛ զմիտս մեր եւ զխորհուրդս 'ի գիշերիս յայսմիկ, եւ յա̃մ ժամանակի։ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեանն քո. զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի ս̃բց քոց։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ. այժմ եւ։

Սաղմոս. ԻԶ։

Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց։

'Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ. նեղիչք իմ եւ թշնամիք իմ՝ նոքա տկարացան եւ անկան։

Թէ պատրաստեսցի 'ի վ̃ր իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. թէ յարիցէ 'ի վ̃ր իմ ճակատամարտ,

սակայն և այսուհիկ 'ի քեզ տ̃ր յուսացայ :

Զմի խնդրեցի 'ի տ̃նէ, և զայն աղաչեմ, բնակել ինձ 'ի տան տ̃ն զմ̃ աւուրս կենաց իմոց :

Տեսանել ինձ զվայելչութի տ̃ն, և հրամանս տալ 'ի տաճարի նորա :

Ծածկեաց զիս 'ի խորանի իւրում յաւուր չարի · ընդ յարկաւ արար զիս 'ի ծածկոյթ խորանի իւրում :

'Ի վիմի բարձր արարեր զիս · և այժմ բա́րձր արա զգլուխ իմ 'ի վ̃ր թշնամեաց իմոց :

Շուրջ եղէց և մատուցից 'ի խորանի նորա պատարագ օրհնութե̃ · օրհնեցից, և սաղմոս ասացից տ̃ն :

Լո́ւր տ̃ր ձայնի իմում · զի կարդացի առ քեզ · ողորմեա́ ինձ, և լո́ւր ինձ · զի քեզ ասաց սիրտ իմ · և խնդրեցին երեսք իմ · զերեսս քո տէր խնդրեցից :

Մի́ դարձուցաներ զերեսս քո յինէն · և մի́ խոտորիր բարկութե̃ 'ի ծառայէ քումմէ :

Օգնական իմ լե́ր տէր · մի́ անար-

գեր զիս, և մի՛ թողուր զիս ա͞ծ փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր ընկալաւ զիս։

Օրէնսդէտ արա՛ զիս տէր 'ի ճանապարհի քում. և առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս քո ուղիղս։

Վ͞ս թշնամեաց իմոց մի՛ մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան 'ի վերայ իմ վկայք մեղաց. և ստեցին ինձ յանօրէնութե͞ իւրեանց։

Հաւատացի տեսանել զբարութի͞ տ͞ն յերկրին կենդանեաց. համբե՛ր տ͞ն՝ և քաջալերեա՛ց. զօրասցի սիրտ քո, և համբե՛ր տ͞ն։

Փառք հօր և որդւոյ։

## ԵՐԳ Տ͞Ն ՆԵՐՍԷՍԻ։

Նայեա՛ց սիրով հայրըդ գըթած
Ի քո ստեղծեալ գործըս ձեռաց,
Եւ ըզբանակըս հրեշտակաց
Տո՛ւր պահապան մեզ տկարացս.
Փըրկեա՛ զանձինս 'ի փորձանաց
Ի խաւարի շըջօղ դիւաց.
Զի 'ի տունջեան և գիշերի

Տացուք քեզ փառս անլռելի։
Էին անեղ անըսկըզբան
Ծընունդ անճառ որդի և բան,
Որ արարեր ըզտիւ գործոյ՝
Եւ ըզգիշեր 'ի հանգիստ քնոյ·
Տուր 'ի ննջել աչաց մարմնոյ՝
Արթուն լինել մեզ ը՟ հոգւոյ· Զի։
Րաբուն հոգւոյ բանաւորաց
Աղբիւր լուսոյ բաշխօղ շնորհաց·
Ի փակել դըրանց ընուե՟ց մարմնոյ՝
Լոյս տուր աչաց սրտից մերոց·
Ի գիշերաց առ քեզ կանխել
Ընդ հրեղինացն օրհնաբանել· Զի։
Մ՟ծ սըրբոց երրորդութե՟ն՝
Ըզմեզ մաքրեա՛ քեզ բնակութի·
Շնորհեա՛ ընդ մանկանց առա-
գաստի
Հանգչիլ ընդ քեզ 'ի յանկողնի·
Տուր ըղհայցուած բարեկամին
Ըզփոխ երից նըկանակին· Զի։
Երևելի լոյս ըստեղծեր՝
Զտիւ և զգիշեր բաժանեցեր·
Ծագեա՛ մեզ տէր 'ի գիշերի
Ըզճառագայթս իմանալի·
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աջ քո հովանի· Զի։

Սիրոյ քո հուր արկեալ յերկնէ
Բորբոքեսցի 'ի հոգիս մեր ,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ
Զլոյս գիտուն քո փայլեսցէ ·
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ՝
Զմիտս բոցով քով վառեսցէ · Զի։

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց
Ի զգայական ծածկեալ լուսոյ ·
Որ վասն մեր եղար 'ի գին
Եւ ննջեցեր 'ի տապանի ·
Առ մեզ ննջեալ արթուն բնութն՝
Հերքեա՛ զչարին ներգործութն · Զի։

Էիդ լուսոյ անըստուերի
Պաղատանօք կամք առաջի ·
Որ փակեալ դրամբք երեկոյին
Երևեցար մետասանին ·
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք
Տէր և ա՟ծ զքեզ դաւանեմք ·
Էջ և առ մեզ յերեկոյիս՝
Եւ տուր զողջոյն քո 'ի հոգիս։

Բամեալքս ըզքեզ տէր աղաչեմք՝
Մեզ յօգնութն նայեալ հայցեմք ·
Պահապանդ իսրայէլի
Ընծանց մերոց լե՛ր հովանի ·
Օթեա՛ առ մեզ խաղաղարար
Զի ննջեսցուք անխռովաբար ·

Եւ ընդ առաւօտըս կանխեսցուք
Օրհնել ըղքեզ ընդ հօր հոգւով։
Գոչման փողոյն դարբնէլն
Որ 'ի վերջնումըն գիշերի,
Լըսել արա զմեզ արժանի
Եւ յաջակողմն օդեաց դասի.
Անչէջ վառեալ զլոյս լապտերաց
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Ջի ընդ փեսայիդ 'ի յառագաստ՝
Հարսունք հոգւով մըտցուք 'ի
փառս։

Հայածեա՛ 'ի մէնջ տէր, նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներևոյթ դաղանն. և մի՛ տար յապականութին զքո ժառանգութիս։

Բարեխօսեա՛ վասն մեր ա՛ծածնին մարիամ, որ ծնար զտէր ա՛ծ՝ որ հովուէրն զխորայէլ ամենազօր և սքանչելի փառօքն իւրովք։

## Մաղթանք։

Տէր մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. տէր բարերար աղաչեմ ըղքեզ՝ օգնական իմ լե՛ր։ Տէր մի՛ անարգեր զիս. և մի՛ Թողուր զիս ա՛ծ փրկիչ իմ։

### Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած և խնդրեսցուք 'ի նմանէ . զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս 'ի գիշական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց . Ամենակալ տէր Աստուած :

### Աղօթք :

Շնորհատու բարեաց՝ յԱստուծոյ տուող անմահ տէր, աղաչեմք զքեզ՝ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս : 'Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ . և շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ՝ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգիդ . այժմ և :

Յաւուրս աղուհացից ասա զայս աղ-
[illegible] . Եւ յայս աւուրս՝

Հայր մեր որ յերկինս :

Սաղմոս. ՃԺԸ:

ԵՐԱՆԵԱԼ են անբիծք 'ի ճանապարհի, և որք գնան յօրէնս Տն:

Երանի՛ որք քննեն զվկայութիւնս Նր, բոլորով սրտիւ խնդրեսցեն զնա:

Ո՛չ թէ որք գործեն զանօրէնութիւն, 'ի ճանապարհս նորա գնացին:

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո 'ի պահել ինձ յոյժ:

Երանի՛ թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ 'ի պահել ինձ զարդարութիւնս քո:

Յայնժամ ես ոչ ամաչէի 'ի զգուշանալ ինձ 'ի պատուիրանս քո:

Խոստովան եղէց քեզ տէր յուղղութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քոյ:

Զիրաւունս քո պահեցից. մի՛ թողուր զիս մինչ իսպառ:

Ի՛ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր. այլ 'ի պահել ըզբանս քո:

Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. մի՛ մերժեր զիս 'ի պատուի-

րանաց քոց ։

'Ի սրտի իմում թագուցի զբանս
քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ ։

Օրհնեալ ես դու տէր. ուսո՛ ինձ
զարդարութի̃ս քո ։

Շրթամբք իմովք պատմեցից զա̃մ
իրաւունս բերանոյ քո ։

'Ի ճանապարհս վկայութե̃ց քոց
զուարճացայ. որպէս յամենայնի 'ի
մեծութե̃ ։

'Ի պատուիրանս քո հոգացայ. և
զգուշացայ 'ի ճանապարհս քո ։

Զիրաւունս քո խօսեցայ. և ո՛չ
մոռացայ զբանս քո ։

Հատո՛ ծառայի քում. զի կեցից
և պահեցից զբանս քո ։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի
սքանչելիս օրինաց քոց ։

Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛
թագուցաներ յինէն զպատուի-
րանս քո ։

Փափագեաց անձն իմ 'ի ցանկալ
ինձ յիրաւունս քո յա̃մ ժամ ։

Սաստեցեր ամբարտաւանից. անի-
ծեալ՝ որք խոտորեցան 'ի պատուի-
րանաց քոց ։

՚Ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս․ զի զվկայութս քո խնդրեցի։

Քանզի նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն․ այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութք քո խօսք իմ էին․ և խորհուրդք իմ յարդարութ քո։

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող․ տէր կեցո՛ զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ․ և լուար ինձ․ ուսո՛ ինձ զարդարութիս քո։

՚Ի ճանապարհս արդարութեց քոց իմաստո՛ւն արա զիս․ և քննեցից զսքանչելիս քո։

Տքնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրանալ․ հաստատեա՛ զիս ՚ի բանս քո։

Զճանապարհս մեղաց ՚ի բա՛ց արա յինէն․ և յօրէնս քո ողորմեա՛ ինձ։

Զճանապարհս ճշմարտութե քո ընտրեցի․ և զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ։

Մերձեցայ ես ՚ի վկայութիս քո, տէր, մի՛ յամօթ առներ զիս։

՚Ի ճանապարհս պատուիրանաց

քոց ընթացայ. զի անդորր արարեր սրտի իմոյ ։

Օրէնսդէր արա զիս տէր 'ի ճանապարհս իրաւանց քոց. և խնդրեցից զնա յա՟մ ժամ ։

Իմաստութիւն արա՛ զիս տ՟ր. և քննեցից զօրէնս քո. և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։

Առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց. զի ը՟ նոսա հաճեցայ ։

Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայութի՟ս քո. և մի՛ յագահութի՟ն ։

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնանրութի՟ն. 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս ։

Հաստատեա՛ ծառայի քում զբան քո յերկիւղ քո ։

Հա՛ն յինէն զնախատինս, զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են ։

Ահա՛ ցանկացայ պատուիրանաց քոց՝ յարդարութե՟ քում կեցո՛ զիս։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութի՟ն քո տէր. և փրկութի՟ն քո ըստ բանի քում ։

Տաց պատասխանի՝ ոյք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։

Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտուե՟ մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յա՟մ ժամ. յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայուի՟ս քո առաջի թագաւորաց, և ո՛չ ամաչէի։

Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի. և խորհէի յարդարութե՟ քում։

Յիշեա՛ զբան ծառայի քոյ, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ո՛չ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո, Տէր, և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

---

ԲԱԺԻՆ իմ ես դու Տէր. ասացի պահել ինձ զօրէնս քո։

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։

Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի պահեցի զպատուիրանս քո։

Տոռունք մեղաց պատեցան զինև, այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ՝ վասն իրաւանց և

արդարութե̃ քոյ։

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց. որոց պահեալ էին զպատուիրանս քո։

Ողորմութե̃ տն̃ լի եղև երկիր. զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։

Քաղցրութի̃ արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում։

Քաղցրութի̃, զխրատ և զգիտութի̃ ուսո՛ ինձ. զի 'ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչչև խոնարհեալ էի ես՝ մեղայ, վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։

Քաղցր ես դու տր̃. և քաղցրութե̃ քով ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։

Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո։

Մածեան ոպ̃ կաթն սիրտք նոցա. այլ ես զօրէնս քո խոկեցայ։

Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո։

Բարի են ինձ օրէնք բերանոյ քոյ

քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։

Ձեռք քո արարին և ստեղծին զիս. իմաստո՛ւն արա զիս, և ուսայց զպատուիրանս քո։

Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ եղիցին. զի ես 'ի բանս քո յուսացայ։

Ծանեայ տէր, զի արդարուք̃ են դատաստանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս։

Եղիցի ողորմուն̃ քո 'ի մխիթարել զիս ըստ բանի քում ծառայիս քո։

Եկեսցեն յիս գթուն̃ք քո, և կեցից. զի օրէնք քո խօսք իմ էին։

Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի տարապարտուց անիրաւեցան յիս. այլ ես հոգացայ 'ի պատուիրանս քո։

Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և որք ճանաչեն զվկայութն̃ս քո։

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութե̃ քում. զի մի՛ ամաչեցից։

Կարօտացաւ անձն իմ 'ի փրկուն̃ս քո, զի ես 'ի բանս քո յուսացայ։

Սպառեցին աչք իմ բանի քում. ասացի, ե՞րբ մխիթարեսցես զիս։

Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի, զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:

Քանի՞ իցեն աւուրք ծառայի քոյ, երբ արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց:

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս. այլ ո՛չ որպէս զօրէնս քո:

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են. 'ի նանիր հալածեցին զիս, օգնեա՛ ինձ:

Փոքր միւս ևս և կորուսանէին զիս յերկրի, այլ ես ոչ թողի զպատուիրանս քո:

Ըստ ողորմութէ̃ քում կեցո՛ զիս. և պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ:

Յաւիտեան տէր բան քո կայ յերկինս. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո:

Հաստատեցեր զերկիր, և կայ:

Հրամանի քում մնայ տիւ, զի ամենեքեան ծառայք քո են:

Եթէ ոչ օրէնք քո՛ խօսք իմ էին, կանխաւ ևս արդեօք կորուսեալ էի 'ի խոնարհութէ̃ իմում:

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո. զի նոքօք կեցուցեր զիս:

Քո՛ եմ ես, և կեցո՛ զիս. զի զար-
դարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կո-
րուսանել. զի զվկայութիւնս քո ես 'ի
միտ առի։

Յամենայն կատարածի տեսի ըղ-
վախճան. յոյժ անդորր էին ինձ
պատուիրանք քո։

Որպէս սիրեցի զօրէնս քո. զօր-
հանապազ խօսք իմ էին։

Քան զթշնամիսն իմ իմաստուն
արարեր զիս 'ի պատուիրանս քո.
զի յաւիտեան իմ էին։

Քան զա͞մ ուսուցիչսն իմ իմաս-
տուն եղէ. զի վկայութիւնք քո խօսք
իմ էին։

Քան զծերսն իմաստուն եղէ. զի
զպատուիրանս քո քննեցի։

Յամենայն ճանապարհաց չարաց
արգելի զոտս իմ, ո͞պ զի պահեցից
զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ.
զի դու օրէնսգէտ արարեր զիս։

Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ
բանք քո քան զմեղր բերանոյ իմոյ։

'Ի պատուիրանաց քոց իմացեալ

ատեցի զամենայն ճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս:

Ճրագ են բանք քո ոտից իմոց. և լոյս տան շաւղաց իմոց:

Երդուայ և հաստատեցի, զի պահեցի զա̃մ իրաւունս արդարութե̃ քո:

Խոնարհ եղէ մինչև յոյժ. տր̃, կեցո՛ զիս ը̃ս բանի քում:

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեա՛ց տէր. և զիրաւունս քո ուսո՛ ինձ:

Անձն իմ 'ի ձեռս քո է յա̃մ ժամ. և զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Եդին ինձ մեղաւորք զորոգայթ. 'ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ:

Ժառանգեցի զվկայութի̃ս քո յաւիտեան. զի ցնծութի̃ է սրտի իմոյ:

Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութի̃ս քո յաւիտեան վասն հատուցման:

Զանօրէնան ատեցի, և զօրէնս քո սիրեցի:

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ:

'Ի բաց եղերուք յինէն չարք, և քննեցից զպատուիրանս ա̃յ իմոյ :

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ :

Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ :

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբ եղեն յարդարութե̃ց քոց. զի անիրաւութ̃ք էին խորհուրդք նոցա :

Յանցաւորս համարեցայ զա̃մ մեղաւորս երկրի վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո :

Բնակեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ :

---

ԱՐԱՐԻ իրաւունս և արդարութ̃ի. մի՛ մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց :

Ընկա՛լ զծառայս քո 'ի բարի, զի մի՛ ամբարտաւանք զրուեսցեն զիս :

Սպասեցին աչք իմ փրկութե̃ քում

տր̄ · և բանից արդարութե̄ քում:

Արա՛ ընդ ծառայի քում, տէր, ըս̄ ողորմութե̄ քում · զարդարութիս քո ուսո՛ ինձ :

Ծառայ քո եմ ես, իմաստո՛ւն արա զիս · և ծանեայց զվկայութիս քո :

Ժամ է պաշտել զտէր · խափանեցին զօրէնս քո :

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զո̃մ ոսկի և զտոպազիոն :

Ամենայն պատուիրանք քո յաջողեցան ինձ · զի ատեցի ես զճանապարհս չարաց :

Սքանչելի են վկայութիք քո · վս̄ այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ:

Յայտնութի̄ բանից քոց լուսաւորէ · և իմաստուն առնէ զտղայս:

Զբերան իմ բացի, և առի զհոգի · ՚ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ:

Նայեա՛ց առ իս, և ողորմեա՛ ինձ ըս̄ իրաւունս սիրողաց անուան քո :

Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում · և մի տիրեսցէն

ինձ ա՟մ մեղք :

Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ մարդկան · և պահեցից զպատուիրանս քո :

Երևեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո · և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո :

Վտակք ջուրց իջին յաչաց իմոց · զի ոչ պահեցին զօրէնս քո :

Արդար ես դու տէր, և ուղիղ են դատաստանք քո :

Պատուիրեցեր զարդարութ՟ի վկայութ՟եց քոց տէր · և ճշմարիտ են յոյժ :

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ:

Ընտրեալ է բան քո յոյժ · և ծառայ քո սիրեաց զսա :

Մանուկ եմ ես և արհամարհեալ · և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ :

Արդարութ՟ի քո արդարութիւն յաւիտենից · և օրէնք քո ճշմարիտ են :

Նեղութ՟ք և վիշտք գտին զիս · և պատուիրանք քո խօսք իմ էին :

Արդարութ՟ք են վկայութ՟ք քո

յաւիտեան. իմաստուն արա՛ և կեցո՛ զիս :

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լո՛ւր ինձ տր̅. զի զարդարութի̃ս քո խնդրեցի :

Աղաղակեցի առ քեզ, և փրկեա՛ զիս և պահեցից զվկայութիս քո :

Կանխեցի տարաժամու. աղաղակեցի, և ես 'ի բանս քո յուսացայ :

Կանխեցին աչք իմ առաւօտու 'ի խօսել ինձ զբանս քո :

Զայնի իմում լո՛ւր տէր ը̅ս̅ ողորմութ̃ե քում, և յիրաւունս քո կեցո՛ զիս :

Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօրէնութի̃. զի յօրինաց քոց հեռի եղեն :

Մերձ ես դու տէր. և ա̃մ պատուիրանք քո ճշմարիտ են :

'Ի սկզբանէ ծանեայ 'ի վկայութ̃ց քոց տէր, զի յաւիտեան հաստատեցեր զնոսա :

Տե՛ս զխոնարհութի̃ իմ, և փրկեա՛ զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ :

Դատեա՛ զդատաստանս իմ, և

փրկեա՛ զիս ․ և ըստ բանի քում կեցո՛ զիս ։

Հեռի է 'ի մեղաւորաց փրկութի․ զի զիրաւունս քո ոչ պահեցին ։

Գթութիւնք քո բազում են տէր․ և ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս ։

Բազում են, որք հալածեն և նեղեն զիս․ և 'ի վկայութեանց քոց ես ո՛չ խոտորեցայ ։

Հայէի յանագորունս, և մաշէի․ զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին։

Տե՛ս, զի զպատուիրանս քո սիրեցի․ տէ՛ր ողորմութեամբ քով կեցո՛ զիս ։

Սկիզբն բանից քոց ճշմարտութի է․ յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութեան քոյ ։

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր․ և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ ։

Ցնծացայ ես 'ի բանս քո, որպէս այն որ գտանէ աւար բազում ։

Զմեղս ատեցի, և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի ։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ վասն իրաւանց և արդարութեան քոյ ։

Խաղաղութի բազում է այնոցիկ,

ոյք սիրեն զօրէնս քո. և ոչ գոյ ՚ի նոսա գայթակղութիւն։

Սպասէի փրկութե̃ քում տէր. և զպատուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնոսա յոյժ։

Պահեցի զպատուիրանս և զվկա-յութիւնս քո. զի ա̃մ ճանապարհք իմ առաջի քոյ են։

Մերձեսցին խնդրուածք իմ առա-ջի քոյ տէր. ըստ բանի քում իմաս-տուն արա́ զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քոյ տէր. և բանիւ քով փրկեա́ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-թիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդա-րութ̃ք են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութե̃ քում տ̃ր. և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Փառք Հօր և Որդւոյ. այժմ և:

Եւ ասեն տուն շարականս:

'Ի քէն հայցեմք հա՛յր գթութեանց, և Ած մխիթարութեանց. 'ի տխրական գիշերային մերձեալ ժամուս մխիթարեա՛ զմեզ 'ի տրտմութեանց մեղաց. և շնորհեա՛ զուրախութի գործովք արդարութե, աղաչանօք Ածածնին և Ամ արդարոց:

Ըստ քաղցրագոյն Ածային քո հրամանի կոչման Որդի Այ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք, թեթևացո՛ 'ի ծանրութեանց մեղաց զանձինս. և զօրացո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց. աղաչա:

Պաղատիմք առ քեզ հոգւով 'ի հանգստեան հասեալ ժամուս՝ մարդասէր Հոգի Այ, յորժամ նորոգես զերեսս երկրի, և վերստին ստա-

նաս զորդիս մարդկան, Նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն 'ի քէն սբ աւազանաւն. աղաչա։

Զկենդանագիր անարատ ծնողի քոյ արկանեմք առաջի անոխակալ տէրութեդ քոյ, յորժամ գաս փառօք հօր դատել զթշնամին խաչի քո. ներեա յանցանաց մերոց բարեխօսութբ մօր քոյ և կուսի. աղաչեմք զքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սբ։

Հաղորդս արա և զմեզ տէր, ընդ սբց քոց առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ 'ի յարութե քո. արժանաւորեա տէր տեսանել զքեզ 'ի միւսանգամ քոյ գալըստեանն. օրհնութի առաքողին 'ի բարձունս։

'Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ, աղաչանօք սբ ածածնին յիշեա զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս. ամէն։

Չորեքշաբթի:

Սրբուհի մարիամ, սափոր ոսկի, և տապանակ կտակարանաց. որ զ՚ի վերուստ զհացն կենաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս. առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութե մեղաց մերոց:

Դասք անմարմնոց հրեշտակաց քեզ երանեն ամենօրհնեալ կոյս մարիամ. որ զէակից բանն որ ընդ հօր, կրեցեր ՚ի քեզ անսերմնապէս. առ նա միշտ բարեխօսեա վն քաւութե մեղաց մերոց:

Վն որոյ և մեք հաւատացեալքս քեզ երկրպագեմք քն. և արտասուօք հայցեմք ՚ի քէն. բարեխօսութբ ածածնին զածայինն լոյս քո ծագեա յանձինս մեր. օրհնեմք զքեզ ՚ի յարութե երեկոյին՝ ահաւոր թագաւոր:

Հինգշաբթի:

Առաքեալք այ՝ ընտրեալք ՚ի սկզբանէ նախ քան զաշխարհս, որք արժանի եղէք տեսանել զան-

հասն հրեղինաց. բարեխօսեցէք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ։

Բարեկամք քո̃ւ հազարապետք ա̃ծայինն խորհրդոց. որք 'ի հոսանուտ մեղաց ծովէս վերածելք զմարդիկ 'ի կեանս անմահ. բարեխօս։

Գերագոյն քան զբնաւս՝ անձառելոյն հասէք երանութեան. որք 'ի գալստեան տ̃ն նստջիք յերկոտասան աթոռսն քո̃ւ. բարեխօս։

ՈՒՐԲԱԹԻ։

Պարտնակեալ պահէին յանեղաչէն դրախտին՝ զճանապարհ ծառոյն կենաց՝ քրովբէական հոյլքն բոցեղէն սրովբէիւք. այսօր արտափայլեալ ցուցար յերկրի ա̃ծազարդ փայտ կենաց և փրկութեան. զքեզ օրհնեն մանկունք ն̃ր եկեղեցւոյ։

Սաբեկայ ծառոյն վերաբերեալ խոյ յողջակէզ փոխանակ իսահակայ. սոյն 'ի վ̃ր քո զենաւ գառն անարատ 'ի հաշտութիւն հօր, և 'ի բառնալ զմեղս մեր. զքեզ օրհնեն մանկունք։

Պարծանք պօղոսեան դաւանեալ

զքեզ ա̃ծային բանին տեղի և զենարան. քանզի քև ապրեցաք 'ի խածանոց և յանմարմին գաղանէն. և 'ի վ̃ր քոյ հեղեալ շիթք անապական արեան՝ զկողածնին ջնջեաց զմեղս. զքեզ օրհնեն ։

## Երկուշաբաթի ։

Երկնաւոր հօտ ընտրեալ՝ զոր հովին քաջ թողեալ յերկինս, և եկեալ 'ի խնդիր մեզ մոլորելոցս. որով լցեալ զթիւ հարիւրոցդ՝ արար ուրախութի 'ի յերկինս երկնաւորացդ. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ տէր վասն քաւութե մեղաց մերոց ։

Տեսանօղք անտեսին՝ խորհրդածուք խորոցն ա̃յ, որք իջեալք ընդ միածնին սպասաւորել տնօրէնութեն. 'ի ծննդեան աւետաւորք հովուացն. և կանանց իւղաբերից կենաց քարոզք զկենդանութիւն. աղաչեմք զձեզ ։

Պահապանք աշխարհի՝ բանակք ա̃ն շուրջ զերկիւղածովք՝ բարեկամք ազգի մարդկան՝ միջնորդք

մահու և յարութե̄. միքայէլ և գա-
բրիէլ մեծք, որք կայք միշտ առա-
ջի ամենամ̃բ երրորդութե̄. աղա-
չեմք զձեզ:

## Երեքշաբթի:

Երկնաւոր փեսայ անստուեր լոյս
իմանալի՝ որ 'ի յերկնից իջեր 'ի սէր
հարսին քոյ եկեղեցւոյ. զոր խօսե-
ցաւ քեզ բարեկամն և փեսաւէրն
քո յովհաննէս. սորին մաղթանօք
ողորմեա:

Քառակերպից անհաս՝ և ան-
պարփակ 'ի սերովբէից՝ սրբուէ̃ց ̃մբ
և տէր բոլորից, խոնարհեցար 'ի
յորդանան՝ հայցելով 'ի ծառայէն
մկրտութի̄ ջրոյ 'ի լուանալ զմեղս
ադամայ. սորին մաղթանօք:

Որ յամենորդւոյն վկայեցար գառն
ա̃յ բարձօղ մեղաց. զոր գերագոյն
արդարոց՝ ծանուցեր մեծ 'ի ծը-
նունդս կանանց, և ճրագ օրինաց.
որ և 'ի դժոխս զփրկական գալըս-
տըն քո քարոզեաց. սորին մաղթա:

### Մաղթանք։

Հոգւոյն հանգուցելոյ քս՟ ած՝ արա՛ հանգիստ և ողորմութ՟ն. և մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութ՟ն յանցանաց։

### Քարոզ։

Եւ ևս խաղաղութե՟ զտ՟ր աղաչ։ Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր քս՟, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութե՟ իւրոյ. ամենակալ տէր ած մեր կեցո՛ և ողոր։ Տէր ողորմեա՛. գ՟։

### Աղօթք։

Քս՟ որդի այ՟ անոխակալ և բարեգութ. գթա՛ քո արարչական սերովդ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութե՟ քոյ. արա՛ արժանի ողորմութե՟, քաւութե՟, և թողութե՟ մեղաց. դասաւորեալ պայծառացո՛ ընդ սրբս քո յաջակողմեան դասուն։ Զի դու ես տր՟

և արարիչ ամենեցուն · դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ · այժմ և միշտ:

Օրհնեալ տէր մեր յ͞ս ք͞ս · ամէն:

Հայր մեր որ յերկինս:



# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

## ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄՈՒՆ

Որ կատարի 'ի դէմս հոգւոյն ա՟յ, ըստ պահպանողական աջոյ մածնին պա-հեալ ըստ 'ի խաւարային գիշերի։

ԱՌԱՔԵԱ տէր զլոյս քո, և զճշմարտութ՟ն քո. զի առաջնորդեսցեն ինձ. և հանցեն զիս 'ի լեառն ս՟բ, և 'ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ, որ ուրախ առնէ զմանկութ՟ի իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութ՟բ ա՟ծ ա՟ծ իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ։

Եւ ևս խաղաղութ՟ն զոր ասաց։

Օրհնութ՟ի և փառք հօր և որդւոյ։

Սաղմոս. ՃԺԸ։

ԵԿԵՍՑԷ ՚ի վ͞ր իմ ողորմու͞նքո տէր. և փրկու͞ն քո ըստ բանի քում։ Տաց պատասխանի՝ որք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութ͞ե մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ։
Պահեցից զօրէնս քո յ͞ամ ժամ. յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի. և խորհէի յարդարութ͞ե քում։
Յիշեա՛ զբան ծառայի քոյ, յոր և յուսացուցեր զիս։
Այս մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կե-

ցոյց զիս ։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր, և մխիթարեցայ ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո ։

Գովելի են ինձ իրաւունք քո 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տէր. և պահեցի զօրէնս քո ։

Սա՛ եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի ։

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի ։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ ։

'Ի բա՛ց եղերուք յինէն չարք, և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ ։

Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ա-պստամբ եղեն յարդարութեանց քոց· զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա:

Յանցաւորս համարեցայ զամենայն մե-ղաւորս երկրի · վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո :

Թեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց եր-կեայց յոյժ :

Մերձեսցին խնդրուածք իմ ա-ռաջի քո տէր · ըստ բանի քում ի-մաստուն արա՛ զիս :

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր· և բանիւ քով փրկեա՛ զիս :

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւն քո, յորժամ ուսուցես ինձ զար-դարութիւնս քո :

Խօսեսցի լեզու իմ զբանս քո · զի ամենայն պատուիրանք քո արդարութիւնք են:

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս · զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան քում տէր · և օրէնք քո խօսք իմ էին :

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ · և իրաւունք քո օգնեսցեն ինձ :

Մոլորեցայ ես որպէս զոչխար կո-

րուսեղ․ խնդրեա՛ զծառայս քո․ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից․ և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։

Անդ անկցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութի․ մերժեսցին, և այլ մի՛ կարասցեն հաստատել։

Ես 'ի տր՟ յուսացայ․ ցնծացայց և ուրախ եղէց յա՟ծ փրկիչ իմ։

Տ՟ր տէր ես ինձ զօրուն, և կացոյց զոտս իմ 'ի հաստատուե՟․ 'ի վերայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս․ և հանդոյց զիս երագ երագ։

Որ բնակեալ է յօգնութի բարձրելոյն՝ ընդ հովանեաւ ա՟յ յերկնս հանգիցէ։

Ասասցէ տ՟ն, ընդունելի իմ ես դու, ապաւէն իմ ա՟ծ՝ և ես յուսամ 'ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանից խռովութե։

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ․ 'ի հովանի թևոց ն՟ր յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճըշմարտութի նորա։

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի. և ո՛չ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ:

Յիրէ՝ որ շրջի ՚ի խաւարի. ՚ի գայթակղութենէ դիւին ՚ի հասարակ աւուր:

Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու տէր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ո՛չ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկըս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո ՚ի պահել զքեզ յա՟մ ճանապարհս քո:

՚Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո:

՚Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ՝ և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղէց 'ի նեղութ̃ե։

Փրկեցից՝ և փառաւոր արարից զնա. երկայնաւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութ̃ի իմ։

Առ քեզ տ̃ր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս։

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ̃ն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր ա̃ծ մեր, մինչև ողորմեսցիս 'ի վերայ մեր։

Ողորմեա՛ց մեզ տ̃ր՝ ողորմեա՛ց մեզ, զի բզ̃մ լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ, և արհամարհանօք ամբարտաւանից։

Ա̃ծ յանուան քում կեցո՛ զիս. և 'ի զօրութ̃ե քում իրա՛ւ արա ինձ։

Ա̃ծ լո՛ւր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց

Ահա՛ ա̃ծ օգնական իմ. և տէր ընդունիօղ հոգւոյ իմոյ ։

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտութ̃ քով սատակեա՛ զնոսա ։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է ։

Յամենայն նեղութ̃է իմմէ փրկեցեր զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ ։

Օրհնեալ ես դու տէր ա̃ծ հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Եւ օրհնեալ է անուն ս̃բ փառաց քոց. գովեալ և առ ։

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութ̃ե քոյ. գով ։

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութ̃ե քոյ. գով ։

Օրհնեալ ես որ նստիս 'ի քրովբէս, և հայիս յանդունդս. գով ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստա-

տութեն երկնից․ գովէ։

Օրհնեցէք զա՟ծ 'ի սրբութեն նորա․ օրհնեցէք զնա 'ի հաստատութեն զօրութեն նորա։

Օրհնեցէք զնա 'ի զօրութեն նր՟․ օրհնեցէք զնա 'ի բազում մեծութեն նր՟։

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութեն․ օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութբ՟։

Օրհնեցէք զնա ցնծութբ՟․ գովեցէք զնա ուրախութբ՟։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր․ գովեցէք զնա 'ի բարբառ լսելիս։

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեն․ ամ՟ հոգիք օրհնեցէք զտէր։

Արդ՝ արձակեա́ զծառայս քո տր՟ ըստ բանի քում 'ի խաղաղութի․ զի տեսին աչք իմ զփրկութի քո․ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։

Լոյս 'ի յայտնութի հեթանոսաց․ և փառք ժողովրդեան քում իսրայէլի։

Ձգեցեր զձեռն քո, և փրկեաց զիս աջ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութ̅ի քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Տէր՝ հա՛ն ՚ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք, մինչև հատուցես ինձ։

Մեծացուցէ անձն իմ զտէր. և ցնծացէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով։

Այց արար ՚ի վերայ խոնարհու̅է աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ա̅մ ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և ս̅բ է անուն նորա։

Ողորմու̅ե արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զօրութ̅ի բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ելից բարու̅ք. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմու̅ի իւր։

Որպէս խօսեցաւ առ հարս մեր․ ընդ աբրահամու՝ և զաւակի նորա յաւիտեան ։

Տո՛ւր զօրութի ծառայի քոյ․ կեցո՛ զորդի աղախնոյ քոյ․ և արա՛ առ իս նշան բարութե ։

Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն․ զի դու տէր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս ։

Փառք հօր և որդւոյ և հոգ ։

## Մաղթանք։

Անձն իմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ․ և 'ի ս̃բ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր․ զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմք առ քեզ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս 'ի քեզ․ այլ պահեա՛ պատուական, և ս̃բ խաչիւ քո 'ի խաղաղութե ։

## Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ՝ և խնդրեսցուք 'ի նմանէ․ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութե, որ ե-

կեալ պահեսցէ զմեզ յերկիւղա֊կան գիշերիս, 'ի դիւական խռո֊վութե՟է ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր, մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց: Ամենա֊կալ տէր ա՟ծ:

Զհանգիստ գիշերիս խաղաղու՟ք:
Զհրեշտ: Զքաւու՟ն: Զս՟բ խս:
Եւ ևս: Զանձինս: Ողորմ:

Աղօթ+:

Տէր ա՟ծ մեր դու պահեա՛ զմեզ խաղաղու՟ք 'ի գիշերիս յայսմիկ և յա՟մ ժամանակի: Ընդ ո՟ք երկիւղ քո բևեռեալ պահեա՛ զմիտս և ըզ֊խորհուրդս մեր: Ո՟պ զի յա՟մ ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայ֊թից թշնամւոյն: Եւ քեզ հան֊ցուք զօրհնութի՟ և զփառս հօր և որ֊դւոյ և հոգւոյդ ս՟բյ. այժմ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Հրեշտակի խաղաղութե՟ յանձն արա զանձինս մեր ո՟ր զօրութեց· որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով 'ի տուէ և 'ի գիշերի, յարթնութե՟ և

'ի հանգստեան մերում: Զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ տ̃ր ա̃ծ մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութ̃ անցուցանել: Եւ հասանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութ̃ի և 'ի փառաբանութ̃ի ամենասուրբ երրորդութ̃եդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ:

Սաղմոս. Դ̃:

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տ̃ր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:

'Ի կարդալ իմում լուար ինձ ա̃ծ. ըստ արդարութ̃ե 'ի նեղութ̃ե ինձ անդորր արարեր. ողորմեա՛ ինձ, և լո՛ւր աղօթից իմոց:

Որդի՛ք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութ̃ի և խնդրէք զստութ̃ի:

Ծանիրո՛ւք՝ զի սքանչելիս արար տ̃ր սրբոյ իւրում. և տ̃ր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք, և մի՛ մեղանչէք. զո՛ր

ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարո՛ւք :

Մատուցէ՛ք պատարագս արդարութե՟ . և յուսացարո՛ւք 'ի տէր :

Բազումք ասէին, թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութի՟ տ՟ն . Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց . և ետուր ուրախութի՟ սրտից մերոց :

'Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ՝ և ձիթոյ իւրեանց լցուցեր զն՟ն :

Խաղաղութ՟ յայս և 'ի սոյն ննջեսցուք, և զարթիցուք . զի դու տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ :

Ալէլուիա օրթի :

Խաղաղութիւն ամենեցուն :
Եւ ընդ հոգւոյդ քում :
Երկիւղածութեամբ լուարո՛ւք :
Ս՟բյ աւետարանիս՝ որ ը՟ս յովհաննու :
Փառք քեզ տ՟ր ա՟ծ մեր : Պռօսխումէ : Ասէ ա՟ծ :

Տ՟րն մեր յ՟ս ք՟ս ասէ :

Ամէն ամէն ասեմ ձեզ . եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ . ապա

եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ։

Փառք քեզ տ͞ր ա͞ծ մեր։

## Քարոզ։

Ս͞բ խաչիւս աղաչեսցուք զտէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութ͞ իւրոյ։ Ամենակալ տէր ա͞ծ մեր, կեցո՛ և ողորմեա՛։

## Աղօթք։

Պահպանեա՛ զմեզ ք͞ս ա͞ծ մեր ը͞ն հովանեաւ ս͞բ և պատուական խաչիդ քով 'ի խաղաղութ͞ե. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա՛ գոհութ͞բ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ

հոգւոյդ. այժմ և:

Օրհնեալ տր մեր յս քս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես՝ սբ:

Մաղթանք:

Անկանիմք առաջի քո ածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա՛ վն անձանց մերոց, և աղաչեա՛ զմիածին որդիդ՝ փրկել զմեզ ՚ի փորձուէ և յամ վտանգից մերոց:

Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա՛ և զիս զբազմամեղս ՚ի կապանաց մահու ՚ի կեանսն յաւիտենից:

Մաղթանք զօրաւոր ընդդէմ արհաւիրաց գիշերայնոյ. սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն: ԺԲ:

Ընկա՛լ քաղցրութբ տր ած հզօր, զդառնացողիս զաղաչանս: Մատի՛ր գթուէ առ պատկառեալս դիմօք: Փարատեա՛ ամենապարգև զամօթական տխրութիս: Բարձ յինէն ողորմած զանբերելի ծանրութիս: Անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահա-

յու կրթունիս ։ Աւարեմ միշտ յաղ֊
թօղ՝ զխաբողին հաձութիս ։ Բա֊
ցադրեմ վերնայլին՝ զմնելոյն մառա֊
խուղ ։ Կնքեմ կեցուցիչ՝ զկորուս֊
չին ընթացմունս ։ Ցրուեմ ծածկա֊
տես՝ զըմբռնողին չար դաւմունս ։ Խոր֊
տակեմ անքննին՝ զմարտողին գլխեց֊
մունս ։ Տեառնագրեմ քո անուամբ
բեր՝ զլռուսանցոյց երդ յարկիս ։ Պար֊
փակեմ քո ձեռամբդ զաւաստալ
տաճարիս ։ Գծագրեմ քո արեամբդ
զմուտ սեմոց սենեկիս ։ Կերպացո
զքո նշանդ՝ ի հետս ելից մայթողիս ։
Ամրացո քո աջովդ զհանգստեանս
խշտի ։ Մաքրեսցես՝ ի խաբից զծած֊
կարան անկողնոյս ։ Պահեսցես քո
կամօքդ զտառապեալ անձն ո֊
գւոյս ։ Անխարդախ արասցես զքո
շնորհեալ շունչ մարմնոյս ։ Կացուս֊
ցես շրջափակ զպար զօրուդ երկ֊
նայնոյ ։ Կարգեսցես՝ ի դիմի ը դեմ
դիւացն դասու ։ Տուր հանգիստ բեր֊
կրութե մահահանգոյնս նիրհման
՚ի խորութե գիշերիս, բարեխօսութ
հայցուածոց սրբոյ ա̃ծածնիդ՝ և ա֊
մենայն ընտրելոց ։ Ամփոփեալ պա֊

բուրեան զպատուհան տեսութեց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ 'ի ծփական խռովութեց կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանել: Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրուե ամենազգաստ արթնութբ, հոգենորոգ զուարթութբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնել թագաւոր փառաց անճառից՝ փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես յամ արարածոց յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: ԽԱ:

Որդի այ կենդանւոյ օրհնել յամհօրդ ահաւորի անքննին ծնունդ: Որ անկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ: Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութե քո փառաց, հալին

մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն: Եւ թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամի: Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. Թող լինձ զանթիւ չարեաց իմ՝ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկնի անճառ և յերկրի անզննին. 'ի տարր գոյ՝ և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ամի և յամի, ամ լմամբ օրհնեսցի 'ի բարձունս: Եւ քեզ է հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս: Ամեն:

### Աղօթք խոստովանութեան անձին հաւատացելոյ 'ի ԻԴ. տուն արարեալ է Տն Ներսէսի Հայոց կաթողիկոսին:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ, Հայր՝ և Որդի՝ և Սբ Հոգի. անեղ և անմահ բնութի, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ եղելոց. և ողորմեա՛ քո արարածոցս և ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ անբաժանելի լոյս, միասնական Սբ Երրորդութի և մի ածունի, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե. և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս. և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Հա՛յր երկնաւոր ած ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր

մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոցս և ինձ բազմամեղիս։

Որդի՛ ա՟յ ա՟ծ ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ վ՟ն մերոյ փրկութե՟, խաչեցար և թաղեցար և յարեար 'ի մեռելոց և համբարձար առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա՛ զիս ո՟րպ զաւազակն, յորժամ գաս արքայութե՟ քով. և ողոր։

Հոգի՛ ա՟յ ա՟ծ ճշմարիտ, որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն. և լուսաւորեցեր զիս մկրտութե՟ ս՟բ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին ա՟ծային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ողոր։

Անե՛ղ բնութի՟, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վ՟ն անուանդ քում ս՟բյ. և ողոր։

Տեսօղ ա՟մի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ 'ի դպրութե՟ կենաց. և ողոր։

կամաւ և ակամայ, գիտուբ̃ և անգի֊
տուբ̃. Թողուն̃ շնորհեա՛ մեղաւորիս.
զի 'ի ծննդենէ աւազանին մինչև ցայս,
որ մեղուցեալ եմ առաջի ա̃ծուեդ֊
քոյ՝ զգայարանօք իմովք, և ա̃մ ան֊
դամօք մարմնոյս. և ողորմեա՛:

Ամենախնամ տէր, դի՛ր պահա֊
պան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝
ո՛չ ևս հայել արատ. և ականջաց
իմոց ո՛չ ախորժել լսել զբանս չա֊
րութե̃. և բերանոյ իմոյ ո՛չ խօսիլ
զստութի̃. և սրտի իմոյ ո՛չ խորհել
զչարութն̃, և ձեռաց իմոց ոչ գործել
զանիրաւութի̃. և ոտից իմոց ո՛չ
գնալ 'ի ճանապարհս անօրէնութե̃,
այլ ուղղեա՛ զշարժումն ոց լինել ը̃
պատուիրանաց քոց յա̃մի. և ողոր:

Հո՛ւր կենդանի քո̃, զհուր սիրոյ
քոյ զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛
յանձն իմ. զի այրեսցէ զախտ հո֊
գւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց
իմոց. և մաքրեսցէ զմեղս մարմնոյ
իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութե̃
քո 'ի սրտի իմում. և ողորմեա՛:

Խմաստուն հօր յո̃, տուր ինձ զի֊
մաստութի̃ զբարիս խորհիլ և խօսիլ

և գործել առաջի քո յամ ժամ. 'ի չար խորհրդոց 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. և ողոր:

Կամեցօղ բարեաց տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր:

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայուն քո, զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողոր:

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց, 'ի փորձութեց դիւաց՝ և 'ի մարդոց անիրաւաց, և յամ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմ:

Պահապան ամնի քս̃, աջ քո հովանի լիցի 'ի վր̃ իմ 'ի տուէ և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան՝ և 'ի գնալ'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի երբէք սասանեցայց. և ողոր:

Ած̃ իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամ արարածս ողորմութե̃

ընուս զիմ արարածս ողորմութբ̃
քով, քեզ յանձն առնեմ զանձն
իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ ըզ-
պէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայ-
սմհետէ մինչև յաւիտեան. և ող:

Դարձուցի՛չ մոլորելոց` դարձո՛ զիս
'ի չար սովորութ̃եց իմոց 'ի բարի սո-
վորութ̃ի. և բնեռեա՛ 'ի հոգի իմ
զատկալն օր մահուն և զերկիւղ դե-
հենոյն և զսէր արքայութ̃են. զի
զղջացայց 'ի մեղաց, և գործեցից
զարդարութ̃ի. և ողորմ:

Աղբի՛ւր անմահութ̃ե` աղբերացո՛
'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխա-
րութ̃ե ող̃ պտունկլին. զի լուացից
զմեղս անձին իմոյ յառաջ քան զե-
լանելն իմ յաշխարհէս. և ողոր:

Պարգևի՛չ ողորմութ̃ե պարգևեա ինձ
ուղղափառ հաւատով և բարի գոր-
ծով, և ոչ̃ մարմնոյ և արեան քո
հաղորդութ̃բ գալ առ քեզ. և ողոր:

Բարերա՛ր տէր, հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս քաղցրութ̃բ
աւանդել զհոգի իմ, և անխռով
անցուցանել ը̃ն չարուն այսոցն, որ
են 'ի ներքոյ երկնից. և ողոր:

Լո՛յս ճշմարիտ Ք͞ն, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութ͞բ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն. և հանգչիլ լուսով բարեաց յօթեվանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. և ողոր:

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն. և լսելի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութ͞իդ. և ողոր:

Ամենողո՛րմ Տ͞ր, ողորմեա ա͞մ հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց ըզթողութ͞ի, որ առ իս յանցանաց. և դարձո՛ զն͞ո 'ի չարեացն՝ զոր ունին վասն իմ. զի ողորմութ͞ե քում արժանի եղիցին. և ողոր:

Փառաւորեալ Տ͞ր ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո. և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ բարեխօ-

հաննու մկրտչին , և սրբոյն ստե-
փաննոսի նախավկային , և սրբոյն
գրիգորի մերոյ լուսաւորչին , և սըր-
բոց առաքելոց , և մարգարէից , և
վարդապետաց , և մարտիրոսաց , և
սրբց հայրապետաց , և ճգնաւորաց ,
և կուսանաց , և ամ սրբոց քոց եր-
կնաւորաց և երկրաւորաց ։ Եւ քեզ
փառք և երկրպագութիւն անբա-
ժանելի սբ երրորդութեանդ՝ յաւի-
տեանս յաւիտենից . Ամէն ։

Մաղթանք ։

Վս սրբուհւոյ անարատ մօր քոյ և
կուսի՝ տր ընկալ զաղաչանս մեր , և
կեցո՛ զմեզ ։

Քարոզ ։

Սբ զածածինն և զամ սբս բարե-
խօս արասցուք առ հայր յերկինս .
զի կամեցեալ ողորմեսցի , և գթա-
ցեալ կեցուսցէ զարարածս իւր , ա-
մենակալ տէր ։

Աղօթք ։

Ընկա՛լ տր զաղաչանս մեր բարե-
խօսութբ սբ ածածնին անարատ ծնո-
ղի միածնի որդւոյ քոյ . և աղաչա-

նօք ա՟մ սրբոց քոց. և որոց այսօր է յիշատակ: Լո՛ւր մեզ, տ՟ր, և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութ՟ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ ս՟բ հոգւոյդ. այժմ և միշտ և:

Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս. Ամէն:

Հայր մեր, որ յերկինս. ն՟բ:

Մաղթանք:

Զհանդստեան զաղօթս և զաղաչանս ընկա՛լ մարդասէր ա՟ծ, 'ի հաճոյս բարերար կամաց քոց: Եւ մեր մեղաց և բազում յանցանացն թողութի՟ շնորհեա՛: Եւ քեզ փառք յաւիտեանս. Ամէն:

Փառք քեզ տ՟ր ա՟ծ, որ պարգևեցեր զօրս բարեաւ և խաղաղութ՟ անցուցանել: Մարդասէր ա՟ծ, զառաջակայ գիշերս՝ որ 'ի վ՟ր մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա՛, 'ի չարեաց ազատեա՛, 'ի գործս բարիս առաջնորդեա՛: Առաւօտու օրհնութե՟ցն և փառաբանութե՟ցն արժանի՛ արա զա՟մ հաւատացեալս անուանըդ քում ս՟բ, և պահեա՛ 'ի խաղաղութեան:

Տէր Ած մեր, տո՛ւր զքո խաղաղութիւն ամ աշխարհի․ բա՛րձ զցասումն և զպատուհասն ՚ի յարարածոց։ Ողորմեա՛ հարց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցելոց։ Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, ապաստաւորաց, և այնոցիկ՝ որք ը҃ հովանեաւ սբ տաճարիս են հանգուցեալ։

Տր Ած, օգնեա՛ Թգրց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից․ զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով ՚ի խաղաղութե։

Տէր Ած մեր, պահեա՛ զառաջնորդս և զեղբայրութիս մեր ամբողջ և անխռով ՚ի կամս ողորմութե քո։ Նշանաւ սբ և պատուական խաչիւ քո հալածեա՛ զերևելի և զաներևոյթ Թշնամին ՚ի սահմանաց մերոց և ՚ի բնակութէս մերմէ։ Փրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից։ Եւ քեզ փառք յաւիտեանս․ Ամէն։

Օրհնեալ եղերո՛ւք ՚ի շնորհաց սբ հոգւոյն․ հանդերո՛ւք խաղաղութբ․ և տր եղիցի ը҃ ամենեսեանդ։ Ամէն։

ՔԱՂՈՒԱԾ

# ՀԱՆԳՍՏԵԱՆ

## ՇԱՐԱԿԱՆԱՑ

ՀԱՄՕՐԷՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Ի ՔՐԻՍՏՈՍ

ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ





# ՔԱՂՈՒԱԾ

# ՀԱՆԴԻՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

## ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ

ՔԵԶ վայելէ ա͞մ օրհնութիւն. որ յարուցեր ես ձայնիւ յաւիտենից ննջեցելոց, Թագաւոր և իշխան վերօրհնեմք զքեզ: 'Ի միւսանգամ գալստեանդ քո ք͞ս փառաց Թ͞գւոր, 'ի ձայն փողոյ նորոգելին հոգիք ննջեցելոց, և յառնեն 'ի մեռելոց անապական մարմնով: Վ͞ս որոյ և մեք զքեզ աղաչեմք հայր երկնաւոր՝ դասաւորեա զննջեցեալսն մեր 'ի վերինդ քո երուսաղէմ, 'ի ժողովս անդրանկաց գրելոց 'ի յերկինս:

Ձայն արկեալ կենարարին ա͞ծային բարբառովն, ասէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք պա-

տրաստեալ ձեզ զկեանս 'ի հանդեր-ձեալ երկրին։ Ընդ առաջ ելանել քեզ հաւատովք 'ի յօդս վերինս, ա̃ծազգեաց լուսով պայծառա-ցեալ 'ի դասս անմարմնոցն. 'ի լսել զձայն երանաւէտ կոչմանն։ Ընդ աջմէ քումմէ կացո՛ ը̃ իմաստուն ն̃ք կուսանս, 'ի լուսեղէն առագա-տին պայծառացեալ 'ի դասս ան-մարմնոցն. 'ի ժողովս անդրանկաց գրելոց 'ի յերկինս։

Զհոգիս ծառայից քոց ք̃ս ըն-կա՛լ 'ի դասս անդրանկաց գրելոց 'ի յերկինս։ Ընկա՛լ վ̃ն ա̃ց զբանաւոր պատարագս 'ի մէնջ. և շնորհեա՛ ն̃ց զթողութ̃ն գտանել յաւուրն յետ-նում։

Ո. ԿԻՐ. Ողորմեա՛ ինձ ա̃ծ։ Որ զա-ւաջինն ոչ պահելով զպատուիրանն մեռաք. շնորհեցեր քե օրինակ մեզ պատուիրան կենաց՝ զի պահելով կենդանասցուք. ողորմ։ Որ 'ի խոր-հուրդ քո կամաւոր մահուան ե-կեղեցի քո ք̃ս մեռանելով օրինաց մեղաց. զի յորուցեալ ը̃ քեզ նո-րոգեսցի 'ի փառս. ողորմ։

ԱՊ․ Հայր բազումողորմ խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին․ Թո՛ղ ինձ զմեղս իմ և ողորմեա՛ ։ Տէր որ գթացար ՚ի կինն քանանացի․ գթա՛ և յիս ՚ի մեղաւորս և ողորմեա՛ ։ Տէր որ դարձուցեր զմաքսաւորն ՚ի գիտութիւն ճշմարտութեան, դարձո՛ և զիս զմոլորեալս, և ողորմեա՛ ։

ԴՁ․ Այսօր գոլով՚ի բեթանիա քո ամենազօր հրամանաւդ ձայնեցեր զԼազարու, և դողացաւ մահ․ դժոխք պարտեցաւ՝ ապականութիւն լուծաւ․ կենդանարար քո՛ կեցո՛ զմեզ ։ Այսօր գոլով ՚ի բեթանիա՝ զքո զաշխարհակեցոյց ո՛ր զյարուեդ յառաջագոյն ծանուցեր, անապականաբար կոչմամբ զչորեքօրեայն ՚ի թաղմանէ․ կենդան ։ Այսօր գոլով ՚ի բեթանիա երբայեցւոց մանկունքն սքանչացեալ աւէլին․ զմարխամու զեղբայրն ՚ի թաղմանէ յարուցեալ որդւոյն մարխամու․ կենդանարար ։

ՅԱՐ․ Անձառելոյ հօր էակից՝՚ի խաչ ելեր կամաւ հօր, ողորմեա՛ ։

Անմահութեան տուող ք՟ս. 'ի գերեզ-
ման իջեր որպէս մարդ. ողորմեա՛:
Եւ յերրորդ աւուր յարեար, յոյս
յարութեան ցուցար մեզ, ողորմ:

ՀԳ. Որ յա՟մի ես ա՟ծութիւն. և 'ի
ձայն հնչման իջեր յերկնից ս՟բ հո-
գի, ողորմեա՛ մեզ: Որ զա՟մ լնուս
զօրութ՟բ քով. և 'ի դասս առաքելոցն
իջեր բնակիլ ս՟բ հոգի. ողորմեա՛:
Որ անբաժանելի ես յա՟ծութեան,
և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ
հանգեար յառաքեալսն ս՟բ հոգի.
ողորմեա՛ մեզ:

Մ. Որ զաւետիս հոգւոյն 'ի հրեղէն
'ի հրեշտակէն ընկալար. ուրախ լեր
բերկրեալդ ո՟ր ը՟ քեզ՝ մարիամ ան-
հարսնացեալ: Անսկիզբն բանն հա-
ճեցաւ առնուլ մարդեղութեամբն
սկիզբն 'ի կուսէդ., ք՟ս ա՟ծ թագա-
ւորն յաւիտենից: Աղաչեմք զքեզ
սուրբ ա՟ծածին, առ ք՟ս բարեխօ-
սեա փրկել զժողովուրդս իւր զոր
գնեաց արեամբն իւրով:

ԽՉ. Հրաշակերտ և զօրեղ փայտ
խաչի քո ք՟ս. գաւազան զօրութ՟ 'ի
յերկրի երևեալ. եկայք ժողովուրդք

երկրպագեսցուք։ Զոր հրէիցն ծած-
կեալ զանթաքչելի զգանձն. փա-
փագմամբ թագուհոյն փայտ կե-
նաց յայտնեցաւ. եկայք ժողո։

Փառք հօր և։

Սա է զէն յաղթութեան հաւատացե-
լոց. ախոյեան և կնիք յաղթօղ ընդ-
դէմ թշնամւոյն. եկայք ժողո։

Այժմ և միշտ։

Հաշտեալց 'ի ձեռն որդ մարմնոյ և
արեան քո տր. և պարգևեալ նոցա
դասել. յաջակողմանն քում։

## ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄՆ

ԶԵՌՔ քո արարին և ստեղծին
զիս 'ի հողոյ 'ի յօրհնել զքեզ, տր
յաւիտեան։ Իսկ պատրանօք բան-
սարկուին խափանեցայ յանձառ
լուսոյն, և դարձայ անդրէն 'ի հող
յորմէ ստեղծայ։ Մխիթարիչ որ
հոգի լուսաւորեա զմեր ննջեցեալ-
սն, և հանգո զհոգիս նց ը սրբս քո։

Հայր անոխակալ և բարեգութ,
մաղթելով հայցեմք 'ի քէն վս մեր

ննջեցելոցն, արժանաւորել հանդըստեան օթևանի մէջն: Անճառ ծնունդ հօր որդի․ որ մանկանացուացս կեանքդ ես․ զհոգիս ննջեցելոցն մեր ընկալ, և արժանաւորեա՛ հանգս: Եւ նորոգօղ տ̃ր հոգի, յորժամ նորոգես զապականեալս՝ յայնժամ շնորհեա՛ և մեր ննջեցելոցն արժա:

Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութեան, յառնելով տխեղծ րաց 'ի դատաստան ահաւոր․ յայնժամ աւուր ահեղին յիշեա՛ տ̃ր և զմեր զննջեցեալսն և հանգո՛ ընդ սրբս քո: Յորժամ ճառագայթք ա̃ծութեդ փայլեն 'ի յարևելից․ և դպրու̃ք հրաշէցն բանին, յայնժամ աւուր ահեղին՝ յիշեա՛ տ̃ր և:

Ո․ ԿԻՐ․ Որ առաքեցար 'ի հայրական ծոցոյ՝ ծածկեալ խորհուրդ ընդ հօր յաւիտեան, և առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանապական կուսէն անճառ միութը̃․ վը̃ մերոյ փրկութե̃ ողորմեա՛: Որ փոխանակ ճաշակացն դառնութե̃ մահաբեր պտղոյն․ անճաշակ լինելով

քո քառասնօրեայ՝ քաղցրացուցեր յուսով զլուծ նոր քո օրինաց • վասն մեր ։ Որ յաջակողմ աւագակին՝ բացեր ըզդուռն դրախտին կենաց • բա՛ց և մեզ մեղաւորացս ողորմութ՟ե • որք ը՟ նմին զքեզ դաւանեմք տ՟ր և թագաւոր • աղաչեմք զքեզ՝ ողորմեա՛ ։

ԱՊ• Ծով կենցաղոյս հանապազ զիս ալէկոծէ ։ Մրրկեալ ալեօք թշնամին ինձ յարուցանէ ։ Նաւապետ բարի լե՛ր անձին իմոյ ապաւէն ։

ՂՁ• Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութ՟ե 'ի թողութ՟ն մեղաց մերոց ։ Այսօր տ՟րն մեր լուանայր զոտս աշակերտացն, և պատուիրէր զայս առնելով ։ Մի ոմն 'ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս 'ի մահ , և որոշէր յաշակերտացդ ։ Զայն լուեալ պետրոսի՝ ակնարկէր առ յովհաննէս հարցանել թէ ո՛վ իցէ ։ Բանն զոր ասաց յ՟ն՝ տրտմեցոյց զնուր զաշակերտսն • և խռովեցան ամենեքեան ։

ՅԱՐ• Իջեր յերկնից որդի ա՟յ և մարմնացար 'ի սրբոյ կուսէն • որ ան-

մեկնեալդ ես ՚ի հօրէ ողորմեա՛։ Եկիր ՚ի չարչարանս կամաւորապէս ա̃ծ՝ և խաչեցար վ̃ն ազգի մարդկան, և ՚ի գերեզման իջեր անապական ողորմեա՛։ Զմահ լուծեր և զաշխարհս ազատեցեր կարողապէս տ̃ր. և ՚ի մեռելոց յարեար իշխանութեամբ ողոր։

ՀԳ. Որ առաքեցար ՚ի հօրէ՝ հոգիդ անեղ և համագոյ. աղաչանօք տնօրինաբար քում էակցին, լինել մխիթարիչ ս̃բ առաքելոց. աղաչեմք զքեզ ողորմեա՛։ Որ իջեր տիրաբար յերկնից սաստիկ հողմոյ նման ա̃ծ յայտնապէս. և ՚ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ՚ի դասս առաքելոցն. աղաչեմք։ Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն. որք արբուցին ուսումեցելոց որդւոց ադամայ զբաժակն ուրախարար յայգւոյն եդեմայ. աղաչեմք զքեզ ողորմեա՛։

Մ. Ո՛վ գերահրաշ ծաղիկ, բուրեալ յեդեմայ հոտ անմահութե̃ ծննդոցս եւայի՝ յորմէ սփռեցաւ

մահ ը̃ տիեզերս · օրհնութբ̃ զքեզ մեծացուցանեմք ։ Դու լուծիչ երկանց, բարձօղ անիծից · ծագումն արեւու լուսոյն ճշմարտի՝ որով հերքեաւ խաւարն առաջին · օրհ ։

Զքեզ ունիմք բարեխօս կոյս անհարսնացեալ · մայր անարատ էմմանուէլի, տաճար բանին հօրն երկնաւորի · օրհնութեամբ ։

ԽԶ · Սեղան քո տ̃ր զօրութեանց հաւատով կանգնեցաւ ՚ի խորանի քում, եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ։ Վէմ պատուական ՚ի խորանի քում հիմնեցաւ · այսօր եկայք ժողո ։

Փառք հօր և ։

՚Ի սմա մատուցաւ ճշմարիտ պատարագ և զենումն անապական · եկայք ։

Այժմ և միշտ ։

Զարհուրեալ դողան արարածք ՚ի ձայնէ որոտմբէագոչ փողոյն · յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոչէ ՚ի դատաստան զազգս որդւոց մարդկան · յայնմ աւուր ։

## ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ

ՀՐԵՇՏԱԿԱՑԻՆ ձայնիւ օրհնեսցուք զամենամ͞բ զերրորդութ͞ին, փառաւորելով զՀայր, որ վերակոչեաց զամենեսեան 'ի մահուանէ յանմահութիւն: Երգեցէք ա͞ն երգ նոր եկեղեցիք սրբեցելոց, ք͞նի երկրպագելով, որ վերա: Սրբասաց ձայնիւ օրհնեսցուք, հոգեւորական հնչմամբ գովեսցուք, ն͞բ զհոգին փառաւորելով, որ վերահանգոյց զամենե:

'Ի ձայն փողոյ գալստեան քո տէր, ա͞մ հոգիք զարթիցեն կալ 'ի դատաստանի քում ք͞ն ա͞ծ մեր: Յորժամ հնչէ բարբառն ահագին, և հարկանի փող յարութեան մերոյ. և մեք գոչելով ասեմք, փառք գալստեան քո տ͞ր: Յորժամ առնես զհատուցումն տէր, և ո͞րք քո պարծեսցին 'ի քեզ. և մեզ շնորհեսցես փրկիչ կալ 'ի յաջմէ քումմէ.

Թագաւոր անմահ արարիչ յա֊
ւիտենից, մարդասիրութեամբ քո
խնայեա՛ յանձինս մեր, ստեղծիչ
կենդանեաց և հանդուցիչ ննջե֊
ցելոց: 'Ի խաչին բևեռեցար. զմա֊
հու լուծեր զիշխանութի. յաւիտե֊
նից զննջեցեալսն վերածեր յանմահ
'ի կեանս. ստեղ:

ԱՊ. ԿԻՐ. Ըստ աւետեաց մար֊
գարէին,
Որ առ փրկեալս արեամբ դառնինդ.
Ցնծամք և մեք ծառք անտառի,
Ընդ գալուստ տեառնըդ կըրկնակի.
Շնորհեա՛ մեզ տէր ընդ արդարոց,
Ընդ առ 'ի քէն տնկեալ ծառոց.
Այժըմ յուսով ըզըւարճանալ,
Եւ յերկրորդին ընդ քեզ ցնծալ:
Արմին նըման տայ աւետիս
Զաքարիաս նոր սիոնի.
Եթէ ուրախ լեր ահա գայ
Առ քեզ խոնարհ և հեզ արքայ.
Նըստեալ 'ի յէշ և յաւանակ,
Կըրկին ազանց գոլ օրինակ.
Նըստեալըդ յաթոռ քերովբէից,
Նիստ գըթութեամբ 'ի մեր հոգիս:
Զահեղ փառաց քոց երևումն

Որ լինելոց է յերկրորդումն.
Ետես դաւիթ յառաջագոյն,
Ծանոյց կանխաւ ազդմամբ հոգւոյն.
Թէ յայտնապէս Աստուած գայցէ,
Հուր առաջի իւր բորբոքէ.
Յայնժամ Յիսուս 'ի մեզ խնայեա՛,
Գթա՛ Քրիստոս՝ և ողորմեա՛:
Աստուածածին անհարսնացեալ,
Յերկրէ յերկինս հարսն ընծայեալ.
Յորժամ բազմիս լուսոյ նըշման
Քո միածնիդ յաջակողման,
Յայնժամ մաղթեա՛ ընդ մեր ըղնոյն,
Փրկել ըզմեզ յահեղ բոցոյն.
Համադասիլ ընդ արդարոց,
Երգել քեզ փառս ընդ երկնայնոց:

ԱՊ. Դարձո՛ զցասումն քո 'ի մէնջ յաղաղակել հոլեղլինացս. բազմագութ տ̃ր խնայեա՛ և մի՛ կորուսաներ: Կանգնեա՛ զանկեալս 'ի գլորմանէ, զվիրաւորեալս 'ի Թշնամւոյն. որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա՛ զիմ զհիւանդութիւս: 'Ի յանցանաց իմոց Թախծեալ անձն իմ, գոչեմ ո̃ղ զմաքսաւորն. ա̃ծ քաւեա՛ զիս զմեղաւորս:

ՂԶ․ Յածայլն ձայնէ գոչմանն տարուեցին դողալով կարապետք դժոխոց․ և մեռեալն եկն արտաքս անապական ։ Կացեալ 'ի դուրս այրին, և ձայնէր աղդարարող բարբառով 'ի գերեզմանն․ Ղազարէ, եկ արտաքս անապական ։ Ելեալ 'ի գերեզմանէն երիզապինդ պատանօքն մեռեալն, հրամայեաց լուծանել 'ի կեանսն յաւիտենից ։

ՅԱՐ․ Իջեր յերկնից որդի ա̃յ ազատեցեր զարարածս․ անկանիմ առաջի քո՝ ողորմեա ինձ ա̃ծ ։ 'Ի խաչին բևեռեցար ա̃ծ, և զմարդն 'ի կապանաց մահու արձակեցեր․ և զիս մի անտես առներ, որ մեղօքս եմ մեռեալ ։ Ծագումն հօր անմատոյց լուսոյն, որ իջեր 'ի գերեզման, կենդանացուցեր զարարածս քո, և զիս մի անտես առներ, քանզի քեզ միայնոյ մեղայ ։

ՀՈԳ․ Սարսափելի հողմոյ նըման,
Ահեղագոչ սաստիկ հնչմամբ
Երևեցար 'ի վերնատանն
Հոգիդ դասուն երկոտասան,
Որք առ 'ի քէն մխիթարեցան

Որպէս զոսկի հրով մաքրեցան,
Մաքրեա՛ 'ի մէնջ ըզմէգ մեղաց՝
Եւ ըզգեցո՛ ըզլոյս փառաց։
Եկիր յերկիր աստուածաբար
Դատել զաշխարհս իշխանաբար,
Ընդ° արդարութեան և ընդ մեղաց,
Եւ ընդ չարին դատաստանաց.
Բացեր զգանձդ անհիւթական,
Պարգևս ետուր որդւոց մարդկան.
Մաքրեա՛։
Սէրն 'ի սիրոյ զսէրդ տուաքեաց,
Յինքն զանդամս իւր քև յօդեաց.
Զեկեղեցի իւր զոր շինեաց,
Եօթն սեամբ քո հաստատեաց.
Տընտես 'ի նմա եդ զառաքեալս.
Եօթնեակ շնորհօք քո զարդարեաց.
Մաքրեա՛։

Ծն. Խոնարհեցար 'ի բարձանց, և մարմնացար 'ի կուսէն, որ նստէիրդ 'ի քրովբէս՝ արարիչդ արարածոց։ Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ, արդ անդ կուսին ժուժկալեալ ընդունել զգանձդ երկնային։ Յորմէ սարսեալ սերովբէքն, ո՛չ իշխէին մերձենալ՝ 'ի խանձարուրս պատեցար, և եդար 'ի մսուր անբանից։

ԽԶ. Այսօր խնդրի պատուական փայտ խաչին՝ աւանդեալն 'ի գողգոթայ 'ի ձեռն ա̃ծասէր դշխոյին. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք ա̃ծային ո̃ր նշանիս։ Այսօր ընծայէ գողգոթայ զծածկեալն 'ի յերկրի՝ վերաբերեալ անուշահոտ խնկովք 'ի ձեռն երանելւոյն յուդայի, եկայք հաւատացեալք երկրպա :

Փառք հօր և :

Այսօր 'ի ձեռն փրկական ո̃ր խաչին կենագործի պատանին մեռեալ, և ողբայ սատանայ զկործանումն իւր. իսկ մեք ք̃ի հաւատացեալք երկրպագեսցուք :

Այժմ և միշտ և :

Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա զմեր զննջեցեալսն, յորժամ գայցես անձառ փառօք հատուցանել մարդկան զգործս, և մեր ննջեցելոցն շնորհեա դասիլ ընդ սուրբս քո :

# ԱՒԱԳ ԿՈՂՄՆ

ՔԵԶ վայե՛լ է աստուած օրհնութիւն, որ յանմատոյց աթոռ անմահից փառաբանիս 'ի բարձունս, զննջեցեալսն յանուն քո ընկա՛լ յերկնային քո ս̃բ առագաստ, որ միայնդ ես մարդասէր։ Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց, յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց, և հանգո՛ ը̃ ս̃բս քո 'ի խորան քում սիրողաց, որ։ Որ յա̃մի ես օրհնեալ տ̃ր, արժանի արա՛ զծառայս քո վերստին նորոգման, 'ի լսել զձայն ա̃ծային փողոյն՝ ընդ առաջ ելանել քոց փառացդ, որ։

Թագաւոր խաղաղութե̃, որ քաղցրութե̃ խնամես զքո զարարածս. յիշեա՛ տ̃ր զհոգիս ննջեցելոցն ընդ ս̃բս քո, և դասաւորեա 'ի յաւուրն այցելութե̃։ Որ կոչեցեր 'ի դրանց մահու զսիրելին քո զղազարոս. և ծանուցեր զա̃ծութիւն ընդհանուր

տիեզերաց, լուսաւորեա՛ տ՟ր զհո-գիս։ 'Ի տաճարի քում սրբութե՟ մատուցանեմք քեզ պաղատանս արտասուալից. պայծառացո՛ տէր զհոգիս ննջե։

'Ի գիշերաց կանխեալ սաղմոսիւք և արտասուօք հայցեմք 'ի քէն ք՟ս, յիշեա՛ զննջեցեալսն 'ի ս՟բ անուանդ քո, և հանգո՛ զհոգիս նոցա ընդ ս՟բս քո։ Որ յանմարմնոց վերօրհ-նիս. առ քեզ կարդամք և պաղա-տիմք ք՟ս, յիշեա՛։

ԱԳ. ԿԻՐ. Որ պատուիրան ճշմար-տութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո ք՟ս, անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ ա՟ծ հոգւով և մտօք։ Որ զբան քո օրհնաց հաստա-տեցեր գործով մեզ օրինակ. հա-նելով զգիշերն 'ի գլուխ յաղօթմն ա՟յ. բնութե՟ մերով անօրինաբար, որում կրկնի ծունր ա՟մ։ Վասն որոյ և մեք պաղատեսցուք առ քեզ ք՟ս. շնորհեա՛ մեզ յա՟մ ժամ լի-նել քեզ յանդիման մաքուր աղօ-թիւք՝ ըստ անմարմնոց որ 'ի յեր-կինս։ Աղաչանօք ա՟ծածնին անա-

պական քում ծնողին, զխմնալի այս սրտից մերոց բացցես ողորմութեամբ, հայել 'ի լոյս քո Ք՟ս։

ԱԳ. Յո՟մ ժամ աղաչանք իմ այս են, 'ի մեղաց իմոց ո՟ր արա զիս տէր։ Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ, աղաչեմ զքեզ թող ինձ տէր։ Արտասուաց իմոց մի՛ լռեր տէր, զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի։

ԴԶ. Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց, ելին ընդ առաջ երկնաւոր փեսային՝ վառեալ լապտերօք։ Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք 'ի յիւղոյն, անպատրաստ գտան գալստեան փեսային շիջեալ լապտերօք։ Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգևոր. զի մտցուք 'ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք։

ՅԱՐ. Ողորմեա՛ ինձ ա՟ծ իմ ողորմեա՛։ Որ 'ի յերկնից իջեր բանդ ա՟ծ, և վասն մեր մարմնացար 'ի ս՟բյ կուսէն, ողորմեա՛ ինձ ա՟ծ իմ ող։ Որ 'ի խաչին տարածեցեր զանարատ բազուկս քո. և վասն մեր հեղեր

զարխն քո սուրբ. ողորմ։ Որ 'ի գերեզմանի եդար անապականն՝ և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս. ող։ Որ 'ի յերկինս համբարձար ամենակարօղ՝ և ը̄ աջմէ հօր նստար յաթոռ փառաց, ող։

ՀԳ. Իջեր տէր ողորմութբ̄ քով յաշխարհ, և զմեռեալ բնութի̃ս 'ի կեանս վերափոխեցեր։ Ելեր տէր առ հայր փառօք 'ի յերկինս, և մխիթարիչ առաքելոցն առաքեցեր ս̃բ զհոգիդ։ Բացեր տէր այսօր զգանձդ երկնային, և բաշխեցեր առատապէս պարգևս աղքատ ընութեանս։

ԾՆ. Որ ողորմեցար 'ի մեղս ծընեալ մարդկան հայր երկնաւոր ը̄ մարգարէին, և ետուր բնութե̃ա այսօր պարգև զկոյսն սուրբ զծնող որդւոյդ միածնի. մաղթանօք սորա տ̃ր մեզ ողորմեա։ Որ ցօղեցեր 'ի մեզ յամպոյ օրհնաց որդիդ այսօր զկոյսն մարիամ. յորմէ ծնար մարմնով և բարձեր նովաւ զմեղս նախաստեղծին ադամայ. մաղթանօք սորա տ̃ր մեզ ողորմ։ Որ մաքրե-

ցեր հոգիդ ս͞բ զսիրտ և զարգանդ մօր քո փառակցին․ այսօր ամուլ ծնողաց նորին ետուր զմայր բանին զօրհնիչն եւայի․ մաղթանօք։

ԽՉ․ Ճառագայթ փառաց հօր որդիդ միածին, որ զլոյս անմայրափակ մարմնով պարագրեալ, այսօր ՚ի Թափոր փառօք փայլեցեր․ Որ անտես սրովբէից անհաս ՚ի վեր քան զբան, ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյս անստուեր, այսօր ՚ի Թափոր փառօք։

Փառք հօր և։

Որ հրեղինացն անմերձենալի հուր ա͞ծութ͞եդ ՚ի հողեղէնս խոնարհեալ լոյս արփիական այսօր ՚ի Թափոր փառօք։

Այժմ և միշտ։

Որ մարմնացար վասն մեր, աղաչանօք ա͞ծածնին ք͞ո յիշեա՛ զննջեցեալսն ՚ի ս͞բ անուն քո, և հանգո՛ զհոգիս նոցա ընդ ս͞ր͞բս քո։

## ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆ

'Ի ՁԱՅՆ մեծի զուարթնոյն, և'ի հնչումն հրաշալի փողոյն․ ուր հոլացեալ մարմինք մարդկան նորոգին․ յայնժամ աւուր ահեղին յիշեա՛ տր և զմեր զննջեցեալսն․ և հանգո՛ ընդ սրբս քո։ Յորժամ նշան տրունեան ճառագայթիւք փայլէ․ և թագաւորդ թագաւորաց փառօք տեսանի․ յայնժամ աւուր։ Յորժամ ատեան դատաստանի դնի, և դըպրութիւնք հրաշիցն բանին, յայնժամ աւուր։

Որ երկայնամիտդ ես տր՝ քաղցր և անոխակալ, հանգո՛ զհոգիս քոց ծառայից, զի մի՛ դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուր ահեղ ատենին։ Զյիշատակ հրաժարելոց 'ի հաւատոյս քեզ ընկալցիս, և զուխտս մեր ընկա՛լ որպէս զաբելին զնոյին և զաբրահամուն, զի։ 'Ի խորան քոում սիրողաց հանգուցես զծառայս

քո, և զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբս քո. զի մի՛ դարձցի։

Որ խոնարհեցար յերկնից բանդ ա՟ծ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն. յիշեա՛ զննջեցեալսն մեր յորժամ գայցես անձառ փառօք. զի դու ես տէր ա՟մ երկրի։ Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց, և խաչիւդ քո լուծեր զերկուսն մահու. յիշեա։

ԱՊ. ԿԻՐ. Որ արարեր զօրութ՟բ զիմանալեացն աշխարհ վերին. և 'ի նմա հաստատեցեր անտես զպետս հրեղինացն. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի և 'ի դրախտ նոր յադենի անտես եդեալ զմարդն առաջին, օրհ։ Որ շինեցեր բարձրադոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. և 'ի նմա կարգեալ անտես զքարոզս բանին ճշմարտութ՟ե. օրհ։ Անտանելւոյն տաղաւար բարձօղ էիցս բարձողին. որ ծնար զա՟ծ մարմնով զանմարմնաբար ծնունդն հօր. բարեխօսեա՛ վս՟ մեր ա՟ծածին մարիամ։

ԱՊ· Զերծո՛ զիս յորոգայթէ որսողին, և յա̃մ վտանգից ազատեցո՛, և ողորմեա՛ : Յաներևոյթ թշնամւոյն և 'ի գաղտնի նետից բանսարկուին պահեա՛, և ող : Փրկեա՛ զիս 'ի յանցանաց մեղաց իմոց, և նորոգեա՛ զիս հոգւով գիտուե̃ · և ողորմեա՛ :

ՂՋ· Արկօղջ զլոյս որպէս զօթոց՝ այսօր անճառ խոնարհութե̃ 'ի վերնատունն խորհրդոյ զգեստ ծառայի սփածանիլ յանձն առեր, օրհնեմք զեկեալդ 'ի կամաւոր չարչարանս : Որում երկրպագեն դասք հրեշտակաց, խոնարհեցար 'ի լուանալ զոտս հողեղէնս, բժշկել սոքօք զգարշապարս նախահօրն, բժշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս : Որ 'ի խորհուրդս փրկականս եկեղեցւոյ՝ բաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո, նորոգելով զմահացեալսն 'ի ճաշակմանէ, հաղորդս այսմ ընկա՛լ զմեզ միայն մարդասէր :

ՅԱՐ· Յամենայնի բազումողորմ ա̃ծ նայեա՛ յիս գթութեամբ և խնայեա՛, զի դու միայն ես մարդասէր : Նու խաչիւդ քո կենարարաւ

պահեամ , և յարութեամբդ քո փրկեամ և ապրեցո . զի դու մի : Եւ 'ի միասնդամ 'ի գալստեան քո տէր , վերստին զիս նորոգեամ և ապրեցո . զի դու :

ՃԳ. Որ համագոյդ ես հօր և որդւոյ անճառաբար բղխումն 'ի միշտ էէն՝ այսօր բղխեցեր ջուր կենդանի յերուսաղէմ . հոգի Աստուծոյ ողորմեամ : Որ արարչակից ես հօր և որդւոյ՝ որով կենդանածնեալք 'ի ջուրց արարածք . այսօր որդիս Աստուծոյ ծնանիս 'ի ջուրց . հոգի: Որ փառակից ես հօր և որդւոյ՝ և քննես զխորս Աստուծոյ . այսօր խորագէտս իմաստից զյիմարս աշխարհի արարեր . հոգի :

ԾՆ. Դասք անմարմնականք երկնաւոր զօրացն 'ի մէջ հովուաց . օրհնէին զծագումն լուսոյ մեծին 'ի հօրէ մեզ 'ի փրկութիւն : Եւ մոգքն աստեղբ նշանաւ եկին 'ի բեթղէհէմ՝ երկիրպագին տ̃ն , և 'ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյ : Եւ հովիւքն երգեն ԺԲ հրեշտակս փառք 'ի բարձունս մեծիդ տ̃յ . որ

եկիր և փրկեցեր զանեզերս քոյով յայտնութեամբդ ։

ԽԶ. Քեզ ք՟ն կաթուղիկէ եկեղեցւոյ շնորհողի զյաղթական զպատուական զա՟ծընկալ ս՟բ նշանս , մատուցանեմք զօրհներգու՟ն միշտ 'ի բարձունս ։ Սա կամաւ քո ք՟ն և Թևօք ամենազօր ս՟բ հոգւոյն , և դասուք հրեշտակաց Թռուցեալ եկաւորն 'ի լեառն վարագայ բնակել 'ի նմա ։

Փառք հօր և ։

Եկա՛յք ժողովուրդք երկրպագեսցո՛ւք ա՟ծային սուրբ նշանիս. ամբարձէ՛ք միաբան զձեռս ձեր 'ի սրբութիւն, և զբնակեալն 'ի սմա միշտ փառաւորեսցո՛ւք ։

Այժմ և միշտ ։

'Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ. աղաչանօք սուրբ ա՟ծածնի յիշեա՛ զննջեցեալսն մեր յորժամ գայցես անճառ փառօք . քանզի քո են փառք յաւիտեանս ամէն ։

## ՎԱՌ ՁԱՅՆ

ԼՈՅՍ 'ի լուսոյ զմեզ լուսաւորեա՛. որ փառօք հօր հանդերձեալ ես գալ 'ի դատել զերկիր, արժանաւորեա՛ և զմեր զննջեցեալսն անձառ խոստմանց քոց ընդ սրբս քո: Հօր և հոգւոյ համագոյակից՝ 'ի տիեզերական ահեղ ատենին, արժա: Երկնի և երկրի արդար դատաւոր, յորժամ հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց. արժանաւոր:

Որ արարիչդ ես հրեղինաց և հողեղինաց, և մշտնջենաւոր փառաբանիս 'ի բանաւոր պաշտօնէից, 'ի քէն հայցեմք թողութիւն շնորհեա՛ ննջեցելոց մերոց: Որ 'ի յերկրի երևեցար և ը մարդկան բնակեցար, և զանմահութիւն պարգևեցեր մեզ մահացելոցս, 'ի քէն հայցէ: Յորժամ նստիս յաթոռ փառաց դատողական իշխանութբ, և փառաւորես առ 'ի քէն փառօք զգինս արեան քո տր. 'ի քէն հայ:

Որ անբաւ քո մարդասիրութե̃դ գթացար յազգս մարդկան ծնար ’ի կուսէն, զծնեալս սուրբ աւազանաւն զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո՛ թագաւոր յաւիտենից։ Որ ’ի վերայ խաչի զենար որպէս գառն, և զմարմին և զարիւնդ քո բաշխեցեր ’ի փրկութիւն աշխարհի. զհաղորդեալս մարմնոյ քո և արեան. զննջեցեալսն։

ԱՊ. ԿԻՐ. Օրհնեմք զքեզ անսկիզբն հայր որդւոյդ միածնի. զոր առաքեցեր ’ի դարձումն մոլորեալ աշխարհին. դարձո՛ և զմեզ ’ի մեղաց որդւոյ քո չարչարանօք։ Գովեմք զքեզ բան և լոյս, որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա՛ զանկեալս մեղօք՝ քոյին ո̃բ չարչարանօք։ Բարեբանեմք զփառակիցդ հօր զհոգիդ ճշմարիտ. որ նորոգեցեր զհնացեալս մեղօք հնոյն ադամայ. նորոգեա՛ և զմեզ ’ի մեղաց նորոգութե̃բ քո շնորհաց։ Ուրախացի՛ր բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ. և բնակարան ո̃բ հոգւոյն՝

որով ծնար զբանն ա̃ծ. բարեխօսեա՛
վասն մեր ա̃ծածին մարիամ։

ԱԴ. Քրիստոս ա̃ծ աստուծոյ ո-
ղորմեա՛։ Անօրէնութեամբ 'ի մեղս
երկնեաց զիս մայր իմ. աղաչեմ
փրկիչ ողորմեա՛։ Վիրաւորեալ մե-
ղօք անկանիմ առ քեզ փրկիչ, մի
անտես առներ. ողորմեա՛ ։

ԴՁ. Շնորհեա՛ մեզ տէր ընդ աղ-
քատաց օրինակին ղազարու ժուժ-
կալութիւն. զի կամաւոր աղքատութ̃
աղքայութեան երկնից ընդ նմին լի-
ցուք արժանի. լո՛ւր մեզ և ողորմեա՛
քս̃ ա̃ծ։ Որ փոխանակ հացին կա-
րօտութե զհայցն անմահութե նմա
շնորհեցեր, և ընդ մեծատանն ան-
գթութե 'ի գոգն աբրահամու զնա
ընկալար. լո՛ւր։ Լուսաւորեա՛ զաչս
սրտից, ստանալ մեզ ողորմութ̃ 'ի
քէն տր̃ զողորմութիւն, զի մի ընդ
մեծատանն հայցեսցուք 'ի բոց հնո-
ցին ծարաւ մատին ջուր 'ի զովա-
ցումն. լո՛ւր մեզ և ողորմեա ։

ՅԱՐ. Որ տրտմահաղորդ քո չար-
չարանօք խաչին ազատեցեր զմարդն
'ի տրտմալցեաց փայտէն և 'ի մեղ-

սաճաշակ պտղոյն. ք՟ ա՟ծ և մեզ ողորմեա՛ց։ Որ մահուամբ քո կենդանի և մեռելութե՟դ յերկրի նորոգեցեր դարձեալ զաշխարհս և զհողացեալ բնութիւնս. ք՟ ա՟ծ։ Որ երեքօրեայ յարութ՟բ քո և համբարձմամբդ յերկինս վերածեր ըզմարդն առ կենաց փայտն և յանմահական ճաշակն. ք՟։

Հգ. Այսօր ցնծան դասք առաքելոյն գալստեամբ հոգւոյն ա՟յ. զորս մխիթարեաց փոխանակ բանին մարմնացելոյ եղեալ ընդ նոսա. փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ։ Այսօր բղխեաց ջուր կենդանի յերուսաղէմ. յորմէ լցան գետք ա՟ծայինք, և ընթացեալք արբուցին տիեզերաց զքառավտակ աղբիւրն եդեմայ. փառս։ Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ. պարարտացան դաշտք արդարութե՟ և գեղեցկացան անապատք մաքուր կուսութեամբ. փառս։

Մծ. Ա՟ծածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր

արևելք արեգականն արդարութե՛, և նստելոցս 'ի խաւարի լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք: Անապական տաճար, և մորենի անկիզելի. որ զանշէջ հուր ա̃ծութեանն 'ի քեզ տարեալ կրեցեր. որում բնութե̃ս կիզեալ չիջաւ կրից բոց. մ̃ծ: Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս, որում ելք յերկիր աւետեաց հորդեալ հոգւով 'ի քեզ տպաւորեալ բանին, մ̃ծ:

ԽԶ. Ո՛վ պահապան որ ծագեցար յեդեմայ. նշան յաղթութե̃ ընդդէմ աներևոյթ թշնամւոյն: Դու փակելոյ դրախտին բացող և առաջնորդ աւազակին. որ զբոցեղէն սուրն կապտեաց անեղին հրամանաւ:

Փառք հօր և:

Քև ցնծան ստորայինքս ամենայն 'ի միւսանգամ քո գալստեանն և յաւէժ զուարճանան դասք անմարմնոցն առէկիցս:

Այժմ և միշտ:

Որ ըստ նմանութեան մահու քո

տնկակից արարեր . և երկնից ար-
քայութեանդ ժառանգորդ լինել
խոստացար , զհաւատացեալս դա-
ւանութեան քո որ զննջեցեալսն մեր
ընդ սուրբս քո հանգո՛ թագաւոր
յաւիտենից ։

## ՉՈՐՐՈՐԴ ՁԱՅՆ

ՔԱՆԶԻ զքեզ օրհնեն իշխա-
նութիւնք երկնից թագաւոր փառաց .
ամենակալ ամենակարօղ թո՛ղ ըզ-
մեղս մեր ննջեցելոցն , և հանգո՛ 'ի
խորանի քում 'ի յարքայական 'ի
հանգստեան ։ Որ 'ի նախնումն ըզ-
մարգարէն մովսէս լուսաւորեցեր
ա̃ծային փառօք տեսլեամբ ա̃ծու-
թե̃դ քո . լուսաւորեա՛ և զմեր
զննջեցեալսն . և հանգո՛ 'ի խորա-
նի ։ Բարեխօսութեամբ սուրբ աս-
տուածածնի ծնողի և մօր քո յի-
շեա՛ զգինս արեան քո տէր . և դա-
սաւորեա՛ յերանաւէտ յանթա-
ռամ և յանտրտում 'ի կեանսդ , 'ի
յարքայական ։

Փառք քեզ Հայր, որ կենարարդ ես մարմնոյ և գոյացուցիչ հոգւոյ. ընկալ զօրհնաբանութիւն հոգւոյս յանձանական քո հանդիստ: Մարդասիրի Հօր որդի. որ պատկերակից եղեր հողեղինացս, և խաչեցար. ընկալ զօրհնա: Ամենազօր Տ̃ր Հոգի. որ անդորրիչ ես նեղելոց և մխիթարիչ հոգւոց. ընկալ զօրհնա:

'Ի հանգիստ քո տեղի՝ ուր ա̃մ ս̃րբք քո հանգչին, հանգո՛ զհոգիս ծառայից քոց ընդ ս̃րս քո՝ հանգո՛ մարդասէր: Դու ա̃ծ, որ իջեր 'ի դժոխս. զերկուսն մահու լուծեր, զկապեալսն արձակեցեր, և զհոգիս ծառայից քոց ընդ:

ԱՊ. ԿԻՐ. Որ զօրէնս սրբութ̃ պահոց նախ 'ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցն, ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութ̃ի մեղաց և մահու. վասն որոյ շնորհեա մեզ տէր ճաշակել զքաղցրութ̃ի քոց պատուիրանաց: Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոդիս 'ի Թշնամւոյն, և 'ի բազմապատիկ հիւանդութեանս կարօտացաք

մարդասիրին բառնալոյ զցաւս մեր.
վասն որոյ բժշկեա՛ զմեզ Քրիստոս
որպէս մարդասէր: Որ եկիր 'ի փըր-
կութիւն մարդկան ծննդեամբ կուսին
մարիամու. և կենդանարար քո յա-
րուքդ հրաւիրեցեր զմահացեալսն
'ի յարութիւն անմահութեան, վ̃ որոյ ա-
ղաչանօք մօր քո կեցո՛ զմեզ փրկիչ:

ԱԳ. Համբառնամ առ քեզ տէր
զանձս իմ, նայեա՛ յիս գթութեամբդ
քո և ողորմեա՛: Դու ես յոյս և ա-
պաւէն իմ, զերծո՛ զիս յորոգայթէ
մեղաց, և ողորմեա՛: Ապրեցուցիչ
իմ և փրկիչ իմ, ապրեցո՛ զիս յորո-
գայթէ մեղաց, և ողորմեա՛:

ԴԶ. Զգալուստ քո քս̃ այսօր
յերուսաղէմ՝ նոր եկեղեցի սբ̃.
յաղթական երգով բարեբանեմք,
օրհնեալ եկեալ անուամբ տ̃ն: Որ
վասն մերոյ փրկութեան յաւանակի
նստեալ յանձն առեր. ընդ ման-
կունսն բարեբանեմք. օրհնեալ:
Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո
անշարժ պահեա՛, և զերկրպագուս
անուանդ քում պահեա՛ 'ի խաղա-
ղութեան:

ՅԱՐ. Զյարութիւն ա՟ծորդւոյն հրեշտակապետն այսօր աւետէր կանանցն ասելով, յարուցեալ է տ՟րն 'ի գերեզմանէն: Ընթացեալ կանանցն խնդութ՟ պատմէին առակելոցն ասելով, յարուցեալ է: Վասն որոյ և մեք ընդ հրեշտակին գոչեսցուք զյարութիւնն Քրիստոսի. որ փրկեաց զմեզ 'ի ձեռաց մահու:

ՀԳ. Կենդանարար ա՟ծ մարդասէր հոգի. զժողովեալսն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղինօք լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ: Զուարճացան քո գալստեամբն ո՟ք առաքեալքն. կոչելով 'ի միասին զցըրուեալսն 'ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ: Հոգևորական ո՟ք մկրտութ՟ զարդարեցեր նոքօք զախեղերս 'ի զգեստս լուսափայլս և նորափետուրս. վ՟ս որոյ:

ՄԾ. Ծագումն հրաշալի որ անյայտ էր 'ի մէնջ, և բանն հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ և 'ի մարմնի բնակեցաւ. անճառ

պահելով զարարածս ա͞մ։ Ծա-
գումն հրաշագործ որ 'ի կուսէն
ծագեցաւ, Ճառագայթելով զա-
րարածս ա͞մ, երկինք ցնծային և եր-
կիրս ուրախանայր, և ք͞ս ա͞ծ ընդ
մարդկան շրջեցաւ։ Առ քեզ ա-
պաւինիմք ամենասրբուհի, գերա-
գոյն և հրաշալի և բաշխօղ բարու-
թեանց, աղբիւր ես ծարաւեաց և
հանգիստ աշխատելոց, և եղեր վեր-
ընկալ ա͞ծային բանին։

ԽԶ. Զօրութի ս͞բ խաչի քո ք͞ս
որ կանգնեցեր 'ի փրկութիւն աշ-
խարհի. սա պահեսցէ զմեզ յա͞մ
փորձութէ͞։ Քանզի 'ի սմա բարձրա-
ցար ա͞ծ, և 'ի սմա հեղեր զպա-
տուական ս͞բ զարիւնդ. սա։

Փառք հօր և։

Եւ զքո միւսանգամ զգալուստ
նշանաւ խաչի քո ցուցեր աշխար-
հի. սա։

Այժմ և միշտ։

Ընդ հոգւոցն արդարոց կատարե-
լոց. և զհոգիս ծառայից քոց ընդ
ս͞բս քո հանգո՛ մարդասէր։

## ՎԵՐՋ ՁԱՅՆ

ՀԱՅՐ անսկիզբն բարեխնամ մարդասէր. որ ստեղծիչդ ես հոգւոց և մարմնոց. յիշեա՛ զննջեցեալսն մեր, և հանգո՛ ընդ սր̃բս քո: Որդիդ միածին, որ գթածդ ես առ ամենեսեան, և խաչիւ և արեամբ գնեցեր զքո ժողովուրդս. յիշեա՛ զգինս արեան քո տ̃ր, և հանգո՛: Հոգիդ Ճշմարիտ. որ աղբիւրդ ես անսպառելի, և լցուցիչ ամենայն բարութեանց, յիշեա՛ զննջեցեալսն մեր, և:

Խնդրեմք 'ի քէն Թագաւոր փառաց՝ փառաւորեալդ 'ի զուարթնոց, զննջեցեալսն մեր ընկա՛լ մարդասէր տ̃ր, և հանգո՛ ընդ սր̃բս քո: Յորժամ գաս փառօք հօր դատել զերկիր արդարութեան արեգակն. զնն'': 'Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ քո̃ փրկիչ մեր և յոյս. զնն'':

Որ արարիչդ ես արարածոց հան-
գուցեալ 'ի հրեղէն կառս, յիշեա՛
զհոգիս ննջեցելոց մերոց, և հանգո՛
ընդ ս̃բս քո։ Որ երկայնամիտդ ես
առ ամենեսեան, և ներող յանցա-
նաց մերոց. յիշեա՛ զհոգիս։

ԱՊ. ԿԻՐ. Բանն որ ընդ հօր յէ-
ութեան և համագոյ ս̃բ հոգւոյն,
զպատկերն իւրական խառնեալ ընդ
հողանիւթ բնութեանս, զոր զար-
դարեալ փառօք եդ 'ի դրախտին
փափկութեան։ Յորում ցնծայր
զուարճացեալ անտխրական խըն-
դութեամբ, քանզի զա̃ծ տեսանէր
միշտ խոնարհեալ 'ի դրախտին.
յորմէ զլուսոյն ճառագայթ ապա-
ւորէր 'ի յինքեան։ Վասն որոյ ա-
ղաչեմ մայր ա̃յ մարխաւ՛ զմիածին
քո զորդին, զի շնորհեսցէ ըստ ա-
ւազակին, ժառանգել վերստին
մեզ զդրախտին վայելչութիւն։

ԱՊ. Քս̃ ա̃ծ յոյս ապաշխարո-
ղաց, շնորհեա՛ զթողութիւն բազում
յանցանաց իմոց։ Առ քեզ բազմա-
գութ ապաւինեալ կարդամք՝ մի՛
մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ։

Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ. յիշեա՛ և զիս Տէր 'ի քում յարքայութեանդ ։

ԴՁ. Յո միածինն անմահութեց պարգևատուն երևեցաւ մեզ, խափանեաց զզօրութիւն մահու ։ Բըղխմամբ արտասուաց մարխամու և մարթայի անկեալ առ ոտսն Տն, խնդրէին զնորոգումն եղբօրն ։ Բանիւ բանն Տծ կենագործեաց զղազարոս 'ի թաղմանէ, և եկեալ արտաքս անապական ։

ՅԱՐ. Յորժամ եկին 'ի գերեզմանն իւղաբեր կանայքն, և բերին զխունկսն 'ի խնկել զանապական մարմինն ։ Յայնժամ հրեշտակն աւետարանէր յարեաւ Քս, պատմեցէք աշակերտացն զյարութիւն Տն ։ Իսկ նոցա զարհուրեալ վս ահագին տեսլեանն, պատմէին աշակերտացն զահագին տեսիլն ։

ՀԳ. 'Ի համբառնալ բանին յերկինս և 'ի նստիլ ընդ աջմէ հօր, զուարճացեալ առաքելոցն երկրպագէին, օրհնելով զհայր զառաքօղ բանին ։ Համահաւաքեալ գունդք

աքեցն 'ի վերնատունն խորհրդոյ, համբարձմամբ աչաց սպասելին հոգւոյն, օրհնելով։ Յանկարծահաս հնչմամբ հեղեալ կենդանարար աղբիւր լուսոյ, անմահական կենաց լուսով զարդարեալ, որք օրհնէին զհայր զառաքօղ հոգւոյն։

ՄԾ. Ածածին մայր և կոյս, ծագօղ արեգականն արդարութե, որ լուսաւորեաց զմեզ, հոգևոր երգով զքեզ բարեբանեմք, և փառաւորեմք զմիածին քո զորդին։ Ելոյծ զօրէնս բնութեան մարդկան հրաշափառ քո ծնունդ, և զէութ բնութեն ամբողջ պահեալ. և կուսութեդ քո ոչ խախտեցան կնիք. հոգևոր եր"։ Զքեզ մորենի անկէզ՝ լեառն վիմածին՝ դուռն փակեալ և աղբիւր կնքեալ, նախատեսացն գուշակեալ մայր և կոյս հոգևոր։

ԽՉ. Խաչի քո քս երկրպագեն արարածք ամ, որ 'ի փրկութի մեզ կանգնեցաւ, սա եղիցի մեզ պահապան յաղթօղ, ապրեցուցանել զմեզ 'ի պատրանաց բանսարկուին։

'ի սմա բարձրացար բարձօղդ անի-
ծից. որ փառաւորեալդ ես ընդ
հօր, ժողովել զհեռացեալսն կեն-
սաբեր փայտին. ապրեցու:

Փառք հօր և:

Սովաւ լուսաւորեցան արարածք
ա՟մ, սմա ապաւէնին արդելեալքն 'ի
մեղսասէր բանսին, որ աղատեաց
զմեզ 'ի պատրանաց բանսարկուին:

Այժմ և միշտ:

Որ միասանգամ գալոց ես հայ-
րենի փառօք, նորոգել զնախսա-
տեղծին ծնունդ, յիշեա՛ զհոգիս
ննջեցելոց մերոց, և հանգո՛ ընդ
ս՟բս քո:

Եւ ապա ասէ սաղմոս ըստ յայնի. Եւ
ընթերցուած լինի աւետարան ըստ պատ-
շաճի 'ի յայնէն. Եւ լինի աւետարանին
ասէ ձայն ի յԱծանեղէն, Եւ փառք ի
յԱրարիչէն կամ 'ի Ես աստցին:

Երգ Տն Ներսէսի Կաթողիկոսի՝ ասա-
ցեալ Տն առ ՚ի փն ննջեցելոց:

ԲԿ. ԴԿ.

Աստուած անեղ անժամանակ՝
Հայր անըսկզբն և անքննակ,
Որդւոյ պատճառ ծննդեամբ
անճառ՝
Հոգւոյն բղխմամբ անքննաբար.
Աղաչեմք ըզքեզ գըթած
Երկայնամիտ և ողորմած,
Ողորմեա՛ քո ստեղծուածոյս
Յուսով ՚ի քեզ ննջեցելոյս:
Բանդ որ ՚ի ծոց Հօր միածին
Եւ կերպարան սկզբնատըպին,
Որով երկինք գոյացան
Աշխարհ լըրիւ հաստատեցաւ.
Հայցեմք ՚ի քէն տէր և փրկիչ
Ամենողորմ և կեցուցիչ. Ողորմ:
Գերագոյն շնորհաց բաշխօղ
Երկնաւորաց և երկրայնոց,
Կեանք և կենաց տուօղ Հոգի՝
Հօր և որդւոյ արարչակից.
Խնդրեմք ՚ի քէն աղբիւր բարեաց
Արբուցանօղդ ծարաւեաց. Ող:

Դաւանեմք ընդ սրովբէից
Զկենդանարարըդ համայնից
Երեքսրբեան մի տէրութիւն
Հայր և որդի և սուրբ հոգի.
Ցոր հանգուցեալըս մըկըրտեալ
Եւ հաւատով խոստովանեալ. ՈՂ:
Երրակի թիւ կատարեալ
Ցերիս անձինըս բաժանեալ,
Ածութեամբ միաւորեալ
Միով բնութեամբ հաւասարեալ.
Ցորմէ կապեալ և արձակիմք
Եւ վերըստին անլոյծ կապիմք .ՈՂ:
Զէակիցըդ հօր զորդի
Փառաւորեմք անըռելի,
Որ իջեր յարդանդ կուսին
Զադամային առեր մարմին.
Աղաչանօք ածածնին
Անապական քում ծընողին. ՈՂ:
Էրևեցար մարմնով յերկրի
Որ 'ի հօրէ անմեկնելի,
Ընդ հողեղէնըս բնակեցար
Ի հրեղինաց երկըրպագեալդ.
Պաղատանօք երկնաւորաց
Փառաբանիչ քոց հրեշտակաց. ՈՂ:
Ըստ օրինացըն մովսեսի
Ընծայեցար 'ի տաճարին,

Զի զբնութիւնըս մարդկային
Ընծայեցեր հօր 'ի յերկինս ·
Խնդրուածովք որ ծերունոյն
Քև 'ի կապից արձակելոյն · Ող։
Թագաւորըդ հրեղինաց
Որ ընդ մարդկան հողեղինաց
Շրջեցար տնօրինաբար
Կրեցեր ըզկիրըս մարդկաբար ·
Որ վասն մեր զայս ամ
'Ի յանձն առեր խոնարհութ · Ող։

ԲՁ · ԴՁ ·

Ժողովեալքս 'ի հրաժարումըն
Ծառայի քո յաշխարհէ ·
Հայցեմք 'ի քէն արտասուելով
Եւ պաղատիմք զայս ասելով
Ճանապարհ ընդ քեզ ելից
Հանգուցելոյս լեր ուղեկից ·
'Ի յօթևանս հօր քո լուսոյ
Ըզննջեցեալըս մեր հանգո՛ ։
Ի փրկութե մերոյ սկըզըբան
Մըկըրտեցար 'ի յորդանան ·
Զոր շնորհեցեր նոր աւազան
'Ի մաքրութիւն մեղաց մարդկան ·
Հայցմամբ կըրկին կարապետին
Մեծին 'ի ծնունդըս մըկըրտչին · Ի յօ։
Լուսաւոր ձայնիւ յերկնից

Զքեզ դաւանեաց հայր էակից.
Աղաւնակերպ հոգին իջեալ
Առ համագոյ իւր հանգուցեալ.
Ըզմկրտեալս նովին հոգւով
Յորդէգրուն հօր հաւատով. Ի յօ։
Խաւար մեղաց հալածեցաւ՝
Լոյս գիտութե քև ծագեցաւ.
Խայթուած օձին բժշկեցաւ՝
Հիւանդութիւն մեր ողջացաւ.
Կենդանարար մեռելոց
Եւ լուսատու խաւարելոց. Ի յօ։
Ծագումն անուն առ 'ի հօրէ
Որ ընտրեցեր 'ի յաշխարհէ.
Լուսաւորիչ տիեզերաց՝
Ըզգաստ ընտրեալ աշակերտացն,
Աղաչանօք առաքելոց
Փող յարուե մեր եղելոց. Ի յօ։
Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ
Որ ըստեղծեր զմեզ 'ի հողոյ.
Նորոգեցեր դարձեալ կրկին
Ծննդեամբ սբյ աւազանին.
Զոր կեցուցեր շնորհիւ քոյին
'Ի մահուանէ այն առաջին. Ի յօ։
Հոգւով լցեր զմարդն առաջին
Զոր կորուսեալ խաբմամբ չարին,
Ըզնոյն հոգի բանիւ քոյին ,

Հեղեր յոգիս մեր վերստին․
Նովին հոգւով սուրբ և բարի՝
Առաջնորդեա՛ հոգւոյ սորին․ 'Ի յօ։
Զայնեցեր առ ղաղարոս՝
Որով ետուր մեռելոց յոյս,
Կենդանութե̃ն չորեքօրեայն՝
Կենդանացան որք յադամայ․
Կենաց ձայնիւ վերջին փողոյ
Կոչեա ըզսա յայամ հողոյ․ Ի յօ։
Դօղեալ սարսեաց պահակ մահու
Ի կենարար ձայնիդ լըրոյ,
Արագապէս զոյդ ընդ բանին
Ետ զմեռեալն ըստ հրամանին․
Իշխանք օդոյս այս սարսեացին՝
Զհոգիս սորա մի արգելցեն․ 'Ի յօ։

ԱԿ․ ԳԿ․

Ճանապարհ մոլորելոց
Եւ ճառագայթ խաւարելոց,
Հրաւիրեցեր զորդիս լուսոյ
Ի յերկնային հարսանիս քո․
Ընդ զուարճալից անդ ժողովոց
Արժանացո՛ ըզսա դասուց,
Լի լապտերօք մոյծ յառագաստ
Ընդ իմաստուն ո̃ք կուսանացն։
Մերով բնութ̃ զոր ըզգեցար
Ի փայտ խաչին բևեռեցար,

Լուծանելով զմեզ 'ի մեղաց՝
Ի նախահօրըն կապանաց.
Լոյծ և ըզսա 'ի յանցանաց
Վան քո ո՞ք չարչարանաց. Լի:
Յետ կամաւոր մահու խաչի
Եդար 'ի նոր գերեզմանի.
Երեքօրեայ թաղմամբ յերկրի
Նոր ըստեղծեր զմեզ կենդանի.
Ջնջեալս ընդ քեզ 'ի հող մահու
Վերակոչեա՛ ձայնիւ փողոյ. Լի:
Նստեալ կանանցն լուաբերից
Եւ ողբային արտասուալից
Իբր ըզմեռեալ անյուսալից
Ըզկենդանիդ յաւիտենից.
Վան նոցին ո՞ք արտասուաց
Մաքրեա՛ ըզսա 'ի յանցանաց. Լի:
Շարժեալ հիմանցըն դըժոխոց
'Ի տեսանելըն ըզքեզ ներքնոց.
Հաներ զհոգիսն որք 'ի բանտին՝
Կապեալ զիշխանըն մահածին
Ընդ հանգուցեալ հոգիս սրբոց
Հանգո՛ զհոգի ննջեցելոյս. Լի:
Ուրախութ՟բ զօրք երկնային
Յերկնից յերկիր իջանէին
Յորժամ յարեար 'ի մեռելոց՝
Լոյս ծագեցար արարածոց՝

Սուրբ յարութեամբ քո կենարար
Յարո՛ ըզլաս 'ի կեանս անմահ . Ալ :
Զհանդուրժեալ պահապանացն
Ի յերկխուղէ երկնաւորացն
Որք զաւետիս տային կանանց
Թէ մահ լուծաւ մահկանացուաց .
Սա որ մահու քո ընկակից`
Լիցի կենաց հաղորդակից . Ալ :
Պարակցեալ անմարմնականքն
Առ կենսատու սուրբ գերեզմանն
Տան զաւետիս ազգի մարդկան
Վասըն կենաց յաւէժական .
Դասաւորեամ պարուց նոցին
Ըզնընջեցեալս յօրըն վերջին . Ալ :
Ջահաւորեալ նըշան խաչին
Յարևելից փայլեալ ծագի .
Հաւատացեալքն 'ի քեզ բերկրին`
Եւ ուրացօղքըն կոծեսցին .
Զերկըրպագուս սըրբոյ խաչին
Պայծառացո՛ լուսով նորին . Ալ :

ԱՁ . Գ.Ձ

Ոահ ·չործեալ երկնաւորաց
Գան առաջի քո նախընթաց .
Զընտրեալըս քո ժողովելով
Քեզ ընդառաջ բերեն ամպով .
Ընդ աղաւնեաց օդապարից

Խառնեա՛ ընդ սուրբ երամից ·
Դասաւորեա՛ ընդ վերնոց
Երգել քեզ փառս ընդ զուարթնոց։
Սարսափին տարերք երկրի
Յորժամ փառօք գաս հայրենի ·
Արեգական լոյս խաւարի ,
Լուսինն աստեղքըն նուաղին ·
Ընդ յաւուրն աներեկի
Լուսաւորեա՛ լուսով քոյին · Դաս։
Վերնական զօրացըն պետ
Փողէ բարբառ աւետաբեր ·
Արի՛ք մեռեալք որք յադամայ ,
Քանզի ահա եկըն փեսայ ·
Ընդ հարսնացեալ մաքուր հոգւոյ
Կարգեա՛ ընդ 'ի թիւ սրբոց· Դա։
Տիրական յաթոռ նըստիս
Յարարածոց երկըրպագիս ,
Արդարութեամբ զաշխարհ դատես ,
Վարձս ըստ գործոց հատուցանես·
Յայնժամ շնորհեա՛ ողորմութեամբ
'Ննջեցելոյս մեր զթողութիւն· Դա։
Բամեալ մարդկան ազգ ժողովին
Որք յադամայ ծընեալք լինին ,
Եւ հրեղինաց դասք երկնային
Համանդամայն վայրաբերին ·
Ի յայնմ ահեղ հրապարակին

Յիշեա՛ ըզսա յօրն ահագին • Դաս
Ցուցանեն գաղտնիք մարդկան
Իւրաքանչիւր որք գործեցան •
Բարեաց գործողքըն պըսակին ,
Չարեացն 'ի հուրն անշէջ մատնին •
Յայնժամ յիշեա՛ զորա բարին ,
Գործըք մեղացըն ջընջեսցին • Դաս։
Լուսին պըսակք զանազանեալ
Եւ պատմուճանք լուսափայլեալ ,
Սուրբ վըկայիցն 'ի գլուխ եդեալ
Եւ արդարոյըն զարդարեալ •
Հաղորդս արա հայցմամբ նոցին
Ըզսա լուսոյ փառաց նոցին • Դա։
Փառաց 'ի փառըս բարձրանան
Աջակողմանքըն վերանան
Յորժամ լըսեն զերանական
Զայն օրհնութեան 'ի քէն կոչման •
Նընջեցելոյս մեր լըսեցո՛
Զձայնին բարբառըն քո • Դաս :
Քահանայք և ժողովուրդք
Հայցեմք 'ի քէն տէր բարեգութ •
Ընդ նընջեցեալըս հաւատով
Ընկա՛լ զմեզ նովին յուսով
Յերուսաղէմ քաղաք վերին
Յորում արդարքըն ժողովին •
Փառս երգել միշտ ընդ նոսին
Երրորդութեանդ երրեակ անձին։

ԴՁ

Արարիչ և մարդասէր,
Անոխակալ և բարեգութ,
Որ գովիդ 'ի սրովբէից
Տէր դատաւոր արդարութեան,
Ընդ սրբոց առաքելոց
Տէր պսակեա զմեր ննջեցեալսն·
Ողորմած տէր ողորմեա
Հոգւոյն մեր ննջեցելոց:
Յորժամ գըրեալքըն կատարին
Որ զայնմ աւուր մեզ պատմեցին,
Մարգարէից բանքըն յարգին՝
Առաքելոցըն վըճարին· Ողորմած:
Ի վերինն երուսաղէմ
Ի բնակարանըս հրեշտակաց,
Ուր Ենովք և Հեղիաս
Կան ծերացեալք աղաւնակերպ
Ի դրախտին եդեմական
Պայծառացեալ արժանապէս· Ող:
Թագաւոր փառաց Քրիստոս,
Որ ժամանեալ գաս 'ի յերկնից
Ի վերայ Թևոց հողմոց
Քո հայրենի կերպարանօք
Եւ առնես հրափորձութեամբ
Ըզքըննուն որդւոց մարդկան· Ող:
Ի գնել բեմին բազմի փեսայն,

Եւ առագաստըն զարդարի.
Գաբրիէլեան փողըն գոչէ,
Սուրբք ամենայն անդր հաւաքին,
Արդարոց դասքըն բերկրին,
Իսկ մեղսասէրքըն թախանձին. Ող։
Յորժամ հընչիւն փողոյն լինի,
Եւ ղեւտական գիրըն յայտնի,
Ճառագայթ սրբոյ խաչին
Յարեւելից փառօք ծագի,
Հրեշտակաց գունդք ծաւալին,
Հրեշտակապետք պարունակին. Ող։
Ահեղ խորհուրդ քահանային,
Բազկատարած կայր 'ի բեմին
Առաջի սուրբ սեղանոյն,
Հուր չինջանի՝ խաւար մերժի,
Տրտմեալ հոգիքն ուրախանան՝
Ձի թողութիւն մեղաց լինի. Ող։
Մովսէս ա̃ծախօս
Եւ Ահարոն ը ղեւտացին,
Մարգարէքըն Իսրայէլի
Եւ քահանայք հին օրինին
Յառաջագոյն մեզ ծանուցին
Ըզգալուստ սուրբ միածնին՝
Ի փրկութիւն մեզ յայտնեցին,
Յանապատին կերակրէին. Ող։
Տէրունահաղորդ չարչարանօք

Ի յանձն առեր ըզմահ խաչին
Եւ փայտին բարձօղ եղեր
Վասն ադամայ նախաստեղծին․ Ող։
Զարհուրեցան զօրք երկնայինք
Յորժամ տեսին զտէրդ 'ի խաչին․
Արեգական լոյս քօղարկեալ
Եւ լոյս լուսնին նուաղեցաւ,
Յահեղ փառաց ա̃ծորդւոյն
Խաւար եղև ընդ տիեզերս․ Ող։
Ուրախացան ազգըք մարդկան
Յորժամ լուան զքո յարութի̃դ․
Նորափետուր զարդարեցան
Ի յարութեան ո̃բ միածնիդ․ Ող։
Աղաչանօք սրբոյ խաչին
Եւ անբարբառ բարեխօսին,
Եւ սրբոյ Աստուածածնին
Եւ յովհաննու կարապետին,
Եւ սրբոյն ստեփաննոսի
Եւ առաջին մարտիրոսին,
Եւ սրբոյ լուսաւորչին
Հայաստանեայց հայրապետին,
Եւ սրբոց առաքելոց,
Եւ համօրէն մարտիրոսաց․ Ող։

Ես ստացի 'ի վերանալ յինէն ա-ւուրց իմոց, յոյժ երթայցեմ ես այսօր, յառաջին օթևանին զոր ոչ գիտէի. օգնեա՛ և ինձ քո՛ այսօր՝ յառաջին ճանապարհին, և 'ի միւս անգամ գալստեանդ քո օգնեա ինձ։

Երկն եհաս յօր վախճանի իմոյ՝ լա-լումն ողբումն և աշխարումն. սիրտ իմ խռովեցաւ յիս, և ոսկերք իմ ցամաքեցան. օգնեա՛։

Ի մահիճս իմ զարթուցին զիս պահանջօղք հոգւոյ իմոյ, տանելին զիս 'ի ճանապարհ հեռաւորին՝ զոր ոչ գիտէի. օգնեա՛։

Նայեցայ և ո՛չ ոք էր՝ որ օգնէր ինձ. ապաւինեցայ յա̃ծ փրկութե̃ իմոյ. ցնծասցէ հոգի իմ յարքայ-ութեան քում. օգնեա՛։

Գրեցայ ես 'ի գիր կենդանութե̃, և մեկնեցայ երթալ առ արարիչն երկնի և երկրի. օգնեա՛։

Յանստուեր և յանեղ լուսոյն հե-ռացայ, խաբմամբ խաւարային ճա-շակեցի զմահաբեր պտուղն. հո-գւոյս պատկեր բարերար ստեղծո-ղիդ. օգնեա՛։

Յանջատման հոգւոյս 'ի մարմնոյս, 'ի քակտիլ գեղեցիկ շինուածոյս, զարհուրիմ 'ի սպառնալեաց լծագաւորին, թէ պահանջէ յինէն ըզտաղանդ պատուիրանին․ օգնեա՛:

Կուսածին մարդացեալ ա͠ծ իմ յս͠, յայնմ աւուր ահեղ ատենին, զգլխս արեան քո մի՛ դատապարտեր․ օգնեա՛:

Սոսկալի է օր վախճանի, և ահեղ է օր քո դատաստանին, յայնմ աւուր ահեղ ատենին զգլխս արեան քո մի՛ անտես առներ․ զի պատկեր եմ բարերար ստեղծողիդ․ օգնեա՛:

Ջահաւոր դատաստան դատաւորիդ տեսի և զարհուրեցայ, զի անպատրաստ եգիտ զիս 'ի հրամանաց քոց Թագաւոր յաւիտենից․ օգնեա՛:

Ա͠ծածին անարատ մայր տ͠ն և կոյս ո͠բ՝ բարեխօսեա՛ առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնալեաց գեհենոյն և պարգևեսցէ մեզ զերկնից զարքայութին, և հանգուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն․ օգնեա՛ և ինձ:

# ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Աւետարան ըստ Մատթէոսի. (Իդ. 1։)

Բկ. Դկ

Եւ ելեալ արտաքս յս՟ 'ի տաճարէն՝ գնայր. և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցն՟ս. տեսանէ՞ք զայդ ամ՟, ամէն ասեմ ձեզ. ո՛չ մնասցէ այդր քար 'ի քարի վ՟ր որ ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր 'ի լերինն ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն՝ և ասեն. ասա՛ մեզ՝ երբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս։ Պատասխանի ետ յս՟ և ասէ ցնոսա. զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ։ Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ ք՟ս. և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս՝ և համբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք, մի՛ խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամ՟ի, այլ չև է կատա֊

րած ։ Յարիցէ ազգ յազգի վերայ․ և թագաւորութի ՚ի թագաւորութե վերայ․ և եղիցին սովք և սրածութք և սասանութք ՚ի տեղիս տեղիս ։ Սակայն և այն ամ սկիզբն է երկանց ։ Յայնժամ մատնեսցեն զձեզ ՚ի նեղութիս , և սպանանիցեն զձեզ․ և եղիջիք ատեցեալք յամ ազգաց վս անուան իմոյ ։ Եւ յայնժամ գայթակղեսցին բզմք և զմիմեանս մատնեսցեն , և ատեսցեն զմիմեանս ։ Եւ բզմ սուտ մարգարեք յարիցեն , և զբազումս մոլորեցուսցեն ։ Եւ վս բազմանալոյ անօրէնութեն , ցամաքեսցի սէր բազմաց ։ Բայց որ համբերեսցէ իսպառ , նա կեցցէ ։ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութե ը ամ տիեզերս ՚ի վկայութի ամ հեթանոսաց․ և ապա եկեսցէ կատարած ։

Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութի աւերածոյն որ ասացեալն է ՚ի ձեռն դանիէլի մարգարէի՝ զի կայցէ ՚ի տեղւոջն սրբութե․ որ ընթեռնուն՝ ՚ի միտ առցէ ։ Յայնժամ որք ՚ի հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս․ և որ ՚ի տանիս կայցէ , մի իջցէ առ-

նուլ ինչ 'ի տանէ իւրմէ · և որ յան-
դի իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ
զձորձս իւր։ Բայց վա՜յ իցէ յղեաց
և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։
Յաղօթս կացէ՛ք՝ զի մի՛ լինիցի փա-
խուստն ձեր ձմերանի, և մի՛ 'ի շա-
բաթու։ Զի եղիցի յայնժամ նե-
ղութի մեծ · որպիսի ոչ եղև 'ի սկզ-
բանէ արարածոց աշխարհի՝ մինչև
ցայժմ, և ո՛չ այլ լիցի։ Եւ եթէ ոչ
կարճէին աւուրքն այնոքիկ, ո՛չ ապ-
րէր ամ մարմին · բայց վս ընտրե-
լոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։
Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ · ահա-
ւասիկ աստ է քն կամ անդ, մի՛
հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ
քրիստոսք և սուտ մարգարէք · և
տացեն նշանս մեծամեծս և արուես-
տս · մինչև մոլորեցուցանել՝ թէ
հնար ինչ իցէ և զընտրեալսն · ահա
յառաջագոյն ասացի ձեզ։ Ապա ե-
թէ ասիցեն ձեզ · ահաւանիկ յա-
նապատի է, մի՛ ելանիցէք · և թէ
ահա 'ի շտեմարանս է, մի՛ հաւատայ-
ցէք։ Զի ոպ փայլակն՝ որ ելանէ
յարևելից և երևի մինչև յարևմուտս,

այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ ։ Զի ուր գէշն իցէ անդր ժողովեսցին արծուիք ։ Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի . և լուսին ոչ տացէ զլոյս իւր . և աստեղք անկցին յերկնից . և զօրութիւնք երկնից շարժեսցին ։ Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ա̃մ ազգք երկրի . և տեսցեն զորդի մարդոյ եկեալ 'ի վերայ ամպոց երկնից զօրութե̃ և փառօք բազմօք ։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց̃ ։ 'Ի թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն . զի յորժամ ն̃ր ոստքն կակղասցին, և տերևն ցցուիցի՝ գիտէք թէ մերձ է ամառն . Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ա̃մ, գիտասջի՛ք թէ մերձ է 'ի դուրս ։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչև այս ա̃մ եղիցի ։ Երկինք և երկիր անցցեն՝ և բանք իմ մի՛ անցցեն ։ Բայց վ̃ն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք

գիտէ. ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ
որդի. բայց միայն Հայր։ Այլ որպէս
աւուրքն Նոյի, այնպէս եղիցի և գա֊
լուստն որդւոյ մարդոյ։ Զի որպէս էին
յաւուրսն՝ որ յառաջ քան զջրհե֊
ղեղն, ուտէին և ըմպէին, կանայս
առնէին՝ և արանց լինէին, մինչև
յօրն՝ յորում եմուտ Նոյ ՚ի տա֊
պանն. և ոչ գիտացին՝ մինչև եկն
ջրհեղեղն, և եբարձ զամենեսին.
այնպէս եղիցի և գալուստն որդւոյ
մարդոյ։ Յայնժամ թէ լիցին երկու
յագարակի, մին առցի և միւսն
թողցի։ Եւ եթէ երկու աղայցեն
՚ի մի երկանս, մին առցի և միւսն
թողցի։ Արթուն կացէք. զի ոչ
գիտէք յորում ժամու տէրն ձեր
գայ։ Զայն գիտասջիք, եթէ գի֊
տէր տանուտէրն՝ յորում պահու
գող գայ, սկէր, և ոչ տայր ական
հատանել զտան իւրոյ։ Վասն այսո֊
րիկ և դուք եղերուք պատրաստք.
զի յորում ժամու ոչ ակն ունիցիք,
գայ որդի մարդոյ։ Իսկ ո՞վ իցէ հա֊
ւատարիմ ծառայ և իմաստուն, զոր
կացոյց տէր իւր ՚ի վերայ ծառայից
իւրոց՝ տալ նոցա կերակուր ՚ի ժամու։

Երանի՜ է ծառային այնմիկ՝ զոր ե-
կեալ տրն գտանիցէ արարեալ այն-
պէս: Ամէն ասեմ ձեզ. զի 'ի վր
ամ ընչից իւրոց կացուսցէ զնա: Ա-
պա թէ ասիցէ ծառայն չար 'ի սրտի
իւրում, տէր իմ յամէ զգալ. և սկսա-
նիցի հարկանել զծառայակիցս իւր,
ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցօղս:
Գայցէ տէր ծառային այնորիկ յա-
ւուր՝ յորում ոչ ակն ունիցի, և 'ի
ժամու՝ յորում ոչ գիտիցէ. և կըտ-
րեսցէ զնա ը մէջ, և զբաժին նր ը
կեղծաւորս դիցէ, անդ եղիցի լալ և
կրճել ատամանց:

## Աւետարան ըստ Մարկոսի (ժգ. 1:)

## ԲՁ. ԴՁ

Եւ յելանելն նր 'ի տաճարէ ան-
տի, ասէ ցնա մի յաշակերտացն նր.
վարդապետ, տե՛ս՝ որպիսի են քա-
րինքս և որպիսի շինուածք: Պատաս-
խանի ետ նմա յս և ասէ. տեսա-
նես զայդ ամ շինուածս, ամէն ա-
սեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր քար
'ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի:
Եւ մինչ նստէր նա 'ի լերինն ձիթե-
նեաց յանդիման տաճարին, հարցա-

նէին ցնա առանձինն՝ պետրոս և յա-
կոբոս և յովհաննէս և անդրէաս.
ասա մեզ՝ երբ լինիցի այդ. և զինչ
նշան է, յորժամ կատարելոց իցէ
այդ ա̃մ։ Պատասխանի ետ յս̃, և
ասէ ցն̃ս. զգո՛յշ կացէք, մի ոք զձեզ
խաբեսցէ. զի բազումք եկեսցեն
յանուն իմ. և ասիցեն՝ թէ ես եմ
քս̃. և զբազումս մոլորեցուսցեն։
Այլ յորժամ լսիցէք պատերազ-
մունս, և համբաւս պատերազմաց,
մի խռովեսջիք. զի պարտ է լինել,
բայց չև է կատարածն։ Զի յարիցէ
ազգ յազգի վ̃ր, և թագաւորութի
'ի թագաւորութեան վ̃ր. և եղիցին
շարժմունք 'ի տեղիս տեղիս. սովք՝ և
սրածունք՝ և խռովունք. այլ այն ա̃մ
սկիզբն է երկանց։ Նա զձեզ իսկ
մատնեսցեն յատեանս՝ և 'ի ժողո-
վուրդս տանջիցիք. և առաջի դա-
տաւորաց և թագաւորաց կայցէք
վն̃ իմ 'ի վկայուն̃ նց̃ և ա̃մ հեթա-
նոսաց. բայց նախ պա՛րտ է աւետա-
րանիս քարոզել։ Այլ յորժամ տա-
նիցին զձեզ մատնել, մի յառաջա-
գոյն հոգայցէք. և մի զմտաւ ածի-
ցէք՝ թէ զինչ խօսիցիք. այլ որ ինչ

տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցէք. զի ո՛չ դուք էք՝ որ խօսիցէքն՝ այլ հոգին ս՟բ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ՝ և հայր զորդի. և յարիցեն որդիք 'ի վերայ հարց՝ և սպանանիցեն զն՟ս. և եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն իսպառ, նա կեցցէ։ Եւ յորժամ տեսանիցէք զպղծութի՟ն աւերածին զի կայցէ 'ի տեղւոջ, ուր չիցէ արժան. որ ընթեռնուն 'ի միտ առցէ։ Յայնժամ որ 'ի հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս. և որ 'ի վ՟ր տանեացն իցէ, մի՛ իջցէ 'ի տուն, և մի՛ մտցէ բառնալ ինչ 'ի տանէ իւրմէ. և որ յագարակին իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՛յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք զի մի՛ ձմերանի լինիցի այն։ Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութե՟ց՝ որպիսի ո՛չ եղեն երբէք այնպիսիք 'ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի՛ այլ լիցի։ Եւ եթէ ոչ էր կարճեալ տ՟ր զաւուրսն զայնոսիկ վ՟ն ընտրելոց իւրոց, ո՛չ ապրէր ա՟մ մարմին. այլ վ՟ն ընտրելոցն՝

զորս ընտրեաց, կարճէց զաւուրսն
զայնոսիկ ։ Յայնժամ եթէ ոք ասիցէ
ձեզ, եթէ ահաւասիկ է քն, կմ ա-
անդ, մի հաւատայցէք ․ զի յարիցեն
սուտ քսք, և սուտ մարգարէք ․ և տա-
ցեն նշանս և արուեստս առ՚ի մոլորե-
ցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ և զըն-
տրեալսն ։ Բայց դուք զգոյշ լերուք ․
ահաւասիկ յառաջագոյն ասացի
ձեզ զամ ։ Այլ յաւուրսն յայնո-
սիկ յետ նեղութեանն այնորիկ՝ արեգակն
խաւարեսցի ․ և լուսին ոչ տացէ զլոյս
իւր ․ և աստեղք յերկնից թօթա-
փեսցին ․ և զօրութիք յերկինս շար-
ժեսցին ։ Եւ յայնժամ տեսցեն զոր-
դի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութբ
և փառօք բազմօք ․ և յայնժամ ա-
ռաքեսցէ զհրեշտակս իւր, և ժողո-
վեսցէ զընտրեալս իւր ՚ի չորից հող-
մոց ․ ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս
երկնից ։ Բայց դուք ՚ի թզենւոյ անտի
ուսջիք զառակն, յորժամ տակաւ
ոստքն նորա կակղանայցեն, և տերև
արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ մերձ
է ամառն ․ նոյնպէս և դուք՝ յորժամ
տեսանիցէք զայս ամ եղեալ, գի-
տասջիք թէ մերձ է առ դուրս ։ Ա-

մէն ասեմ ձեզ՝ թէ ոչ անցցէ ազգս այս մինչև այս ամ՟ եղիցի. երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն: Այլ վ՟ն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ որդի, բայց հայր միայն: Զգո՛յշ լերուք. սկեցէք և կացէք յաղօթս, զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ: Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր, և տայցէ ծառայից իւրոց իշխանութ՟ի. և իւրաքանչիւր զգործս իւր. և դռնապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցի: Արդ՝ արթուն կացէք. զի ոչ գիտէք՝ երբ տէր տանն գայցէ. յերեկորեայ՝ եթէ 'ի մէջ գիշերի՝ եթէ 'ի հաւախօսի՝ եթէ ը՟ առաւօտս. գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ 'ի քուն: Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ. արթո՛ւն կացէք:

## Աւետարան ըստ Ղուկասու. ի՟ա. 5:

## ԱԿ. ԳԿ

Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ. զայդ ամ՟ զոր

տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս
ո՛չ թողցի այդր քար 'ի քարի վ̃ր,
որ ոչ քակտեսցի ։ Հարցին ցնա և
ասեն. վա՛րդապետ, ե՛րբ լինիցի այդ.
և զի՛նչ նշան իցէ յորժամ այդ լի-
նելոց իցէ ։ Եւ նա ասէ ցն̃ո. զգո՛յշ
կացէք՛. մի՛ խաբիցիք. զի բազումք
գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ
ես եմ. և մերձեցաւ ժամանակն,
մի՛ երթայցէք զկնի նց̃ ։ Եւ յորժամ
լսիցէք պատերազմունս, մի՛ զարհու-
րիցիք. զի պա՛րտ է նախ այնմ լինել,
այլ ո՛չ առժամայն կատարած ։ Յայն-
ժամ ասէ ցնոսա. յարիցէ ազգ
յազգի վ̃ր. և թագաւորութ̃ի 'ի թա-
գաւորութ̃ե վ̃ր. և շարժմունք մեծա-
մեծք. 'ի տեղիս տեղիս սովք և սրա-
ծունք. եղիցին արհաւիրք և նշանք
մեծամեծք յերկնից ։ Բայց յառաջ
քան զայս ա̃մ, մխեսցեն զձեռս իւ-
րեանց 'ի ձեզ՝ և հալածեսցեն. մատ-
նեսցեն 'ի ժողովուրդս և 'ի բանտս.
և տանիցին առաջի դատաւորաց և
թագաւորաց վ̃ա անուան իմոյ. և
լինիցի ձեզ այն 'ի վկայութ̃ի ։ Արդ՝
դի՛ք 'ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջագոյն
կրթել տալոյ պատասխանի. զի ես

տաց ձեզ բերան՝ և իմաստութի̅· ո-
րում ո՛չ կարիցեն կալ հակառակ՝
կամ տալ պատասխանի ա̅մ հակա-
ռակորդքն ձեր։ Մատնեսջիք և 'ի
ծնողաց՝ և յեղբարց՝ և յազգականաց՝
և 'ի բարեկամաց· և սպանանիցեն 'ի
ձէնջ· և եղիջիք ատեցեալք յամենե-
ցունց վ̅ս անուան իմոյ· և մազ մի 'ի
գլխոյ ձերմէ ո՛չ կորիցէ· և համբերութ̅
ձերով ստասջիք զոգիս ձեր։ Այլ
յորժամ տեսանիցէք շուրջ պատեա̅լ
զօրօք զե̅էմ, յայնժամ գիտասջիք թէ
մերձ է աւեր նորա։ Յայնժամ որ
'ի Հրէաստանի իցեն, փախիցեն 'ի
լերինս· և որ 'ի մէջ նորա իցեն,
խուսեսցեն· և որ 'ի գաւառս ի-
ցեն, մի՛ մտցեն 'ի նա· զի աւուրք
վրէժխնդրութե̅ են այնոքիկ՝ առ
'ի կատարելոյ ա̅մ գրելոց։ Բայց
վա՛յ իցէ յղեաց և ստնտուաց յա-
ւուրսն յայնոսիկ· զի եղիցի տագ-
նապ մեծ 'ի վ̅ր երկրի՝ և բարկու-
թի̅ ժողովրդեանն այնմիկ· և անկ-
ցին 'ի սուր սուսերի· և գերեսցին
յա̅մ հեթանոսս· և ե̅էմ եղիցի կո-
խան յազգաց, մինչև կատարեսցին
ժամանակք հեթանոսաց։ Եւ եղի-

ցին նշանք յարեգական և 'ի լուսին և յաստեղս, և յերկրի տագնապ հեթանոսաց յահեղ բարբառոյ իբրև ծովու և խռովութե. յելանելոյ ոգւոց մարդկան յերկիւղէ և 'ի կարծեաց եկելոց 'ի վր տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժեսցին : Եւ յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամպովք զօրութբ և փառօք բազմօք: Եւ յորժամ սկսանիցի այս լինել, ամբարձջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր. զի մերձ է փրկութին ձեր: Եւ ասաց առակ մի նոցա . տեսէք զթզենիդ և զամ ծառ, յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք, և 'ի նցէ ճանաչէք եթէ մերձ է ամառն: Նոյնպ և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամ եղեալ՝ գիտասջիք թէ մերձ է արքայութին այ: Ամէն ասեմ ձեզ. թէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամ լինիցի, երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն : Զգո՛յշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութբ և արբեցութբ՝ և հոգովք աշխարհա'կանօք . և յանկարծակի հասանիցէ 'ի վր ձեր օրն այն . զի իբրև զորո-

գայթ հաստանիցէ 'ի վ̃ր ամենեցուն որ բնակեալ են ը̃ ա̃մ երեսս երկրի ։ Արթո՛ւն կացէք այսուհետև՝ յա̃մ ժամ աղօթս արարէ՛ք ․ զի արժանի լինիջիք զերծանիլ յայնմ ա̃մէ՝ որ լինելոց է ․ և կալ առաջի որդւոյ մարդոյ ։ Եւ 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր, և զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն, որ կոչէր ձիթենեաց ։ Եւ ա̃մ ժողովուրդն կանխէր ը̃ առաւօտս առ նա 'ի տաճարն լսել 'ի նմանէ ։

### Աւետարան ըստ Յովհաննու․ (Ժ․ 22։)

### ԱՁ․ ԳՁ

Եղեն յայնժամ նաւակատիքն յերուսաղէմ, և ձմեռն էր ։ Եւ շրջէր յս̃ 'ի տաճարին, 'ի սրահին սողոմոնի ։ Շուրջ եղեն զնովաւ հրէայքն և ասեն ․ մինչև յե՞րբ թափես զոգիս մեր ․ եթէ դու ես ք̃ս՝ ասա՛ մեզ համարձակ ։ Պատասխանի ետ նոցա յս̃ և ասէ ․ ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք ինձ ․ զգործսն, զոր ես գործեմ յանուն հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վ̃ս իմ ․ այլ դուք ո՛չ հաւատայք ․ զի չէք յոչխարաց անտի

իմոց։ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զն՟ս. և զկնի իմ գան, և ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս. և մի՛ կորիցեն յաւիտեան. և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ՚ի ձեռաց իմոց։ Հայրն իմ որ ետ ինձ զն՟ս, մեծ է քան զա՟մ, և ոչ ոք կարէ յափշտակել ՚ի ձեռաց հօր իմոյ։ Ես և հայր իմ մի եմք։ Վէմս առին հրեայքն, զի քարկոծ արասցեն զնա։ Պատասխանի ետ նոցա յս՟. բազում գործս բարիս ցուցի ձեզ ՚ի հօրէ իմմէ՝ վն՟ որո՞յ գործոյ ՚ի նոցանէ քարկոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն նմա հրեայքն. վասն բարւոյ գործոյ ո՛չ առնեմք զքեզ քարկոծ, այլ վն՟ հայհոյութե՟. և զի դու մարդ ես՝ և զանձն քո ա՟ծ առնես։ Պատասխանի ետ նոցա յս՟. ո՞չ յօրէնս ձեր գրեալ է, ես ասացի թէ ա՟ծք էք։ Իսկ եթէ զն՟ս ա՟ծս ասէ՝ առ որս բանն ա՟յ եղև. և չէ՛ մարթ եղծանել գրոյն. իսկ զոր հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ. դուք ասէք թէ հայհոյես. զի ասացի՝ թէ որդի ա՟յ եմ։ Եթէ ո՛չ գործեմ զգործս

Հօր իմոյ՝ մի՛ հաւատայք ինձ ։ Ապա թէ գործեմ, թէեւ ինձ ո՛չ հաւատայք , սակայն գործոցն հաւատացէ՛ք ․ զի գիտասջի՛ք եւ ծանիջի՛ք՝ եթէ հայր յիս , եւ ես 'ի հայր ։ Դարձեալ խնդրէին զնա ունել՝ եւ ել 'ի ձեռաց նոցա ։ Եւ գնաց միւսանգամ յայնկոյս յորդանանու՝ 'ի տեղին ուր էր յովհաննէս զառաջինն՝ եւ մկրտէր ․ եւ անդ լինէր ։ Եկին բազումք առ նա՝ եւ ասէին ․ զի յովհաննէս նշան ինչ ո՛չ արար ։ Բայց զա՟մ, զոր ասաց յովհաննէս վասն ն՟ր , ճշմարիտ էր ․ եւ բազումք հաւատացին 'ի նա անդ ։

Խրատ ի՛ չատաճարման պարզատօմա-
րական աղիւսակին:

ԱՅՍ զԹուականն՝ յորում ամի և իցես ՚ի հետևեալ աղիւսակդ, որ գտանի ՚ի յառաջին տունն. և առ զգիր տարւոյն՝ որ է համդէպ նմին ՚ի յերկրորդ տունն: Եւ ապա դարձո զերկուս Թուղթս, և գիտ զնոյն գիր տարւոյն ՚ի յերիս զոյգ երեսս հետևեալ Թղթոց: Յորս իւրաքանչիւրքն յԱմսէն մինչև ՚ի Գ.էն գլխագիր տառիւք եդեալ կան ՚ի յառաջին տունսն նոցին աղիւսակաց: Եւ որ ինչ համդէպ տարեգրոյն գրեալ է, այն է մինչև ցաւարտ տարւոյն անվրէպ: Զօր օրինակ, ՚ի Թուականի 1829 տարւոյն, որ է ՌՄՀԸ, գիր տարւոյն է՝ ո. զոր գտանես ՚ի շրջեալ զԹուղԹսն ՚ի յերկրորդ զոյգ երեսսն ՚ի յառաջին տունն. և որ ինչ կայ համդէպ ՚ի կարգին յայնմիկ, ցուցանեն յայտնի զամ ինչ. ԺԹ զօր յայտնութե, զմիջոց ուտիսն, զառաջաւորն, և

զայլն ամ՛ մինչև ցօր բարեկենդանի յայտնութեան ։

Արդ՝ մինչ 'ի յաղխուսական Թըւականի տարւոյն տեսանես զգիր տարւոյն և զեօթներեակն գուգոյգ, ծանիր զի նահանջ է ամն այն ։ Ուստի պարտիս մինչև 'ի մարտի ամսոյն զառաջին գիրն 'ի կիր առնուլ. և 'ի մարտէն մինչև ցաւարտ տարւոյն զերկրորդն ։ Զոր օրինակ, 'ի 1828 ամին գիր տարւոյն է՝ ԴԵ և եօթներեակն՝ Է, և Ա, որպէս տեսանես 'ի Թուականին՝ ՌՄՀԷ, վասն 'ի կիր առ մինչև 'ի մարտի ամսոյն զտարեգիրն՝ Ե, և զեօթներեակն Է, և 'ի մարտէ մինչև 'ի վերջն տարւոյն զտարեգիրն՝ Դ, և զեօթներեակն՝ Ա ։ Քանզի գիր տարւոյն փոխի ընդ նախընթացին խորոյ, որպէս ԴԱՅՆ ընդ ԵՉԻՆ, որ 'ի կարգս այբուբենից է յառաջ քան զԴԱՅՆՆ. և եօթներեակն ընդ հետևեցելոյն, որպէս ԷՆ ընդ ԱՅԲՆ ։

| | Ամ Տն. և Թուականն Հայոց : | Գիր տարւոյն : | Ընտրելական : | Վերադիրն : | Զատկագիրք : |
|---|---|---|---|---|---|
| * | 1828 . ռմհէ | ե դ | է ա | իդ | է դ |
| 1 | 1829 . ռմհը | ո | բ | ե | ը |
| 1 | 1830 . ռմհթ | հ | գ | ժզ | ը |
| 4 | 1831 . ռմձ | ս | դ | իէ | է |
| * | 1832 . ռմձա | յ մ | ե զ | ը | է դ |
| 1 | 1833 . ռմձբ | լ | է | ժթ | դ |
| 5 | 1834 . ռմձգ | ր | ա | լ | ը |
| * | 1835 . ռմձդ | ձ | բ | ժա | ա |
| 1 | 1836 . ռմձե | թ ը | գ դ | իբ | ա ը |
| 5 | 1837 . ռմձզ | ռ | ե | գ | դ |
| * | 1838 . ռմձէ | խ | զ | ժդ | է |
| 1 | 1839 . ռմձը | ե | է | իե | է |
| 1 | 1840 . ռմձթ | չ ո | ա բ | զ | ա ը |
| * | 1841 . ռմղ | թ | գ | ժէ | ա |
| 5 | 1842 . ռմղա | ս | դ | իը | է |
| 1 | 1843 . ռմղբ | յ | ե | թ | է |
| * | 1844 . ռմղգ | զ ե | զ է | իա | զ է |
| 5 | 1845 . ռմղդ | չ | ա | բ | ա |
| 1 | 1846 . ռմղե | ձ | բ | ժգ | ա |
| * | 1847 . ռմղզ | բ | գ | իդ | բ |
| * | 1848 . ռմղէ | ն յ | դ ե | ե | զ է |
| 1 | 1849 . ռմղը | խ | զ | ժզ | է |
| 5 | 1850 . ռմղթ | ց | է | իէ | ա |
| * | 1851 . ռյ | ղ | ա | ը | բ |
| * | 1852 . ռյա | ժ թ | բ գ | ժթ | բ ա |
| 5 | 1853 . ռյբ | ս | դ | լ | |

 Աղիւսակ Պարզատօմարական ։

| | Ամք Տն. և Թուականն Հայոց ։ | Գիր տարւոյն ։ | Եօթներեակն ։ | Վերադիր ։ | Ձեռնագիր ։ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1854 . ռյգ | յ | ե | ժա | ե |
| * | 1855 . ռյդ | զ | զ | իբ | զ |
| 5 | 1856 . ռյե | պ չ | է ա | գ | բ ա |
| 1 | 1857 . ռյզ | ձ | բ | ժդ | ա |
| * | 1858 . ռյէ | բ | գ | իե | բ |
| 1 | 1859 . ռյը | ն | դ | զ | զ |
| 1 | 1860 . ռյթ | ծ խ | ե զ | ժէ | զ ե |
| 5 | 1861 . ռյժ | ց | է | իը | ա |
| * | 1862 . ռյժա | զ | ա | թ | բ |
| 1 | 1963 . ռյժբ | ժ | բ | իա | բ |
| 5 | 1864 . ռյժգ | վ ս | գ դ | բ | ե |
| * | 1865 . ռյժդ | ծ | ե | ժգ | զ |
| 1 | 1866 . ռյժե | զ | զ | իդ | զ |
| 1 | 1867 . ռյժզ | պ | է | ե | բ |
| * | 1868 . ռյժէ | ի ժ | ա բ | ժզ | գ բ |
| 5 | 1869 . ռյժը | վ | գ | իէ | զ |
| 1 | 4870 . ռյժթ | ն | դ | ը | զ |
| * | 1871 . ռյի | է | ե | ժթ | բ |
| 4 | 1872 . ռյիա | ջ պ | զ է | լ | գ բ |
| 1 | 1873 . ռյիբ | զ | ա | ժա | բ |
| 1 | 1874 . ռյիգ | ժ | բ | իբ | բ |
| 4 | 1875 . ռյիդ | շ | գ | գ | է |
| * | 1876 . ռյիե | կ ծ | դ ե | ժդ | է զ |
| 1 | 1877 . ռյիզ | զ | զ | իե | զ |
| 1 | 1878 . ռյիէ | պ | է | զ | բ |
| * | 1879 . ռյիը | ի | ա | ժէ | գ |

Եւ քանզի բազումք են, որք ցանկան գիտել, թէ զատիկն մեր և լատինացւոցն երբ 'ի միասին գայ, և երբ ոչ. վս̅ այնորիկ և մեք 'ի լուսանցս աղիւսակացն թուականի տարւոյն նշանեցաք զայն աստղիւ և թուագրով, այսինքն բախամով: Ուստի ուր 'ի լուսանցսն հանդէպ թուականի տարւոյն գոյ աստղ, ցուցանէ թէ յայնմիկ տարւոջ զատիկն մեր և լատինացւոցն է 'ի միասին: Իսկ ուր գոյ թուագիր, ցուցանէ այն՝ թէ յայնմիկ տարւոջ ո՛չ է 'ի միասին, այլ լատինացւոց զատիկն է յառաջ, և մերն յետոյ: Բայց թէ քանի՛ շաբաթ յետոյ է մերն քան զնոցայն, ցուցանէ նոյն թուագիրն. քանզի եթէ թուագիրն է 1, ցուցանէ թէ մի շաբաթ յետոյ է. եթէ իցէ 4, կամ 5, ցուցանէ թէ չորս կամ հինգ շաբաթ յետոյ է մերն քան զնոցայն: Եւ ծանիր զի ոչ երբէք կարէ մերն լինել յառաջ քան զնոցայն, այլ կամ է 'ի միասին, և կամ միշտ յետոյ:

| Գիր տարւոյն : | Օր Յայտնութեան : | Մինչեւ առաջաւորաց , օր : | Առաջաւորաց Կիրակէին : | Բուն Բարեկենդանին : | ԶԱՏԿԻ : | Երևման Խաչին : | Համբարձման : | Հոգեգալստեան : | Մէ(ջ) Կիրակէին : | Վարդավառ... : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ | փետր | մարտ | ապրլ | ապրլ | մայ | մայ | յուն |
| Ա | դշ | զ | ժա | ա | իբ | ժթ | ը | ժ | լա | իը |
| Բ | եշ | է | ժբ | բ | իգ | ի | մայ ա | ժա | յուն ա | իթ |
| Գ | կրկ | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | շբ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յուլ ա |
| Ե | բշ | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | եշ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | դշ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | գշ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | եշ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | կրկ | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | շբ | ժզ | իա | ժա | ապր ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | բշ | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |

| Մինչեւ շբթք պահոց : | Ածածին : | Մինչեւ շբթք պահոց : | ՍԲ Խաչն : | ՍԲ Գէորգայ Բարեկենդան : | Մինչեւ ուտիք շաբաթք : | Գիւտ Խաչն : | Յիսնակաց Բարեկենդան : | ՍԲ Յակոբայ Բարեկենդան : | Մինչեւ ուտիք, օր : | Օր Բրնդնի յայտնութէ : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյ | դեկ | | |
| է | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ |
| է | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ |
| է | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կրկ |
| զ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ |
| զ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր |
| զ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | Եշ |
| զ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ |
| զ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ |
| զ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ |
| զ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կրկ |
| ե | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ |
| ե | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր |

| Գիր տարւոյ : | Օր Յայտնութեն : | Միջոց ուտիք , օր : | Առաջաւորց բրկնդան : | Բուն բարեկենդան : | ԶԱՏԻԿ : | Երևման խաչ : | Համբարձում : | Հոգեգալուստ : | ՍԷ Գրգրի բարեկէն : | Վարդավառ : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յնվ | փետ | ապր | մայ | մայ | մայ | յնս | յլս |
| Խ | Եշ | ժը | իգ | ժգ | գ | ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| Ծ | Դշ | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | Գշ | ի | իե | ժե | ե | գ | ժդ | իդ | ժդ | ժբ |
| Հ | Բշ | իա | իզ | ժզ | զ | դ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | Կիր | իբ | իէ | ժէ | է | ե | ժզ | իզ | ժզ | ժդ |
| Ղ | Շբ | իգ | իը | ժը | ը | զ | ժէ | իէ | ժէ | ժե |
| Ճ | Ուր | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | Եշ | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | Դշ | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ | ի | ժը |
| Ն | Գշ | իէ | փետ ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | Բշ | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | յուն ա | իբ | ի |
| Ո | Կիր | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |

| Մինչեւ շաբաթ պահոց : | Աճածին : | Մինչեւ շաբաթ պահոց : | ՄԷ Խաչ : | ՄԷ Գէորգայ Բարէկէն : | Մինչեւ ուտիք շաբաթ : | Գիւտ Խաչ : | Յինանկայ Բարէկէն : | ՄԷ Յակոբայ Բարէկէն : | Մինչեւ ուտիք, օր : | Օր Բերկնաւոր յայտնութեան : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյ | դեկ | | |
| ե | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժդ | Եշ |
| ե | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ |
| ե | ժզ | դ | ժդ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ |
| ե | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ |
| ե | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր |
| դ | ժբ | ե | ժզ | իդ | է | իը | ժը | թ | ժե | Շբ |
| դ | ժդ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժդ | Եշ |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ |
| դ | ժզ | դ | ժդ | ի | է | ի ե | ժե | զ | ժը | Գշ |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | ի զ | ժզ | է | ժէ | Բշ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | ի է | ժէ | ը | ժզ | Կիր |

| Գիր տարւոյ : | Օր Յայտնութեան : | Մեհեկի ամսոյ, օր : | Առաջաւորաց բարեկենդանին : | Բուն բարեկենդանին : | ԶԱՏԻԿ : | Երեւման խաչին : | Համբարձման : | Հոգեգալստեան : | Սբ Գրիգորի բարեկենդանին : | Վարդավառին : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետ | փետ | ապր | մայ | մայ | յունիս | յուլիս | յուլիս |
| Զ | շբ | լ | դ | իե | ժե | ժգ | իդ | գ | իդ | իբ |
| Պ | զշ | լա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իգ |
| Ջ | եշ | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | դշ | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | գշ | լդ | ը | մար ա | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | բշ | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | կիր | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | շբ | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | յուլ ա | իթ |
| Ց | զշ | լը | ժբ | ե | իգ | իա | յուն ա | ժա | բ | լ |
| Ւ | եշ | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | դշ | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | օգ ա |
| Ք | գշ | խա | ժե | Զատկարանն պէս 'ի Փետրն : | | | | | | |

| Մինչեւ ցհամբարձումն աւուրք : | Համբարձումն : | Մինչեւ ցհոգեգալուստ աւուրք : | Սբ Խաչ : | Սբ Գէորգայ [illegible] : | Մինչեւ ց[illegible] աւուրք : | Գիւտ Խաչ : | Յիսնակաց բարեկենդանն : | Սբ Յակոբայ [illegible] : | Մինչեւ ց[illegible] աւուրք : | Օր բարեկենդանի առաջաւորաց : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգո | | սեպ | սեպ | | հոկ | նոյ | դեկ | | |
| գ | ժբ | ե | ժզ | լգ | է | լը | ժը | թ | ժե | շէ |
| գ | ժգ | ե | ժէ | լդ | է | լթ | ժթ | ժ | ժդ | ղշ |
| գ | ժդ | դ | ժա | ժը | ը | լդ | լ | ժա | ժգ | եշ |
| գ | ժե | դ | ժբ | ժթ | ը | լդ | լա | ժբ | ժբ | ռշ |
| գ | ժզ | դ | ժդ | լ | է | լե | ժե | զ | ժը | գշ |
| գ | ժէ | գ | ժդ | լա | է | լզ | ժզ | է | ժէ | բշ |
| գ | ժը | դ | ժե | լբ | է | լէ | ժէ | ը | ժզ | կրկ |
| բ | ժբ | ե | ժզ | լգ | է | լը | ժը | թ | ժե | շէ |
| բ | ժգ | ե | ժէ | լդ | է | լթ | ժթ | ժ | ժդ | ղշ |
| բ | ժդ | դ | ժա | ժը | ը | լդ | լ | ժա | ժգ | եշ |
| բ | ժե | դ | ժբ | ժթ | ը | լդ | լա | ժբ | ժբ | ռշ |

## Յաղագս կենդանակերպից:

Եւ եթէ ոք խնդրիցէ գիտել նաև զտանուտէր տարւոյն. կալցէ զթըւականն հայոց, և ըզ 1181 'ի բաց հանեալ՝ զայն որ մնայ՝ երթիցէ ժբ, ժբ. և որ ինչ 'ի խոնարհ մնայ՝ սկիզբըն արարեալ 'ի խոյէն, տացէ զայն 'ի կենդանակերպսն. և յորում կենդանակերպի վերջանայ, այն է տանուտէր տարւոյն:

Իսկ անուանք և թիւք կենդանակերպից են այքին:

| | |
|---|---|
| 1 Խոյ: | 7 Կշիռն: |
| 2 Ցուլ: | 8 Կարիճ: |
| 3 Երկաւոր. | 9 Աղեղնաւոր: |
| 4 Խեցգետին: | 10 Այծեղջիւր: |
| 5 Առիւծ: | 11 Ջրհոս: |
| 6 Կոյս: | 12 Ձուկն: |

Որոց ստեղծողին և կարգադրողին փառք և գոհութիւն 'ի յամ յաւիտեանս: Ամէն:

## Խրատ Ը՞ Կառավարման Հնգանէալ աղիւսակաց ամսոց.

Որպէս զի դիւրին լինի ամ ումեք՝ մանաւանդ պարզամտաց, 'ի գործածել զեօթներեակն, և զվերադիրն տարւոյն 'ի վր թուոց ամսոցն, որով իմանալ կարիցէ թէ այս ինչ օր՝ այն ինչ ամսոյ կիրակի է, կամ երկուշաբաթի և կամ երեքշաբաթի, և այլն. նաև կարիցէ իմանալ թէ յորում աւուր ամսոյն իցէ ծնունդըն լուսնոյ, եդաք աստ զաղիւսակս ամսոց, և եօթներեկաց, և վերադրաց, նաև ձայնդիւտից: Ուստի 'ի հետևեալ աղիւսակս՝ առաջին գաւազանն կամ խորանն է վերադրաց, որ և երևի. երկրորդն է եօթներեկաց. երրորդն ձայնդիւտից. և չորրորդն՝ աւուրց ամսոյն: Արդ՝ եթէ կամիս գիտել թէ երբ իցէ ծնունդ լուսնոյն արա այսպէս: Նախ կա՛լ դու զվերադիր տարւոյն. և ապա որոնեա՛ զայն 'ի մէջ խորանի վերադրաց այնորիկ ամսոյ՝ յո-

րում որոնես. և հանդէպ որոյ աւուր ամսոյն գտցի վերադիրն, 'ի նմին աւուր է ծնունդ լուսնոյն։ Այնպէս եթէ կամիս գիտել՝ թէ յորքանս ամսոյն հանդիպին կիրակէք 'ի բոլոր տարւոջ, կա՛լ զեօթներեակն տարւոյն 'ի մէջ խորանի եօթներեկաց ամսոյն՝ յորում որոնես, և ուր գտցի այն, հանդէպ նորին եղեալ օր ամսոյն է կիրակէ, և այսու նաև կարես իմանալ զերկուշաբաթին, և զայլ աւուրս. զի անմիջապէս հետևեալ թիւ ամսոյն է երկուշաբաթի, և նմին հետևեալն երեքշաբաթի, և այլն մինչև 'ի հետևեալ կիրակէն, որում հանդէպ ես գոյ եօթներեակն տարւոյն։

## Խորագ յաղագս ձայնգիտագի։

Առ 'ի գիւրաւ գտանել զաւուր
ձայնն ըստ բոլոր ամի, կարգեցաք
զաղիւսակ մինչ ձայնդիւտի հանդէպ
աղիւսակի աւուրց ամսոյն, սահմա-
նելով զութն տառս՝ փոխանակ
ութն ձայնից. ք. Ա. Բ. Գ. Դ. Ե.
Զ. Է. Ը. ոչ զի 'ի փոփոխել ձայ-
նին՝ ըստ յաջորդելոյ ամսոցն՝ փո-
խեսցին և տառքն ձայնացոյցք ան-
խոխր։ Արդ՝ որպէս յայտ է, փոփո-
խումն ձայնից սկիզբն առնու 'ի բուն
բարեկենդանէն. որոյ հետևեալ
օրն է առաջին ձայն. ուստի հան-
դէպ սոյն աւուր եղեալ տառն ցու-
ցանէ զաձ. հետևեալն ակ. երրդն
բձ. սոյնպէս և այլքն ըստ կարգի. և
այս ըէ բոլոր ամին։ Իսկ առ 'ի գիւ-
րաւ գտանել զձայնացոյց տառն ըդ
իւրաքանչիւր տարւոյ, տես 'ի խո-
րանն թուականի տարւոյն, հանդէպ
որոյ եղեալ կայ գաւազանն ձայն-
գիւտ տառից, և յորում ամի գտա-
նիս, կա՛լ զտառն եղեալ հանդէպ

այնմ ամի. և մնաւ նոյա 'ի յա-ղեւսական ձայնդիւանի, և հանդէպ որոյ աւուր եղեալ գտանես զնոյն տառն, ծանի՛ր զի յայնմ աւուր է առաջին ձայն. և հետևեալն առաջին կողմն. և այլք ըստ կարգի: Եւ զի փոփոխումն ձայնից ը̅ շարժելոյ աւուր բուն բարեկենդանին կարէ պատահել յառաջնոյ օրէ փետրվարի մինչև 'ի վեցն մարտի, սմին իրի գաւազանն ձայնդիւատառից սկսանի յռ̅ջնոյ օրէ փետրվարի, ունելով 'ի ծայր իւր աստղանիշ նշանակ, առ 'ի տարբերել 'ի միւս գաւազանէ ձայնդիւատառից որ անցեալ տարւոյ կարգաւն իջանէ, և եզերի մինչև 'ի վեցն մարտի. և սոյն անցեալ տարւոյ գաւազանաւ պա՛րտ է վարել մինչև ցօր բուն բարեկենդանին՝ յորում աւուր և հանդիպեսցի, և ապա անցանել 'ի միւս աստղանիշ գաւազանն:

Վասն նահանջ ամի զնոյն կերպ պա՛րտ է պահել, որ լինի վ̅ն եօթներեկի տարւոյն առի. այսինքն

մինչև 'ի մարտի ամսին պա՛րտ է վարել առաջին տառիւն՝ և յետոյ մի տառ յետս դառնալ ո՛չ տեսանես 'ի յաղիւսակն ձայնգիւտին, որ հանդէպ Թուականի տարւոյն։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/VI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

| ՅՈՒՆՎԱՐ: | | | | Զ | | ՓԵՏՐՎ: | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վերադիր: | Եօթնեկեակ: | Զատկագիր: | Օր ամսոյ: | | | Եօթնեկեակ: | Վերադիր: |
| 28 | է | Զ | 1 | Ե | *Ը | ե | 27 |
| 27 | զ | Է | 2 | Զ | Ա | դ | 26 |
| 26 | ե | Ը | 3 | Է | Բ | բ | 25 |
| 25 | դ | Ա | 4 | Ը | Գ | Ա | 24 |
| 24 | գ | Բ | 5 | Ա | Դ | է | 23 |
| 23 | բ | Գ | 6 | Բ | Ե | զ | 22 |
| 22 | Ա | Դ | 7 | Գ | Զ | ե | 21 |
| 21 | է | Ե | 8 | Դ | Է | դ | 20 |
| 20 | զ | Զ | 9 | Ե | Ը | գ | 19 |
| 19 | ե | Է | 10 | Զ | Ա | բ | 18 |
| 18 | դ | Ը | 11 | Է | Բ | Ա | 17 |
| 17 | գ | Ա | 12 | Ը | Գ | է | 16 |
| 16 | բ | Բ | 13 | Ա | Դ | զ | 15 |
| 18 | Ա | Գ | 14 | Բ | Ե | ե | 14 |
| 14 | է | Դ | 15 | Գ | Զ | դ | 13 |
| 13 | զ | Ե | 16 | Դ | Է | գ | 12 |
| 12 | ե | Զ | 17 | Ե | Ը | բ | 11 |
| 11 | դ | Է | 18 | Զ | Ա | Ա | 10 |
| 10 | գ | Ը | 19 | Է | Բ | է | 9 |
| 9 | բ | Ա | 20 | Ը | Գ | զ | 8 |
| 8 | Ա | Բ | 21 | Ա | Դ | ե | 7 |
| 7 | է | Գ | 22 | Բ | Ե | դ | 6 |
| 6 | զ | Դ | 23 | Գ | Զ | գ | 5 |
| 5 | ե | Ե | 24 | Դ | Է | բ | 4 |
| 4 | դ | Զ | 25 | Ե | Ը | Ա | 3 |
| 3 | գ | Է | 26 | Զ | Ա | է | 2 |
| 2 | բ | Ը | 27 | Է | Բ | զ | 1 |
| 1 | Ա | Ա | 28 | Ը | Գ* | ե | 30 |
| 30 | է | Բ | 29 | | | | 29 |
| 29 | զ | Գ | 30 | | | | |
| 28 | ե | Դ | 31 | | | | |

| ՄԱՐՏ: | | | Օր ամսոյ: | ԱՊՐԻԼ: | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վերադիր: | Եօթներեակ: | Զատկական: | | Զատկական: | Եօթներեակ: | Վերադիր: |
| 27 28 | Դ | Ա Դ | 1 | Գ | Ա | 26 |
| 26 | Գ | Բ Ե | 2 | Դ | Է | 25 |
| 25 | Բ | Գ Զ | 3 | Ե | Զ | 24 |
| 24 | Ա | Դ Է | 4 | Զ | Ե | 23 |
| 23 | Է | Ե Ը | 5 | Է | Դ | 22 |
| 22 | Զ | Զ Ա | 6 | Ը | Գ | 21 |
| 21 | Ե | Բ | 7 | Ա | Բ | 20 |
| 20 | Դ | Գ | 8 | Բ | Ա | 19 |
| 19 | Գ | Դ | 9 | Գ | Է | 18 |
| 18 | Բ | Ե | 10 | Դ | Զ | 17 |
| 17 | Ա | Զ | 11 | Ե | Ե | 16 |
| 16 | Է | Է | 12 | Զ | Դ | 15 |
| 15 | Զ | Ը | 13 | Է | Գ | 14 |
| 14 | Ե | Ա | 14 | Ը | Բ | 13 |
| 13 | Դ | Բ | 15 | Ա | Ա | 12 |
| 12 | Գ | Գ | 16 | Բ | Է | 11 |
| 11 | Բ | Դ | 17 | Գ | Զ | 10 |
| 10 | Ա | Ե | 18 | Դ | Ե | 9 |
| 9 | Է | Զ | 19 | Ե | Դ | 8 |
| 8 | Զ | Է | 20 | Զ | Գ | 7 |
| 7 | Ե | Ը | 21 | Է | Բ | 6 |
| 6 | Դ | Ա | 22 | Ը | Ա | 5 |
| 5 | Գ | Բ | 23 | Ա | Է | 4 |
| 4 | Բ | Գ | 24 | Բ | Զ | 3 |
| 3 | Ա | Դ | 25 | Գ | Ե | 2 |
| 2 | Է | Ե | 26 | Դ | Դ | 1 |
| 1 | Զ | Զ | 27 | Ե | Գ | 30 |
| 30 | Ե | Է | 28 | Զ | Բ | 29 |
| 29 | Դ | Ը | 29 | Է | Ա | 28 |
| 28 | Գ | Ա | 30 | Ը | Է | 27 |
| 27 | Բ | Բ | 31 | | | |

| ՄԱՅԻՍ: | | | | ՅՈՒՆԻՍ: | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վերադիր: | Եօթնեկի: | Զաշնակք: | Օր ամսոյ: | Զաշնակք: | Եօթնեկի: | Վերադիր: |
| 26 25 | Զ | Ա | 1 | Ը | Գ | 24 |
| 24 | Ե | Բ | 2 | Ա | Բ | 23 |
| 23 | Դ | Գ | 3 | Բ | Ա | 22 |
| 22 | Գ | Դ | 4 | Գ | Է | 21 |
| 21 | Բ | Ե | 5 | Դ | Զ | 20 |
| 20 | Ա | Զ | 6 | Ե | Ե | 19 |
| 19 | Է | Է | 7 | Զ | Դ | 18 |
| 18 | Զ | Ը | 8 | Է | Գ | 17 |
| 17 | Ե | Ա | 9 | Ը | Բ | 16 |
| 16 | Դ | Բ | 10 | Ա | Ա | 16 |
| 15 | Գ | Գ | 11 | Բ | Է | 14 |
| 14 | Բ | Դ | 12 | Գ | Զ | 13 |
| 13 | Ա | Ե | 13 | Դ | Ե | 12 |
| 12 | Է | Զ | 14 | Ե | Դ | 11 |
| 11 | Զ | Է | 15 | Ը | Գ | 10 |
| 10 | Ե | Ը | 16 | Է | Բ | 9 |
| 9 | Դ | Ա | 17 | Ը | Ա | 8 |
| 8 | Գ | Բ | 18 | Ա | Է | 7 |
| 7 | Բ | Գ | 19 | Բ | Զ | 6 |
| 6 | Ա | Դ | 20 | Գ | Ե | 5 |
| 5 | Է | Ե | 21 | Դ | Դ | 4 |
| 4 | Զ | Զ | 22 | Ե | Գ | 3 |
| 3 | Ե | Է | 23 | Զ | Բ | 2 |
| 2 | Դ | Ը | 24 | Է | Ա | 1 |
| 1 | Գ | Ա | 25 | Ը | Է | 30 |
| 30 | Բ | Բ | 26 | Ա | Զ | 29 |
| 29 | Ա | Գ | 27 | Բ | Ե | 28 |
| 28 | Է | Դ | 28 | Գ | Դ | 27 |
| 27 | Զ | Ե | 29 | Դ | Գ | 26 |
| 26 | Ե | Զ | 30 | Ե | Բ | 25 |
| 25 | Դ | Է | 31 | | | |

| ՅՈՒԼԻՍ: | | | | ՕԳՈՍՏՈՍ: | | |
|---|---|---|---|---|---|---|
| Վերադիր: | Եօթներեակն: | Զատկական: | Օր ամսոյ: | Զատկական. | Եօթներեակն: | Վերադիր: |
| 23 24 | Ա | ղ | 1 | է | Ե | 22 |
| 22 | Է | է | 2 | ղ | Դ | 21 |
| 21 | Զ | ը | 3 | է | Գ | 20 |
| 20 | Ե | Ա | 4 | ը | Բ | 19 |
| 19 | Դ | բ | 5 | Ա | Ա | 18 |
| 18 | Գ | գ | 6 | բ | Է | 17 |
| 17 | Բ | դ | 7 | գ | Զ | 16 |
| 16 | Ա | է | 8 | դ | Ե | 15 |
| 15 | Է | ղ | 9 | է | Դ | 14 |
| 14 | Զ | է | 10 | ղ | Գ | 13 |
| 13 | Ե | ը | 11 | է | Բ | 12 |
| 12 | Դ | Ա | 12 | ը | Ա | 12 |
| 11 | Գ | բ | 13 | Ա | Է | 11 |
| 10 | Բ | գ | 14 | բ | Զ | 9 |
| 9 | Ա | դ | 15 | գ | Ե | 8 |
| 8 | Է | է | 16 | դ | Դ | 7 |
| 7 | Զ | ղ | 17 | է | Գ | 6 |
| 6 | Ե | է | 18 | ղ | Բ | 5 |
| 5 | Դ | ը | 19 | է | Ա | 4 |
| 4 | Գ | Ա | 20 | ը | Է | 3 |
| 3 | Բ | բ | 21 | Ա | Զ | 2 |
| 2 | Ա | գ | 22 | բ | Ե | 1 |
| 1 | Է | դ | 23 | գ | Դ | 30 |
| 30 | Զ | է | 24 | դ | Գ | 29 |
| 29 | Ե | ղ | 25 | է | Բ | 28 |
| 28 | Դ | է | 26 | ղ | Ա | 27 |
| 27 | Գ | ը | 27 | է | Ե | 26 |
| 26 | Բ | Ա | 28 | ը | Զ | 25 |
| 25 | Ա | բ | 29 | Ա | Ե | 24 |
| 24 | Է | գ | 30 | բ | Դ | 23 |
| 23 | Զ | դ | 31 | գ | Գ | 22 |

| ՍԵՊՏԵՄԲԵՐ | | | | ՀՈԿՏԵՄԲԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| [illegible] | [illegible] | [illegible] | Օր ամսոյ: | [illegible] | [illegible] | [illegible] |
| 21 | Բ | Դ | 1 | Բ | Է | 20 |
| 20 | Ա | Ե | 2 | Գ | Զ | 19 |
| 19 | Է | Զ | 3 | Դ | Ե | 18 |
| 18 | Զ | Է | 4 | Ե | Դ | 17 |
| 17 | Ե | Ը | 5 | Զ | Գ | 16 |
| 16 | Դ | Ա | 6 | Է | Բ | 15 |
| 15 | Գ | Բ | 7 | Ը | Ա | 14 |
| 14 | Բ | Գ | 8 | Ա | Է | 13 |
| 13 | Ա | Դ | 9 | Բ | Զ | 12 |
| 12 | Է | Ե | 10 | Գ | Ե | 11 |
| 11 | Զ | Զ | 11 | Դ | Դ | 10 |
| 10 | Ե | Է | 12 | Ե | Գ | 9 |
| 9 | Դ | Ը | 13 | Զ | Բ | 8 |
| 8 | Գ | Ա | 14 | Է | Ա | 7 |
| 7 | Բ | Բ | 15 | Ը | Է | 6 |
| 6 | Ա | Գ | 16 | Ա | Զ | 5 |
| 5 | Է | Դ | 17 | Բ | Ե | 4 |
| 4 | Զ | Ե | 18 | Գ | Դ | 3 |
| 3 | Ե | Զ | 19 | Դ | Գ | 2 |
| 2 | Դ | Է | 20 | Ե | Բ | 1 |
| 1 | Գ | Ը | 21 | Զ | Ա | 30 |
| 30 | Բ | Ա | 22 | Է | Է | 29 |
| 29 | Ա | Բ | 23 | Ը | Զ | 28 |
| 28 | Է | Գ | 24 | Ա | Ե | 27 |
| 27 | Զ | Դ | 25 | Բ | Դ | 26 |
| 26 | Ե | Ե | 26 | Գ | Գ | 25 |
| 25 | Դ | Զ | 27 | Դ | Բ | 24 |
| 24 | Գ | Է | 28 | Ե | Ա | 23 |
| 23 | Բ | Ը | 29 | Զ | Է | 22 |
| 21 22 | Ա | Ա | 30 | Է | Զ | 21 |
| | | | 31 | Ը | Ե | 20 |

| ՆՈՅԵՄԲԵՐ : | | | | ԴԵԿՏԵՄԲԵՐ | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կիւրակէք : | Եօթնեակք : | Զատկականք : | Օր ամսոյ : | Զատկականք : | Եօթնեակք : | Կիւրակէք : |
| 19 | Դ | Ա | 1 | Է | Բ | 18 |
| 18 | Գ | Բ | 2 | Ը | Ա | 17 |
| 17 | Բ | Գ | 3 | Ա | Է | 16 |
| 16 | Ա | Դ | 4 | Բ | Զ | 15 |
| 15 | Է | Ե | 5 | Գ | Ե | 14 |
| 14 | Զ | Զ | 6 | Դ | Դ | 13 |
| 13 | Ե | Է | 7 | Ե | Գ | 12 |
| 12 | Դ | Ը | 8 | Զ | Բ | 11 |
| 11 | Գ | Ա | 9 | Է | Ա | 10 |
| 10 | Բ | Բ | 10 | Ը | Է | 9 |
| 9 | Ա | Գ | 11 | Ա | Զ | 8 |
| 8 | Է | Գ | 12 | Բ | Ե | 7 |
| 7 | Զ | Ե | 13 | Գ | Դ | 6 |
| 6 | Ե | Զ | 14 | Դ | Գ | 5 |
| 5 | Դ | Է | 15 | Ե | Բ | 4 |
| 4 | Գ | Ը | 16 | Զ | Ա | 3 |
| 3 | Բ | Ա | 17 | Է | Է | 2 |
| 2 | Ա | Բ | 18 | Ը | Զ | 1 |
| 1 | Է | Գ | 19 | Ա | Ե | 30 |
| 30 | Զ | Դ | 20 | Բ | Դ | 29 |
| 29 | Ե | Ե | 21 | Գ | Գ | 28 |
| 28 | Դ | Զ | 22 | Դ | Բ | 27 |
| 27 | Գ | Է | 23 | Ե | Ա | 26 |
| 26 | Բ | Ը | 24 | Զ | Է | 25 |
| 25 | Ա | Ա | 25 | Է | Զ | 24 |
| 24 | Է | Բ | 26 | Ը | Ե | 23 |
| 23 | Զ | Գ | 27 | Ա | Դ | 22 |
| 22 | Ե | Դ | 28 | Բ | Գ | 21 |
| 21 | Դ | Ե | 29 | Գ | Բ | 20 |
| 19 20 | Գ | Զ | 30 | Դ | Ա | 19 |
| | | | 31 | Ե | Է | 18 |